

ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋՆՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՎ
Ժողովրդավարության զարգացման, պառլամենտարիզմի և
քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության
մոնիտորինգի միջազգային ինստիտուտի
Երևանյան մասնաճյուղ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ՀԱՅՐԱՊԵՏ
2022

ՀՏԴ 342(479.25)
ԳՄԴ 67.400(5Հ)
177

Աշխատանքը երաշխավորվել է տպագրության ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի ժողովրդավարության զարգացման, պաշտամենտարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության մոնիտորինգի միջազգային ինստիտուտի կողմից

Հակոբյան Լ., Սողոմոնյան Ա., Ռաֆայելյան Վ.
Հ 177 Ժողովրդավարությունը և ընտրությունները. Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում / Լ. Հակոբյան, Ա. Սողոմոնյան, Վ. Ռաֆայելյան.– Եր.: «Հայրապետ» հրատ., 2022.– 272 էջ:

Սույն կոլեկտիվ մենագրությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի, դրանց ձևավորման կարգի, լիազորությունների, երիտասարդության հետ փոխգործակցության, տեղական ինքնակառավարման շրջանակներում կիրառվող ուղղակի ժողովրդավարության ձևերի, ինչպես նաև համայնքի որպես քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցի առանձնահատկությունների ուսումնասիրությանը, առկա խնդիրների բացահայտմանը և դրանց լուծման ուղիների մշակմանը:

Ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել մունիցիպալ իրավահարաբերությունների հետ կապված հարցերով հետաքրքրված իրավաբաններին, քաղաքագետներին, տարբեր մակարդակների ղեկավարներին, ինչպես նաև ուսանողներին, ասպիրանտներին, բուհերի դասախոսներին և այլ շահագրգիռ անձանց:

ՀՏԴ 342(479.25)
ԳՄԴ 67.400(5Հ)

ISBN 978-9939-887-27-2

© ԱՊՀ ՄԽՎ խորհրդի քարտուղարություն, 2022

Աշխատանքային խմբի ղեկավար՝

ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի ժողովրդավարության զարգացման, պաշտամենտարիզմի և քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության մոնիթորինգի միջազգային ինստիտուտի Երևանյան մասնաճյուղի տնօրեն
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Ավետիսյան

Հեղինակներ՝

Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի Իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ,
Հայաստանի Հանրապետության Պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի դոցենտ,
Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի իրավաբանական վարչության պետ
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Լիլիա Արեգի Հակոբյան

Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս
իրավ. գիտ. թեկ. Աշխեն Մանվելի Սողոմոնյան

Երևանի պետական համալսարանի սահմանադրական իրավունքի ամբիոնի ասիստենտ,
Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության պետ
իրավ. գիտ. թեկ. Վահե Վարուժանի Ռաֆայելյան

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	6
Գլուխ 1. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ.....	9
1.1 Տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինը՝ ավագանին (իրավական վիճակը, կառուցվածքը, լիազորությունները և իրավական ակտերը).....	9
1.2 Տեղական ինքնակառավարման գործադիր մարմինը՝ համայնքի ղեկավարը (իրավական վիճակը, լիազորությունները և իրավական ակտերը).....	26
1.3 Տեղական ինքնակառավարման աջակցող մարմինները (համայնքի ղեկավարի աշխատակազմը, միջհամայնքային միավորումներ, համայնքային ենթակայության հիմնարկներ և կազմակերպություններ).....	44
1.4 Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ընդհանուր բնութագիրը.....	53
1.5 Տեղական ինքնակառավարման մարմինների փոխգործակցությունը երիտասարդության հետ.....	60
1.6 Խոշորացված համայնքների եվ երեվանի ավագանին (իրավական վիճակը, կառուցվածքը և իրավասությունը).....	67
1.7 Խոշորացված համայնքների եվ երեվանի համայնքի ղեկավարը (համայնքի ղեկավարի, նրա աշխատակազմի և վարչական շրջանների իրավական վիճակը, կառուցվածքը և իրավասությունը).....	81
Գլուխ 2. ՈՒՂԱԿԻ ԺՈՂՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ.....	94
2.1 ՀՀ-ում տեղական ինքնակառավարման մակարդակում կիրառվող անմիջական ժողովրդավարության ձևերի ընդհանուր բնութագիրը.....	94
2.2 ՀՀ համայնքային ընտրությունների ընդհանուր բնութագիրը. օրենսդրական հիմքերը և կիրառվող ընտրական համակարգերը.....	108

2. 3 Վարչարարության մարմինները տեղական ընտրություններում.....	131
2. 4 ՀՀ-ում տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի ձեկավորման կարգը.....	145
2.6 Տեղական ինքնակառավարման գործադիր մարմնի ձևավորման կարգը ՀՀ-ում	179
2. 7 Տեղական հանրաքվեն` որպես ուղղակի ժողովրդավարության ձև.....	187
Գլուխ 3. ՀԱՄԱՅՆՔԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՒՔՅԵԿՏ	205
3. 1. Համայնքի քաքաքացիական իրավասությունները	205
3.2. Համայնքային սեփականության առանձնահատկությունները.....	219
3.3 Համայնքի քաղաքացիաիրավական պատասխանատվության առանձնահատկությունները	234
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ	254

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդավարական պետության հիմնական խնդիրն է ստեղծել առավել բարենպաստ պայմաններ իր քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրացման համար: Միաժամանակ արդյունավետ պետական կառզմակերպման խնդիրը հանգում է իշխանության և կառավարման այնպիսի համակարգի ստեղծմանը, որում այդ խնդիրը լուծվում է լավագույնս: Օրյելտիվորեն կան խնդիրներ, որոնք հնարավոր է լուծել միայն համապետական մակարդակով՝ կենտրոնացված միջոցների և ռեսուրսների ներգրավմամբ (տարածքային ամբողջականության և անկախության ապահովում, միասնական իրավական դաշտի ստեղծում և այլն): Բայց միևնույն ժամանակ, բազմաթիվ խնդիրների լուծումը, բնակչության կենսամակարդակի ապահովումն իրականացվում է ոչ թե ընդհանրապես պետական, այլ քաղաքացիների կոմպակտ բնակության տարածքային կազմավորումներում՝ համայնքներում: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը տեղական ինքնակառավարումը դիտարկում է իբրև սահմանադրական կարգի հիմունքներից մեկը: Սահմանադրության ընդունումից հետո՝ 15 տարվա ընթացքում, Հայաստանի Հանրապետությունում ներդրվեց տեղական ինքնակառավարման համակարգը և սկսվեցին իշխանության ապակենտրոնացման բարեփոխումները: Այս ընթացքում շատ բան է արվել՝ վավերացվել են միջազգային պայմանագրեր, ընդունվել են օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր, մշակվել և կիրառվել են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության կառուցակարգեր և այլն: Այնուամենայնիվ, տեղական ինքնակառավարման հետագա զարգացման և արդյունավետության բարձրացման ճանապարհին կանգնեցին բազմաթիվ խոչընդոտներ, որոնք, ի թիվս այլ միջոցառումների, լուծվեցին համայնքների խոշորացմանն ուղղված բարեփոխումներով: Գործընթացը մեկնարկել է 2010-ականներին, սակայն ամենածավալուններից մեկը 2021 թվականին իրականացված խոշորացման փուլն էր, որի ընթացքում 441 համայնքներ միավորվեցին 38-ի:

Այս հարցերն առանձնակի արդիականություն են ձեռք բերել 2015 թվականին Հայաստանում տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումների ֆոնին, որի արդյունքում վերանայվել և վերահիմաստավորվել են սահմանադրական իրավունքի բազմաթիվ ինստիտուտներ:

Բարեփոխումը շոշափեց նաև տեղական ինքնակառավարումը: Հաշվի առնելով սահմանադրական բարեփոխումների արդյունքները՝ 2018 թվականին վերանայվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը և ընդունվել «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ նոր օրենք: Հաշվի առնելով վերը նշվածը, ակնհայտ է, որ բազմաթիվ նորամուծությունները, նոր ինստիտուտների և նախկինում գոյություն ունեցող իրավական կարգավորումների նկատմամբ նոր մոտեցումները պահանջում են խորը ուսումնասիրություն:

Ավելին, մինչև 2020 թվականը Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինները հիմնականում ընտրվում էին մեծամասնական ընտրակարգով ուղղակի ընտրությունների շրջանակներում (բացառություն էին կազմում Երևանը, Գյումրին, Վանաձորը):

Սակայն 2020 թվականին Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարվեցին, որոնց շրջանակներում ամրագրվեց, որ մինչև 4 000 ընտրող ունեցող համայնքներում համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրություններն անցկացվում են մեծամասնական ընտրակարգով, ավելի քան 4 000 ընտրող ունեցող համայնքներում ավագանու ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով, իսկ համայնքների ղեկավարներն այս դեպքում ընտրվում են անուղղակի ընտրություններով հենց ավագանու կողմից՝ իր կազմից:

Նման լայնածավալ օրենսդրական բարեփոխումները պահանջում են լուրջ հետազոտություններ:

Սույն գիտական ուսումնասիրությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության, դրանց ձևավորման կարգի, կարգավիճակի, ինչպես նաև տեղական ինքնակառավարման շրջա-

նակներում կիրառվող ուղղակի ժողովրդավարության ձևերի ուսումնասիրությանը, մունիցիպալ և ընտրական իրավունքի շրջանակներում երկրում իրականացվող բարեփոխումների իրավական հետևանքների բացահայտմանը, խնդիրների վերհանմանը և դրանց հաղթահարման ուղիների մշակմանը:

Ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել մունիցիպալ իրավահարաբերությունների հետ կապված հարցերով հետաքրքրված իրավաբաններին, քաղաքագետներին, տարբեր մակարդակների ղեկավարներին, ինչպես նաև ուսանողներին, ասպիրանտներին, բուհերի դասախոսներին և այլ շահագրգիռ անձանց:

Գլուխ 1. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

1.1 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ՝ ԱՎԱԳԱՆԻՆ (ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ)

«Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ ժողովուրդը հանդիսանում է Հանրապետության ինքնիշխանության կրողը և իշխանության միակ աղբյուրը (սուբյեկտը), որն իր իշխանությունն իրականացնում է ինչպես անմիջական, այնպես էլ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: Տեղական ինքնակառավարման կազմակերպման բուն գաղափարը՝ իշխանության հնարավորինս մոտեցնելն է ժողովրդին: Իսկ այդ խնդրի լուծումն ավելի արդյունավետ կազմակերպումն այլ եղանակներով անհնար է, քան համայնքային մակարդակում այն կազմակերպելը: Պատահական չէ, որ սահմանադիրը երաշխավորել է ինքնակառավարումը որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկը («Սահմանադրության 9-րդ հոդված»): Այն հնարավորություն է ընձեռում ժողովրդավարացնել կառավարման գործընթացը և լուծել տեղական հարցերը ավելի արդյունավետ, քան կառավարման կենտրոնացված համակարգերի դեպքում, պետական քաղաքականության իրականացման դեպքում ապահովել բնակչության առանձին խմբերի շահերի հաշվառումը, արդյունավետ համատեղել մարդու իրավունքները և շահերը պետության և տարածաշրջանի շահերի հետ:

«Սահմանադրության համաձայն (181 և 183-րդ հոդվածներ)՝ տեղական ինքնակառավարումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է համայնքի բնակչության կողմից *տարբեր կազմակերպական ձևերով: Դրանք իրենց համակցությամբ հանդես են գալիս որպես տեղական ինքնակառավարման միասնական համակարգ, որի միջոցով ապահովվում է համայն-*

քային նշանակության հանրային հարցերի լուծումը:

Ավագանու իրավական վիճակը և լիազորությունները:

Ավագանու իրավական վիճակը, որպես իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության միասնություն, կանխորոշված է «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով» և դրա հիման վրա ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով: Խարտիայի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման իրավունքն առավելապես իրացվում է ընտրովի ներկայացուցչական մարմինների միջոցով, որոնք կարող են ունենալ հաշվետու գործադիր մարմիններ:

Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ-ում տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով, որոնց ընտրության կարգը սահմանվում է ՀՀ Սահմանադրությամբ և ընտրական օրենսգրքով:

Համայնքի ավագանին համայնքի ներկայացուցչական մարմին է և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորություններ:

Համայնքի ղեկավարը համայնքի գործադիր մարմինն է, ներկայացնում է համայնքը և իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորությունները:

Ավագանու կազմակերպման հիմնարար սկզբունքներն ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ՝ ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքները, որոնք իրականացվում են գաղտնի քվեարկության միջոցով (7-րդ հոդված):

Ինչ վերաբերում է ընտրությունների կազմակերպման կարգին, ապա այն սահմանվում է ՀՀ ընտրական օրենսգրքով (ավելի մանրամասն՝ սույն աշխատանքի 2-րդ Գլխում):

Համայնքի ավագանին, որպես տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմին, ունի իր *յուրահատուկ կազմը*: ՀՀ ընտրական օրենսգրքին այդ կազմը պայմանավորում է համապատասխան համայնքի բնակչության ընտրական իրավունք ունեցող անձանց քանակով: Այսպես, ըստ նշված օրենսգրքի

104.1-րդ հոդվածի՝ մինչև 4 000 ընտրող ունեցող համայնքներում ավագանու անդամի ընտրություններն անցկացվում են մեծամասնական ընտրակարգով: 4 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքներում համայնքի ավագանու ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով:

Համայնքի ավագանու ընտրության ժամանակ համայնքի տարածքում կազմավորվում է մեկ բազմամանդատ մեծամասնական կամ համամասնական ընտրատարածք, որտեղից ընտրվում են ավագանու հինգ անդամ՝ մինչև 1 000 ընտրող ունեցող համայնքում, յոթ անդամ՝ 1 001-ից 2 000, ինն անդամ՝ 2 001-ից 4 000, տասնհինգ անդամ՝ 4 001-ից 10 000, քսանմեկ անդամ՝ 10 001-ից 25 000, քսանյոթ անդամ՝ 25 001-ից 70 000, երեսուներեք անդամ՝ 7 0001-ից մինչև 300 000 և վաթսուհինգ անդամ՝ 300 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքում:

Սահմանադրությամբ և Օրենքով ավագանու կարգավիճակի սահմանումը տրված չէ, սակայն, վերջինս ակնհայտորեն ինքնակառավարման բարձրագույն մարմինն է՝ նկատի ունենալով թե համայնքի ղեկավարի նկատմամբ վերահսկողական լիազորությունների բնույթն ու ծավալը, և թե վերջին տարիներին համայնքների ճնշող մեծամասնության խոշորացմամբ պայմանավորված համայնքի ղեկավարների անուղղակի ընտրություններն ավագանու կազմից և կողմից: Ի դեպ, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով (11-րդ հոդված) ի սկզբանե՝ 2009թ-ին, սահմանվեց, որ ավագանին Երևանում տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմին է, որը վերահսկողություն է իրականացնում քաղաքապետի գործունեության նկատմամբ: Ավագանին Սահմանադրությամբ և օրենքով իր լիազորություններն իրականացնելիս անկախ է և գործում է միայն ի շահ Երևանի և նրա անունից: Միաժամանակ Սահմանադրության 182-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը պատասխանատու է ավագանու առջև:

Համայնքի ավագանին, որպես տեղական ինքնակառավարման մարմին, իր սահմանադրաիրավական կարգավիճակը ձեռք է բերում ոչ ուշ, քան նախորդ ավագանու լիազորությունների ավարտման հաջորդ օրը: Ավագանու լիազորություններն իրենց արտահայտությունն են գտնում ավագանու *իրավասության* մեջ,

որը ներառում է նրա լիազորությունները (իրավունքները և պարտականությունները) և գործառույթները, որոնք իրականացվում են իր տնօրինությանը վերապահված առարկաների (ոլորտների) նկատմամբ:

Համայնքի ավագանին տեղական նշանակության խնդիրների լուծման գործում համարվում է առավել կարևորը, հիմնականը՝ տեղական նշանակության հարցերի լուծմամբ զբաղվող սուբյեկտների (համայնքի բնակչություն, համայնքի ղեկավար, հասարակական հիմունքներով գործող այլ կառույցներ և այլն) շարքում: Այդ պատճառով էլ նրա իրավական կարգավիճակի բնութագրման գործում, առաջին հերթին, պետք է հենվել սահմանադրական կարգավորումների վրա: ՀՀ Սահմանադրությունը համայնքի ավագանուն օժտել է լայն լիազորություններով. ըստ 184-րդ հոդվածի 3-րդ մասի՝ համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով տնօրինում է համայնքի սեփականությունը, 185-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է համայնքի բյուջեն, վերահսկում բյուջեի կատարումը, օրենքով սահմանված կարգով սահմանում տեղական հարկերը, տուրքերը և վճարները, ընդունում է համայնքի տարածքում պարտադիր կատարման ենթակա իրավական ակտեր:

Սահմանադրության այդ նորմի հիման վրա Օրենքը սպառիչ թվարկում է բոլոր այն ոլորտները, որոնք գտնվում են համայնքի ավագանու բացառիկ իրավասության ներքո: Այդ ոլորտները կարելի է հարաբերականորեն բաժանել հետևյալ ուղղությունների.

- ա) համայնքի սեփականության տնօրինման,
- բ) ֆինանսաբյուջետային հարաբերությունների կարգավորման,
- գ) վերահսկողական գործունեության,
- դ) այլ կառույցների հետ համագործակցության,
- ե) կադրային քաղաքականության հարցերով և այլն:

Համայնքի սեփականության տնօրինման համատեքստում ավագանու լիազորություններն սկսվում են համայնքի սեփականության ձևավորմանը նրա մասնակցությունից: Սահմանադրության 184-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի տարածքում գտնվող հողը, բացառությամբ պետությանը, ինչպես նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատկանող հողերի, համայնքի սե-

փականությունն է: Համայնքի սեփականություն կարող է լինել շարժական և անշարժ գույքը, դրամական միջոցները: Բացի այդ, համայնքը կարող է ունենալ գույքային այլ իրավունքներ: Օրենքի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված սեփական լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոց չհանդիսացող գույքը, որը պատկանում է պետությանը, որպես սեփականություն, անհատույց փոխանցվում է համայնքներին: Ընդ որում, համայնքի սեփականությունը կարող են հանդիսանալ ոչ միայն նրա վարչական տարածքում գտնվող հողը, շինությունները և այլ անշարժ գույք, այլ նաև համայնքի սեփականություն կարող են դառնալ համայնքի տարածքում գտնվող մանկապարտեզները, կոմունալ տնտեսության և այլ հաղորդակցության ուղիները, ջրմուղի, կոյուղու, ոռոգման, ջեռուցման, աղբահանության համակարգերը: Համայնքի սեփականություն կարող են դառնալ նաև համայնքի տարածքում գտնվող մասնագիտացված դպրոցները, ակումբները, մշակույթի տները, թատրոնները, կինոթատրոնները, թանգարանները, գրադարանները, ցուցահանդեսները, շուկաները, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունները և տրանսպորտային կազմակերպությունները, փողոցները, հրապարակները, կամուրջները, բազմաբնակարան շենքերի բնակարանները և ոչ բնակելի տարածքները, ընդհանուր օգտագործման տարածքները, գերեզմանատները, ինչպես նաև վարչական շենքերը, կրթական, մշակութային, մարզական և այլ շենքերն ու շինությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները, տրանսպորտային միջոցները, գազամատակարարման, էլեկտրամատակարարման ներհամայնքային ցանցերը, խմելու և ոռոգման ջրատարները, ինչպես նաև անշարժ ու շարժական այլ գույք (78-րդ հոդված):

Դրա հետ մեկտեղ, համայնքի սեփականությունը լրացվում է նաև այլ աղբյուրներից ստացված միջոցներից, որոնց հավաքագրման համար ակտիվ մասնակցություն է ունենում համայնքի ավագանին: Այսպես, Օրենքով սահմանված կարգով բացառապես համայնքի ավագանին է սահմանում համայնքի կողմից իրականացվող ծառայությունների համար կատարվող վճարումների դրույքաչափերը, սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և

վճարումների տեսակներն ու դրույքաչափերը (18-րդ հոդվածի 18-19-րդ կետեր), վարկային և փոխառությունների ձևով միջոցների ներգրավման, այդ թվում՝ համայնքային պարտատոմսերի թողարկման փաստաթղթերը և այլն:

Համայնքի ավագանին լուրջ խնդիրներ է իրականացնում համայնքի սեփականությունը հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու գործում: Այդ կապակցությամբ ընդունած որոշման մեջ ավագանին սահմանում է գույքի օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում օգտագործման ժամկետը, վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը: Իսկ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու դեպքում ավագանու որոշման մեջ պետք է նշվեն հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, հողամասի տեսքը և գործառնական նշանակությունը:

Համայնքի սեփականության տնօրինման ոլորտում իրականացվող լիազորությունների թվում առանձնակի կարևորվում է ավագանուն օրենսդրությամբ վերապահված բացառիկ իրավունքն՝ իր որոշմամբ ստեղծելու բյուջետային հիմնարկներ, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ, որոնք ամբողջությամբ պատկանում են համայնքին, ինչպես նաև՝ առևտրային կազմակերպություններ:

Համայնքի տնտեսության բնագավառում ավագանու գործունեությունը սերտորեն միահյուսվում է *համայնքի բյուջեի ձևավորման և իրականացման խնդիրներին* նրա կողմից իրականացվող լիազորությունների հետ: Համայնքի բյուջեն եկամուտների (մուտքերի) հավաքագրման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նպատակաուղղվում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և համայնքի օրենքով վերապահված լիազորությունների իրականացմանը: Համայնքի բյուջեն կազմելու և ներկայացնելու կարգը սահմանվում է ՀՀ բյուջետային օրենսդրությամբ: Ավագանու նիստում բյուջեի քննարման ժամանակ համայնքի ղեկավարը պատասխանում է ավագանու անդամների հարցերին: Վերջիններս բյուջեի նախագծի վերաբերյալ կարող

են ներկայացնել նաև գրավոր առաջարկություններ: Եթե ավագանու անդամի առաջարկությունը նախատեսում է նոր ծախսեր, ապա նա պարտավոր է նշել հասմապատասխան ֆինանսական միջոցների աղբյուրները:

Համայնքի ղեկավարը, քննարկումներից հետո, կարող է վերցնել մինչև մեկ շաբաթ ժամանակ՝ ներկայացված նախագծի մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու համար: Այդ ժամկետի ավարտից հետո համայնքի ղեկավարը հրավիրում է ավագանու նիստ և ներկայացնում է իր դիրքորոշումը՝ բյուջեի՝ ավագանու առաջարկած փոփոխությունների վերաբերյալ: Բյուջեի նախագիծը համայնքի ղեկավարի ընդունած փոփոխություններով քվեարկության է դրվում ամբողջությամբ: Չընդունվելու դեպքում բյուջեի նոր նախագծի քվեարկության ժամկետները որոշում է համայնքի ավագանին՝ համաձայնեցնելով այն համայնքի ղեկավարի հետ:

Համայնքի բյուջեն չհաստատվելու դեպքում համայնքի ղեկավարը կարող է դնել *հրաժարական տալու միջոցով իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու հարցը*: Եթե ավագանին համայնքի ղեկավարի հրաժարականի վերաբերյալ դիմումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում ավագանու անդամների թվի ծայնների կեսից ավելիով նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված՝ *համայնքի ղեկավարի ուղղումներով*:

Իսկ եթե համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ ավագանին որոշում է կայացնում, ապա համապատասխան մարզպետը հարցը ներկայացնում է ՀՀ Կառավարություն: Եթե մարզպետի դիմումն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում ՀՀ Կառավարությունը այդպիսի որոշում չի կայացնում, ապա համայնքի բյուջեն համարվում է հաստատված՝ համայնքի ղեկավարի կատարած ուղղումներով: Եթե կառավարությունը վաղաժամկետ դադարեցնում է համայնքի ղեկավարի լիազորությունները, համայնքի նոր ղեկավարը համայնքի ավագանուն բյուջեի նոր նախագիծ է ներկայացնում պաշտոնը ստանձնելու պահից սկսած քսան օրվա ընթացքում, ինչն ավագանու կողմից քննարկվում և հաստատվում

է օրենքով նախատեսված կարգով՝ երեսուն օրվա ընթացքում¹:

Համայնքի բյուջեն հաստատելուց հետո, համայնքի ավագանին օրենսդրությամբ սահմանված կարգով *վերահսկողություն է իրականացնում դրա (բյուջեի) կատարման նկատմամբ*: Օրենքի 68-րդ հոդվածը լիազորում է համայնքի ավագանուն. «...ստուգել ցանկացած բյուջետային գործողություն, աշխատանքների կատարման արդյունավետությունը և որակը, պահանջել հաշվետվություններ՝ կատարված ծախսերի վերաբերյալ»: Բյուջեի կատարման վերահսկողությունը մշտապես և արդյունավետ իրականացնելու նպատակով համայնքների ավագանիները կարող են սահմանված կարգով ներգրավել աուդիտորական ծառայություններ, որոնց դիմաց վճարումը կատարվում է համայնքային բյուջեից:

Համայնքի բյուջեի կատարման նկատմամբ ավագանու կողմից իրականացվող վերահսկողության համատեքստում համայնքի ղեկավարը պարտավոր է եռամսյակը մեկ անգամ բյուջետային օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ ներկայացնել համայնքի ավագանուն: Բացի այդ, մինչև բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնելը, համայնքի ղեկավարը կազմակերպում և անցկացում է հանրային բաց լսումներ կամ քննարկումներ և ստացված դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ տրամադրում է տեղեկատվություն համայնքի ավագանուն:

Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունն ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվա մարտի 1-ը: Հաշվետվության վերաբերյալ աուդիտորական վերահսկիչ մարմինը համայնքի ավագանուն ներկայացնում է բյուջեի կատարման վերաբերյալ իր ուսումնասիրությունների արդյունքներն ու եզրակացությունը: Ավագանին, անհրաժեշտության դեպքում, բյուջեի կատարման տարեկան

¹ Հարկ է նշել, որ ներկայումս «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով համայնքի ղեկավարի լիազորությունների դադարեցման նկարագրված հիմքը չի նախատեսվում, սակայն շարունակում է ամրագրված մնալ «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում (32-րդ հոդված):

հաշվետվության վերաբերյալ կարող է անցկացնել նաև անկախ աուդիտ, իսկ իրավախախտումներ հայտնաբերելու դեպքում դիմել համապատասխան իրավասու մարմիններ:

Համայնքի ավագանին համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը քննարկելուց հետո որոշում է կայացնում հաշվետվությունը հաստատելու մասին: *Հաշվետվությունը չհաստատելու դեպքում համայնքի ավագանին իրավասու է օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին առաջարկություն ներկայացնել:* Եթե նման բովանդակությամբ առաջարկություն չի ներկայացվում կամ կառավարությունը համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին առաջարկությունը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում նման որոշում չի ընդունում, ապա համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համարվում է հաստատված: Իսկ համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու մասին որոշում ընդունվելու դեպքում համայնքի ղեկավարը Օրենքով սահմանված կարգով վայր է դնում իր լիազորությունները, իսկ համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համարվում է հաստատված (Օրենքի 83-րդ հոդված և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդված): Հարկ է նշել, սակայն, որ պաշտոնանկության վերը նկարագրված կարգավորումները «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում պահպանվել են նախկին իրավական կարգավորումներից: Մինչդեռ ներկայումս ՀՀ Սահմանադրությամբ և Օրենքով համայնքի ղեկավարի պաշտոնանկության ինստիտուտ նախատեսված չէ, ավելին, Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն ՀՀ կառավարությունը համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու իրավասություն ունի միայն եթե տվյալ համայնքը, օրենքով սահմանված կարգով, վերակազմակերպվում է որպես այլ վարչատարածքային միավոր: Այնուամենայնիվ Օրենքով նախատեսվում է ավագանու կողմից ընտրված համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու իրավասություն՝ առանց դրա իրավական հիմքերը նշելու (Օրենքի 68-րդ հոդված):

Համայնքի ավագանին վերահսկում է նաև *համայնքի ղեկավարի ընթացիկ գործունեությունը* և համապատասխան թերացումներ կամ խախտումներ հայտնաբերելու դեպքում համայնքի

ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ երրորդի գրավոր առաջարկությամբ կարող է դրվել համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը՝ անվստահություն հայտնելու միջոցով: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու որոշման նախագիծ կարող է ներկայացնել ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը: Որոշման նախագիծը ներառում է ավագանու այն անդամի անուն-ազգանունը, որին նախաձեռնող խումբն առաջադրում է որպես համայնքի ղեկավարի թեկնածու, ինչպես նաև այն պետք է ստորագրեն նախաձեռնող խմբի բոլոր անդամները:

Համայնքի ավագանու վերահսկողական լիազորությունները տարածվում են նաև *համայնքի ղեկավարի կողմից ընդունված իրավական ակտի վրա*: Համայնքի ավագանու անդամը համայնքի ղեկավարի որոշումները ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարող է Օրենքի 17-րդ հոդվածով սահմանված կարգով նախաձեռնել ավագանու արտահերթ նիստ, եթե համայնքի ղեկավարի որոշումը, իր կարծիքով, հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին: Համայնքի ղեկավարի որոշումները համայնքի ավագանին կարող է բողոքարկել դատական կարգով:

Բացի այդ, օրենսդրությամբ սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմինների սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների նորմատիվ ակտերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով համայնքի ավագանին կարող է դիմել Հանրապետության սահմանադրական դատարան, իսկ նույն ակտերի՝ օրենքներին հակասելու դեպքում՝ վարչական դատարան:

Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենսդրությունը համայնքի ավագանուն իրավունք է վերապահում իր իրավասության շրջանակներում որոշակի լիազորություններ իրականացնել *կադրային քաղաքականության ոլորտում*: Համայնքի ղեկավարի ներկայացմամբ ավագանին իր որոշմամբ հաստատում է համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների կանոնադրությունը, աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը:

Համայնքային ծառայության պաշտոնների մասով ավագանին իրավասու է՝ աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և հաստիքացուցակը հաստատելու, փոփոխելու և լրացնելու հարցով իր որոշմամբ դիմելու ՀՀ Կառավարության համապատասխան լիազորած մարմնին: Ավագանու որոշմամբ տրված համաձայնության արդյունքում են նշանակվում համայնքի ղեկավարի կողմից ներկայացված բյուջետային հիմնարկների ու ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուները: Ավագանին օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատում է համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների խորհուրդների և վերստուգիչ մարմինների կազմերը: Այդ մարմիններից յուրաքանչյուրի կազմում համայնքի ավագանին իրավասու է իր կողմից առաջադրել ներկայացուցիչներ, որոնց թիվը կարող է լինել նրանց (այդ մարմիններից յուրաքանչյուրի) անդամների թվի կեսից պակաս: Ավագանին իր ներկայացուցիչն է նշանակում նաև համայնքների կողմից ձևավորված միջհամայնքային միավորումներում:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ավագանին քննարկում և որոշում է կայացնում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումների ու ձևավորման կարգը հաստատելու մասին (Օրենքի 18-րդ հոդվածի 34-րդ կետ): Կադրային հարցերի լուծմանը մասնակցության համատեքստում ավագանին որոշում է կայացնում *իր անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման* վերաբերյալ: Քննարկվող հիմնախնդրի առումով կարևոր է նաև ավագանու բացառիկ իրավունքն՝ իր որոշմամբ համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ:

Համայնքի ավագանին համայնքի ղեկավարի հետ համատեղ, այնպես էլ ինքնուրույն լայն գործունեություն է ծավալում համայնքի համար կենսական նշանակություն ունեցող այլ ոլորտներում: Այդ առումով կարևորվում է ավագանու գործունեությունը *միջհամայնքային հարաբերություններում*: Համայնքի ավագանու որոշմամբ կարող են ձևավորվել միջհամայնքային միավորումներ, ինչպես նաև կարող է առաջարկություն ներկայացնել պետական լիազորված մարմնին՝ այլ համայնքների հետ միավորվե-

լով նոր համայնք ստեղծելու վերաբերյալ: Կամ իր որոշմամբ համայնքի ավագանին վավերացնում է Հայաստանի Հանրապետության և այլ պետությունների համայնքների հետ համագործակցելու մասին պայմանագրերը: Համայնքների գործունեությունը համակարգելու, ինչպես նաև ընդհանուր շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով որոշում է կայացնում համայնքների հիմնադրած միություններին անդամակցելու և դրանց անդամության վճարներ մուծելու մասին:

Համայնքի ավագանին Օրենքով սահմանված կարգով (18-րդ հոդված)`

1) ընդունում է իր կանոնակարգը, համայնքի ծրագրային և հիմնարար փաստաթղթերը` համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, բյուջեն, համայնքի տարեկան աշխատանքային պլանը, դրանց իրականացման վերաբերյալ հաշվետվությունները:

2) Օրենքով սահմանված դեպքերում և կարգով ընտրում է համայնքի ղեկավարին, ձևավորում է համայնքային ենթակայության հիմնարկներն ու կազմակերպությունները, հաստատում դրանց կանոնադրությունը, կառուցվածքը, բյուջեն, նշանակությունը, մասնակցում է միջհամայնքային միավորումների ստեղծմանը:

3) Օրենքով սահմանված կարգով իրականացնում է վերահսկողություն ծրագրային փաստաթղթերի կատարման, վերոնշյալ պաշտոնատար անձանց ու կազմակերպությունների գործունեության նկատմամբ, այդ թվում` անվստահություն է հայտնում համայնքի ղեկավարին:

4) Օրենքով սահմանված դեպքերում սահմանում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների տեսակներն ու դրույքաչափերը:

5) տնօրինում և կառավարում է համայնքային սեփականությունը, հաստատում խոշոր գործարքները:

6) քննարկում և որոշում է կայացնում համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու վերաբերյալ, իրականացնում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություն-

ներ:

Օրենքի 18-րդ հոդվածով սպառիչ չի թվարկվում համայնքի ավագանու լիազորությունները, ավելին դրա 42-րդ կետի համաձայն իրականացնում է ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ: Այլ կերպ ասած՝ համայնքի ավագանին կարող է իրականացնել համայնքային նշանակության հանրային շահերից բխող ցանկացած լիազորություն, որը վերապահված չէ համայնքի ղեկավարին:

Համայնքի ավագանու իրավասության իրացման արդյունավետությունը էապես պայմանավորված է *նրա գործունեության ճիշտ կազմակերպմամբ*: Ավագանին աշխատում է նիստերի միջոցով:

Ավագանու իրավական վիճակը պայմանավորված է նաև նրա լիազորությունների դադարեցման առանձնահատկություններով: Օրենքը սահմանում է համայնքի ավագանու և նրա անդամի *լիազորությունների վաղաժամկետ դադարեցման* երկու տարբեր խումբեր հիմքեր և կարգ՝ պայմանավորված ավագանու մեծամասնական կամ համամասնական ընտրական համակարգով ձևավորման հետ: Այսպես, մեծամասնական ընտրական համակարգով ընտրվող համայնքի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցվում են, եթե՝

- 1) դադարեցվել է նրա՝ ՀՀ քաղաքացիությունը.
- 2) նա դադարել է համայնքի բնակիչ լինելուց.
- 3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է ազատազրկման և կրում է պատիժը.
- 4) նա զորակոչվել կամ ծառայության է անցել զինված ուժերում և այլ զորքերում.
- 5) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նա անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած է ճանաչվել.
- 6) նա ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն է զբաղեցնում.
- 7) նա մեկ տարվա ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների կամ մշտական հանձնաժողովի նիստերի (որը պետք է արտացոլված լինի իր մասնակցությամբ ավագանու նիստերի ընթացքում ընդունված փաստաթղթերի ստորագրություններով) ավելի քան կե-

սից.

8) նա հրաժարական է տվել:

Վերը թվարկված դեպքերում, բացառությամբ 7-րդ կետի, ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են *օրենքի ուժով*, իսկ 7-րդ կետում սահմանված դեպքում՝ նիստին ներկա ավագանու անդամների ծայների երկու երրորդով ընդունում է համայնքի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշում կամ նիստ գումարելու անհնարինության դեպքում ավագանու մյուս անդամները կազմում են արձանագրություն, որը հաստատվում է ներկա ավագանու անդամների երկու երրորդով: Համայնքի ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե նա մահացել է (Օրենքի 22-րդ հոդված):

Մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցվում են՝ եթե համայնքի ավագանու անդամի լիազորությունների դադարեցման կամ դադարման հետևանքով անհնարին է դառնում համայնքի ավագանու հետագա նիստերի անցկացումը¹, ապա ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են ավագանու մնացած անդամները կամ համայնքի ղեկավարը: Ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են նաև, եթե՝

1) ավագանու անդամների կողմից ավագանու նիստի իրավազորությունը չապահովվելու պատճառով վեց ամիս անընդմեջ ավագանու նիստ չի կայանում: Նշված փաստն արձանագրում է համայնքի ղեկավարը.

2) օրենքով սահմանված կարգով համայնքը վերակազմակերպվում է որպես այլ վարչատարածքային միավոր: Համայնքի ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին վերը նշված արձանագրությունները համապատասխան մարզպետի միջոցով համայնքի ղեկավարն ուղարկում է ՀՀ կա-

¹ Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ Ընտրական օրենսգրքով սահմանված թվի կեսից ավելին:

ռավարության լիազորած պետական կառավարման մարմին: ՀՀ կառավարության լիազորած մարմինը համայնքի ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրությունն ստանալուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում, սահմանված կարգով ՀՀ կառավարություն է ներկայացնում տվյալ համայնքում համայնքի ավագանու արտահերթ ընտրություններ նշանակելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ: ՀՀ կառավարությունը, օրենքով սահմանված կարգով, պետական լիազորված մարմնի ներկայացմամբ, նշանակում է ավագանու արտահերթ ընտրություններ:

Ավագանու իրավական ակտերը:

Ավագանու նիստում կարող է քննարկվել համայնքի շահերին վերաբերող և օրենքով պետական մարմիններին, կազմակերպություններին և պաշտոնատար անձանց իրավասությանը չվերապահված ցանկացած հարց: Քննարկվող հարցերի վերաբերյալ ավագանին ընդունում է որոշումներ և ուղերձներ, որոնց վերաբերյալ կազմում է արձանագրություններ: Համայնքի շահերին վերաբերող, բայց իր իրավասությունից դուրս գտնվող հարցերի առնչությամբ ավագանին կարող է ընդունել ուղերձներ՝ ուղղված համայնքի բնակչությանը, համայնքի ղեկավարին, մարզպետին կամ այլ մարմինների և կազմակերպությունների: Համայնքի ավագանին օրենքով սահմանված կարգով ընդունում է որոշումներ, որոնք ենթակա են կատարման համայնքի տարածքում:

Համայնքի ավագանու որոշումների վերաբերյալ համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում ավագանուն կարող է ներկայացնել գրավոր առարկություններ և առաջարկություններ՝ համապատասխան հիմնավորումներով, եթե ավագանու որոշումը, իր կարծիքով, հակասում է ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին կամ ավագանու նախկին որոշումներին: Եթե համայնքի ղեկավարն ավագանու որոշման դեմ առարկում է, ապա եռօրյա ժամկետում հրավիրում է ավագանու արտահերթ նիստ, իսկ որոշման կատարումը հետաձգվում է մինչև այդ նիստում ավագանու կողմից դրա քննարկումը: Ավագանին քննարկում է նշված առարկությունները և որոշում է ընդունում նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ: Նշված նիստում և

նախատեսված ժամկետներում որոշումը չվերանայելու կամ ավագանու նիստը չկայանալու դեպքում որոշումն ուժի մեջ է մտնում և ենթակա է պարտադիր կատարման: Համայնքի ավագանու որոշումները համայնքի ղեկավարը կարող է բողոքարկել դատական կարգով:

Համայնքի ավագանու իրավասության իրացման արդյունավետության գործում նշանակալից է ավագանու անդամի կողմից օրենսդրությամբ նրան վերապահված անհատական իրավունքների և պարտականությունների ակտիվ կատարումը: *Համայնքի ավագանու անդամը պարտավոր է* իր գործունեության ընթացքում առաջնորդվել օրենքով և համայնքի բարօրությանն ուղղված համոզմունքով: Նա պարտավոր է պարբերաբար հանդիպել համայնքի բնակչության հետ, նրան տեղեկացնել համայնքի ավագանու աշխատանքների մասին, օժանդակել բնակիչներին համայնքում տեղական ինքնակառավարմանը մասնակցելուն: Ավագանու անդամը պարտավոր է մասնակցել ավագանու կողմից անցկացվող քաղաքացիների ընդունելություններին, ստորագրել իր մասնակցությամբ ընդունված փաստաթղթերը և ամենուրեք նպաստել ավագանու կողմից համայնքի բնակչության սոցիալկենցաղային խնդիրների լուծմանը:

Դրա հետ մեկտեղ, տեղական ինքնակառավարման մասին օրենսդրությունը համայնքի ավագանու անդամին վերապահում է որոշ *անհատական իրավունքներ*: Մասնավորապես, ավագանու անդամն օրենսդրությամբ նախատեսված կարգով իրավասու է առաջարկություններ ներկայացնել ավագանու նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի վերաբերյալ, ինչպես նաև իր կողմից օրակարգ մտցված հարցերի վերաբերյալ ներկայացնել որոշումների և ուղերձների նախագծեր: Բացի այդ, ավագանու անդամը իրավունք ունի համայնքի ղեկավարից պահանջել և ստանալ նրա գործունեության վերաբերյալ պաշտոնական տեղեկանքներ, ինչպես նաև համայնքի ավագանու և ղեկավարի որոշումները կամ գործողությունները բողոքարկել դատական կարգով, եթե դրանցով խախտվել են նրա՝ որպես ավագանու անդամի, իրավունքները: ՀՀ օրենսդրությամբ նախատեսված են համայնքի ավագանու անդամի նաև այլ լիազորություններ:

Ավագանին ունի իր ներքին կառուցվածքը: Օրենքի 13-րդ

հողվածը սահմանում է, որ մինչև ավագանու 9 անդամ ունեցող համայնքներում ավագանին իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար կարող է իր որոշմամբ ստեղծել մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովներ: Ավագանու 9 և ավելի անդամ ունեցող համայնքում ավագանին իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար ստեղծում է մշտական, իսկ անհրաժեշտություն առաջանալու դեպքում՝ ժամանակավոր հանձնաժողովներ: Ավագանու հանձնաժողովների քանակը, գործառույթները և ձևավորման կարգը սահմանվում են ավագանու կանոնակարգով:

Սակայն ո՛չ Օրենքը, ո՛չ էլ համայնքների ավագանիների կանոնակարգերը որևէ նորմ չեն բովանդակում մշտական հանձնաժողովների կազմակերպման և գործունեության կարգի, իրավասությանը, և նրանց հետ առնչվող այլ հարցերի վերաբերյալ: Բացի այդ, ավագանու անդամների՝ Օրենքով սահմանված փոքր թվաքանակը թույլ չի տալիս հանձնաժողովների մակարդակով աշխատանքի արդյունավետ բաժանում իրականացնել: Դրանով պայմանավորված հանձնաժողովներ ձևավորելու վերաբերյալ Օրենքի հիշյալ դրույթը մինչև 2017թ.-ն, ըստ էության, կրում էր զուտ ձևական բնույթ: Այդ են վկայում նաև բազմաթիվ համայնքներում կատարված ուսումնասիրության արդյունքները, ըստ որոնց՝ *համայնքների ներկայացուցչական մարմինների ներքին կառուցվածքում մշտական և ժամանակավոր հանձնաժողովները բացակայում են:*

Իրերի նման վիճակը, ըստ էության, կրում է օբյեկտիվ բնույթ, քանզի համայնքների ավագանու օրենքով թույլատրվող թիվը, մանավանդ համեմատաբար փոքրաթիվ բնակչություն ունեցող համայնքներում (5, 7, 9 անդամ), այդպիսի հնարավորություն չի ընձեռում: Միզուցե պետք է մտածել ավագանու անդամների թվաքանակի մեծացման մասին, ինչը հնարավորություն կտա իրավական կարգավորման ճանապարհով տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինների ներքին կառուցվածքում այդ հանձնաժողովների կայացմանը:

Քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ արտասահմանյան փորձը վկայում է, որ այդ կառույցները (մշտական և ժամանակավոր հանձնաժողովները, կոմիտեները) տեղական ինքնակառա-

վարման ներկայացուցչական մարմինների կառուցվածքում (մանավանդ, որ ավագանու անդամների հետ միասին դրանց կազմում ընդգրկվում են բնակչության ներկայացուցիչներ) տալիս են զգալի դրական արդյունք:

Սակայն համայնքների խոշորացմամբ, հետևաբար՝ ավագանու անդամների թվաքանակի ավելացմամբ պայմանավորված, ներկայումս համայնքների մեծ մասում ստեղծվել ու գործում են 2-4 մշտական հանձնաժողովներ. սոցիալ-մշակութային կրթության, ֆինանսատնտեսական, քաղաքաշինության և հողօգտագործման, իրավական հարցերով և այլն (ավելի մանրամասն տես սույն Գլխի 6-րդ ենթազլխում):

1.2 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ (ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ)

Հայաստանի Հանրապետության համայնքներում տեղական ինքնակառավարման կազմակերպման գործում մեծ է համայնքի ղեկավարի դերը: Նա կոչված է իրականացնելու համայնքի վարչական գործունեությունը և պաշտոնապես ներկայացնելու համայնքն ինչպես տարածքային կառավարման մարմինների, այնպես էլ՝ Հանրապետության պետական մարմինների, կազմակերպությունների և քաղաքացիների հետ փոխհարաբերություններում:

Համայնքի ղեկավարի իրավական կարգավիճակը, հանրային իշխանություն իրականացնող այլ մարմինների կարգավիճակի համեմատ, ունի որոշ առանձնահատկություն: Խնդիրն այն է, որ Օրենքի բնութագրությամբ համայնքի ղեկավարը «...համայնքի գործադիր մարմինն է, ներկայացնում է համայնքը և իրականացնում է ՀՀ Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ օրենքներով նախատեսված լիազորությունները...», որն իրականացնում է ՀՀ Սահմանադրությամբ և Օրենքով նախատեսված լիազորությունները (6-րդ հոդվածի 5-րդ մաս): Մինչդեռ, նրա սահմանադրաիրավական կարգավիճակի վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ համայնքի ղեկավարը իր մեջ համա-

տեղում է համայնքի իշխանության մարմնի և պաշտոնատար անձի հատկանիշները: Այսպես, հայտնի է, որ *իշխանության մարմինն* իրենից ներկայացնում է կառավարման կառուցակարգի (մեխանիզմի) իշխանական լիազորություններով օժտված, օրենքով սահմանված կարգով ձևավորված տարր, գործող պետական ապարատի բաղկացուցիչ և, միևնույն ժամանակ, հարաբերականորեն ինքնուրույն մաս, որն իրականացնում է պետության (պետական կազմավորման, վարչական կամ ինքնակառավարման միավորի) գործառույթներ կամ խնդիրներ, գործում է նրա անունից և ըստ հանձնարարության՝ ունի սեփական իրավասություն¹: Ավելին, համայնքի ղեկավարի կարգավիճակը բնութագրող պետական-հանրային գործառույթի մասին ամրագրված է նաև «Տեղական ինքնակառավարման մասին» եվրոպական խարտիայով՝ տեղական ինքնակառավարման հասկացությունը բնութագրվում է որպես տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը և կարողությունը՝ կանոնակարգելու և կառավարելու *հանրային գործերի զգալի մասը* (ընդգծումը մերն է) (օրենքի շրջանակներում)՝ սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերից ելնելով (3-րդ հոդված):

Տվյալ դեպքում համայնքի ղեկավարը, որպես տեղական ինքնակառավարման մարմին, համապատասխանում է բերված սահմանմանը, քանի որ՝ ա) ընտրվում է (ձևավորվում է) անմիջականորեն բնակչության կամ վերջինիս կողմից ընտրված ավագանու կողմից, բ) համայնքային նշանակության հարցեր լուծելու համար օժտված է սեփական լիազորություններով, գ) գործում է համայնքի անունից և իրականացնում է նրա (համայնքի) գործառույթները: Այսպես.

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը ներկայացնում է համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, օրենքով նախատեսված դեպքե-

¹ Տե՛ս սույն Գլխի 4-րդ ենթագլխի պետության պատվիրակված լիազորությունների մասը, ինչպես նաև **Побережная И.А.** Правовой статус главы муниципального образования (Комментарии отдельных положений Федерального закона об общих принципах организации местного самоуправления в Российской Федерации), юстиция: Практический журнал, М., 2006, N 2, с. 124:

րում որպես համայնքի ներկայացուցիչ հանդես է գալիս դատարանում, ինչպես նաև իր իրավասության սահմաններում տալիս է դատարանում հանդես գալու լիազորագրեր (25-25.1-րդ կետեր):

Սակայն բերված սահմանման մեջ բովանդակված որոշ հատկանիշների (չափանիշների) տեսանկյունից՝ համայնքի ղեկավարը, որպես իշխանության մարմին, չի համապատասխանում: *Առաջին*, իշխանության, տվյալ դեպքում, տեղական ինքնակառավարման մարմինը իրենից ներկայացնում է կառույց (կազմակերպություն), մարդկանց որոշակի խումբ, որոնք միավորվել են ընդհանուր նպատակներով և գործունեության յուրահատուկ տեսակով (ինչպես, օրինակ՝ կառավարությունը, նախարարությունները, պետական կառավարման համակարգի այլ մարմինները և այլն): Մինչդեռ, տեղական ինքնակառավարման միավորի (համայնքի) ղեկավարը համայնքային խնդիրների լուծման ժամանակ հանդես է գալիս որպես անհատ, մեկ անձ: *Երկրորդ*, տեղական ինքնակառավարման մարմնի իրավական կարգավիճակի յուրահատուկ հատկանիշ է նաև նրա՝ ինքնակառավարման լիազորություններով օժտված լինելը, որի արդյունքում տեղական ինքնակառավարման մարմինը հանդես է գալիս որպես ինքնակառավարման իրավունքի սուբյեկտ, որը լիազորություններ է իրականացնում բնակչության անունից: Մինչդեռ, համայնքի ղեկավարը միանձնյա չի կարող հանդես գալ որպես տեղական ինքնակառավարման իրավունքի սուբյեկտ: *Երրորդ*, տեղական ինքնակառավարման մարմնին իրավական կարգով ամրակցվում է անհրաժեշտ քանակության գույք և այլ նյութաֆինանսական միջոցներ՝ իր կառավարչական գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար: Մինչդեռ, տեղական ինքնակառավարման մակարդակում համայնքի խնդիրների իրականացման համար առանձնացված գույքը հանդիսանում է ոչ թե համայնքի ղեկավարի, այլ հենց համայնքի սեփականությունը: *Չորրորդ*, տեղական ինքնակառավարման մարմիններն ունեն իրավաբանական անձի կարգավիճակ: Մինչդեռ, համայնքի ղեկավարը, որպես ֆիզիկական անձ, չի կարող հանդես գալ նաև որպես իրավաբանական անձ:

Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է համայնքային վարչական և համայնքային հայեցողական

պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով (Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մաս): Համայնքի ղեկավարն իր գործունեությունը կազմակերպում է իր տեղակալի (տեղակալների), համայնքի գլխավոր ճարտարապետի, համայնքի ղեկավարի խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի և աշխատակազմի միջոցով (Օրենքի 60-րդ հոդված)¹:

Համայնքի ղեկավարի իրավական կարգավիճակը բնութագրվում է նաև տեղական ինքնակառավարման սուբյեկտների հետ ունեցած փոխհարաբերությունների բնույթով: Այս համատեքստում կարևոր է համայնքի *ղեկավարի և ավագանու* փոխհարաբերությունները: Ամենից առաջ, համայնքի ղեկավարը հրավիրում և վարում է ավագանու նիստը, *որտեղ նա ունի միայն խորհրդակցական ծայնի իրավունք, եթե նա անմիջականորեն ընտրվել է բնակչության կողմից մեծամասնական ընտրական համակարգով*: Մինչդեռ համամասնական ընտրակարգով ձևավորված ավագանու կողմից անուղղակի ընտրվող համայնքի ղեկավարը միաժամանակ ավագանու անդամ է և ավագանու մյուս անդամների հետ հավասար հիմունքներով մասնակցում է քվեարկություններին²:

Ավագանու որոշումները ստորագրում է համայնքի ղեկավարը կամ նրա պաշտոնակատարը: Սակայն դա չի խանգարում համայնքի ղեկավարին, որպեսզի վերջինս այդ որոշման վերաբերյալ եռօրյա ժամկետում (ընդունումից հետո) ավագանուն ներկայացնի գրավոր առարկություններ և առաջարկություններ՝ համապատասխան հիմնավորումներով, եթե իր կարծիքով, ավագանու որոշումը հակասում է ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին կամ ավագանու նախկին որոշումներին: Այդ կապակցությամբ համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում հրավիրում է ավագանու արտահերթ նիստ, իսկ որոշման կատարումը հետաձգվում է մինչև այդ նիստում ավագանու կողմից դրա քննարկումը: Ավագանին քննարկում է նշված առարկությունները և որոշում է ընդունում նիստին ներկա ավագանու անդամների ձայնե-

¹ Ավելի մանրամասն տես սույն Գլխի 3-րդ ենթագլխում:

² Ավելի մանրամասն տես սույն Գլխի 7-րդ ենթագլխում:

րի մեծամասնությամբ: Նշված նիստում և նախատեսված ժամկետներում որոշումը չվերանայելու կամ ավագանու նիստը չկայանալու դեպքում որոշումն ուժի մեջ է մտնում և ենթակա է պարտադիր կատարման:

Համայնքի ղեկավարը իրականացնում է մի շարք լիազորություններ համայնքի *ավագանու հետ համատեղ*: Այսպես, Համայնքի ավագանու նիստերի օրակարգի նախագիծը ձևավորվում է համայնքի ղեկավարի, ավագանու անդամների, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարների կողմից աշխատակազմի քարտուղարին՝ նիստից առնվազն տասն օր առաջ ներկայացված գրավոր հարցերից: Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ նաև համայնքում հաշվառված, տասնվեց տարին լրացած անձանց ոչ պակաս, քան մեկ տոկոսը՝ տասը հազարից ավելի բնակիչ ունեցող համայնքներում, երկու տոկոսը՝ հազարից մինչև տասը հազար բնակիչ ունեցող համայնքներում, և չորս տոկոսը՝ մինչև հազար բնակիչ ունեցող համայնքներում (Օրենքի 14-րդ հոդված):

Համայնքի ղեկավարն ավագանու հետ համատեղ է նշանակում համայնքի բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարներին: Վերջիններս համատեղ լուրջ առաքելություն են իրականացնում համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի օգտագործման և օտարման խնդիրների լուծման հարցում: Մասնավորապես, համայնքի ղեկավարի առաջարկությամբ ավագանին որոշում է համայնքի սեփականությունը հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու եղանակը, ժամկետները, նպատակը, վճարի չափը և այլն:

Յուրաքանչյուր համայնքի համար կենսական նշանակություն ունի նրա զարգացման ողջամիտ ծրագրի, համայնքի տարեկան աշխատանքային պլանի և բյուջեի նախագծի կազմումը, ինչը հանդիսանում է համայնքի ղեկավարի և ավագանու համատեղ գործունեության ոլորտը: Համայնքի ղեկավարը մշակում է համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և տարեկան բյուջեների ծրագրերը և ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը: Ինչպես համայնքի զարգացման ծրագրում, այնպես էլ

հաստատված յուրաքանչյուր տարվա բյուջեում համայնքի ղեկավարի առաջարկությամբ ավագանին իրավասու է կատարելու համապատասխան փոփոխություններ:

Համայնքի ղեկավարի ներկայացմամբ ավագանին հաստատում է աշխատակազմի և համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման, կանոնադրությունների, կառուցվածքների աշխատողների քանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի աշխատակազմի ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման վերաբերյալ որոշման նախագծերը:

Բացի բերված լիազորություններից, համայնքի ղեկավարը և ավագանին համատեղ *իրականացնում են* համայնքի բնակչության համար կենսական նշանակություն ունեցող ոլորտներում ևս բազմաթիվ այլ լիազորություններ, քանզի Օրենքը տեղական ինքնակառավարման մարմիններին լիազորում է «իրականացնել համայնքային շահերին վերաբերող, օրենքին չհակասող ցանկացած գործողություն» (8-րդ հոդվածի 1-ին մաս):

Համայնքի ղեկավարի կարգավիճակի բովանդակությունն էականորեն պայմանավորված է նաև տեղական ինքնակառավարման իրավունքի հաջորդ սուբյեկտի՝ *համայնքի բնակչության* հետ փոխհարաբերություններում իրականացվող լիազորությունների ծավալով: Օրենքը համայնքը ներկայացնում է որպես քաղաքական համակարգի ժողովրդավարական հիմք: Այն (համայնքը) հանդիսանում է մեկ կամ մի քանի բնակավայրերի բնակիչների հանրություն և վարչատարածքային միավոր, որի սահմաններում համայնքի բնակիչներն *ուղղակիորեն* կամ օրենքով սահմանված *ընտրովի մարմինների* միջոցով իրականացնում են տեղական ինքնակառավարում (ՀՀ Սահմանադրության 181-րդ և 183-րդ հոդվածներ): Ընդ որում, համայնքի տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք ունի համապատասխան համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասության շրջանակներում, նրանց գործունեության բնագավառներում: Համայնքի բնակիչների՝ տեղական ինքնակառավարմանը մասնակցությունը գործընթաց է, որի միջոցով բնակիչները, առանց

խտրականության, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա (Օրենքի 11-րդ հոդված):

Համայնքի բնակչությունը, ըստ էության, ավելի շատ կապված է տեղական ինքնակառավարման ոլորտում վարչական (գործադիր) գործունեություն իրականացնող մարմնի՝ համայնքի ղեկավարի հետ: Վերջինս իր գործառույթների (գործադիր) բերումով, ամենօրյա գործունեություն է իրականացնում համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական և այլ ոլորտների խնդիրների լուծման կապակցությամբ: Այդ առնչությամբ տեղական ինքնակառավարման մասին օրենսդրությունը քննարկվող ոլորտում համայնքի ղեկավարին վերապահել է անհրաժեշտ ծավալի լիազորություններ: Այդ լիազորությունները զգալի են առավելապես տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցության հարցում¹:

Որպես տեղական ինքնակառավարման իշխանության վարչական² (գործադիր) գործունեություն իրականացնող մարմնի, համայնքի ղեկավարի պաշտոնն զբաղեցնելու վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանվել է յուրահատուկ կարգ: Խոսքն այն մասին է, որ հանրային իշխանության գործադիր մարմինների համակարգում համայնքի ղեկավարը միակ մարմինն է (ի տարբերություն կառավարության, նախարարների, մարզպետների), որն *ընտրվում է* համայնքի բնակչության կողմից՝ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ կամ նույն սկզբունքներով ընտրված ներկայացուցչական մարմնի՝ ավագանու կողմից: Հայաստանի Հանրապետության գործող ընտրական օրենսգիրքը համայնքի ղեկա-

¹ Ավելի մանրամասն տես սույն Գլխի 5-րդ ենթաբաժնում:

² Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն վարչական մարմիններ են նաև տեղական ինքնակառավարման մարմինները՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը: Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

վարի թեկնածուին առաջադրում է որոշ պահանջներ՝ պետք է լրացած լինի 18 տարին, ընտրություն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում մինչև քվեարկության օրը առնվազն վերջին վեց ամիսը հաշվառված լինի և ունենա ընտրվելու իրավունք (Օրենսգրքի 2-րդ և 107-րդ հոդվածներ): Սահմանադրական փոփոխությունների նախագծով ամրագրված է համայնքի ղեկավարի նաև անուղղակի ընտրության հնարավորություն (181-րդ հոդվածի 1-ին մաս):

ՀՀ ընտրական օրենսգիրքը մանրամասն կարգավորում է համայնքի ղեկավարի թեկնածուի առաջադրման, գրանցման կարգը և եղանակները¹:

Համայնքի ղեկավարի իրավական կարգավիճակի բնութագրության համար կարևոր է նաև նրա լիազորությունների *վաղաժամկետ դադարեցման և դադարման* հիմնախնդրի լուսաբանումը: Օրենքը համայնքի ղեկավարի լիազորությունների դադար(եց)ման անհրաժեշտությունը պայմանավորում է մի շարք հանգամանքներով: Նախ ուղղակի ընտրական իրավունքի սկզբունքով ընտրվող համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, եթե նա՝ ա) հրաժարական է տվել, բ) դադարեցվել է նրա՝ ՀՀ քաղաքացիությունը, գ) դադարել է համայնքի բնակիչ լինելուց, դ) դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել է ազատազրկման և կրում է պատիժը, ե) դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած, զ) անհամատեղելի պաշտոն է զբաղեցնում և է) նա վեց ամիս անընդմեջ չի հրավիրում համայնքի ավագանու նիստ: Համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե նա մահացել է: Նշված դեպքերում, բացի հրաժարական տալու կամ համայնքի ավագանու նիստ չհրավիրելու հիմքերի, ավագանին կազմում է համայնքի ղեկավարի լիազորությունների դադարեցման մասին արձանագրություն:

Վերը նշված դեպքերում, բացառությամբ ա) և է) կետերի, համայնքի ավագանին կազմում է համայնքի ղեկավարի լիազոր

¹ Մանրամասն տես 2-րդ Գլուխը:

րությունների վաղաժամկետ դադարեցման մասին արձանագրություն: Համայնքի ղեկավարը հրաժարականի մասին իր դիմումը եռօրյա ժամկետում կարող է հետ վերցնել: Համայնքի ղեկավարի կողմից հրաժարականի մասին իր դիմումը եռօրյա ժամկետում հետ չվերցնելու դեպքում աշխատակազմի քարտուղարի կողմից համայնքի ղեկավարի հրաժարականի մասին պատշաճ ձևով ծանուցվելուց հետո համայնքի ավագանին եռօրյա ժամկետում կազմում է համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին արձանագրություն: Արձանագրություն չկազմվելու դեպքում համայնքի ղեկավարի լիազորություններն օրենքի ուժով համարվում են վաղաժամկետ դադարեցված: Այդ դեպքում արձանագրությունը չկազմվելու մասին հաղորդումը աշխատակազմի քարտուղարը ներկայացնում է մարզպետարան:

Վեց ամիս անընդմեջ ավագանու նիստ չիրավիրելու դեպքում ավագանին ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունում է համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշում:

Համայնքի ղեկավարի մահվան հիմքով համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարում են մահվան փաստը լիազոր մարմնի կողմից գրանցվելու օրվանից: Համայնքի ղեկավարի մահվան մասին պետական վկայականը համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը ներկայացնում է մարզպետարան այն ստանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Վերը նշված որոշումը, արձանագրությունը, վկայականը կամ հաղորդումը համապատասխան մարզպետի միջոցով ներկայացվում են կառավարության լիազորած պետական կառավարման մարմին: Վերջինս դրանք ստանալուց հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում, սահմանված կարգով ՀՀ կառավարություն է ներկայացնում տվյալ համայնքում համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն նշանակելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշման նախագիծ (Օրենքի 26-րդ հոդված):

Մինչև 2015թ. սահմանադրական փոփոխությունները Սահմանադրությամբ և Օրենքով (մինչև 16.12.2016թ. խմբագրությամբ) նախատեսվում էր համայնքի ղեկավարի պաշտոնանկու-

յուն: Այդպիսի նախաձեռնության իրավունք էր վերապահվում տվյալ համայնքի ավագանուն և մարզպետին: Այսպես,

Ուշագրավ է նաև պաշտոնանկության ինստիտուտի էվոլյուցիան. ՀՀ Սահմանադրության սկզբնական կարգավորման համաձայն՝ ՀՀ կառավարությանը վերապահված էր համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու, ըստ էության, անսահմանափակ իրավասություն առանց որևէ հիմնավորման կամ համաձայնեցման: 2005թ. սահմանադրական փոփոխություններով սահմանվեց սահմանադրական դատարանի եզրակացության պարտադիր պահանջը, որպես դատական երաշխիք Կառավարության քննարկվող լիազորության հնարավոր կամայական իրացումից դատական երաշխիք: 2015թ. սահմանադրական փոփոխություններով և Օրենքով (16.12.2016թ. խմբագրությամբ) համայնքի ղեկավարի պաշտոնանկության ինստիտուտն ամբողջությամբ հանվեց, ինչը, մեր կարծիքով, միանգամայն արդարացված է ու հիմնավոր, քանի որ տեղական ինքնակառավարումը որպես հանրային իշխանության ինքնուրույն ձև և ժողովրդավարության էական հիմք՝ ճանաչվում և երաշխավորվում է նույն Սահմանադրությամբ (2-րդ և 9-րդ հոդվածներ): Ուստի հանրային իշխանության մեկ սուբյեկտի մարմին(ներ)ը չպետք է և չի կարող կամայականորեն միջամտել հանրային իշխանության մեկ այլ սուբյեկտի մարմին(ներ)ի կազմակերպմանը կամ գործունեության դադարեցմանը՝ նկատի ունենալով նաև, որ վերջիններիս ձևավորվում են ընտրությունների միջոցով:

Համայնքի ղեկավարի պաշտոնի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է ևս մեկ պայման: Օրենքը (25-րդ հոդված) արգելում է համայնքի ղեկավարին անձամբ զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել այլ պաշտոն, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի ստեղծագործական, գիտական և մանկավարժական աշխատանքից: Նշված պայմանները խախտելու դեպքում վերը նշված ընթացակարգով վաղաժամկետ կարող են դադարեցվել համայնքի ղեկավարի լիազորությունները: Ինչպես արդեն վերը նշել ենք, համամասնական ընտրակարգով ընտրված ավագանու դեպքում համայնքի ղեկավարը միաժամանակ համայնքի ավագանու անդամ է:

Օրենքի ներկա կարգավորումների համաձայն՝ ՀՀ կառավարությունը համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնում է միայն այն դեպքում, եթե տվյալ համայնքը, օրենքով սահմանված կարգով, վերակազմակերպվում է որպես այլ վարչատարածքային միավոր:

Համայնքի ղեկավարի քննարկվող յուրօրինակ կարգավիճակի էական տարրն է հանդիսանում նրա *իրավասությունը*: Համայնքի ավագանու իրավական կարգավիճակը քննարկելիս սույն գլխում արդեն վերլուծվել են «իրավասություն» հասկացության բովանդակությունը կազմող տարրերը: Տեղական ինքնակառավարման հիմնախնդիրներով զբաղվող հեղինակների մեծամասնության մոտ տեղական ինքնակառավարման իրավասության տակ հասկացվում է օրենսդրորեն և այլ իրավական ակտերով ամրագրված անժամկետ կամ որոշակի ժամկետով, անհրաժեշտ տնտեսական և ֆինանսական միջոցներով ապահովված տեղական ինքնակառավարման կազմավորումների իրավունքներ, պարտականություններ և տնօրինման առարկաներ, որոնք նրանք իրականացնում են իրենց տարածքներում¹: Այդ սահմանման մեջ ներկայացված դրույթները հավասարապես վերաբերում են համայնքի ղեկավարին, որը հանդիսանում է տեղական ինքնակառավարման կոնկրետ կառույցի վարչական (գործադիր) ոլորտի իրավասությունն իրականացնող մարմինն ու պաշտոնատար անձը:

Օրենքն առանձին հոդված է նվիրել համայնքի ղեկավարի իրավասությանը: Նրանում ամրագրված են համայնքի ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները համայնքի բնակչության կենսագործունեության բազմաթիվ խնդիրների լուծման վերաբերյալ (35-րդ հոդված): Դրանից զատ, Օրենքն առանձին հոդվածներով ներկայացնում է բոլոր այն բնագավառները, որոնցում համայնքի ղեկավարն իրականացնում է իր կոնկրետ գործունեությունը: Այդպիսի բնագավառների թվում Օրենքը վկայակոչում է՝ համայնքի բնակչության և տնտեսվարող սուբյեկտների

¹ Տե՛ս **Овчинников И.И.** Местное самоуправление в системе народо-властия, М., 1999, с. 190, **Тихомиров Ю.А.** Теория компетенции, М., 2001, с. 55-56 և ուրիշներ:

իրավունքների պաշտպանությունը (36-րդ հոդված), տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցությունը (37-րդ հոդված), ֆինանսները (38-րդ հոդված), հասարակական կարգի պահպանությունը (35-րդ հոդված), հանրային միջոցառումների կանոնակարգումը (35.1-րդ հոդված), պաշտպանության կազմակերպումը (36-րդ հոդված), քաղաքաշինությունը և կոմունալ տնտեսությունը (37-րդ հոդված), հողօգտագործումը (38-րդ հոդված), տրանսպորտը (39-րդ հոդված), առևտուրը և ծառայությունները (40-րդ հոդված), կրթությունը, մշակույթը և երիտասարդության հետ տարվող աշխատանքները (41-րդ հոդված), առողջապահությունը, ֆիզիկական կուլտուրան և սպորտը (42-րդ հոդված), աշխատանքի և սոցիալական ծառայությունը (43-րդ հոդված), գյուղատնտեսությունը (44-րդ հոդված), անասնաբուժությունը և բուժսանիտարիան (44.1-րդ հոդված), բնության և շրջակա բնական միջավայրի պահպանությունը (45-րդ հոդված):

Դրա հետ մեկտեղ, Օրենքը, բնութագրելով տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, դրանք բաժանում է՝ ա) սեփական և բ) պետության կողմից պատվիրակված լիազորությունների: Իր հերթին, սեփական լիազորությունները բաժանում է պարտադիր և կամավոր լիազորությունների (10-րդ հոդված):

Մեր խնդիրը չէ մանրամասն քննարկել համայնքի ղեկավարի կողմից գործունեության տարբեր բնագավառներում իրականացվող պարտադիր և կամավոր լիազորությունների բովանդակությունը¹: Համայնքի ղեկավարի իրավասության իրականացման համատեքստում առանձնակի կարևորություն է ներկայացնում նրա կողմից պետության պատվիրակված լիազորությունների իրականացման հիմնախնդիրը:

Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենսդրությունը պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրացումը բացառապես վերապահում է համայնքի ղեկավարի իրավասությանը (Օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մաս): Այդ է վկայում նաև Օրենքի «Համայնքի ղեկավարի ընդհանուր լիազորությունները» վերտառությամբ 35-րդ հոդվածը, որտեղ հստակ սահման-

¹ Այդ մասին կխոսվի սույն Գլխի 4-րդ ենթաբաժնում:

վում է, որ համայնքի ղեկավարը. «...օրենքով կամ կառավարության սահմանած կարգով ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ կազմակերպում և ղեկավարում է պետության պատվիրակած լիազորությունների իրականացումը» (27-րդ կետ):

Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնին (համայնքի ավագանուն), ապա ի տարբերություն համայնքի ղեկավարի, նրա (համայնքի ավագանու) համար Օրենքը նշված բնագավառներում կոնկրետ լիազորություններ չի նախատեսում: Համայնքի ավագանին համայնքի ղեկավարի հետ համատեղ մասնակցում է համայնքի ղեկավարի համար օրենքով նախատեսված գործունեության բնագավառներում միայն համայնքի պարտադիր և կամավոր որոշ լիազորությունների իրականացմանը:

Սահմանելով համայնքի ղեկավարի գործունեության կոնկրետ բնագավառները՝ Օրենքը միաժամանակ մատնանշում է, թե նրանցում որ լիազորություններն են հանդիսանում պետության կողմից պատվիրակված, որոնք՝ սեփական-պարտադիր: Խնդիրն այն է, որ այդ լիազորություններից յուրաքանչյուր խմբի իրականացման համար նախատեսվում է տարբեր պայմաններ: Այսպես, պարտադիր լիազորություններն ենթակա են համայնքի կողմից առաջնահերթությամբ և օրենքով սահմանված կարգով կատարման: Իսկ պետության կողմից պատվիրակված լիազորություններն, ըստ Օրենքի, իրականացվում են օրենքով կամ ՀՀ կառավարության սահմանված կարգով և ամբողջովին պարտադիր կերպով ֆինանսավորվում են պետական բյուջեից՝ պետության պատվիրակած լիազորությունների ֆինանսավորման նպատակով նախատեսված հատկացումների հաշվին: Մինչդեռ, համայնքի և կամավոր լիազորություններն իրականացվում են բացառապես պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներից բացի հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում, քանի որ, ի տարբերություն պարտադիրների, կամավոր խնդիրներով համայնքային կյանքի բնականոն ընթացքն ուղղարկվորեն պայմանավորված չէ (10-րդ հոդվածի 3-րդ մաս):

Օրենքը համայնքի ղեկավարի իրավասության վերաբերյալ

35-րդ հոդվածում, ամրագրելով նրա գործունեության բնագավառներում իր (համայնքի ղեկավարի) կողմից իրականացվող լիազորությունները, միաժամանակ առանձնացնում է այն լիազորությունները, որոնք համայնքի ղեկավարը նշված բնագավառներում պետք է իրականացնի որպես պետության պատվիրակած լիազորություններ (27-29-րդ կետեր):

Այդ լիազորություններն ավելի ծավալուն են *քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների պաշտպանության բնագավառում*: Համայնքի ղեկավարը համայնքի տարածքում օրենքով նախատեսված կարգով սահմանում է խնամակալություն, հոգաբարձություն և իրականացնում այդ բնագավառների մարմինների օրենքով վերապահված լիազորություններ, կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեությունն այն համայնքներում, որտեղ գտնվում են համապատասխան կառույցներ: Համայնքի ղեկավարը պետության պատվիրակած լիազորությունների շրջանակում միջոցներ է ձեռնարկում իր համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և դրանց պետական գրանցումն ապահովելու ուղղությամբ, վավերացնում է համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը, հաստատում նրանց՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունք, աշխատավարձ, նպաստներ և կրթաթոշակներ, բանկային ավանդներ ու փոստային առաքումներ ստանալու լիազորագիրը, եթե այդ համայնքում չկա մշտապես գործող նոտար: Բացի այդ, համայնքի ղեկավարը, անհրաժեշտություն առաջանալու դեպքում, միջոցներ է ձեռնարկում տեխնածին աղետները կանխելու, տարերային և տեխնածին աղետների հետևանքները վերացնելու ուղղությամբ:

Համայնքի ղեկավարը *պաշտպանության կազմակերպման* բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները. աջակցում է զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների, հաշմանդամ զինծառայողների սոցիալական խնդիրների լուծմանը, աջակցում է բնակչության, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության միջոցառումների իրականացմանը, ապահովում է համայնքի աշխարհագրային պայմանական բրիգադի և (կամ) գումարտակի համալրումն աշխարհագրայիններով՝ համապա-

տասխան համայնքում հաշվառված քաղաքացիներից:

Համայնքի ղեկավարը *արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառում* իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները. կազմակերպում է համայնքի քաղաքացիական պաշտպանության միջոցառումների պլանավորումը և իրականացումը, իրականացնում է համայնքի բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանումը, բնակչության պատսպարումը և անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը, ստեղծում է համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայություններ, ստեղծում է քաղաքացիական պաշտպանության կազմակերպման համար անհրաժեշտ ուժեր և ապահովում այդ ուժերի պատրաստակալությունը, իրականացնում է վթարային և վերականգնողական միջոցառումներ՝ արտակարգ իրավիճակներում համայնքային ենթակայության կենսաապահովման օբյեկտների անխափան աշխատանքն ապահովելու համար, կազմակերպում է փրկարարական աշխատանքներ համայնքի տարածքում, իրականացնում է սեյսմիկ ռիսկը նվազեցնելու, արտակարգ իրավիճակների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման միջոցառումներ համայնքի տարածքում:

Համայնքի ղեկավարը *տրանսպորտի* բնագավառում իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունը. իրավասու մարմինների ներկայացմամբ հաստատում և թույլատրում է համայնքային ենթակայության ճանապարհների երթևեկության նշանների տեղակայումն ու հանումը: Երթևեկության այն նշանները, որոնց տեղադրումը համաձայնեցված չէ համայնքի ղեկավարի հետ, իրավական ուժ չունեն:

Համայնքի ղեկավարը *առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում* իրականացնում է պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները. կազմակերպում է համայնքի տարածքում արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնության և սպասարկման իրականացումը, աջակցում է համայնքի տարածքում իրականացվող վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ և սանիտարահակահամաճարակային աշխատանքներին, աջակցում է առողջ ապրե-

լակերայի, ֆիզիկական ակտիվության քարոզչության և ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների օգտագործման և երկրորդային ծխով պայմանավորված վնասի վերաբերյալ իրականացվող իրազեկման աշխատանքներին:

Պետությունը լիազորում է համայնքի վարչական (գործադիր) գործունեություն իրականացնող մարմնին իր անունից իրականացնելու որոշ լիազորություններ *մշակույթի և սոցիալական ծառայությունների բնագավառներում*: Մասնավորապես, համայնքի ղեկավարը համայնքի տարածքում կազմակերպում է Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի, ինչպես նաև սոցիալական օգնության ծառայության իրականացման հետ կապված միջոցառումներ:

Համայնքի ղեկավարը *քաղաքաշինության բնագավառում* իրականացնում է հետևյալ պատվիրակված լիազորությունները. համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Պետությունը տեղական ինքնակառավարման միջոցով իրականացնում է որոշ *տնտեսական բնույթի* լիազորություններ: Համայնքի ղեկավարը պետության պատվիրակված լիազորությունների համատեքստում, օրենքով սահմանված կարգով, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը, ցամաքային տարածքի ծածկույթի ընթացիկ դասակարգումը և կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը, համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան օտարում կամ օգտագործման է տրամադրում հա-

մայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերը, ապահովում է համայնքի տարածքում գտնվող գեոդեզիական կետերի և համայնքի սահմանանիշերի պահպանությունը:

Ինչ վերաբերում է *բնության և շրջակա միջավայրի պահպանության* խնդիրներին, ապա այստեղ համայնքի ղեկավարը պետության պատվիրակած լիազորությունների իրացման արդյունքում օրենքով սահմանված կարգով հսկողություն է իրականացնում համայնքի սեփականություն հանդիսացող հողերում բնապահպանական միջոցառումների իրականացման նկատմամբ, ապահովում է հողերի պահպանությունը հողատարումից, ոռոգումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով, արտադրական և կենցաղային թափոններով աղտոտումից (Օրենքի 36-52-րդ հոդվածներ):

Տեղական ինքնակառավարման համակարգին պետության պատվիրակած լիազորությունների ինստիտուտն ունի չափազանց կարևոր դեր տեղական ինքնակառավարման ամբողջ համակարգի գործունեության արդյունավետության հարցում: Խնդիրն այն է, որ պատվիրակված լիազորությունները նպատակ ունեն կոնկրետ հարցի լուծումը փոխանցել իշխանության այն մակարդակին, որն ի վիճակի է օպերատիվ և արդյունավետ իրականացնել այն:

Համայնքի ղեկավարի իրավական ակտերը:

Համայնքի ղեկավարը, ինչպես ամեն մի կազմավորման (պետական և ոչ պետական) մարմին, իր գործունեության իրականացման արդյունքում ընդունում է համապատասխան իրավական ակտեր: Օրենքի համաձայն՝ համայնքի ղեկավարը իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կազմում է արձանագրություններ և արձակում կարգադրություններ (35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետ):

Համայնքի ղեկավարը նորմատիվ իրավական ակտեր ընդունելուց հետո պարտավոր է երկօրյա ժամկետում դրանք ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցնել համայնքի ավագանու նստավայրում՝ բոլորի համար տեսանելի ու մատչելի տեղում: Պաշտոնական համացանցային կայք ունեցող համայնքներում սույն կետով նախատեսված նորմատիվ ակտերը

երկօրյա ժամկետում տեղադրվում են կայքում: Վերջիններս համայնքի ղեկավարի որոշումները ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում կարող են պահանջել հրավիրել ավագանու արտահերթ նիստ, եթե համայնքի ղեկավարի որոշումն, իրենց կարծիքով, հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին: Համայնքի ավագանու անդամը համայնքի ղեկավարի որոշումները ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կարող է Օրենքի 17-րդ հոդվածով սահմանված կարգով նախաձեռնել ավագանու արտահերթ նիստ, եթե համայնքի ղեկավարի որոշումը, իր կարծիքով, հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին: Այս դեպքում ավագանու նիստ պետք է հրավիրվի այդ մասին պահանջը համայնքի ղեկավարին ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում: Եթե համայնքի ավագանին գտնի, որ համայնքի ղեկավարի որոշումը հակասում է օրենսդրությանը կամ ավագանու որոշումներին, ապա նա պարտավոր է համայնքի ղեկավարին ներկայացնել գրավոր բողոք՝ համապատասխան հիմնավորումներով, առաջարկելով համայնքի ղեկավարին փոփոխելու իր որոշումը: Համայնքի ղեկավարի որոշումը փոփոխելու մասին համայնքի ավագանու որոշումը համայնքի ղեկավարին հանձնելու պահից համայնքի ղեկավարի որոշման գործողությունը կասեցվում է մինչև համայնքի ղեկավարի կողմից դրա քննարկումը: Համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում պարտավոր է քննարկել համայնքի ավագանու որոշումը և դրա վերաբերյալ կայացնել իր որոշումը՝ օրենսդրությանը կամ համայնքի ավագանու որոշումներին համապատասխանեցնելու կամ համայնքի ավագանու որոշումը չընդունելու մասին: Իր որոշումը համայնքի ղեկավարը պարտավոր է անմիջապես ուղարկել համայնքի ավագանու անդամներին: Համայնքի ղեկավարի կողմից սույն մասով նշված համապատասխան որոշումներից որևէ մեկն ընդունելու պահից որոշման կասեցումը դադարեցվում է: Եթե համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում համայնքի ավագանու որոշման վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում, ապա համայնքի ղեկավարի որոշումը համարվում է չընդունված: Համայնքի ղեկավարի որոշումները համայնքի ավագանին կարող է բողոքարկել դատական կարգով:

Նույն կարգով, պետական լիազորված մարմինը, ինչպես

նաև համապատասխան մարզպետը կարող են տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում համայնքի ղեկավարի) որոշումները, գործողությունները և անգործությունը բողոքարկել վարչական դատարան: Իրենց հերթին, տեղական ինքնակառավարման մարմինները կարող են դատարանում բողոքարկել համայնքի իրավունքները խախտող պետական մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումներն ու գործողությունները:

Համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների և նախագծերի նախապատրաստման, հրապարակման և դրանց կատարման կազմակերպման նկատմամբ վերահսկողության գործառույթները տեղական ինքնակառավարման մասին օրենքով վերապահված են համայնքի ղեկավարի աշխատակազմին:

1.3 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԶԱԿՑՈՂ ՍԱՐՄԻՆՆԵՐԸ (ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ, ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԱԿՈՐՈՒՄՆԵՐ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Նախորդ երկու ենթագլուխներում ներկայացված համայնքի ավագանու և ղեկավարի լիազորությունների իրացումը միանձնյա կերպով գործնականում անհնար է՝ առանց համապատասխան արհեստավարժ, մասնագիտացված մարմինների աջակցության: Այդ իսկ պատճառով Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով համայնքի ղեկավարի ընդհանուր երեսուն լիազորությունների թվարկումից հետո սահմանվում է, որ նա իր լիազորություններն իրականացնում է համայնքային վարչական և համայնքային հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի, համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Ստորև կներկայացվեն տեղական ինքնակառավարման մարմինների աջակցող մարմինները բոլոր՝ մեկ կամ բազմաբնակավայր, համայնքների համար:

Համայնքի ավագանին չունի առանձին աջակցող մարմին. Նրա, ինչպես և համայնքի ղեկավարի, լիազորությունների լիար-

ժեք ու արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններում նրանց մասնակցությունն ապահովում է աշխատակազմը (Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մաս):

Աշխատակազմն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց գրանցում իրականացնող մարմնի կողմից ենթակա է հաշվառման: Աշխատակազմի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը:

Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը՝ օրենքով, իրավական այլ ակտերով, համայնքի ղեկավարի որոշումներով, աշխատակազմի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում կամ գործառույթների շրջանակում, մասնավորապես՝

1) ապահովում է համայնքի ավագանու նիստերի նախապատրաստումը, արձանագրումը, աջակցում է ավագանու անդամների գործունեությանը.

2) ապահովում է աշխատակազմի գործավարության, նամակագրության և արխիվային գործի վարումը.

3) կազմակերպում և ապահովում է համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստումը.

4) կազմակերպում է համայնքի ղեկավարի և ավագանու կողմից քաղաքացիների ընդունելությունը, հսկողություն է իրականացնում նրանց հանրագրերի, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ, աջակցում է ինքնակառավարմանը բնակչության մասնակցության գործընթացին

5) վերահսկողություն է իրականացնում համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների կատարման, ինչպես նաև աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ.

6) նշանակում և ազատում է աշխատակազմի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

7) իր լիազորությունների և գործառույթների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս պարտադիր կատարման ցու-

ցումներ:

Աշխատակազմի քարտուղարը պատասխանատվություն է կրում օրենքների, իրավական այլ ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, աշխատակազմի կանոնադրության պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

Աշխատակազմի իրավական վիճակի, կառուցվածքի, կազմակերպման, վերակազմակերպման և գործունեության այլ առանձնահատկությունները կարգավորվում են «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքով:

Համայնքի ղեկավարն ունի տեղակալ (տեղակալներ): Համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը համայնքային քաղաքական պաշտոն է: Համայնքի ղեկավարի տեղակալին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը: Համայնքի ղեկավարի տեղակալն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները: Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ տեղակալը (տեղակալներից մեկը) փոխարինում է համայնքի ղեկավարին նրա բացակայության ժամանակ (Օրենքի 30-րդ հոդված):

Վարչական ղեկավարը.

Բազմաբնակավայր համայնքների կազմում ընդգրկված, 500-ից ավելի հաշվառված բնակիչ ունեցող յուրաքանչյուր բնակավայր, բացառությամբ համայնքի կենտրոնի, ունի վարչական ղեկավար:

Վարչական ղեկավարը՝

1) բնակավայրի տարածքում գործում է համայնքի ղեկավարի անունից.

2) հետևում է բնակավայրի տարածքում մատուցվող հանրային ծառայությունների իրականացմանը և այդ մասին տեղեկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին.

3) աջակցում և կազմակերպում է իր բնակավայրում համայնքի ավագանուն, համայնքի ղեկավարին և աշխատակազմի քարտուղարին Օրենքով վերապահված մի շարք լիազորությունների իրականացումը.

4) համայնքի ավագանու սահմանած կարգին համապատասխան անցկացնում է բնակավայրին վերաբերող հարցերի հանրային լսումներ կամ քննարկումներ և արդյունքների մասին

տեղեկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին.

5) մասնակցում է համայնքի ավագանու նիստերին.

6) ավագանուն առաջարկություններ է ներկայացնում ավագանու նիստերի օրակարգի և քննարկվող հարցերի, համայնքի ղեկավարին՝ բնակավայրում գտնվող համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնի նշանակելու և պաշտոնից ազատելու, բնակավայրում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օտարելու կամ օգտագործման տրամադրելու վերաբերյալ և իրականացնում է աշխատակազմի կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

Համայնքի ղեկավարը պատասխանատու է վարչական ղեկավարի գործունեության համար (Օրենքի 31-32-րդ հոդվածներ):

Միջհամայնքային միավորումներ.

«Սահմանադրության 189-րդ հոդվածի համաձայն տեղական ինքնակառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով համայնքների ավագանիները կարող են ստեղծել միջհամայնքային միավորումներ: Հանրային շահերից ելնելով՝ միջհամայնքային միավորումներ կարող են ստեղծվել նաև օրենքով՝ Կառավարության առաջարկությամբ: Միջհամայնքային միավորումը կարող է իրականացնել միայն այնպիսի լիազորություններ, որոնք նրան վերապահված են օրենքով կամ համայնքների ավագանիների որոշումներով: Միջհամայնքային միավորումը հանրային իրավունքի իրավաբանական անձ է:

Օրենքի 100-րդ հոդվածով, կրկնելով Սահմանադրության 189-րդ հոդվածի դրույթները, սահմանվում է, որ միջհամայնքային միավորումների մարմինները, լիազորությունները, դրանց իրավական, տնտեսական, ֆինանսական հիմքերն ու երաշխիքները, ինչպես նաև գործունեության կարգը սահմանվում են «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքով:

Օրենքով սահմանվում է նաև միջհամայնքային միավորումների ստեղծման և լուծարման կարգը, այն է՝ համայնքների *ավագանիների կողմից* միջհամայնքային միավորումները ստեղծվում են տեղական ինքնակառավարման մարմինների *սեփական լիազորությունների* իրականացման համար: Համայնքների ավագանիների նախաձեռնությամբ միջհամայնքային միավորումները ստեղծվում և լուծարվում են համայնքների ավագանիների ընդունած որոշումների հիման վրա: Մինչդեռ *պետության կողմից*

համայնքներին պատվիրակված լիազորությունների իրականացման համար միջհամայնքային միավորումներն ստեղծվում են միայն օրենքով: Օրենքով միջհամայնքային միավորումներն ստեղծվում և լուծարվում են ՀՀ կառավարության առաջարկությամբ՝ համապատասխան օրենքի ընդունմամբ:

Միավորումը ինքնուրույն տնօրինում է իր սեփականությունը, օգտագործում է իրեն օգտագործման իրավունքով հանձնված գույքը, ունի եկամուտների և ծախսերի նախահաշիվ, ինչպես նաև ՀՀ զինանշանի պատկերով և իր անվանմամբ կնիք: Միավորումը գործում է իր կանոնադրության համաձայն: Միավորման խորհուրդն իրավունք ունի իրեն փոխանցված լիազորությունների շրջանակում ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ և անհատական իրավական ակտեր: Միավորմանը փոխանցված լիազորությունների շրջանակում միավորման անդամ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների ընդունած ակտերը գործում են մինչև միավորման խորհրդի կողմից այդ հարաբերությունները կարգավորող ակտերի ընդունումը: Այդ պահից սկսած՝ միավորմանը փոխանցված լիազորությունների շրջանակում միավորման անդամ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների ընդունած ակտերն ուժը կորցրած են ճանաչվում:

Միավորումները կարող են ստեղծվել կամավոր՝ երկու և ավելի համայնքների ավագանիների կողմից և օրենքով՝ ՀՀ կառավարության առաջարկությամբ:

Օրենքով ստեղծված միավորմանը կարող են փոխանցվել միայն միավորման մեջ մտնող համայնքի ղեկավարներին պետության պատվիրակած լիազորությունները:

Կամավոր միավորմանը կարող են փոխանցվել միայն միավորման մեջ մտնող համայնքի ղեկավարների պարտադիր և կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, ինչպես նաև ավագանու լիազորությունները: Ընդ որում միավորմանը փոխանցված լիազորությունները կարող է իրականացնել միայն միավորումը: Ավելին, միավորմանը փոխանցված լիազորությունների շրջանակում միավորման անդամ համայնքների ավագանիները և համայնքների ղեկավարները որոշումներ չեն ընդունում: Միավորմանը տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան լիազորությունները փոխանցե-

լիս միավորմանը փոխանցվում են նաև այլ օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված վարչական պատասխանատվության ենթարկելու, ենթարկվելու, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններում մասնակցություն ունենալու հետ կապված իրավասությունները:

Միավորման մարմիններն են՝ միավորման խորհուրդը և միավորման խորհրդի նախագահը: Խորհուրդը կազմված է միավորման անդամ համայնքների ղեկավարներից և ավագանու մեկական անդամներից:

Խորհրդի անդամները և խորհրդի նախագահն իրենց լիազորություններն իրականացնում են հասարակական հիմունքներով, սակայն կարող են խորհրդի որոշմամբ ստանալ դրամական փոխհատուցում:

Խորհրդի լիազորությունները սահմանվում են օրենքով և միավորման կանոնադրությամբ:

Խորհրդի որոշումները միավորման անդամ համայնքի ավագանին կարող է բողոքարկել դատական կարգով: Խորհուրդն իր գործունեությունը կազմակերպում է նիստերի և աշխատանքային քննարկումների միջոցով: Խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության: Խորհրդի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա է խորհրդի անդամների կեսից ավելին: Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը: Նրա բացակայության դեպքում խորհրդի նիստը վարում է խորհրդի անդամներից մեկը՝ միավորման կանոնադրությամբ սահմանված կարգով:

Խորհրդի նախագահին խորհրդի անդամների կազմից ընտրում և փոփոխում է խորհուրդը՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, որի ընտրության կարգը սահմանվում է միավորման կանոնադրությամբ:

Խորհրդի նախագահը ունի Խորհրդի կազմակերպման և գործունեության հետ կապված մի շարք լիազորություններ. իրավիրում և վարում է խորհրդի նիստերը, խորհրդի հաստատմանն է ներկայացնում միավորման աշխատակազմի գործավարության կարգի նախագիծը, պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում աշխատակազմի աշխատողներին, ստորագրում է խորհրդի որոշումները և իրականացնում է օրենքով նախատեսված այլ լիազորություններ:

Խորհրդի նախագահն իր գործունեությունն իրականացնում

է աշխատակազմի միջոցով: Աշխատակազմի կառուցվածքը և աշխատողների քանակը հերթական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատման հետ սահմանում է խորհուրդը՝ խորհրդի նախագահի ներկայացմամբ: Աշխատակազմի աշխատողները համարվում են պայմանագրային աշխատողներ:

Միավորումը, որպես իրավաբանական անձ իր գործունեության ընթացքում լիազորությունների իրականացման նպատակով կարող է ձեռք բերել շարժական և անշարժ գույք՝ որպես սեփականություն, ինչպես նաև գույքային այլ իրավունքներ: Նրան անդամակցող համայնքի ավագանու որոշմամբ միավորմանը օգտագործման իրավունքով կարող են հատկացվել շենքեր, շինություններ և այլ գույք, ըստ խորհրդի հաստատած ծախսային նախահաշվի սահմանված չափով և ժամկետում միավորմանը վճարում են մասհանումներ:

Միավորման ֆինանսավորման աղբյուր կարող են հանդիսանալ միավորման տնտեսական գործունեությամբ ստացված եկամուտները, դրամաշնորհները, նվիրատվությունները, պետական բյուջեն և օրենքով չարգելված այլ, այդ թվում՝ օտարերկրյա աղբյուրները:

Միավորմանը փոխանցված պետության պատվիրակած լիազորությունների իրականացման նպատակով միավորմանը վճարվող մասհանումները կատարվում են բացառապես պետական բյուջեից՝ այդ լիազորությունների իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցներից:

Ընդ որում սահմանված չափով և ժամկետում որևէ համայնքի կողմից մասհանումներ չկատարելը խորհրդի կողմից կարող է բողոքարկվել դատարան:

Համայնքային հիմնարկներ և կազմակերպություններ.

Համայնքի ավագանին համայնքի բնակչության սոցիալ-մշակութային, կենցաղ-սպասարկման ոլորտի խնդիրների լուծման համար օրենքով սահմանված կարգով իր որոշմամբ կարող է հիմնադրել, վերակազմակերպել կամ լուծարել համայնքային հիմնարկներ, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ՝ մասնագիտացված դպրոցները, ակումբներ, մշակույթի տներ, թատրոններ, կինոթատրոններ, թանգարաններ, գրադարաններ, ցուցահանդեսներ, շուկաներ, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաս-

տատություններ և տրանսպորտային կազմակերպություններ, փողոցներ, հրապարակները, կամուրջները, բազմաբնակարան շենքերի բնակարանները և ոչ բնակելի տարածքները, ընդհանուր օգտագործման տարածքները, գերեզմանատները, ինչպես նաև վարչական շենքերը, կրթական, մշակութային, մարզական և այլ շենքերն ու շինությունները, տրանսպորտային միջոցները, գազամատակարարման, էլեկտրամատակարարման ներհամայնքային ցանցերը, խմելու և ոռոգման ջրատարները, ինչպես նաև անշարժ ու շարժական այլ գույքի կառավարման հիմնարկներն ու կազմակերպությունները:

Օրենքի 88-րդ հոդվածի համաձայն 1. Համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների՝ ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջեռուցման, աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման, բազմաբնակարան շենքերի սպասարկման և օրենքով սահմանված դեպքերում այլ ծառայությունների իրականացման համար համայնքի ավագան ին կարող է սահմանել համայնքի բյուջե մուտքագրվող վճարներ:

Վճարների չափը համայնքի ղեկավարի ներկայացմամբ հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ: Եթե այդ ծառայություններն իրականացնում են համայնքային հիմնարկները, ապա գանձված գումարն ուղղվում է համայնքի բյուջե:

Այդ ծառայությունների մատուցումն առևտրային կազմակերպություններն իրականացնում են մրցութային կարգով, որին մասնակցում է նաև համայնքային՝ այդ ոլորտում ծառայություն մատուցող առևտրային կազմակերպությունը:

Համայնքի սեփականություն հանդիսացող առևտրային կազմակերպության կողմից մրցույթը շահելու դեպքում ծառայությունների իրականացման համար վճարները գանձում է տվյալ կազմակերպությունը և այն ուղղում համայնքի բյուջե:

Եթե մրցույթի հաղթող է ձանաչվում համայնքի սեփականություն չհանդիսացող կամ մասնակցություն չունեցող այլ կազմակերպություն, ապա հաղթող կազմակերպության հետ համայնքը կնքում է պայմանագիր, որում, մրցույթի արդյունքներից ելնելով, ամրագրվում են ծառայության իրականացման պայմանները, դրանց դիմաց գանձվող վճարները, որոնք գանձում է տվյալ կազմակերպությունը (բացառությամբ օրենքով նախատեսված

դեպքերի) և այն ուղղում համայնքի բյուջե:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր համայնք կարող է հիմնադրել միայն մեկ կառավարչական հիմնարկ՝ համայնքապետարանի աշխատակազմ, որի մասին վերն արդեն մանրամասն խոսվել է: Միաժամանակ համայնքը, որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 62-րդ հոդվածի համաձայն կարող է ստեղծել սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնող անսահմանափակ թվով հիմնարկներ: Համայնքի անունից համայնքի ավագանին իրականացնում է համայնքային կառավարչական հիմնարկի հիմնադրի գործառույթներ:

Ավագանին իր որոշմամբ համաձայնություն է տալիս համայնքի ղեկավարի ներկայացրած՝ համայնքային հիմնարկների ղեկավարների թեկնածուներին, օրենքով սահմանված կարգով և դեպքերում հաստատում է համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների և վերստուգիչ մարմինների կազմերը: Այդ մարմիններում ավագանու առաջադրած ներկայացուցիչների թիվը կարող է լինել միայն դրանց կազմի թվի կեսից պակաս:

Ավագանին որոշում է կայացնում հիմնարկների և կազմակերպությունների անվանակոչման և անվանափոխման, կանոնադրությունների, կառուցվածքի, աշխատողների քանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման վերաբերյալ:

Համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով ավագանու որոշմամբ նշանակում և ազատում է համայնքային հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներին, բացառությամբ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների, որոնք նշանակվում են մրցույթի արդյունքներով: Համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատում է լիազոր պետական մարմինը՝ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը: Համայնքի բնակավայրերում գտնվող համայնքային հիմնարկների, կազմակերպությունների ղեկավարներին պաշտոնի նշանակելիս և պաշտոնից ազատելիս խորհրդակցում է վարչական ղեկավարի հետ: Ավա-

գանու կողմից երկու անգամ համաձայնություն չտալու դեպքում համայնքի ղեկավարը նշանակում է կատարում առանց համաձայնեցնելու ավագանու հետ: Մինչև համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի կայացումը համայնքի ղեկավարը կարող է նշանակել համայնքային ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար ոչ ավելի, քան վեց ամիս ժամկետով: Եթե հայտարարված մրցույթը համարվում է չկայացած, ապա ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ երեք ամիս ժամկետով:

Համայնքային հիմնարկների և կազմակերպությունների գործունեությունը կարևոր է նաև համայնքային սեփականության, համայնքի բյուջեի համալրման տեսանկյունից, քանի որ հիմնարկները կատարած աշխատանքի, մատուցվող ծառայությունների դիմաց տեղական տուրքերի ու վճարների, իսկ առևտրային ու ոչ առևտրային կազմակերպությունները՝ ձեռնարկատիրական գործունեության արդյունքում բաժնեմասից տարեկան մասհանումների ձևով ապահովում են եկամուտներ:

1.4 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ Սահմանադրության 179-րդ հոդվածի համաձայան՝ տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:

Հայրենական օրենսդրությունը տեղական նշանակության հարցերի շարքին է դասում համայնքային սեփականության կառավարումը, տեղական բյուջեի ձևավորումը, հաստատումը և կատարումը, օրենքով նախատեսված սահմաններում տեղական հարկերի և տուրքերի սահմանումը և այլն (լիազորությունները հանգամանորեն սահմանված են «Տեղական ինքնակառավար-

ման մասին» ՀՀ օրենքի¹ 4-6-րդ գլուխների նորմերով):

Տեղական նշանակության հարցերի լուծման և, ընդհանրապես, տեղական ինքնակառավարման արդյունավետությունը մեծապես կախված է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների բնույթից ու շրջանակից:

Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները կարելի է սահմանել որպես այդ մարմինների՝ տեղական նշանակության հարցերի լուծմանն ուղղված ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքների և պարտականությունների ամբողջություն:

Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանվում են ՀՀ Սահմանադրությամբ և Օրենքով, այլ օրենքներով, ինչպես նաև ավագանու որոշումներով: Սահմանադրության 182-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված: Համայնքի պարտադիր խնդիրները սահմանվում են օրենքով, իսկ կամավոր խնդիրները՝ համայնքի ավագանու որոշումներով: Պետական մարմինների լիազորությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով դրանք օրենքով կարող են պատվիրակվել տեղական ինքնակառավարման մարմիններին:

Այսպես, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխով սահմանված են այդ ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները: Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններ են սահմանված նաև «Թափոնների մասին» ՀՀ օրենքով, որն ամրագրում է թափոնների գործածության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը (11-րդ հոդվածը), «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքով, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները իրականացնում են ճյուղային (գերատեսչական) և տեղական (համայնքային) հաշվառում (վիճակագրություն) վարչական ռեգիստրների վարման միջոցով (13-րդ հոդված), «Քաղաքաշինության մասին» Հայաս-

¹ Այսուհետ՝ Օրենք:

տանի Հանրապետության օրենքով, որով սահմանվում է քաղաքաշինության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը (11-րդ հոդված) և այլն:

Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն ունեն հետևյալ բնորոշ գծերը.

1. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն ամրագրվում են Սահմանադրության օրենքով և ավագանու որոշումներով:

2. Ոչ մի պետական մարմին իրավասու չէ իր հայեցողությամբ ու նախաձեռնությամբ իրականացնելու տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները.

Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ամբողջականության ու բացառիկության սկզբունքը. Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացմանը միջամտության դեպքերն ու կարգը սահմանվում են միայն օրենքով (5-րդ կետ)¹: Ընդ որում Օրենքի 95-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը միջամտության և հսկողության դեպքերն ու կարգը սահմանվում են օրենքով և պետք է համաչափ լինեն նման միջամտությամբ կամ հսկողությամբ հետապնդվող իրավաչափ նպատակին, և հաշվի առնվի համայնքի բնակիչների հանրային շահը:

3. Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց լիազորությունների սահմաններում ինքնուրույն են: «Տեղական ինքնակառավարման մասին» Եվրոպական խարտիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները, օրենքով սահմանված շրջանակներում, գործողությունների լիակատար ազատություն ունեն իրականացնելու իրենց նախաձեռնությունները՝ ցանկացած հարցի հետ կապված, որը դուրս չէ ի-

¹ Մինչև 16.12.16թ. թիվ ՀՕ-237-Ն օրենքով փոփոխություններ ու լրացումներ կատարելը Օրենքի 70-րդ հոդվածով սահմանվում էր, որ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացումը պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից արգելվում է, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով:

րենց իրավասությունց և վերապահված չէ իշխանության այլ մարմնի իրավասությամբ: Նույնաբովանդակ դրույթ է պարունակում Օրենքի 8-րդ հոդվածը, որը տեղական ինքնակառավարման սկզբունքների շարքում նշում է ընդհանուր իրավասությունը՝ համայնքային շահերին վերաբերող, ցանկացած գործունեության իրականացման իրավունքն է, եթե օրենքով այլ մարմինների դրանք վերապահված չեն և ինքնուրույնությունը՝ տեղական ինքնակառավարման իրավունքի իրականացումը՝ ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ, ընդհանուր, հավասար, ազատ ընտրական իրավունքի հիման վրա ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով (1-ին և 2-րդ կետեր): Ավելին, համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է (Սահմանադրության 180-րդ հոդված), ինչը նշանակում է, որ Սահմանադրությամբ ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները տարածվում են նաև համայնքի վրա, այնքանով, որքանով դրանք իրենց էությանը կիրառելի են համայնքի նկատմամբ (74-րդ հոդված): Հետևաբար դրանք չեն կարող սահմանափակվել օրենքով՝ Սահմանադրության համաձայն համայնքի պարտադիր խնդիրները սահմանվում են օրենքով, իսկ կամավոր խնդիրները՝ ավագանու որոշմամբ (183-րդ հոդված):

4. Պարտադիր խնդիրների լուծման համար սահմանված սեփական լիազորությունները ենթակա են համայնքի կողմից առաջնահերթությամբ և օրենքով սահմանված կարգով կատարման (Օրենքի 10-րդ հոդվածի 9-րդ մաս):

5. Պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացումը կարող է սույն օրենքով փոխանցվել համայնքի ղեկավարներին՝ որպես պետության պատվիրակած լիազորություններ: Պետության պատվիրակած լիազորություններն իրականացվում են կառավարության սահմանած կարգով: Դրանք ամբողջովին և պարտադիր ֆինանսավորվում են պետական բյուջեից՝ պետության պատվիրակած լիազորությունների ֆինանսավորման նպատակով նախատեսված հատկացումների հաշվին (Օրենքի 10-րդ հոդվածի 6-8-րդ մասեր):

6. Տեղական ինքնակառավարման մարմինների՝ Օրենքի իմաստով սահմանված սեփական լիազորություններն ուղղված են

բացառապես համայնքի պարտադիր խնդիրների լուծմանը (10-րդ հոդվածի 5-րդ մաս): Համայնքի պարտադիր խնդիրները սպառիչ թվարկված են Օրենքի 12-րդ հոդվածով: Դրանք առավելապես երկրորդում են ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակները, որոնց իրագործումը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համար իրենց իրավասությունների և հնարավորությունների շրջանակներում պարտադիր է (Սահմանադրության 87-րդ հոդված):

7. Նախորդ կետից էլ հետևություն կամավոր լիազորությունները սպառիչ չեն՝ այլ օրենքներով և ավագանու որոշումներով սահմանված լիազորությունները տեղական ինքնակառավարման մարմինները կարող են իրականացնել միայն որպես *կամավոր լիազորություններ*:

Տեղական ինքնակառավարման մարմինները կարող են իրականացնել նաև *համայնքի շահերին վերաբերող և օրենքին չհակասող ցանկացած գործունեություն*: Այսպիսով, օրենքով չնախատեսված լիազորությունները կարող են իրավաչափ համարվել, եթե բավարարում են հետևյալ պահանջներին՝ ա) վերաբերում են համայնքի շահերին և բ) չեն հակասում օրենքին:

Այսպիսով, տեղական նշանակության հարցերի լուծման շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմինները գործում են ինքնուրույն և պատասխանատու են առաջին հերթին համայնքի բնակչության առջև: Իհարկե, դա չի նշանակում, որ նշված ինքնուրույնությունը բացառում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ոչ իրավաչափ իրավական ակտերի, գործողությունների ու անգործության վիճարկումը պետական մարմինների կողմից: ՀՀ Սահմանադրության 188-րդ հոդվածի համաձայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով Կառավարության լիազոր մարմինը համայնքի սեփական խնդիրների իրականացման նկատմամբ իրականացնում է իրավական հսկողություն, իսկ պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ Կառավարության լիազոր մարմինները իրավական և մասնագիտական հսկողություն:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 98-րդ

հողվածով սահմանված է, որ պետական լիազորված մարմինը, ինչպես նաև համապատասխան մարզպետը կարող են տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները, գործողությունները և անգործությունը բողոքարկել դատական կարգով: Բողոքարկման միայն դատական կարգ սահմանելը բացատրվում է այն հանգամանքով, որ տեղական ինքնակառավարման մարմինները չունեն վերադաս, ուստի դրանց կողմից ընդունված իրավական ակտերը, դրանց գործողություններն ու անգործությունը չեն կարող բողոքարկվել արտադատական՝ վարչական կարգով:

Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները կարող են դասակարգվել ըստ տարբեր չափանիշների:

Ըստ բնույթի՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են՝

- 1) կառավարչական բնույթի լիազորություններ,
- 2) կազմակերպական բնույթի լիազորություններ,
- 3) հսկողական բնույթի լիազորություններ,
- 4) վարչարարության լիազորություններ:

Տեղական ինքնակառավարման մարմինների *կառավարչական բնույթի լիազորությունների* շարքին են դասվում այնպիսիք, որոնք անմիջական կամ միջնորդավորված ապահովում են կառավարման (ղեկավարման) և կարգավորման գործառույթները, խրախուսումը: *Կազմակերպական բնույթի լիազորություններով* ապահովվում է կազմակերպման, համակարգման, տեղեկատվության հավաքման, մշակման և վերլուծման, այլ մարմիններին փոխանցման, պլանավորման, կանխատեսման, հաշվառման գործառույթների իրականացումը: *Հսկողական լիազորություններն* իրականացվում են ինչպես անմիջականորեն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, այնպես էլ այլ պետական մարմինների հետ համատեղ և կոչված են ապահովելու օրինականության և արդյունավետության չափանիշներով փաստացի վիճակի ստուգումների և նմանաբնույթ այլ գործառույթների իրականացումը: Ինչ վերաբերում է *վարչարարության լիազորություններին*, ապա դրանք իրագործվում են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թույլատվություններ տալու, արտոնություններ և իրավունքներ վերապահելու կամ վարչարարության շրջանակներում ֆիզիկական և իրավաբանական ան-

ձանց իրավական կարգավիճակի հետ կապված վարչական ակտեր ընդունելու, գործողություններով փաստական հետևանքներ առաջացնելու եղանակով:

Ըստ բովանդակության՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են ընդհանուր և հատուկ բնույթի: *Ընդհանուր բնույթի* լիազորությունները վերաբերում են տվյալ մարմնի իրավասության շրջանակներում գտնվող բոլոր ոլորտներին, մինչդեռ՝ հատուկ բնույթի լիազորությունները վերաբերում են կոնկրետ հարցի լուծմանը:

Ըստ գործունեության ուղղվածության՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են՝

1) տեղական նշանակության հարցերի լուծմանը բնակչության մասնակցության ապահովմանն ուղղված լիազորություններ,

2) համայնքային սեփականության, տեղական ինքնակառավարման ֆինանսական միջոցների կառավարմանն ուղղված լիազորություններ,

3) համայնքի տարածքի համալիր զարգացմանն ուղղված լիազորություններ,

4) բնակչության սոցիալ-մշակութային, կոմունալ-կենցաղային և կենսականորեն կարևոր այլ պահանջների բավարարմանն ուղղված լիազորություններ,

5) հասարակական կարգի պահպանությանն ուղղված լիազորություններ,

6) տեղական ինքնակառավարման՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների պաշտպանությանն ուղղված լիազորություններ:

Ըստ ծագման աղբյուրի՝ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություններն ստորաբաժանվում են սեփական և պետության պատվիրակած լիազորությունների: Սեփական լիազորություններն իրենց հերթին բաժանվում են պարտադիր և կամավոր լիազորությունների:

Ինչպես նշվեց վերևում, պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացումը կարող է Օրենքով փոխանցվել համայնքներին՝ որպես պետության պատվիրակած լիազորություններ: Նույն օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ պե-

տական մարմինների լիազորությունների փոխանցումը համայնքներին իրականացվում է, եթե այդ լիազորություններն առավել արդյունավետ կարող են իրականացվել համայնքներում՝ օրենքով դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պարտադիր ապահովմամբ:

Պետության պատվիրակած լիազորությունների իրականացման կարգը սահմանվում է Օրենքով կամ կառավարության որոշմամբ, որոնցով սահմանազատված են ավագանու և համայնքի ղեկավարի լիազորությունները:

Պետության պատվիրակած լիազորությունները վերապահվում և իրականացվում են հետևյալ փուլերով.

- պետական մարմինները փոխանցում են իրենց լիազորությունները տեղական ինքնակառավարման մարմիններին՝ հատկացնելով դրանց իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ,

- տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են պետության պատվիրակած լիազորությունները,

- պետական մարմինները հսկողություն են իրականացնում տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակած լիազորությունների իրականացման նկատմամբ:

1.5 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

2015թ. սահմանադրական փոփոխություններով՝ 86-րդ հոդվածով, ի թիվս պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների մի շարք այլ հիմնական նպատակների սահմանում է նաև քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքին երիտասարդության մասնակցության խթանման պարտականությունը:

Տեղական ինքնակառավարման հիմնադրման պահից օրենսդրությամբ համայնքի բնակիչների՝ ինքնակառավարմանը մասնակցելու ընդամենը երկու անմիջական ձև էր նախատեսվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություն-

ներ և տեղական հանրաքվե: 2013թ. Օրենքում կատարված լրացումով¹ ավելացվեց 10.1-ին հոդվածը, որով անորոշ ձևակերպումներով, սակայն առաջին անգամ սահմանվեց բնակիչների մասնակցության նաև այլ հնարավորություններ, որոնք ավելի շատ նման են հրապարակայնության ու թափանցիկության սկզբունքի մանրամասնեցված նկարագրությանը. համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և ուղղակի կամ անուղղակի ներգործություն են ունենում տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա: Համայնքում տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք ունի համապատասխան համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ:

Ներկայումս վերը նշված սահմանադրական պահանջի ապահովման նպատակով 2016թ. Օրենքի ծավալուն փոփոխությունների ու լրացումների արդյունքում² Օրենքի 11-րդ և մի շարք այլ հոդվածներով սահմանվեց տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության հստակ ձևեր ու կառուցակարգեր: Ընդ որում, եթե ընտրություններին և տեղական հանրաքվեին մասնակցելու նվազագույն տարիքային շեմը 18 տարին է, ապա տեղական ինքնակառավարմանը մասնակցելու այլ ձևերի համար օրենսդիրը սահմանել է *16 տարեկան տարիքային շեմը*: Այսպես,

Օրենքի իմաստով՝ համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների վրա:

Համայնքում տեղական ինքնակառավարմանը օրենքով

¹ Տես 19.06.13թ. թիվ ՀՕ-72-Ն ՀՀ օրենքը:

² Տես 16.12.2016թ. թիվ ՀՕ-237-Ն ՀՀ օրենքը:

սահմանված կարգով մասնակցելու իրավունք ունի տվյալ համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ:

Տեղական ինքնակառավարմանը բնակիչները կարող են մասնակցել ինչպես անձամբ, այնպես էլ հասարակական միավորումների և քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով:

Համայնքը, անկախ բնակչության քանակից, պետք է ունենա պաշտոնական համացանցային կայք, որի ստեղծումն ու վարումն ապահովում է համայնքի ղեկավարը՝ սույն օրենքով և համայնքի ավագանու սահմանած կարգով: Համայնքի պաշտոնական համացանցային կայքում ներբեռնման հնարավորությամբ առնվազն պետք է առկա լինեն՝ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների ընդհանուր գործունեության վերաբերյալ հրապարակային տեղեկատվությունը, համայնքի ղեկավարի և ավագանու ընդունած նորմատիվ իրավական ակտերը, դրանց նախագծերը, համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունը, համայնքի տարեկան աշխատանքային պլանը, դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունը, համայնքի բյուջեն, բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունները, համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, համայնքի ղեկավարի լիազորությունների շրջանակում տրվող թույլտվությունների դիմումների ձևաթղթերը և տրամադրված թույլտվությունների քանակի և տեսակի վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը, համայնքում բնակիչների հետ հանդիպումների, հանրային լսումների և քննարկումների նյութերը, ընթացակարգը, անցկացման վայրը և ժամը, համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության, համայնքում հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպման և անցկացման և այլ կարգեր, համայնքապետարանի և դրա ենթակայությամբ գործող կառույցների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները, համայնքում պետական և համայնքային միջոցներով իրականացվող շինարարությունների, համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վերաբերյալ տեղեկատվություն:

Համայնքի բնակիչների, նրանց խմբերի, տեղական ինքնա-

կառավարման մարմինների փոխհարաբերությունները, մասնակցության ձևերը, ընթացակարգերը սահմանվում են սույն օրենքով, ՀՀ այլ օրենքներով, ինչպես նաև համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգով:

Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը, հաշվի առնելով տվյալ համայնքի առանձնահատկությունները, առնվազն պետք է սահմանի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին բնակիչների իրազեկվածության ապահովման անհրաժեշտ պայմանները, այն բավարար պայմաններն ու չափանիշները, որոնք անհրաժեշտ են գործնականում ապահովելու համայնքի բնակիչների իրազեկման և մասնակցության միջոցառումների կազմակերպումն ու անցկացումը բնակիչներին մատչելի և հարմար վայրերում՝ ապահովելով նաև համայնքի հաշմանդամություն ունեցող անձանց և սակավաշարժուն խմբերի մասնակցությունը (Օրենքի 11-րդ հոդված):

Տեղական ինքնակառավարման մարմինները մի շարք լիազորություններ ունեն ինքնակառավարմանը համայնքի բնակչության ապահովման գործընթացում: Այսպես,

Համայնքի ղեկավարը համայնքի կառավարմանն ու զարգացմանն արդյունավետ մասնակցություն ապահովելու համար բնակիչների համար, ամենից առաջ, ստեղծում է անհրաժեշտ պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին՝ այդ նպատակով օգտագործելով համայնքում հասանելի տարբեր ձևեր և միջոցներ (այդ թվում՝ տեղեկատվության և հաղորդակցության միջոցներ): Համայնքի ղեկավարը պարտավոր է պարբերաբար կազմակերպել տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես՝ համայնքի զարգացման ծրագրերի և բյուջեի, համայնքի կողմից մատուցվող ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, բնապահպանական, քաղաքաշինական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների հանրային լսումներ կամ քննարկումներ: Կազմակերպված լսումների և քննարկումների արդյունքում ստաց-

ված առաջարկությունները համայնքի ղեկավարը ի մի է բերում և ներկայացնում նախաձեռնությունների և նախագծերի հեղինակներին: Համայնքի ղեկավարը համայնքի բնակիչներին, առիթը ներկայանալու դեպքում, իրազեկում է համայնքի տարածքում կազմակերպվող ուսուցման և վերապատրաստման ծրագրերին և անհրաժեշտության դեպքում նրա ներկայացուցիչներին ներգրավում է այդ ծրագրերում (Օրենքի 37-րդ հոդված):

Համայնքի ղեկավարը ինքնակառավարման միավորի տարածքում բնակչության հետ անմիջականորեն առնչվում է նաև նրանց իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրների լուծման դեպքերում: Օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի ղեկավարը, իր պարտադիր լիազորությունների շրջանակներում, միջոցներ է ձեռնարկում պաշտպանելու համայնքի բնակիչների և համայնքում տնտեսվարող սուբյեկտների շահերը, կատարում է քաղաքացիների ընդունելություն և օրենքով սահմանված կարգով քննության է առնում քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները և ձեռնարկում միջոցներ դրանց բավարարման ուղղությամբ:

Իր լիազորությունների շրջանակում կայացրած որոշումներով համայնքի ղեկավարը խթանում է համայնքի տարածքում տնտեսական գործունեություն ծավալող անձանց ծրագրերի իրականացումը, նպաստում և օժանդակում է համայնքում նրանց գործունեության առավել արդյունավետ իրականացումը (Օրենքի 33-րդ հոդված):

Համայնքի ավագանին համայնքի ղեկավարի առաջարկությամբ հաստատում է համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը (Օրենքի 18-րդ հոդված):

Համայնքի ավագանու նիստերի օրակարգի նախագիծը ձևավորվում է համայնքի ղեկավարի, ավագանու անդամների, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրի վարչական ղեկավարների կողմից աշխատակազմի քարտուղարին՝ նիստից առնվազն տասն օր առաջ ներկայացված գրավոր հարցերից: Օրենքի իմաստով՝ աշխատակազմ է համարվում համայնքապետարանի աշխատակազմը:

Համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությամբ կարող են հանդես գալ նաև համայնքում հաշ-

վառված, տասնվեց տարին լրացած անձանց ոչ պակաս, քան մեկ տոկոսը՝ տասը հազարից ավելի բնակիչ ունեցող համայնքներում, երկու տոկոսը՝ հազարից մինչև տասը հազար բնակիչ ունեցող համայնքներում, և չորս տոկոսը՝ մինչև հազար բնակիչ ունեցող համայնքներում: Ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու նախաձեռնությունն ստորագրում են համայնքի դրան կողմ բնակիչները և ներկայացնում են համայնքի ղեկավարին: Համայնքի բնակիչների նախաձեռնությունը ներկայացվում և քննարկվում է ավագանու նիստում ոչ ուշ, քան համայնքի ղեկավարի կողմից դրա ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում: Նույն նախաձեռնությունը ավագանու քննարկմանը կարող է կրկին ներկայացվել և սույն հոդվածով սահմանված կարգով ընդգրկվել օրակարգում՝ դրա հերթական (նաև առաջին) քննարկումից առնվազն վեց ամիս հետո: Համայնքի բնակիչների նախաձեռնությունը ավագանու նիստում ներկայացնում է նախաձեռնող բնակիչների ընտրած ներկայացուցիչը՝ որպես հեղինակ, իսկ դրա քննարկման կարգը սահմանվում է ավագանու կանոնակարգով (Օրենքի 14-րդ հոդված):

Ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքի ղեկավարը հրապարակում է ավագանու նիստի օրակարգի նախագիծը՝ նշելով նիստի անցկացման վայրը և ժամանակը: Հրապարակումն իրականացվում է համայնքներում՝ համայնքի ավագանու նստավայրում դրանք փակցնելու միջոցով, ինչպես նաև համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում: Իսկ 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում այդ տեղեկությունը հրապարակվում է զանգվածային լրատվության միջոցներով կամ համացանցային ցանցի, այդ թվում՝ համայնքի պաշտոնական համացանցային կայքի միջոցով (Օրենքի 15-րդ հոդված):

Ընդ որում 3 000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում ավագանու հրապարակային նիստերը առցանց հեռարձակվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում, իսկ նիստերի արձանագրությունները մեկշաբաթյա ժամկետում տեղադրվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում ներբեռնման հնարավորությամբ (Օրենքի 16-րդ հոդված):

Ավագանու անդամները պարտավոր են պարբերաբար հան-

դիպել համայնքի բնակչության հետ, օժանդակել նրանց՝ ինքնակառավարմանը մասնակցելու իրավունքի իրացմանը: Ընդ որում համայնքի ղեկավարը համայնքի բնակիչների ընդունելության, ինչպես նաև հանրային հանդիպումներ և քննարկումներ կազմակերպելու համար յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ օր կահավորված սենյակ կամ դահլիճ է հատկացնում համայնքի ավագանու անդամին (Օրենքի 21 և 24-րդ հոդվածներ):

Օրենքով հատուկ կարգավորման է ենթարկվել համայնքի հիմնարար փաստաթղթերի՝ զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի նախագծի մշակմանը, հաստատմանը, կատարմանն ու դրա վերահսկողությանը բնակչության մասնակցության ապահովման հարցերը: Այսպես, Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կամ տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար համայնքի ղեկավարի առաջարկությամբ և համայնքի ավագանու որոշմամբ ձևավորվում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմին՝ աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ):

Համայնքի ղեկավարը մինչև համայնքի հնգամյա զարգացման ծրագրի կամ տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ կամ քննարկումներ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածով սահմանված ժամկետում: Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տրամադրում է տեղեկատվություն համայնքի ավագանուն: Ընդ որում Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և բյուջեն համայնքի բնակչության համար առավել մատչելի դարձնելու համար պատրաստվում և հրատարակվում են հիմնական ցուցանիշներ, վիճակագրական և գրաֆիկական տվյալներ պարունակող տեղե-

կատուներ ու գրքույկներ (Օրենքի 91-րդ հոդված):

Համայնքապետարանի աշխատակազմը համայնքի բնակիչներին, հասարակության ներկայացուցիչներին իրազեկում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կազմակերպում վերջիններիս մասնակցությամբ միջոցառումներ՝ սահմանված Օրենքով, ՀՀ այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության և հանրային բաց լուծումների և քննարկումների կազմակերպման և անցկացման կարգերով:

1. 6. ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆԻՆ (ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ)

Մինչև 2005թ. սահմանադրական փոփոխությունները Հանրապետությունում գործում էր տեղական ինքնակառավարման միասնական իրավական-ինստիտուցիոնալ համակարգ: Ընդ որում Երևան քաղաքը ուներ մարզի կարգավիճակ՝ քաղաքապետը նշանակվում և ազատվում էր ՀՀ կառավարության որոշմամբ, որը վավերացվում էր ՀՀ Նախագահի կողմից: Երևանը չուներ տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմին՝ ավագանի: Փաստորեն Երևան քաղաքում իրականացվում էր տարածքային պետական կառավարում, իսկ նրա 12 թաղային համայնքներում՝ ինքնակառավարում: Դրանցում երեք տարի ժամկետով ուղղակի ընտրություններով ընտրվում էին թաղապետեր և թաղային համայնքների ավագանիներ:

2005թ. փոփոխություններով Երևան քաղաքը ճանաչվեց համայնք և սահմանվեց, որ դրանում տեղական ինքնաակառավարման և ինքնակառավարման մարմինների ձևավորման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով, որ օրենքով կարող է սահմանվել Երևանի քաղաքապետի ուղղակի կամ անուղղակի ընտրություն:

Սահմանադրական փոփոխությունների հիման վրա ընդունվեց «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին»

ՀՀ օրենքը, փոփոխություններ և լրացումներ կատարվեցին ՀՀ ընտրական օրենսգրքում, որոնց հիման վրա 2009թ. անցկացվեցին Երևանի ավագանու համամասնական ընտրություններ, իսկ նրա կազմից ընտրվեց քաղաքապետ: Թեև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներն այսօր էլ շարունակում են տարածվել Երևան քաղաքի վրա, սակայն այնքանով, որքանով որ չեն հակասում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքին: Օրենքով սահմանվեցին ավագանու, քաղաքապետի, նրանց օժանդակ մարմինների կառուցվածքի, կազմակերպման ու գործունեության մի շարք առանձնահատկություններ:

2015թ. սահմանադրական փոփոխություններով հանվեց համայնքի ղեկավարի ուղղակի ընտրական իրավունքի պահանջը, որի հիման վրա 16.12.2016թ. թիվ ՀՕ-237-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխություններով ու լրացումներով Օրենքով տեղական ինքնակառավարման առանձնահատկություններ սահմանվեցին նաև Գյումրի և Վանաձոր համայնքների համար: Ավելի ուշ համայնքների խոշորացման ռազմավարական ծրագրի իրականացման կապակցությամբ Օրենքում և այլ հարակից օրենքներում կատարված հերթական փոփոխություններով ու լրացումներով համայնքի ավագանու համամասնական ընտրական կարգով ընտրություններ, հետևաբար և՛ այդ համայնքների ղեկավարի անուղղակի ընտրություններ, դրանց կազմակերպման ու գործունեության առանձնահատկություններ սահմանվեցին: Դրանց ավելի մանրամասն կանդիդատներն ստորև (խոշորացված համայնքների ղեկավարի մասին հաջորդ ենթազխում):

խոշորացված համայնքների և Երևանի ավագանու իրավական վիճակը և իրավասությունը.

Ավագանու իրավական կարգավիճակի համար Օրենքով որևէ առանձնահատկություն չի սահմանվում՝ մյուս բոլոր համայնքների նման խոշորացված համայնքի ավագանին տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինն է: Միակ բացառությունը Երևանի ավագանին է, որն ունի որոշակի առանձնահատկություններ թե իրավական վիճակի սահմանման և թե որոշ հատուկ լիազորությունների տեսքով: Այսպես, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ

հողվածի համաձայն «1. Ավագանին Երևանում տեղական ինքնակառավարման բարձրագույն մարմին է, որը վերահսկողություն է իրականացնում քաղաքապետի գործունեության նկատմամբ:

2. Ավագանին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքով իր լիազորություններն իրականացնելիս անկախ է և գործում է միայն ի շահ Երևանի և նրա անունից»:

Երևանի ավագանին իր իրավասության մեջ մտնող հարցերի քննարկման և նախապատրաստման, ինչպես նաև ավագանու անունից վերահսկողություն իրականացնելու համար ստեղծում է ոչ ավելի, քան 4 մշտական հանձնաժողով: Բացի այդ, կարող են ստեղծվել ժամանակավոր և քննող հանձնաժողովներ: Ավագանու որևէ խմբակցության պահանջով Երևանում տեղական ինքնակառավարմանը վերաբերող հասարակական հետաքրքրություն ներկայացնող փաստեր պարզելու նպատակով ստեղծվում է ժամանակավոր քննող հանձնաժողով: Պահանջի հետ ներկայացվում է նաև հանձնաժողովի նախագահի անունը:

Խմբակցությունը քննող հանձնաժողով ստեղծելը կարող է նախաձեռնել օրացուցային տարվա ընթացքում մեկ անգամ: Այն գործում է մինչև տվյալ փաստը պարզելը, սակայն ոչ ավելի, քան 6 ամիս: Հանձնաժողովը բաղկացած է խմբակցությունների մեկական ներկայացուցչից, եթե ավագանին որոշում չի ընդունում այլ հավասար ներկայացուցչության մասին: Քաղաքապետը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը, վարչական շրջանների ղեկավարը, Երևանի ենթակայության կազմակերպությունները քննող հանձնաժողովի նախագահի, ինչպես նաև հանձնաժողովի անդամների մեկ հինգերորդի պահանջով պարտավոր են հանձնաժողովին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր:

Քննող հանձնաժողովի նիստերը հրապարակային են, հանձնաժողովի ընդհանուր թվի կեսով ընդունված որոշմամբ կարող են անցկացվել փակ նիստեր:

Ժամանակավոր և քննող հանձնաժողովների վրա համապատասխանաբար տարածվում են մշտական հանձնաժողովների համար սահմանված դրույթները:

(«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մա-

սին» ՀՀ օրենքի 33-35-րդ հոդվածներ):

Երևանի բյուջեի կատարման նկատմամբ ավագանին վերահսկողություն է իրականացնում՝ ավագանին, իրավագոր է ստուգելու յուրաքանչյուր բյուջետային գործողություն, աշխատանքների կատարման արդյունավետությունը և որակը, պահանջելու հաշվետվություններ՝ կատարված ծախսերի վերաբերյալ:

Վերահսկողությունն արդյունավետ իրականացնելու նպատակով ավագանին պարտավոր է սահմանված կարգով ներգրավել աուդիտորական ծառայություններ, որոնց դիմաց վճարումը կատարվում է Երևանի բյուջեից («Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ և 81-րդ հոդվածներ):

Ուշագրավ է այն հանգամանքը, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ոչ խոշորացված և ոչ էլ մյուս համայնքների ավագանիների համար չեն սահմանվում Երևանի ավագանու՝ վերը նկարագրված լիազորությունները: Օրենքով ընդամենը սահմանվում են ընդհանուր դրույթներ ավագանու կողմից համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման նկատմամբ (Օրենքի 18-րդ հոդված): Նույնիսկ բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության կառուցակարգեր չեն նախատեսվում՝ սահմանելով ընդամենը դրա կատարման հաշվետվությունը ավագանու կողմից հաստատելու մասին: Ընդ որում, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով պահպանվել են նախկին իրավական կարգավորումները համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու վերաբերյալ, որը ոչ միայն հակասում է գործող սահմանադրական կարգավորումներին, այլև գործնականում անհնար է իրականացնել՝ Օրենքով նման լիազորություն և ընթացակարգեր նախատեսված չլինելու հիմքով:

Այնուամենայնիվ, խոշարացված համայնքների համար Օրենքով սահմանվում է համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու լիազորություն՝ առանց վկայակոչելու դրա հնարավոր հիմքերը, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ համայնքներում ավագանին հայեցողական լիազորություն ունի ցանկացած պահի համայնքի ղեկավարին սահմանված կարգով ազատել պաշտոնից՝ առանց պատճառաբանության (Օրենքի 68-րդ հոդ-

ված):

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված Երևանի ավագանու հիմնական լիազորությունները գրեթե ամբողջությամբ համընկնում են Օրենքի 18-րդ հոդվածով մյուս բոլոր համայնքների ավագանիների համար սահմանված լիազորությունները, սակայն սահմանվում են նաև մի շարք առանձնահատկություններ: Այսպես.

Երևանի ավագանին, նաև ի լրումն քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի՝ կարող է.

1. սահմանել Երևանում գործող նորմերի իրականացման լրացուցիչ պայմաններ, օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում տեղական հարկեր և տուրքերը սահմանելիս ավագանին կարող է առաջնորդվել գոտիավորման սկզբունքով, ընդ որում՝ տարբեր հարկերի, տուրքերի, վճարների համար կարող են սահմանվել տարբեր գոտիավորումներ (մյուս համայնքներում սահմանվում են միասնական դրույքաչափեր):

2. սահմանում է Երևանի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացման կարգը.

3. իր որոշմամբ հաստատում է նաև Երևանի զարգացման միամյա, հնգամյա, երկարաժամկետ և հատուկ ծրագրերի վերաբերյալ ծրագիրը (մյուս համայնքներում հաստատվում է միայն հինգամյա զարգացման ծրագիրը):

4. բյուջետային վերահսկողության շրջանակներում իրավասու է որոշելու բյուջետային միջոցների նպատակային օգտագործման մանրամասները, վերացնելու բյուջետային միջոցները տնօրինելու վերաբերյալ քաղաքապետի համապատասխան որոշումները, քննարկելու և որոշում ընդունելու բյուջեի կատարման մասին քաղաքապետի տարեկան հաշվետվության վերաբերյալ.

5. որոշում է ընդունում Երևան քաղաքի գլխավոր հատա-

կազմին համապատասխան մշակված՝ Երևան քաղաքի առանձին տարածքների գոտիավորման նախագծերի, ինչպես նաև նախագծման առաջադրանքի, հողամասերի նպատակային նշանակության փոփոխության վերաբերյալ.

6. ի լրումն առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտում գործունեության կանոնների՝ սահմանում է Երևանում այդ կանոնների կիրառման լրացուցիչ պայմանները, ինչպես նաև լրացուցիչ կանոններ.

7. սահմանում է առևտրի և սպասարկման ոլորտի կազմակերպությունների որակավորման աստիճանների չափորոշիչներն ու շնորհման կարգը.

8. սահմանում է շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, ժամկետները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները.

9. սահմանում է շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու և պահպանելու համար վճարների չափը.

10.սահմանում է Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող՝ պետության և համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքներում (փողոցներ, հրապարակներ, զբոսայգիներ և այլ տարածքներ) շրջածախ առևտրի իրականացմանը ներկայացվող պահանջները, պայմանները, շրջածախ առևտուր իրականացնելու միջոցով վաճառվող ապրանքների տեսակները և շրջածախ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը.

11.Հայաստանի Հանրապետությունում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի կանոններին համապատասխան՝ որոշում է ընդունում Երևանում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության լրացուցիչ պայմանների վերաբերյալ.

12.որոշում է ընդունում Երևանում տոնավաճառներ կազմա-

կերպելու, ինչպես նաև բացօթյա վաճառք կազմակերպելու լրացուցիչ պայմանների վերաբերյալ,

13. որոշում է ընդունում Երևանում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջների վերաբերյալ.

14. որոշում է ընդունում Երևանում գտնվող գերեզմանատների գործունեության և դրանց պահպանման աշխատանքների կազմակերպման և իրականացման կարգի վերաբերյալ.

15. սահմանում է այն շենքերին և շինություններին ներկայացվող սահմանափակումները, պահանջները և պայմանները, որտեղ իրականացվում են և (կամ) մատուցվում են քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ.

16. որոշում է ընդունում Երևանի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնների վերաբերյալ.

17. սահմանում է քաղաքային նշանակության գովազդային գոտին (քարտեզի տեսքով), քաղաքային նշանակության փողոցները, հրապարակները, այգիները.

18. սահմանում է քաղաքային նշանակության քաղաքաշինական գոտին (քարտեզի տեսքով), ինչպես նաև այն պայմանները, որոնց պարագայում քաղաքաշինական գործունեությունը թեև իրականացվում է քաղաքային նշանակության քաղաքաշինական գոտուց դուրս, սակայն ունի քաղաքային նշանակություն.

19. սահմանում է Երևանում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) և ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոններին հանրային սննդի ծառայության կազմակերպման համար տարածքի օգտագործման կարգը, պայմաններն ու սահմանափակումները:

Ակնհայտ է, որ հիշյալ առանձնահատկությունները պայմանավորված են Երևանի՝ որպես մայրաքաղաք, սահմանադրական կարգավիճակով, բնակչության մեծ թվաքանակով, հետևաբար՝ նրանց սոցիալ-կենցաղային խնդիրների լուծման առանձնահատուկ մոտեցումներ դրսևորելու անհրաժեշտությամբ:

Որոշ առանձնահատկություններ են նախատեսվում նաև համաամսնական ընտրակարգով ընտրված ավագանու և նրա անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման համար:

Համաամսնական ընտրական համակարգով ընտրվող համայնքի ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցվում են, եթե՝ 1) դադարել են ավագանու լիազորությունները. 2) նա կորցրել է համայնքի ավագանու ընտրական իրավունքը. 3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նա անգործունակ, անհայտ բացակայող կամ մահացած է ճանաչվել. 4) նա ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել. 5) նա ավագանու անդամության հետ անհամատեղելի պաշտոն զբաղեցնելու պահից մեկ շաբաթվա ընթացքում այդ մասին գրավոր չի տեղեկացրել համայնքի ղեկավարին. 6) նա հրաժարական է տվել (Օրենքի 70-րդ հոդված):

Ավագանու անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, եթե նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից կամ հանձնաժողովի նիստերի կեսից: Ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են, եթե նա մահացել է: Վերը նշված դեպքերում, բացառությամբ 1-ին կետով նախատեսված դեպքի, համապատասխան հիմնավորող փաստաթղթերի հիման վրա համայնքի ղեկավարը կազմում է ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին արձանագրություն և յոթ աշխատանքային օրվա ժամկետում ուղարկում ընտրատարածքային ընտրական հանձնաժողով: Ավագանու անդամը հրաժարականի մասին իր դիմումը անձամբ ներկայացնում է համայնքի ղեկավարին, որն այն հրապարակում է ավագանու առաջիկա նիստում: Ավագանու անդամի կողմից իր դիմումն անձամբ համայնքի ղեկավարին ներկայացնելու անհնարինության դեպքում հրաժարականի դիմումը ներկայացնում է խմբակցության ղեկավարը կամ ավագանու անդամի ներկայացուցիչը:

Ի տարբերություն մեծամասնական ընտրակարգով ձևավորված ավագանու՝ համամասնական ընտրակարգով ընտրված ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում այդ մանդատը թափուր չի մնում, այլ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ մեկշաբաթյա ժամկետում տրվում է համապատասխան կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածուին՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով: Եթե վերջինս հրաժարվում է մանդատից, ապա նա հանվում է թեկնածուների ցուցակից: Եթե ցուցակում այլ թեկնածու չկա, ապա մանդատը մնում է թափուր:

Նախ, մեծամասնական ընտրակարգով ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են փաստի ուժով՝ համայնքի ղեկավարի և/կամ ավագանու անդամների ստորագրած արձանագրությամբ, երկրորդ, լիազորությունների դադարեցումը պայմանավորված է ավագանու փաստացի գործելու անհնարինությանմբ կամ նիստերի իրավազորությունը վեց ամիս անընդմեջ չապահովվելու հետ: Մինչդեռ համամասնական ընտրակարգով ընտրված ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են ՀՀ կառավարության որոշմամբ և առավելապես պայմանավորված քաղաքական ձգնաժամով: Այսպես, ՀՀ կառավարությունը ավագանու լիազորությունները կարող է վաղաժամկետ դադարեցնել, եթե՝ 1) հերթական նստաշրջանի ընթացքում ավագանու նիստերը երեք ամսից ավելի չեն գումարվում: 2) հերթական նստաշրջանի ընթացքում ավագանին երեք ամսից ավելի իր քննարկած հարցերի վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում: 3) ավագանին հերթական նստաշրջանի երեք ամսվա ընթացքում համայնքի ղեկավարի ներկայացրած արտահերթ քննարկման ենթակա նախագծի վերաբերյալ որոշում չի կայացնում:

ՀՀ կառավարությունը վաղաժամկետ դադարեցնում է ավագանու լիազորությունները, եթե ՀՀ ընտրական օրենսգրքով (142.2-րդ հոդված) սահմանված կարգով նիստը գումարելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարի թեկնածու չի առաջադրվում, կամ առաջադրված մեկ թեկնածուն չի հավաքում անհրաժեշտ թվով ձայներ: Ավագանու լիազորությունները

վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշման հետ միաժամանակ << կառավարությունը նշանակում է ավագանու արտահերթ ընտրություններ: Ավագանին շարունակում է իր լիազորությունների իրականացումը մինչև նորընտիր ավագանու առաջին նիստը: << կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ավագանին իրավունք չունի նշանակելու տեղական հանրաքվե, անվստահություն հայտնելու համայնքի ղեկավարին, ընդունելու կամ փոփոխելու համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու տարեկան ծրագիրը (Օրենքի 69-րդ հոդված):

Խոշորացված համայնքների և Երևանի ավագանու կառուցվածքը.

Խոշորացված համայնքներում ավագանին բաղկացած է նրա անդամներից, խմբակցություններից և հանձնաժողովներից:

Խոշորացված ***ավագանու անդամների*** թվաքանակն օրենսդիրը ուղղակիորեն կապում է համայնքի բնակչության թվաքանակի հետ: Այսպես, << ընտրական օրենսգրքի Համայնքի ավագանին, որպես տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմին, ունի իր ***յուրահատուկ կազմը:*** << ընտրական օրենսգրքն այդ կազմը պայմանավորում է համապատասխան համայնքի բնակչության ընտրական իրավունք ունեցող անձանց քանակով: Այսպես, ըստ նշված օրենսգրքի 104.1-րդ հոդվածի՝ խոշորացված համայնքներ են համարվում 4 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքները, որոնց ավագանու ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով և 4 001-ից 10 000 ընտրող ունեցող համայնքում ընտրվում է տասնհինգ անդամ, 10 001-ից 25 000 ընտրող ունեցող համայնքում՝ քսանմեկ անդամ, 25 001-ից 70 000 ընտրող ունեցող համայնքում՝ քսանյոթ անդամ, 70 001-ից մինչև 300 000 ընտրող ունեցող համայնքում՝ երեսուներեք անդամ և՝ 300 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքում՝ վաթսուներեք անդամ: Երևանի ավագանին առայժմ միակն է, որ բաղկացած է 65 անդամներից:

Ըստ այդմ, ի տարբերություն մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ավագանու, խոշորացված համայնքի ավագանու մեջ ձևավորվում են ***խմբակցություններ:***

Ավագանու խմբակցությունները ստեղծվում են նորընտիր ա-

վազանու առաջին նստաշրջանի բացման օրը՝ հետևյալ սկզբունքին համապատասխան. ավագանու անդամների մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի առաջադրմամբ ընտրված ավագանու անդամներն ընդգրկվում են նույնանուն խմբակցություններում:

Խմբակցությունը համայնքի ղեկավարին գրավոր ներկայացնում է իր կանոնադրությունը, անվանումը, կազմը, ղեկավարի և քարտուղարի անունները, ազգանունները, դրոնք նիստը վարողը հրապարակում է ավագանու առաջիկա նիստում:

Ավագանու անդամը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով համապատասխան խմբակցության ղեկավարին և համայնքի ղեկավարին:

Խմբակցության գործունեությունը դադարում է, եթե նրա բոլոր անդամները դուրս են գալիս խմբակցությունից:

Խմբակցության կազմի փոփոխության, ինչպես նաև գործունեության դադարման մասին գրավոր տեղեկացվում է համայնքի ղեկավարը կամ ավագանու նիստը վարողը, որն այդ մասին հայտարարում է ավագանու առաջիկա նիստում:

Համայնքի նիստերի դահլիճում խմբակցություններին հատկացվում են առանձին հատվածներ:

Համայնքի նիստերի դահլիճում կամ ավագանու որոշած այլ վայրում խմբակցություններն ապահովվում են կահավորված, տեխնիկական և կապի միջոցներով հագեցված առանձին աշխատասենյակներով:

Խմբակցության գործավարը և փորձագետները աշխատանքի են ընդունվում ժամկետային պայմանագրով՝ համապատասխան խմբակցության ղեկավարի ներկայացմամբ, կատարում են նրա հանձնարարությունները, ինչպես նաև նրա հանձնարարությամբ աջակցում են խմբակցության, ավագանու անդամների աշխատանքին (Օրենքի 66-67-րդ հոդվածներ):

Երևանի ավագանու խմբակցությունների դեպքում թերևս միակ առանձնահատկությունն այն է, որ դրա թվաքանակով պայմանավորված օրենսդիրը հստակ սահմանում է աջակցող աշխատակիցների թվաքանակը՝ մինչև 7 անդամ ունեցող խմբակցությունն ունենում է քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակով սահմանված մեկ գործավար և մեկ

փորձագետ, 7-ից 11 անդամ ունեցող խմբակցությունն ունենում է մեկ գործավար և 2 փորձագետ, իսկ 11-ից ավելի անդամ ունեցողը՝ մեկ գործավար և 3 փորձագետ («Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 31-32-րդ հոդվածներ):

Ավագանու հանձնաժողովները.

Մինչև ավագանու 9 անդամ ունեցող համայնքներում (փոքր համայնքներ) ավագանին իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար կարող է իր որոշմամբ ստեղծել *մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովներ:*

Ավագանու 9 և ավելի անդամ ունեցող համայնքում ավագանին իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար ստեղծում է մշտական, իսկ անհրաժեշտություն առաջանալու դեպքում՝ ժամանակավոր հանձնաժողովներ:

Ավագանու հանձնաժողովների քանակը, գործառույթները և ձևավորման կարգը սահմանվում են ավագանու կանոնակարգով: Օրենքով դրանց թվաքանակ չի սահմանվում, սակայն ավագանու անդամների փոքր քանակը օբյեկտիվորեն բերել է այն իրավիճակին, որ դրանցում գործնականում ստեղծվում են մեկ-երկու հանձնաժողովներ:

Միաժամանակ Երևանի ավագանիում կարող է ստեղծվել մինչև 4 մշտական հանձնաժողով՝ հաշվի առնելով, որ այն ունի 65 անդամ (դրանց մասին խոսվել է սույն ենթազվխի սկզբում):

Երևանի ավագանու կանոնակարգին համապատասխան դրանում ստեղծվել ու գործում են են 4 մշտական հանձնաժողովներ՝ ֆինանսավարկային և տնտեսական հարցերի, իրավական հարցերի, քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի, ինչպես նաև մշակույթի, կրթության, և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովներ, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 15-16 ավագանու անդամներից:

Օրենքով որոշ առանձնահատկություններ են սահմանվում նաև ավագանու կազմավորման (այդ մասին կխոսվի սույն աշխատության 2-րդ Գլխում) գործունեության կազմակերպման, ավագանու և նրա անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ավագանու անդամի թափուր տեղի համալրման առումով:

Այսպես, ավագանու գործունեությունը կազմակերպվում է նիստերի միջոցով, որոնք անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ: Մինչդեռ խոշորացված համայնքների ավագանին գործում է նստաշրջաններով՝ յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ նիստ հրավիրելու միջոցով: Ավագանու հերթական նստաշրջանները գումարվում են փետրվարի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև հունիսի վերջին չորեքշաբթին և սեպտեմբերի երկրորդ երեքշաբթի օրվանից մինչև դեկտեմբերի վերջին չորեքշաբթին: Նիստերի օրերը որոշում է ավագանին:

Ավագանու նիստը հրավիրում և վարում է համայնքի ղեկավարը, իսկ նրա բացակայության դեպքում՝ համայնքի ղեկավարի առաջին տեղակալը: Ավագանու նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին: Եթե կես ժամվա ընթացքում նիստին չի ներկայանում համայնքի ղեկավարը կամ նրա առաջին տեղակալը, ապա նիստը վարողի չներկայանալու մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են ավագանու նիստին ներկայացած անդամները, որից հետո նիստը վարում է ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը:

Համայնքի ղեկավարի տեղակալներն իրավունք ունեն մասնակցելու ավագանու նիստերին, արտահերթ ելույթ ունենալու, ինչպես նաև պատասխանելու հարցերին: Ավագանու նիստերին համայնքի ղեկավարի կամ ավագանու խմբակցությունների հրավերով կարող են մասնակցել, ելույթներ ունենալ և պատասխանել հարցերին նաև այլ անձինք:

Խոշորացված համայնքի և Երևանի ավագանու իրավական ակտերը.

Ավագանու նիստում կարող է քննարկվել համայնքի շահերին վերաբերող և օրենքով պետական մարմիններին, կազմակերպություններին և պաշտոնատար անձանց իրավասությանը չվերապահված ցանկացած հարց: Քննարկվող հարցերի վերաբերյալ ավագանին ընդունում է որոշումներ և ուղերձներ, որոնց վերաբերյալ կազմում է արձանագրություններ:

Համայնքի շահերին վերաբերող, բայց իր իրավասությունից դուրս գտնվող հարցերի առնչությամբ ավագանին կարող է ընդունել ուղերձներ՝ ուղղված համայնքի բնակչությանը, համայնքի

ղեկավարին, մարզպետին կամ այլ մարմինների և կազմակերպությունների (Օրենքի 13-րդ հոդված):

Խոշորացված համայնքի և Երևանի ավագանին ընդունում են որոշումներ, հայտարարություններ և ուղերձներ: Ավագանու որոշումները, հայտարարությունները և ուղերձներն ընդունվում են նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ Օրենքով նախատեսված հետևյալ դեպքերի՝ համայնքի ղեկավարի տեղակալների նշանակման, համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու, ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման որոշումներն ընդունվում են ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Փոքր համայնքներում ավագանու հայտարարություններ չեն ընդունվում (Օրենքի 57, 64, 68, 70-րդ հոդվածներ):

Երևանի ավագանին նույնպես իր իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ ընդունում է *որոշումներ*: ՀՀ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով ավագանին օրենքով սահմանված կարգով ընդունում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, որոնք ենթակա են կատարման Երևանի վարչական տարածքում: Ավագանին Երևանի շահերին վերաբերող, բայց իր իրավասությունից դուրս հարցերի առնչությամբ կարող է ընդունել *ուղերձներ*, *հայտարարություններ*՝ ուղղված Երևանի բնակչությանը, քաղաքապետին, պետական ու տեղական ինքնակառավարման այլ մարմիններին: Ավագանու որոշումները, հայտարարությունները և ուղերձներն ընդունվում են նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Մասնավորապես, մյուս խոշորացված համայնքների նման Երևանում ևս համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու, ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, քաղաքապետի տեղակալների նշանակման մասին որոշումները ավագանին ընդունում է ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Բացի այդ, ի տարբերություն մյուս խոշորացված համայնքների Երևանի ավագանին ընդունում է ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ նաև քա-

ղաքապետի եզրակացության համաձայն՝ Երևանի բյուջեի եկամուտները նվազեցնող կամ ծախսերն ավելացնող որոշման նախագծերը, տեղական հանրաքվե նշանակելու որոշումները:

Ավագանու հայտարարությունները և ուղերձները մեկշաբաթյա ժամկետում ստորագրում և հրապարակում է քաղաքապետը: Ավագանու որոշումները ստորագրում և հրապարակում է քաղաքապետը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Ավագանու ակտերն ընդունվելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, տեղադրվում են քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում: Քաղաքապետը ավագանու ընդունած ուղերձն ստանալու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում, պարտավոր է քննության արձեղ այն և արդյունքների մասին պաշտոնապես տեղեկացնել ավագանուն:

1. 7 ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ (ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ՆՐԱ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԿԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ)

Խոշորացված և Երևանի համայնքներում համայնքի ղեկավարի իրավական վիճակը և իրավասությունը.

Խոշորացված և Երևանի համայնքներում համայնքի ղեկավարը և քաղաքապետը նույնպես տեղական ինքնակառավարման գործադիր մարմին են, բայց միաժամանակ ավագանու անդամ են, այլ անձանց և մարմինների հետ հարաբերություններում ոչ միայն ներկայացնում են համայնքը, այլև՝ ավագանին և համայնքապետարանը և ղեկավարում է համայնքապետարանի աշխատանքները (Օրենքի 54-րդ հոդված):

Համայնքի ղեկավարներին Օրենքով ներկայացվող ընդհանուր պահանջներից ու սահմանափակումներից բացի Օրենքով սահմանվում է ՀՀ քաղաքացիության բացառիկության սկզբունքը՝ Համայնքի ղեկավար կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող և ավագանու անդամ համարվող անձը (Օրենքի 55-րդ հոդված): Փոքր համայնքներում

ղեկավարն ուղղակիորեն ընտրվում է 5 տարի ժամկետով, մինչ-դեռ խոշորացված համայնքներում նրա լիազորությունների ժամկետ չի սահմանվում՝ համայնքի ղեկավարն ընտրվում է ավագանու կողմից՝ վերջինիս լիազորությունների ողջ (մնացորդային) ժամկետով (Օրենքի 56-րդ հոդված):

Համայնքի ղեկավարի իրավական վիճակը բնութագրող ընդհանուր և ոլորտային լիազորությունները հիմնականում կրկնում են Օրենքով բոլոր համայնքների ղեկավարների համար սահմանված լիազորությունները¹: Միաժամանակ որոշակիորեն տարբերվում են Երևանի քաղաքապետի լիազորությունները՝ պայմանավորված առավելապես այն հանգամանքով, որ Երևանն, ի տարբերություն Հանրապետության մյուս բոլոր համայնքների, չի մտնում որևէ մարզի տարածքում: Իհարկե, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն «1. Տարածքային կառավարումը Երևանում իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինը: Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, իրավական ակտերով մարզպետներին վերապահված լիազորություններն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինն այնքանով, որքանով դրանք չեն հակասում սույն օրենքին.

2. Կառավարության որոշմամբ Երևանում տարածքային կառավարման որոշակի գործառույթներ կարող են փոխանցվել պետական կառավարման համակարգի այլ մարմինների.

3. Երևանում տարածքային կառավարման առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով»:

Այս հանգամանքը նաև իր արտացոլումն է գտել Երևանի քաղաքապետի տարբեր բնագավառների լիազորություններում: Այսպես, *քաղաքաշինության բնագավառում* ի թիվս այլ լիազորությունների քաղաքապետը որպես սեփական լիազորություն օրենքով սահմանված կարգով տալիս է քաղաքային նշանակության զովագդային գոտում (քաղաքային նշանակության փողոցներում և դրանց անմիջապես հարող տարածքներում, ինչպես նաև

¹ Տես Օրենքի 35-րդ և 59-րդ հոդվածները:

քաղաքային նշանակության հրապարակներում և այգիներում) արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն, իսկ որպես պատվիրակված լիազորություն՝ կառավարում է իր կառավարմանը հանձնված պետական սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրմուղի, կոյուղու, գազի, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և ճարտարագիտական այլ կառույցների շահագործումը:

Հասարակական կարգի պահպանության բնագավառում հետևում է համակեցության կանոնների պահպանմանը, ավագանու հաստատած կանոնների պահանջների պահպանմանը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված դեպքերում վարչական պատասխանատվության է ենթարկում զանցառուներին, միջոցառումներ է իրականացնում այդ զանցանքների կանխարգելման, նվազեցման, կանխման և բացահայտման համար: Ընդ որում, ի տարբերություն մյուս համայնքների, վերոնշյալ լիազորության իրականացման նպատակով քաղաքապետը ստեղծում է Երևանի հասարակական կարգի պահպանության համայնքային ծառայություն:

Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում.

Քաղաքապետն աջակցում է Երևանի միջով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների տարանցիկ հատվածների շինարարության, պահպանման ու շահագործման աշխատանքների կազմակերպմանը, կազմակերպում է Երևանում հասարակական տրանսպորտի աշխատանքը (բացառությամբ Երևանի մետրոպոլիտենի), իրականացնում է հասարակական տրանսպորտը հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժմանը հարմարեցնելու ծրագիր:

Քաղաքապետը սույն բնագավառում իրականացնում է հետևյալ պատվիրակված լիազորությունները. Երևանի տարածքում ճանապարհային երթևեկության կարգավորումը՝ ճանապարհային գծանշումների, ինչպես նաև երթևեկության նշանների և լուսացույցների (բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ժամանակավոր տեղադրվածների) տեղադրման միջոցով, ինչպես նաև կազմակերպում է Երևանի մետրոպոլիտենի աշխատանքները:

էլեկտրոնային հաղորդակցության, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման բնագավառներում քաղաքապետն իրականացնում է հետևյալ սեփական լիազորությունները.

1) Երևանի տարածքում էլեկտրոնային հաղորդակցության, էլեկտրամատակարարման, ջերմամատակարարման, գազամատակարարման խնդիրների առնչությամբ քաղաքապետը հրավիրում է համապատասխան կազմակերպությունների պաշտոնատար անձանց, անցկացնում է խորհրդակցություններ և նրանց ուղղորդում է հրավիրում ծագած խնդիրների լուծման անհրաժեշտության վրա.

2) էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում գերիշխող օպերատորները, ինչպես նաև էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման բնագավառներում ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպությունները յուրաքանչյուր տարին մեկ քաղաքապետին են ներկայացնում հաղորդում՝ իրենց կատարած աշխատանքների ու պլանավորվող միջոցառումների վերաբերյալ. առանց քաղաքապետին նախօրոք տեղեկացնելու և նրա հետ համաձայնեցնելու՝ այս կազմակերպություններն իրավունք չունեն 3 ժամից ավելի երկար ժամանակով դադարեցնելու էլեկտրաէներգիայի, գազի և ջրի մատակարարումը, բացառությամբ վթարային դեպքերի:

Միաժամանակ խոշորացված և Երևան համայնքում համայնքի ղեկավարի իրավական վիճակն առանձնանում է նաև վերջինիս լիազորությունների վաղաժամկետ դադարեցման որոշ հիմքերով ու կարգով:

Այսպես, Համայնքի ղեկավարի լիազորությունները դադարում են նորընտիր համայնքի ղեկավարի կողմից լիազորություններն ստանձնելու պահից¹: Համայնքի ղեկավարի լիազորություն-

¹ Մինչդեռ ուղղակի ընտրական իրավունքով ընտրված համայնքի ղեկավարի լիազորությունների դադար(եց)վում են համապատասխան արձանագրությունը կազմելու փաստով, որի հիման վրա և որից հետո ՀՀ կառավարության որոշմամբ նշանակվում և անցկացվում են արտահերթ ընտրություններ: Դրա արդյունքներով ընտրված թեկնածուն համայնքի ղեկավարի պաշտոնը ստանձնում է ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակման հաջորդ օրը (Օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ մաս):

ները վաղաժամկետ դադարում են, եթե նա՝ 1) կորցրել է ավագանու անդամի ընտրական իրավունքը.

2) համայնքի ղեկավարի պաշտոնի հետ անհամատեղելի պաշտոն է զբաղեցնում.

3) հրաժարական է տվել.

4) կորցրել է ավագանու անդամի լիազորությունը.

5) ստացել է այլ երկրի քաղաքացիություն.

6) մահացել է: Համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են Օրենքով սահմանված կարգով անվստահություն հայտնելու դեպքում:

Օրենքի 68-րդ հոդվածով սահմանվում է նաև համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու, այսպես կոչված, կառուցողական քվե, երբ քվեարկության է դրվում ավագանու այն անդամի անուն-ազգանունը, որին նախաձեռնող խումբն առաջադրում է որպես համայնքի ղեկավարի թեկնածու: Նման նախագիծ ներկայացնելու իրավունք ունեն ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը: Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշման նախագիծը հանձնվում է համայնքի ղեկավարին, ինչպես նաև ավագանու խմբակցություններին: Ավագանու խմբակցություններն այդ մասին անհապաղ տեղեկացնում են իրենց խմբակցությունների անդամներին: Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը ներկայացվելուց հետո՝ 36 ժամվա ընթացքում, նախաձեռնող խմբի մեջ չմտնող ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդը կարող է ևս ներկայացնել համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու վերաբերյալ որոշման նախագիծ՝ առաջադրելով համայնքի ղեկավարի այլ թեկնածու: Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը ներկայացնելուց հետո՝ երրորդ աշխատանքային օրը՝ ժամը 10.00-ին, օրենքի ուժով հրավիրվում է ավագանու նիստ, որում գաղտնի քվեարկությամբ որոշվում է համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու հարցը: Քվեարկությունն անցկացվում է գաղտնի՝ քվեաթերթիկների միջոցով, որոնցում ընդգրկվում է համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագծով առաջադրված թեկնածուն, իսկ եթե այդպիսի նախագծերը մեկից ավելի են, ա-

պա համապատասխան քանակով թեկնածուները: Ավագանու յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Համայնքի ղեկավարին անվստահություն է հայտնվում, եթե առաջադրված թեկնածուն (թեկնածուներից մեկը) ստանում է ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը: Այդ դեպքում գործող համայնքի ղեկավարը վայր է դնում իր լիազորությունները, իսկ նորընտիր համայնքի ղեկավարն իր լիազորություններն ստանձնում է մեկշաբաթյա ժամկետում՝ Օրենքով սահմանված կարգով ավագանու նիստում տրված երդմամբ, որի տեքստն ամրագրված է Օրենքի 74-րդ հոդվածով: Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ ներկայացնելու նախաձեռնություն կարող է ցուցաբերվել համայնքի ղեկավարի լիազորություններն ստանձնելուց և անվստահության հարցը քննարկելուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո: Համայնքի ղեկավարին անվստահություն հայտնելու առաջարկություն չի կարող ներկայացվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ: Ըստ էության նույն կանոններն են սահմանվում նաև Երևանի քաղաքապետին անվստահություն հայտնելու գործընթացում («Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդված):

Քաղաքապետը ևս իր իրավասության սահմաններում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ընդունում է որոշումներ, արձակում կարգադրություններ:

Քաղաքապետի ակտերն ուժի մեջ են մտնում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Այդ ակտերը մեկշաբաթյա ժամկետում ենթակա են տեղադրման նաև քաղաքապետարանի պաշտոնական համացանցային կայքում:

Համայնքի ղեկավարին անմիջական ենթակա պաշտոնատար անձինք.

Խոշորացված համայնքի ղեկավարն և Երևանի քաղաքապետն ունի մեկ առաջին տեղակալ, որը ավագանու անդամ է: Համայնքի ղեկավարը կարող է ունենալ ևս երկու տեղակալ, իսկ Երևան քաղաքում՝ կարող է ունենալ ևս ոչ ավելի, քան 5 տեղակալ:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալը փոխարինում է

համապատասխան համայնքի ղեկավարին վերջինիս բացակայության ժամանակ:

Համայնքի ղեկավարի տեղակալներին համայնքի ղեկավարի ներկայացմամբ նշանակում է ավագանին՝ ընդհանուր թվի ծայների մեծամասնությամբ: Համայնքի ղեկավարի տեղակալի թեկնածությունը ավագանու կողմից երկու անգամ չհաստատվելու դեպքում վերջինս նշանակվում է համայնքի ղեկավարի կողմից:

Համայնքի ղեկավարի տեղակալներին պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը: Համայնքի ղեկավարի տեղակալներն իրականացնում են համայնքապետարանի կանոնադրությամբ իրենց վերապահված գործառույթներ:

Համայնքի ղեկավարի տեղակալն օրենքով նախատեսված դեպքերում որպես համայնքի ներկայացուցիչ հանդես է գալիս դատարանում, ինչպես նաև իր իրավասության սահմաններում տալիս է դատարանում հանդես գալու լիազորագրեր:

Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ համայնքի ղեկավարի տեղակալները կարող են իրականացնել նաև այլ գործառույթներ: Համայնքի ղեկավարի տեղակալները չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել այլ պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Համայնքի ղեկավարը կարող է ունենալ խորհրդականներ, օգնականներ և մամուլի քարտուղար: Նրանց քանակը համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին: Համայնքի ղեկավարի խորհրդականներին, մամուլի քարտուղարին և օգնականներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:

Խոշորացված համայնքն ունի գլխավոր ճարտարապետ, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը: Համայնքի գլխավոր ճարտարապետը կարող է ունենալ օգնական, որին գլխավոր ճարտարապետի առաջարկությամբ պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման

մասին» ՀՀ օրենքում 16.12.21թ. թիվ ՀՕ-429-Ն օրենքով կատարված փոփոխություններով Երևանի գլխավոր ճարտարապետի պաշտոնը հանվել է և առանձին բնագավառների, գործառույթների և դրանք ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների, համայնքային կազմակերպությունների և հիմնարկների գործունեության համակարգումը քաղաքապետը վերապահում է քաղաքապետի տեղակալներին:

Այդ պաշտոնների հասկացությունը, տեսակները, դրանք զբաղեցնող անձանց ներկայացվող պահանջները սահմանվում են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով: Այսպես,

Համայնքների ղեկավարների և նրանց տեղակալների, համայնքի ավագանու անդամի պաշտոնները համայնքային քաղաքական պաշտոններն են:

Համայնքի ղեկավարի խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի, համայնքների ղեկավարի տեղակալի օգնականի, Գյումրու և Վանաձորի գլխավոր ճարտարապետների օգնականի, համայնքների ավագանու խմբակցությունների փորձագետների պաշտոնները համայնքային հայեցողական պաշտոններն են:

Ընդ որում խորհրդականի պաշտոն կարող են զբաղեցնել բարձրագույն կրթություն ունեցող, հանրային ծառայության առնվազն երեք տարվա կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ ունեցող և 25 տարին լրացած անձինք:

Համայնքապետարանի աշխատակազմը և վարչական շրջանները.

Բոլոր համայնքներում՝ փոքր թե՛ խոշորացված, աշխատակազմն ունի նույն իրավական կարգավիճակը, դրա համար իրավական կարգավորումները միասնական են և ընդհանուր, որի մասին մանրամասն խոսվել է սույն Գլխի 3-րդ ենթաաղյուսում:

Միաժամանակ բազմաբնակավայր համայնքների (հիմնականում ընդգրկում են խոշորացված համայնքները) կազմում ընդգրկված, 500-ից ավելի հաշվառված բնակիչ ունեցող յուրաքանչյուր բնակավայր, բացառությամբ համայնքի կենտրոնի, նշանակվում է վարչական ղեկավար, որի մասին ևս մանրամասն

խոսվել է սույն Գլխի 3-րդ ենթագլխում:

Երևանում ևս արդյունավետ տեղական ինքնակառավարում և տարածքային կառավարում իրականացնելու, Երևանի տեղական ինքնակառավարման մարմինները բնակչությանն առավել մատչելի դարձնելու նպատակով Երևան քաղաքը բաժանվում է 12 վարչական շրջանների (Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն), որոնց վարչական սահմանները որոշվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հավելվածով:

Վարչական շրջանի ղեկավար կարող է նշանակվել 25 տարին լրացած, ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք: Վարչական շրջանի ղեկավարի պաշտոնը նույնպես համայնքային վարչական պաշտոն է:

Վարչական շրջանի ղեկավարը չի կարող զբաղվել ծեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել այլ պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Վարչական շրջանի ղեկավարին նշանակում և նրա լիազորությունները դադարեցնում է քաղաքապետը: Քաղաքապետը վարչական շրջանի ղեկավար նշանակելու նրա լիազորությունները դադարեցնելու մասին որոշումները ուղարկում է ավագանու խմբակցությունների ղեկավարներին:

Վարչական շրջանի ղեկավարը՝ գործում է քաղաքապետի անունից: Քաղաքապետը պատասխանատու է վարչական շրջանի ղեկավարի գործունեության համար, կազմում է վարչական շրջանի զարգացման ծրագիրը և այն ներկայացնում քաղաքապետին, քաղաքապետին է ներկայացնում իր աշխատակազմի կանոնադրությունը, իր աշխատակազմի կառուցվածքի վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում քաղաքապետին, իր աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ առաջար-

կություններ է ներկայացնում քաղաքապետին, օրենքով սահմանված կարգով նշանակում և ազատում է վարչական շրջանի ղեկավարի տեղակալին (տեղակալներին), աշխատակազմի քարտուղարին, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, կնքում է վարչական շրջանի տնօրինությանը հանձնած գույքը վարձակալությամբ հանձնելու պայմանագրերը, իր իրավասության շրջանակում ընդունում է որոշումներ, կարգադրություններ, կազմակերպում է Երևանի բյուջեի մուտքերի՝ իրեն հանձնարարված մուտքերի հավաքումը, իրականացնում է ավագանու որոշումներով սահմանված այլ լիազորություններ, օրենքով նախատեսված դեպքերում որպես քաղաքապետի ներկայացուցիչ հանդես է գալիս դատարանում, ինչպես նաև իր իրավասության սահմաններում տալիս է դատարանում հանդես գալու լիազորագրեր, Վարչական շրջանի ղեկավարի և նրա աշխատակազմի գործունեության կարգը սահմանում է Երևանի ավագանին:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 92-103-րդ հոդվածներով սահմանվում են տարբեր բնագավառներում վարչական շրջանի ղեկավարի լիազորությունները, որոնք ուղղված են Երևանի քաղաքապետի լիազորությունների պատշաճ իրականացմանը և լրացմանը և ծանրաբեռնվածության նվազեցմանը՝ հաշվի առնելով բնակչության մեծ թվաքանակը: Այսպես,

Վարչական շրջանի ղեկավարը *բնակիչների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում* իրականացնում է հետևյալ լիազորությունները. սահմանում է խնամակալություն, հոգաբարձություն, իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված այլ լիազորություններ, կատարում է Երևանի բնակիչների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առնում տրված հանրագրերն ու դիմումները, կազմակերպում է փաստաթղթերի պատճենների և կրկնօրինակների տրամադրումը վարչական շրջանի կամ քաղաքապետարանի արխիվից, կազմակերպում է իր վարչական շրջանում գտնվող քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության համա-

պատասխան կառույցների գործունեությունը, միջոցներ է ձեռնարկում իր վարչական շրջանում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով տալիս է երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն:

Ֆինանսների բնագավառում մասնակցում է Երևանի բյուջեի նախագծի ձևավորմանը, տնօրինում է Երևանի բյուջեով վարչական շրջանի ղեկավարի լիազորությունների իրականացման համար հատկացված միջոցները, ապահովում է դրանց նպատակային օգտագործումը, ստորագրում է ֆինանսական փաստաթղթերը, կազմակերպում է իր տնօրինմանը հանձնված Երևանի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումը, տեղական հարկերը և օրենքով սահմանված վճարումները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով և այլ օրենքներով, այլ իրավական ակտերով համայնքի ղեկավարին քաղաքաշինության ոլորտում վերապահված այն լիազորությունները, որոնք սույն օրենքով վերապահված չեն քաղաքապետին, վերահսկողություն է իրականացնում շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետա-հատակագծային առաջադրանքով, քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ, իրականացնում է Երևանի սեփականություն համարվող, իր տնօրինմանը հանձնված շենքերի ու շինությունների հաշվառումը, կազմում է սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը, օրենքով սահմանված կարգով տալիս է քաղաքային նշանակության գովազդային գոտի չհամարվող տարածքներում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն, կազմակերպում է քաղաքապետին չվերապահված վարչական շրջանի կոմունալ տնտեսության աշխատանքը, ապահովում է իր տնօրինության տակ գտնվող՝ Երևանի սեփականություն համարվող բնակելի տների

և ոչ բնակելի տարածքների, հանրակացարանների, վարչական շենքերի և այլ շինությունների պահպանումը, շահագործումը, կազմակերպում է դրանց նորոգումը, կազմակերպում է ոչ քաղաքային նշանակության փողոցների, հրապարակների, բնակավայրերի բարեկարգումը և կանաչապատումը և այլ լիազորություններ:

Հողօգտագործման բնագավառում Երևանի գլխավոր հատակագծին, վարչական շրջանի կամ դրա առանձին հատվածների գոտիավորման նախագծերին, հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաներին համապատասխան՝ սահմանված կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում վարչական շրջանի տնօրինմանը հատկացված հողամասերը, վերահսկողություն է իրականացնում հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

3) օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները և այլ լիազորություններ:

Առևտրի և սպասարկման, հանրային սննդի բնագավառներում վարչական շրջանի տարածքում, առևտրի համայնքային կանոններին համապատասխան, տալիս է ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, հանրային սննդի կազմակերպման և իրացման, սպասարկման գործունեության համաքաղաքային կանոններին համապատասխան տալիս է ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվություն:

Վարչական շրջանի ղեկավարը որոշ լիազորություններ ունեն *Կրթության և մշակույթի, Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, աշխատանքի և սոցիալական պաշտպանության, գյուղատնտեսության բնագավառներում:*

Վարչական շրջանի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է իր աշխատակազմի, ինչպես նաև քաղաքային ենթակայության կազմակերպությունների և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի քարտուղարն իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և

վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները, մասնավորապես՝ աշխատակազմի գործավարությունը, նամակագրությունը և արխիվային գործը, վարչական շրջանի ղեկավարի որոշումների, կարգադրությունների նախագծերի նախապատրաստման կազմակերպումը, վարչական շրջանի ղեկավարի որոշումների հրատարակումը, վարչական շրջանի ղեկավարի կողմից Երևանի բնակիչների ընդունելության կազմակերպումը, նրանց հանրագրերի, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի հսկողությունը, վարչական շրջանի ղեկավարի որոշումների կատարման, ինչպես նաև վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատանքային կարգապահության պահպանման նկատմամբ վերահսկողությունը:

Գլուխ 2. ՈՒՂԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ՀՀ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

2.1 ՀՀ-ՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ուղղակի ժողովրդավարության հասկացությունն ու դրա ձևերը աստիճանաբար են ձևավորվել, և տարբեր երկրների գիտնականները շեշտը դրել են դրա տարբեր ասպեկտների վրա: Անտիկ դարերում, միջնադարում և վաղ նոր ժամանակներում բազմաթիվ պետություններում եղել են քաղաքացիների ընդհանուր ժողովներ՝ քաղաքական հարցերի վերաբերյալ պարտադիր որոշումներ ընդունելու իրավունքով (սինոդ, եկկլեսիա՝ հունական պետություններում, կոմիցիա, խորհուրդներ, արենգո՝ իտալական պետություններում, պոլխրո՝ արևելյան սեմական, թինգեր, մալեր՝ գերմանական, վեչե՝ սլավոնական) ինչպես դեմոկրատական հանրապետություններում, այնպես էլ արիստոկրատական հանրապետություններում և միապետություններում, մինչդեռ, կախված պետական կարգից՝ նրանք տարբեր դեր էին խաղում¹:

Ուղղակի ժողովրդավարությունը՝ որպես հայրենական իրավական գիտության համեմատաբար անկախ իրավական երևույթ, սկսեց խորապես ուսումնասիրվել անցյալ դարի վերջին: Հարց այն է, որ խորհրդային գրականության մեջ ընդհանուր ընդունված տեսակետն այն էր, որ սոցիալիստական ժողովրդավարության հիմնական ձևը՝ ժողովրդավարության ներկայացուցչական ձևն էր²: Հենց նա էր խորհրդային իրավագետների ուշադ-

¹ Кареев Н.И. Общий ход всемирной истории. Очерки главнейших исторических эпох. - Греко-римский мир, с.14-21. Աղբյուրը՝ <https://www.litmir.me/bd/?b=60433>

² Комарова В.В. Формы непосредственного народовластия в России.– М., 1998г., с. 84.

րության կենտրոնում, ովքեր ուղղակի ժողովրդավարությունը մեկնաբանում էին որպես դրան ուղեկցող և լրացնող: 1960-ականների սկզբից այս դիրքորոշումը սուր քննադատության է ենթարկվում: Դիխտոմիան «ներկայացուցչական ժողովրդավարություն - ուղղակի ժողովրդավարություն» սկսեց դառնալ խորհրդային գիտնականների կատարած հետազոտությունների առանցքը:

Պատմական Հայաստանում մեր հետազոտության թեմային անդրադարձել են շատ ավելի վաղ: Այսպիսով, դեռ 488 թ. Աղվանի Վաչագան թագավորը ստեղծեց մի շարք օրենքներ, որոնք կոչվում էին կանոնական Սահմանադրություն: Այս Սահմանադրության առանձնահատկությունն այն էր, որ դա բնակչության բոլոր շերտերի ջանքերով ընդունված փաստաթուղթ էր, ում հետ քննարկվել էին այս Սահմանադրության դրույթները: Թագավորը հավաքում էր բնակչության բոլոր շերտերի ներկայացուցիչներին ու նրանց հետ քննարկում Սահմանադրության տեքստը: Հատկանշական է, որ նա չէր վարում ժողովը, որպեսզի ներկաները ազատ լինեին իրենց կարծիքներում:

Հայ իրավունքի մեծագույն հուշարձաններից է Շ.Շահամիրյանի «Որոգայթ Փառաց» աշխատությունը, որը ոչ այլ ինչ էր, քան սահմանադրություն: Շ.Շահամիրյանն իր աշխատության մեջ մանրամասնորեն ներկայացնում է պետական իշխանության, ինչպես նաև հոգևոր իշխանության ձևավորման և գործունեության կազմակերպման կարգը: Միաժամանակ սահմանվում է իշխանության տարանջատման սկզբունքը՝ օրենսդիր, գործադիր, դատական: Պետական իշխանությունը տարանջատված է հոգևոր իշխանությունից: Բացի այդ, աշխատության մեջ խոսվում է պետության և հասարակության կառավարման մեջ ուղղակի և ներկայացուցչական ժողովրդավարության համակցման մասին: Ընդ որում, ուղղակի ժողովրդավարության ձևերի շրջանակներում դիտարկվում են ինչպես ուղղակի (հոդված 15), այնպես էլ անուղղակի ընտրություններ (հոդվածներ 24-36): Ու թեև «ուղղակի ժողովրդավարություն» կամ «ներկայացուցչական ժողովրդավարություն» տերմինները չեն օգտագործվում, այնուամենայնիվ,

«Որոգայթ Փառաց»-ի տեքստում ուղղակիորեն նշված է մեծամասնության իշխանությունը (հոդված 18)¹:

Արդեն խորհրդային տարիներին գիտնականներն իրենց աշխատություններում որպես հոմանիշներ օգտագործում էին «ուղղակի ժողովրդավարություն» և «անմիջական ժողովրդավարություն» տերմինները: Այս մոտեցումը գերակշռում է մի շարք ժամանակակից ուսումնասիրություններում, որոնց հեղինակները համարում են, որ այս հասկացությունները բովանդակությամբ նույնական են:

Ժամանակակից գիտության մեջ «ուղղակի ժողովրդավարություն» հասկացության սահմանման երկու մոտեցում կա: Առաջին մոտեցման շրջանակներում «ուղղակի ժողովրդավարություն» սահմանման բովանդակությունը սահմանափակվում է կառավարության որոշումների մշակման և ընդունման գործում քաղաքացիների կամքի ուղղակի արտահայտման փաստի արձանագրությամբ՝ հակիրճ սահմանում:

Երկրորդում տրված է ուղղակի ժողովրդավարության մանրամասն մեկնաբանությունը: Մանրամասն մեկնաբանության շրջանակներում տեսաբանները չեն սահմանափակվում միայն կամարտահայտման փաստի արձանագրմամբ, այլ սահմանման մեջ ներառում են ուղղակի ժողովրդավարության մի շարք ինստիտուտներ:

Ուղղակի ժողովրդավարության խնդիրների մշակմամբ ու վերլուծությամբ զբաղվել են բազմաթիվ հայրենական գիտնական պետականագետներ²:

¹ Մանրամասն տե՛ս **Авакян Р.О.** Памятники армянского праа. - Ер.: “ЕФ МНЮИ-XXI ВЕК”, 2000, с. 570-640.

² Տե՛ս, օրինակ **Трайнин И.П.** О непосредственном народном законодательстве в капиталистических странах (референдум и законодательная инициатива)// Советское государство 1937, 1-2, с. 100; **Коток В.Ф.** О развитии форм сочетания народного представительства с непосредственной демократией в СССР // Советское государство и право, 1960, N12, с. 12; **Сафаров Р.А.** Развитие непосредственной демократии в СССР // Вопросы политической организации Советского общества в период развернутого строительства коммунизма - М, 1962,с. 237, 240-242; **Степанов И.М.** Формы непосредственной демократии// Политическая организация Со-

ժողովրդավարությունն անմիջական է, ասում են պրոֆեսորներ Ա.Դեմիշելը, Ֆ.Դեմիշելը և Մ.Պիկեմալը, եթե ժողովուրդը ինքն է կառավարում, իր ժողովներում, եթե տարբերություն չկա կառավարողների և կառավարվողների միջև: Ընդհակառակը, ներկայացուցչական է, եթե քաղաքացիներն իրենց ինքնիշխանությունն իրականացնում են միայն ներկայացուցիչների ընտրությամբ, որոնք հետո կառավարում են իրենց անունից¹:

ветского общества. Изд. «Наука», М., 1967, с. 129-136; **Шахназаров Г.Х.** Социалистическая демократия. Некоторые вопросы теории / 2-е изд., доп. - М.: Политиздат, 1974, с. 135-147; **Суворов В.Н.** Формы непосредственной демократии в развитом социалистическом обществе // Конституция СССР и вопросы теории советского государственного права (Сборник научных статей) – М., 1981, с. 28-43; **Барабашев Г.В., Шеремет К.Ф.** Непосредственная демократия в СССР – М., 1984, с. 5; Институт референдума в освободившихся странах Южной Азии: (на прим.: Бангладеша, Пакистана и Шри-Ланки) //Избирательное право и выборы: Сборник статей. М.: Инст-т гос-ва и права АН СССР, 1990. - с. 32-35; **Марченко М.Н.** Референдум как форма непосредственной демократии// Вестник Московского государственного университета. Серия11, Право. 1991, N6, с. 17; **Старостина И.А.** Всенародные обсуждения правовые 50; возможности и практика//Вестник Московского государственного университета. Серия 11, Право. 1998 N1, с. 47; **Мурашин А.Г.** Непосредственная демократия в социалистическом обществе: функции и механизм действия. Автореф. дис. канд. юрид. наук. - Киев, 1985; **Авакьян С.А.** Конституционное право России. Учебный курс : учеб. пособие: в 2 т./ С. А. Авакьян. - 5-е изд., перераб. и доп. — М. : Норма: ИНФРА-М, 2014, с.394-486; **Թոխյան Ֆ.Պ.** Խորհրդարանական ընտրությունների սահմանադրաիրավական կարգավորման հիմնախնդիրները երիտասարդ ժողովրդավարության երկրներում (ՀՀ օրենսդրության հիման վրա) / Ֆ. Թոխյան; Ռուս-հայկական (սլավոնական) պետ. համալս.: Խմբ. Ա.Շ. Հարությունյան. - Երևան: ՌՀՀ, 2004; **Թոխյան Ֆ.Պ.** Ընտրությունների արդյունքները վիճարկելու վերաբերյալ գործերով ՀՀ ՍԴ-ի իրավական դիրքորոշումները և դրանց իրավաբանական հետևանքները // Սահմանադրական դատարանի տեղեկագիր 1(26)2003, էջեր 3-22; **Թոխյան Ֆ.** Նախագահական ընտրությունների սահմանադրական կարգը ժամանակակից աշխարհում՝ համեմատական իրավական ուսումնասիրություն - Եր. Մխիթար Գոշ, 1998 թ.; **Հակոբյան Հ. Հ.** Պաշտպանություն և պաշտպանատարիզը Հայաստանի Հանրապետությունում /գիտ. խմբ. Գ. Հարությունյան.- Եր.,Տիգրան Մեծ, 2007 թ. և այլ:

¹ Տես **Демишель А., Демишель Ф., Пикемаль М.** Институты и власть во Франции. Институционные формы государственно-монополистического капитализма / Перевод с французского В.Н. Даниленко; под ред., с послесл. Крутогорова М.А. 9 М.: Прогресс, 1977, с. 12.

Այսպիսով, ըստ էության, խոսքը ոչ միայն ժողովրդի կառավարման, այլ *ինքնակառավարման* մասին է: Իրավաբանական և փիլիսոփայական գիտությունների խաչմերուկում ընդհանրացման առավել բարձր մակարդակում ինքնակառավարումը հասկացվում է որպես սոցիալական կառավարման տեսակ: Հայտնի է, որ կառավարում ասելով հասկանում ենք վերահսկողության համակարգի ցանկացած նպատակային ազդեցություն վերահսկվողի վրա: Բայց եթե մենք խոսում ենք ինքնակառավարման մասին, ապա ակնհայտ է վերահսկողության համակարգի ազդեցությունն ինքն իր վրա: Այսպիսով, ինքնակառավարումը կարելի է դիտարկել որպես սոցիալական համակարգի (այդ թվում՝ քաղաքացիական հասարակության) ինքնակազմակերպման տարր, որտեղ գոյություն ունի ոչ թե երկու համակարգ՝ կառավարող և կառավարվող, այլ մեկը՝ ինքնակառավարվող:

Ցանկացած հասարակական համակարգ, կառավարելի համարվելու համար, պետք է համապատասխանի որոշակի որակական հատկանիշների, որոնցից ամենաուսիվերսալը՝ կառավարման սուբյեկտի և օբյեկտի այս կամ այն համընկնումն է: Որքան բարձր է կառավարման սուբյեկտի համապատասխանության աստիճանը օբյեկտին, այնքան ավելի արդյունավետ է իրականացվում կառավարումը: Եթե կենտրոնացված համակարգերի գործունեությունը բացառապես վերարտադրողական ուղղվածության գործունեություն է, որն իրականացվում է կանխորոշված արդյունք ստանալու համար, ապա ինքնակառավարվող միությունը ենթադրում է արդյունավետ գործունեություն, որը ներառում է նպատակների և դրանց հասնելու միջոցների ինքնուրույն որոշում¹:

Այս մտորումները նախագծելով անմիջական ժողովրդավարության հարցի շուրջ՝ կարելի է պնդել, որ անմիջական ժողովրդավարության ձևերի իրականացման շրջանակներում գործ ունենք *«ինքնակառավարման»* հետ՝ բառի լայն իմաստով: Եվ պա-

¹ Акопян Л.А. Система органов местного самоуправления в Республике Армения // Дисс... кандидата юридических наук по специальности 12.00.02, Ереван, 2006, с.36.

տահական չէ, որ անմիջական ժողովրդավարության ինստիտուտների շարքում տեղական ինքնակառավարումը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում:

Պետք է ընդունել, որ ժամանակակից աշխարհում կարող ենք փաստել ներկայացուցչական ժողովրդավարության տարածվածությունը, ինչը շատ հեղինակներ բացատրում են տեխնիկական պատճառներով: Անհնար է, որ հասարակության բոլոր անդամները մասնակցեն կառավարմանը: Այս տեսանկյունից տեղական ինքնակառավարման մակարդակում ուղղակի ժողովրդավարության ձևերի կիրառումն ավելի հեշտ է թվում: Խնդիրը ոչ թե ներկայացուցչական կամ անմիջական ժողովրդավարության միջև ընտրության մեջ է, այլ անմիջական ժողովրդավարության «ծավալը» հստակեցնելու մեջ:

Իրավական գրականության մեջ անմիջական ժողովրդավարության ինստիտուտները բաժանվում են երկու խմբերի.

1. անմիջական ժողովրդավարության հրամայական ձևերը ներառում են այնպիսի ձևեր, որոնց որոշումը վերջնական է, պարտադիր և ենթակա չէ որևէ հաստատման պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ հրամայական հանրաքվե, պատգամավորների և ընտրովի պաշտոնյաների ընտրություններ.

2. անմիջական ժողովրդավարության խորհրդատվական ձևերը՝ համապատասխան պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից լավագույն որոշում կայացնելու համար ժողովրդի կամքի բացահայտումն է: Խորհրդատվական ձևով վերջնական որոշումը պատկանում է պետական մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին:

Ուղղակի ժողովրդավարության սահմանումների մեծ մասի բովանդակության մեջ կենտրոնական տեղ է հատկացվում քաղաքացիների կամքի ուղղակի դրսևորման ընթացքում կայացված որոշումների բնույթին: Վ.Վ. Կոնարովան անմիջական ժողովրդավարությունը հասկանում է որպես հասարակական հարաբերություններ, որոնք ծագում են լիազորված և իրենց ինքնիշխա-

նութունն արտահայտող պետական իշխանության սուբյեկտների կողմից պետական և հասարակական կյանքի որոշ հարցերի լուծման գործընթացում անմիջական կամքը արտահայտելու միջոցով, որը ենթակա է համընդհանուր կատարման (լուծվող հարցի շրջանակում) և որևէ հաստատման կարիք չունի¹: Սակայն, Լ.Ա. Նուդենկոն քննադատում է այս սահմանումը: Նրա կարծիքով՝ չի կարելի դիտարկել պետական իշխանության սուբյեկտի անմիջական իշխող կամքի համընդհանուր, պարտադիր կատարումը որպես անմիջական ժողովրդավարության հատկանիշ: Քանզի ժողովրդավարության շատ ինստիտուտներ, որոնք Լ.Ա. Նուդենկոն վերաբերում է ուղղակի ժողովրդավարությանը (նորմատիվ ակտերի քննարկումներ, դիմումներ, հանրահավաքներ, փողոցային երթեր, ցույցեր), խորհրդատվական բնույթ են կրում, այլ ոչ թե հրամայական²:

Բայց Լ.Ա. Նուդենկոյի տեսակետն իրավական գրականության մեջ տարածում չի ստացել: Գիտնականների շրջանում առավել ընդունվում է այն տեսակետը, որ հարկադիր-կամային բնույթն ուղղակի ժողովրդավարության ինստիտուտների կարևոր հատկանիշներից մեկն է. քաղաքացիների կողմից ընդունված հանրային իշխանության որոշումները ենթակա են համընդհանուր կատարման՝ առանց լրացուցիչ հաստատման:

Ելնելով այս ուսումնասիրության պարադիգմայից՝ մենք ուղղակի ժողովրդավարության բնույթը սահմանելու ոչ առաջին, ոչ էլ երկրորդ մոտեցումը միանշանակ չենք համարում: Ժամանակակից իրավական գիտության մեջ առկա սահմանումները վերլուծելուց հետո Վ.Ն. Ռուդենկոն առաջարկեց հասկանալ ուղղակի ժողովրդավարությունը որպես ժողովրդի կողմից հանրային իշխանության ուղղակիորեն իրագործումը՝ հասարակական-կա-

¹ Մանրամասն St´u՝ **Комарова В.В.** Формы непосредственной демократии. Директ-Медиа, 2014, с. 20-23.

² **Нудненко Л.А.** Непосредственная демократия в системе местного самоуправления России: теоретические основы. М.: Прогресс, 2004 г., стр. 190.

մային որոշումների ընդունման միջոցով¹: Մեր կարծիքով, այս սահմանումն արտացոլում է այն դրույթները, որոնք ելակետ են հանդիսանում ուղղակի ժողովրդավարության բոլոր գոյություն ունեցող սահմանումների համար: Այս սահմանումը բավականին համարժեք է ժամանակակից հայրենական իրավական համակարգին, նաև այն պատճառով, որ այն չի արտացոլում ուղղակի ժողովրդավարության ինստիտուտների հրամայական բնույթը:

Այսպիսով, անմիջական կամքի դրսևորման արդյունքում ընդունված *որոշումների հրամայական հատկանիշը* ուղղակի ժողովրդավարության բնութագիր չենք համարում:

Մեկ այլ մոտեցում որպես ուղղակի ժողովրդավարության բնորոշ հատկանիշ է դիտարկում քաղաքացիական բնակչության (պետության քաղաքացիների) օգտագործումը, որն անմիջականորեն պատասխանատու է որոշումների ընդունման և իրականացման համար²:

Ուսումնասիրելով անմիջական ժողովրդավարության հասկացության և բովանդակության հարցը, հարկ է նշել, որ այն ժողովրդավարության ձևերից մեկն է՝ հասարակության տարբեր շերտերի կամքն ու շահերը արտաքնապես բացահայտելու և արտահայտելու պատմականորեն հաստատված եղանակ կամ միջոց: Անմիջական ժողովրդավարության այս ըմբռնումն արտահայտում է Մ.Ն. Մարչենկո³:

Ռ.Յու. Գորլաչովը ելնում է անմիջական ժողովրդավարության՝ որպես իշխանական հարաբերությունների ոլորտ հասկացությունից, որի շրջանակներում ժողովուրդն ամբողջությամբ կամ դրա մի մասը՝ կազմակերպված որպես անկախ կոլեկտիվ (տարածքային կամ այլ), իր իշխանությունն իրականացնում է

¹ Руденко В.Н. Конституционно-правовые проблемы прямой демократии в современном обществе // Автореферат дис. ... доктора юридических наук : 12.00.02 / Ур. гос. юрид. акад. - Екатеринбург, 2003, с. 12.

² Хессе К. Основы конституционного права ФРГ / Перевод с немецкого; под ред. Сидорова Н.А.; пер. Сидорова Е.А. — М.: Юрид. лит., 1981
Источник: <http://lawlibrary.ru/izdanie10744.html>

³ Проблемы теории государства и права // Под ред. М.Н. Марченко. - М.: «ПРОСПЕКТ», 1999, с. 272.

համընդհանուր մասնակցության և ուղղակի կամքի արտահայտման հիման վրա՝ պետական և հասարակական որոշումներ կայացնելիս¹:

Այսպիսով, չնայած մոտեցումների որոշակի տարբերությանը, անմիջական ժողովրդավարության հիմնական բնութագրիչներից է այն թեզը, որ ուղղակի կամարտահայտմանը մասնակցելը կարող է լինել անհատական կամ հավաքական, սակայն ուղղակի ժողովրդավարության ձև է ճանաչվում միայն *կոլեկտիվ ուղղակի կամարտահայտումը*:

Վերոնշյալը թույլ է տալիս եզրակացնել, որ *անմիջական ժողովրդավարությունը հասկացվում է որպես քաղաքացիների կամքի անմիջական, անկախ, կամավոր և կոլեկտիվ արտահայտման մեթոդների և ձևերի ամբողջություն, որն ուղղված է ժողովրդի (բնակչության) մասնակցությանը ներկայացուցչական համակարգի ձևավորմանն ու գործունեությանը, պետական (համայնքային) և հասարակական կյանքի հիմնախնդիրների անմիջական լուծմանը կամ դրանց վերաբերյալ կարծիք հայտնելուն, ազդելու պետական (համայնքային) քաղաքականության մշակման վրա, որով ժողովուրդը (բնակչությունը) անմիջականորեն պատասխանատու է որոշումների կայացման և դրանց իրականացման համար*:

Առանց մանրամասնելու ուղղակի ժողովրդավարությանը վերաբերվող Հայաստանի սահմանադրական (պետական) իրավունքի զարգացման պատմական էջերը նշենք, որ Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո և մինչև 1995թ. ՀՀ Սահմանադրության ընդունումն ուղղակի ժողովրդավարության ձևեր պետք է համարել ընտրությունները և հանրաքվե: Ընդ որում, երկու ձևերն էլ կիրառվել են համազգային մակարդակով:

ՀՀ Սահմանադրությունը ժողովրդին սահմանում է որպես իշխանության միակ աղբյուր և, ճանաչելով նրա լիիշխանությունը, սահմանում դրա իրականացման կառուցակարգը, որտեղ առա-

¹ Горлачев Р.Ю. Конституционно-правовые гарантии непосредственной демократии в Российской Федерации. Дис. ... канд. юрид. наук, М., 2003, с. 25.

ջատար դիրքը, մեր կարծիքով, զբաղեցնում է ժողովրդի կամքի ուղղակի արտահայտումը (ուղղակի կառավարումը), որի բարձրագույն դրսևորումն ազատ ընտրություններն ու հանրաքվեն են:

Համենայն դեպս, սահմանադրական կառուցվածքը բերում է քննարկվող հարցում իրերի հենց այսպիսի ընկալման:

Վերոնշյալը հնարավորություն է տալիս դատել ժողովրդի կողմից իրագործման իշխանության ձևերի առաջնահերթության (բայց ոչ տարածվածության) փոփոխության մասին՝ հոգուտ անմիջական իշխանության, ընդ որում, ինչպես պետական, այնպես էլ համայնքային մակարդակում:

Հայաստանի Հանրապետության գործող Սահմանադրությունը սահմանում է ժողովրդի կողմից իշխանության իրականացման երեք հիմնական ձևեր.

1. անմիջական (ուղղակի) ժողովրդավարություն (ազատ ընտրություններ, հանրաքվե և այլն).

2. պետական մարմինների և նրանց պաշտոնատար անձանց միջոցով.

3. տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց պաշտոնատար անձանց միջոցով:

Սահմանադրությունը սահմանում է անմիջական ժողովրդավարության մի շարք ձևեր՝ որպես ժողովրդի իշխանության բարձրագույն ուղղակի արտահայտում՝ ազատ ընտրությունները և հանրաքվեն (<< Սահմանադրության 2-րդ հոդվածի 2-րդ մաս): Այդ ձևերին վերաբերվում են նաև՝ ժողովներ՝ հավաքական իմաստով (<< Սահմանադրության 44-րդ հոդված), պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ուղղված հանրագրեր (<< Սահմանադրության 53-րդ հոդված), անմիջական մասնակցություն տեղական ինքնակառավարման իրականացմանը՝ տեղական հանրաքվեի անցկացմամբ (<< Սահմանադրության 183-րդ հոդված), տարբեր հարցերի շուրջ կարծիքի արտահայտում (օրինակ՝ համայնքների միավորման և բաժանման հարցում (<< Սահմանադրության 190 հոդված)), քաղաքացիական նախաձեռնություն (<< Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մաս) և այլն:

Սահմանադրությունները, որպես կանոն, ամրագրում են ընտրական իրավունքի հիմնական սկզբունքները, սահմանում են ընտրական իրավունքի սուբյեկտների շրջանակը, այն հիմնական հիմունքները, որոնց վրա այն պետք է կառուցվի, ընտրական իրավունքի տրամադրման և գրկման պայմանները: Ընդ որում, սահմանադրական կարգավորման շրջանակը բավականին տարբեր է: Որոշ սահմանադրություններ սահմանափակվում են առանձին տարբեր հոդվածներով, իսկ մյուսները ներկայացնում են ընտրությունների վերաբերյալ հատուկ գլուխներ կամ բաժիններ: Հայաստանի Հանրապետությունում ընտրական իրավունքները հռչակված են Սահմանադրության առանձին հոդվածներով: Օրինակ, Սահմանադրության 48-րդ հոդվածը սահմանում է, որ Ազգային ժողովի պատգամավորների և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրական իրավունքից օգտվում են 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիները, իսկ քվեարկությունը՝ համաձայն ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածի, բնութագրվում է որպես ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի և գաղտնի: ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 4 մասը սահմանում է, որ ընտրելու իրավունքը սահմանափակ է, այսինքն ընտրելու և ընտրվելու իրավունք չունեն անգործունակ ճանաչված անձինք և որոշ ծանր հանցանքներ կատարելու համար դատապարտված անձինք: Սահմանադրական դրույթները մանրամասն բացված են ընտրական օրենսդրության մեջ:

Ուղղակի ժողովրդավարության ինստիտուտները բազմազան են: Դրանց թվում կան վերջնական, պարտադիր որոշումներ կայացնելու եղանակներ (ընտրություններ, հանրաքվե) և կարծիքի արտահայտման այնպիսի ձևեր (օրինակ՝ օրենքների նախագծերի կամ ՏԻՄ ակտերի քննարկումներ, հանրահավաքներ), որոնք ունեն միայն խորհրդատվական և ոչ պարտադիր նշանակություն իշխանությունների, պաշտոնյաների, քաղաքացիների համար: Մի շարք ձևերի միջոցով իր կամքը, կարծիքը կարող է արտահայտել ժողովուրդն ամբողջությամբ՝ հանրաքվե, համաժողովրդական ընտրություններ, մեկ այլ ձևերի օգնությամբ՝ մի

մասի, վարչատարածքային միավորի բնակչության, կոլեկտիվի, մարդկանց խմբի: Կամքի ուղղակի արտահայտումը նաև ձևով բազմազան է՝ դա կարող է լինել քվեարկություն, քննարկում, ժողովի և հանրահավաքի որոշում:

Կարելի է դասակարգել նաև ուղղակի ժողովրդավարության ձևերը, ինչին անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ¹: Միևնույն ժամանակ, հետաքրքիր է, որ տեսական գրականության մեջ, ըստ էության, առաջարկվում է տարանջատել նաև *տեղական ինքնակառավարման բնակչության կողմից ուղղակի իրականացման ձևերը* և *տեղական ինքնակառավարման իրականացմանը բնակչության մասնակցության ձևերը*: Օրինակ՝ Մ.Ս. Սեմենովան նշում է, որ «քաղաքացիների կողմից տեղական ինքնակառավարման անմիջական իրականացման մասին խոսելը թույլատրելի է այն դեպքերում, երբ քաղաքացիները այն կոլեկտիվ սուբյեկտն են, որը որոշում է (վերջնականապես, իշխանաբար) տեղական նշանակության այս կամ այն հարցը: Այն դեպքերում, երբ հարցի էության վերաբերյալ որոշումը կայացվում է մեկ այլ սուբյեկտի կողմից, ուղղակիորեն կախված չէ բնակչության կարծիքից, նույնիսկ այն դեպքերում, երբ այդ սուբյեկտը պարտավոր է նախապես բացահայտել այդ կարծիքը, կամ երբ բնակչությունն ինքն է եղել հարցը քննարկելու նախաձեռնող, պետք է խոսել տեղական ինքնակառավարման իրականացմանը բնակչության

¹ Մանրամասն Տե՛ս՝ **Комарова В.В.** Формы непосредственной демократии в России. М.: Ось-89, 1998. с. 11 / **Хевсаков В.В.** Субъекты непосредственной демократии В Российской Федерации // Дисс. На соискание ученой степени кандидата юр.наук, М., 2007, с. 48-52. / **Мурашин А.Г.** Непосредственное народовластие в системе социалистического самоуправления народа. Киев: Наука, 1989, с. 44, 102./ **Шомникова Д.В.** Непосредственная демократия в Российской Федерации и роль органов внутренних дел в ее реализации // Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, М., 2001, с. 45-46. / **Руденко В.Н.** Прямая демократия. Модели правления, конституционно-правовые институты. - Екатеринбург, 2003.- с. 111-114. / **Нудненко Л.А.** Непосредственная демократия в системе местного самоуправления России: теоретические основы. М.: Прогресс, 2004, с. 160-184.

չության մասնակցության մասին»¹: Նույն մոտեցումը, ըստ էության, պահպանված է ՀՀ Սահմանադրության և օրենսդրության մեջ: Այսպես, ՀՀ Սահմանադրությունը 2-րդ հոդվածում ազատ ընտրություններն ու հանրաքվեներն անվանում է ուղղակի ժողովրդավարության ձևեր, իսկ Սահմանադրության «Համայնքի գործերի կառավարմանն անմիջական մասնակցությունը» վերտառությամբ 183-րդ հոդվածում ասվում է՝ «Համայնքի բնակիչները կարող են անմիջականորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հանրային հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով: Նույն հոդվածում նշվում է, որ տեղական հանրաքվեի անցկացման կարգը, ինչպես նաև *համայնքի բնակիչների կողմից համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու* այլ եղանակները սահմանվում են օրենքով:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ օրենսդիրը սահմանում է և՛ տեղական հանրաքվեն՝ որպես համայնքի գործերի կառավարմանն անմիջական մասնակցության ձև, և՛ մյուս բոլոր եղանակները՝ դրանք մեկ շարքի դասելով: Սակայն «Տեղական հանրաքվեի մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքների վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը հստակ սահմանազատում է տեղական հանրաքվեն՝ սահմանելով այն որպես համայնքի գործերի կառավարմանն անմիջական մասնակցության եղանակ, որը իրականացվում է համայնքի բնակիչների քվեարկությամբ համայնքային նշանակության հասարակական հարցերի շուրջ, իսկ տեղական ինքնակառավարմանը ցանկացած այլ մասնակցություն սահմանվում է որպես համայնքում իրականացվող գործընթաց, որի միջոցով բնակիչները, առանց խտրականության, տեղեկացվում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և կարող են ուղղակի կամ անուղղակի ներգործություն ունենալ տեղական ինքնա-

¹ **Семенова М.С.** Правовая реформа территориальной организации и форм непосредственной демократии в системе местного самоуправления на современном этапе. // Автореф. дисс... на соискание ученой степени кандидата юридических наук, М., 2004, с. 20.

կառավարման մարմինների որոշումների վրա: Այսպիսին էր մոտեցումը 2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի, որը 2002 թվականի «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը շարադրեց նոր խմբագրության), ինչպես նաև 2018 թվականի հունիսի 13-ի «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ տեղական ինքնակառավարման մակարդակում օրենսդիրը փորձել է տարբերակել տեղական ինքնակառավարման իրականացմանը բնակչության մասնակցության ձևերը՝ առանձնացնելով եղանակներ, որոնցով համայնքի բնակչությունը որոշում է կայացնում, և եղանակներ, որոնցով համայնքի բնակչությունը կարող է ազդել տեղական ինքնակառավարման մարմինների ընդունած որոշումների վրա: Այս մոտեցման համար, մեր կարծիքով, հիմք է հանդիսացել ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածը, որը ճանաչում է ազատ ընտրություններն ու հանրաքվեները որպես ուղղակի ժողովրդավարության ձևեր, որոնք, ինչպես գիտենք, կարող են կիրառվել ինչպես համապետական, այնպես էլ համայնքային մակարդակներում:

Սակայն արդարության համար պետք է ընդունել, որ «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխության արդյունքում 4-րդ հոդվածի 1.1-ի մասով սահմանվել է, որ համայնքների միավորման կամ բաժանման հարցով համապատասխան համայնքների բնակիչները կարող են նախաձեռնել տեղական հանրաքվե, սակայն դրա արդյունքները խորհրդատվական բնույթ ունեն, ինչը, մեր կարծիքով, շեղում է հանդիսանում նախապես կանխորոշված մոտեցումից:

2.2 ՀՀ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ. ՕՐԵՆՍԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Ավելի վաղ սույն գիտական ուսումնասիրության շրջանակներում ասվել էր ՏԻՄ համակարգում տեղական ինքնակառավարման ներկայացուցչական և գործադիր մարմինների առկայության մասին: Ընդ որում, ինչպես հայտնի է, տեղական ինքնակառավարման համակարգում ներկայացուցչական գործառույթներն իրականացնում է կամ համայնքային միավորի (կոմունայի, համայնքի, համայնքային կազմավորման և այլն) բնակչությունն անմիջականորեն կամ իրականացվում է տեղական ինքնակառավարման ընտրովի ներկայացուցչական մարմնի միջոցով: Այսպիսով, տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինն ամենուր ձևավորվում է բացառապես սովյալ տարածքի բնակչության կողմից ուղղակի ընտրությունների միջոցով: Տեղական ինքնակառավարման գործադիր մարմնի ձևավորման հարցում տարբեր երկրների օրենսդիրների մոտեցումը բազմաթեք է: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տեղական ինքնակառավարման մարմինների համակարգում գործում են տեղական ինքնակառավարման ինչպես անհատական, այնպես էլ կոլեգիալ գործադիր մարմիններ՝ ինչպես ընտրված (ուղղակի կամ անուղղակի ընտրություններով), այնպես էլ նշանակված:

Հայաստանի Սահմանադրությունը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով: Ընտրական օրենսգրքով կարող է սահմանվել համայնքի ղեկավարի ուղղակի կամ անուղղակի ընտրություն (ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվ. 1-ին մաս): Նշված է նաև, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կարգը սահմանվում է Ընտրական օրենսգրքով (ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվ. 2-րդ մաս):

Քանի որ համայնքի բնակչությունը տեղական նշանակության հարցերի իրականացման գործում իշխանության միակ աղբյուրն է, իսկ տեղական ընտրությունները քաղաքացիների կամքի

անմիջական արտահայտման ձևերից են, ուստի ՀՀ օրենսդրությունը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները ձևավորվում են, առաջին հերթին, ընտրությունների գործընթացում:

Եթե համառոտ անդրադառնանք տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանն ուղղված ընտրական օրենսդրության պատմությանը, ապա, առաջին հերթին, պետք է նշել, որ տեղական ինքնակառավարումն ինքնին Հայաստանում ներդրվել է 1995 թվականին ՀՀ Սահմանադրության հիման վրա՝ ընդունված Հայաստանի անկախացումից հետո: Սահմանադրության հիման վրա 1996 թվականի մայիսի 14-ին ընդունվել է «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՀՀ օրենքը, որն իրավական հիմք է հանդիսացել նույն 1996 թվականին Հայաստանի պատմության մեջ առաջին համայնքային ընտրություններն անցկացնելու համար: 1996 թվականի «Տեղական ինքնակառավարման ընտրությունների մասին» օրենքը նախատեսում էր համայնքի ղեկավարի ընտրությունների շրջանակներում բացարձակ մեծամասնության մեծամասնական ընտրակարգ՝ անհրաժեշտության դեպքում քվեարկության երկրորդ փուլ անցկացնելու հնարավորությամբ, իսկ ավագանու անդամների ընտրության համար՝ հարաբերական մեծամասնության մեծամասնական ընտրակարգ: Միաժամանակ համայնքի ղեկավարի ընտրությունների շրջանակներում ձևավորվում էր մեկ միամանդատ ընտրատարածք, իսկ ավագանու անդամների ընտրությունների ժամանակ ձևավորվում էին մեկ կամ մի քանի բազմամանդատ ընտրատարածքներ՝ կախված ավագանու անդամների թվակազմից, որն իր հերթին օրենսդիրը կախման մեջ է դրել այս կամ այն համայնքի բնակչության թվակազմից: Ավագանու անդամների թիվը տատանվում էր 5-15 անդամների սահմաններում, ինչը սահմանվել էր 1995 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 105-րդ հոդվածով: Սահմանադրությամբ տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնավարման ժամկետը նախատեսված էր երեք տարի ժամկետով:

1999 թվականին Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ կողիֆիկացվել է ընտրական օրենսդրությունը, որի կա-

պակցությամբ, ի թիվս այլ օրենքների, վերը նշված 1996 թվականի մայիսի 14-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրած էր ճանաչվել: 1999 թվականի Ընտրական օրենսգիրքը պահպանել էր ընտրական համակարգերի հարցում հիմնական մոտեցումները՝ համայնքի ղեկավարի ընտրությունների շրջանակներում փոխելով բացարձակ մեծամասնության մեծամասնական ընտրակարգը՝ անհրաժեշտության դեպքում քվեարկության երկրորդ փուլ անցկացնելու հնարավորությամբ, հարաբերական մեծամասնության մեծամասնական ընտրակարգով:

Նախքան ՀՀ-ում ընտրական իրավունքի զարգացման պատմության ակնարկի շարունակումը պետք է անդրադառնալ նաև այն միջազգային իրավական փաստաթղթերին, որոնք մեծապես կանխորոշել են հայկական ընտրական իրավունքի հետագա զարգացումը:

Հայաստանի նորագույն պատմության մեջ ընտրությունների ինստիտուտի նկատմամբ հետաքրքրությունը, ինչպես երիտասարդ ժողովրդավարության մյուս երկրներում, չափազանց մեծ է եղել¹, և դա միանգամայն հասկանալի և բացատրելի է: Չէ որ

¹ Տե՛ս, օրինակ՝ **Հարությունյան Գ.** ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի ներածական խոսքը Երևանյան XI միջազգային գիտաժողովում // Միջազգային Ալմանախ. Սահմանադրական արդարադատությունը նոր հազարամյակում. Երեւան, «Նժար», 2006, էջ 5.; **Թոխյան Ֆ.** Նախագահական ընտրությունների սահմանադրական կարգը ժամանակակից աշխարհում՝ համեմատական իրավական ուսումնասիրություն - Եր. Մխիթար Գոշ, 1998; **Թովմասյան Հ.Վ.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման հիմնահարցերը // Իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2000; **Շոյան Ռ.Հ.** Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգը: Ուսումնական ձեռնարկ / Ռ.Հ. Շոյան; ԵՊՀ, - Երևան. Եր. համալս. հրատ., 2000; **Վաղարշյան Ա.** Ընտրական իրավունքի սահմանադրական զարգացումը Հայաստանում (դասախոսություն) / Ա. Վաղարշյան. ԵՊՀ, Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոն. - Երևան: Եր. համալս. հրատ., 2000. (24 էջ); **Թոխյան Ֆ.Պ.** Խորհրդարանական ընտրությունների սահմանադրաիրավական կարգավորման հիմնախնդիրները երիտասարդ ժողովրդավարության երկրներում (ՀՀ օրենսդրության հիման վրա) / Ֆ. Թոխյան; Ռուս-հայկական (սլավոնական) պետ. համալս.; Խմբ.՝ Ա.Շ. Հարությունյան. - Երևան: ՌՀՀ, 2004; **Թադևոսյան Դ.Ս.** Ընտրական հանձնաժողովների իրավական կարգավիճակը անցումային պետություններում (իրավահամեմա-

ձևավորվող հայ հասարակության մեջ օրակարգային խնդիրներից մեկն այն ավանդական տեսակետների վերաիմաստավորումն ու վերագնահատումն էր, որոնց շրջանակներում ընտրությունները դիտվում էին որպես պաշտոնական արարողակարգային միջոցառում: Այս առումով, Հայաստանի անկախության ձեռքբերումից և հատկապես 1995 թվականի Սահմանադրության ընդունումից հետո գրեթե շարունակաբար աշխատանքներ են տարվել ընտրական օրենսդրության և ընտրական իրավակիրառ պրակտիկայի կատարելագործման ուղղությամբ: Միևնույն ժամանակ, 1995 թվականի ՀՀ Սահմանադրությունն օգտագործում է ոչ թե «ընտրություններ», այլ «ազատ ընտրություններ» տերմինը՝ որպես ժողովրդավարական սահմանադրական արժեք, նշելով ոչ թե ուղղակի ժողովրդավարության այնպիսի ձև, ինչպիսին ընտրություններն են, այլ հենց այնպիսի «որակական» գործընթաց՝ ընտրություններ, որոնք կարելի է բնութագրել որպես «ազատ»:

Հայաստանի Հանրապետությունում ընտրությունների ինստիտուտի զարգացումը պայմանավորված է, ընդհանուր առմամբ, ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման և զարգացման ոլորտում եվրոպական արժեքների և, մասնավորապես, ժողովրդավարական ընտրությունների ներդրման նպատակներով, ինչպես նաև կապված է ազգային օրենսդրության մեջ միջազգային չափանիշների և միջազգային իրավունքի

տական վերլուծություն) // Իրավ.գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2009; **Այվազյան Ն.Ա., Օհանյան Մ.Ս.** Ազատ ընտրություններ և հանրաքվե կազմակերպելու հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում /Ն.Ա. Այվազյան, Մ.Ս. Օհանյան - Եր.: ԵՊՀ իրատ., 2010; **Թորոսյան Ս.Լ.** Ընտրական համակարգի ձևավորման և զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասն., իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2012; ՀՀ ընտրական օրենսդրության արդի հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները / Է. Շաթիրյան, Ա. Մանասյան, Ա. Օգանեսյան Հրտ. Կ. Դ. Ավետիսյան - Երևան. ԱՊՀ անդամ երկրների ՄԽՎ, Հրտ. Ջանգալ, 2013; **Եսայան Ա.Ս.** Ընտրական վեճերի իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասն., իրավաբան. գիտ. թեկն. գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2015 և այլն:

սկզբունքների նորմատիվ-իրավական համախմբման, նաև ընտրական իրավունքների իրացման և ժողովրդավարական ընտրությունների անցկացման երաշխիքների հետ: Ժողովրդավարական ընտրությունների չափանիշների մշակման գործում առանձնահատուկ դեր է խաղում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան (այսուհետ՝ ՄԻԵԴ) և նրա կողմից ձևավորված նախադեպային իրավունքը: 1952 թվականի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությամբ երաշխավորված ազատ ընտրությունների կոնվենցիոն իրավունքի պաշտպանության լույսի ներքո ՄԻԵԴ-ը բազմիցս անդրադարձել է կոնվենցիայի մասնակից պետությունների կողմից այդ իրավունքի պահպանման հարցին՝ մշակելով ժողովրդավարական ընտրությունների չափանիշները և զարգացնելով դրանք՝ հաշվի առնելով ժամանակակից աշխարհի նոր իրողությունները և մարտահրավերները¹:

ՄԻԵԴ պաշտոնական կայքում հրապարակված վիճակագրական տվյալների համաձայն՝ 1959-2021 թթ. Կոնվենցիայի 1-ին

¹ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան երկար պատմություն ունի և շատ լայն է: Ամենանշանակալից ու հետաքրքիրներից կարելի է նշել ՄԻԵԴ-ի հետևյալ որոշումները. *Cumhuriyet Halk Partisi v. Turkey*, no. 19920/13, ECHR 2016; *Anchugov and Gladkov v. Russia*, nos. 11157/04 and 15162/05, 4 July 2013; *Sitaropoulos and Giakoumopoulos v. Greece [GC]*, no. 42202/07, ECHR 2012; *Paksas v. Lithuania [GC]*, no. 34932/04, ECHR 2011 (extracts); *Tănase v. Moldova [GC]*, no. 7/08, ECHR 2010; *Grosaru v. Romania*, no. 78039/01, ECHR 2010; *Yumak and Sadak v. Turkey [GC]*, no. 10226/03, ECHR 2008; *Kovach v. Ukraine*, no. 39424/02, ECHR 2008; *Georgian Labour Party v. Georgia*, no. 9103/04, ECHR 2008; *Ždanoka v. Latvia [GC]*, no. 58278/00, ECHR 2006-IV; *Campagnano v. Italy*, no. 77955/01, ECHR 2006-IV; *Sukhovetsky v. Ukraine*, no. 13716/02, ECHR 2006-VI; *Aziz v. Cyprus*, no. 69949/01, ECHR 2004-V; *Boškoski v. the former Yugoslav Republic of Macedonia (dec.)*, no. 11676/04, ECHR 2004-VI; *Vito Sante Santoro v. Italy*, no. 36681/97, ECHR 2004-VI; *Vito Sante Santoro v. Italy (dec.)*, no. 36681/97, ECHR 2003-I (extracts); *Melnychenko v. Ukraine*, no. 17707/02, ECHR 2004-X; *Labita v. Italy [GC]*, no. 26772/95, ECHR 2000-IV; *Cherepkov v. Russia (dec.)*, no. 51501/99, ECHR 2000-I; *Salleras Llinares v. Spain (dec.)*, no. 52226/99, ECHR 2000-XI և ուրիշներ: Աղբյուր՝ <https://echr.coe.int/Pages/home.aspx?p=caselaw/reports&c=>, <https://www.echr.coe.int/Documents/CaselawreferencesENG.pdf>.

Արձանագրության 3-րդ հոդվածի խախտման վերաբերյալ երկրների առնչությամբ 105 որոշում է կայացվել¹:

Հայաստանի անկախացումից հետո և մինչև 1995 թվականի ՀՀ Սահմանադրության ընդունումը որպես ուղղակի ժողովրդավարության ձևեր պետք է համարել ընտրությունները և հանրաքվեն: Ընդ որում, երկու ձևերն էլ գործնականում կիրառվել են (անկախության հանրաքվե 1991թ., Սահմանադրության ընդունման հանրաքվե 1995թ., Հանրապետության Նախագահի ընտրություններ 1991թ., Ազգային ժողովի ընտրություններ 1995թ.):

Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրությունը 2-րդ հոդվածում ամրագրում էր. «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով», այսպիսով սահմանելով ուղղակի ժողովրդավարության երկու հիմնական ձևերը՝ ընտրություններ և հանրաքվե: Հարկ է ընդունել, որ ոչ Սահմանադրությունը, ոչ էլ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն այն ժամանակ և մինչև 2015 թվականի սահմանադրական բարեփոխումները ուղղակի ժողովրդավարության որևէ այլ ձևի չեն անդրադարձել: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ չնայած ՀՀ Սահմանադրության մեջ տեղական հանրաքվե անցկացնելու հնարավորության մասին դրույթների բացակայության, որոնք ՀՀ Սահմանադրության մեջ հայտնվեցին միայն 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում (ՀՀ Սահմանադրության 110-րդ հոդվ.՝ փոփոխված 2005թ. նոյեմբերի 27-ին), այնուհանդերձ, 2002 թվականին ընդունվեց «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը:

Քննարկվող հարցի համատեքստում հատկապես պետք է ընդգծել ՀՀ Սահմանադրական դատարանի դերը, որը որպես ընտրությունների և հանրաքվեների արդյունքներով ընդունված որոշումների շուրջ վեճերը քննող մարմին (և ավելի վաղ՝ մինչև 2005 թ. ընտրությունների և հանրաքվեների արդյունքների վերա-

¹ https://www.echr.coe.int/Documents/Overview_19592021_ENG.pdf: Դիմելու ամսաթիվ՝ 28.05.2022թ.:

բերյալ վեճեր քննող մարմին¹), ինչպես նաև որպես սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմին, իր որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում, մեծապես նպաստել և հաճախ ձևավորել է ժողովրդավարական ընտրությունների և հանրաքվեների սովորույթներն ու ավանդույթները, ինչպես նաև, ըստ էության, մշակել է Հայաստանի Հանրապետությունում անմիջական ժողովրդավարության ձևերի իրականացման այն չափանիշները, որոնք կարողացել են ապահովել այն ժամանակվա առավել ժողովրդավարական, ինչպես նաև դրանց սահմանադրական² բնույթը³: Քննարկվող հար-

¹ Տես ավելին այս մասին՝ **Թոխյան Ֆ., Թոխյան Պ.** Ընտրական իրավունքի դատական պաշտպանության հիմնախնդիրները ՀՀ-ում // Սահմանադրական դատարանի տեղեկագիր, 1(38)2006, էջեր 50-55:

² Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը 2003 թվականի մարտի 24-ի ՍՂՈ-408 որոշմամբ ներկայացնում է ընտրությունների սահմանադրականության չափանիշները (ՀՀ սահմանադրական դատարանի 2003թ. մարտի 24-ի ՍՂՈ-408 որոշման 7-րդ կետ): Այս մասին ավելին Տե՛ս նաև՝ Թոխյան Ֆ. Սահմանադրական վերահսկողությունը ազգային ընտրությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում (Տեսության և պրակտիկայի հիմնախնդիրներ) // Almanac XI Երևանի միջազգային գիտաժողով «Սահմանադրական դատարանների դերը ժողովրդավարական ընտրությունների ապահովման գործում», 2006 թ., էջ. 115:

³ Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 1999 թվականի հոկտեմբերի 16-ի ՍՂՈ-179 որոշմամբ հակասահմանադրական է ճանաչել ՀՀ ընտրական օրենսգրքի որոշ դրույթներ, «Փախստականների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքները, ըստ էության, ճանաչել է ոչ քաղաքացիների (մասնավորապես՝ փախստականների) տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու իրավունքը: Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2002 թվականի հոկտեմբերի 1-ի ՍՂՈ-389 որոշմամբ Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի որոշ դրույթներ գտել է ՀՀ Սահմանադրությանը հակասող՝ ճանաչելով քաղաքացիների ընտրական իրավունքների պաշտպանության իրավունքը (մասնավորապես՝ վերականգնել անձին ընտրողների ցուցակներում) առանց ժամկետների սահմանափակման՝ ընդհուպ մինչև քվեարկության ավարտը (մանրամասն տես նաև. Թոխյան Ֆ.Պ. Ընտրական օրենսդրության սահմանադրականության հարցը որոշելու վերաբերյալ գործերով ՀՀ ՍՂ-ի իրավական դիրքորոշումները և դրանց իրավաբանական հետևանքները // Սահմանադրական դատարանի տեղեկագիր, 4(33)2004, էջեր 3-14):

ցի¹ վերաբերյալ Սահմանադրական դատարանի, մեր կարծիքով, շատ նշանակալից որոշումներ կարելի է նշել, սակայն դրանցից մի քանիսին կանդիդատական սույն հետազոտության հաջորդ ենթազույգներում՝ ուղղակի ժողովրդավարության կոնկրետ ձևի առնչությամբ:

Իր իրավական դիրքորոշումներում Սահմանադրական դատարանը հենվել է, առաջին հերթին, ընտրական իրավունքի ուղղորտում միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների վրա: Ու թեև միջազգային իրավունքը շատ զգուշավոր է վերաբերվում ընդհանրապես ընտրական իրավունքի խնդիրներին, այնուամենայնիվ, միջազգային հանրությունը մշակել է փաստաթղթեր, որոնց շրջանակներում ձևակերպվում են ընտրական իրավունքի միջազգային չափանիշները: Դրանցից կարելի է նշել 1948 թվականին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 21-րդ հոդվածը, ԵԱՀԽ-ի մարդկային չափանիշի խորհրդածողովի Կոպենհագենի հանդիպման փաստաթղթի 5.1 կետը, որն ընդունվել է 1990 թվականի հունիսի 29-ին, 1966 թվականին Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Քաղաքացիական և քաղաքական իրավունք-

¹ ՀՀ սահմանադրական դատարանի 2003 թվականի հուլիսի 7-ի ՍԴՈ-436 որոշումը. ՀՀ սահմանադրական դատարանի 2003 թվականի հուլիսի 18-ի ՍԴՈ-438 որոշումը. ՀՀ սահմանադրական դատարանի 2004 թվականի սեպտեմբերի 24-ի ՍԴՈ-512 որոշումը. ՀՀ սահմանադրական դատարանի 2006 թվականի նոյեմբերի 7-ի ՍԴՈ-664 որոշումը. ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 18-ի ՍԴՈ-721 որոշումը. ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի ՍԴՈ-722 որոշումը. ՀՀ սահմանադրական դատարանի 2008 թվականի փետրվարի 11-ի ՍԴՈ-734 որոշումը. ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի մայիսի 8-ի ՍԴՈ-803 որոշումը. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2012 թվականի մայիսի 5-ի ՍԴՈ-1027 որոշումը. ՀՀ Սահմանադրական դատարանի 2012 թվականի մայիսի 31-ի ՍԴՈ-1028 որոշումը. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2013 թվականի հունվարի 25-ի ՍԴՈ-1072 որոշումը. ՀՀ սահմանադրական դատարանի 05.03.2013թ. ՍԴՈ-1076 որոշումը. ՀՀ Սահմանադրական դատարանի 2013 թվականի մարտի 14-ի ՍԴՈ-1077 որոշումը. ՀՀ սահմանադրական դատարանի 07.03.2017թ. ՍԴՈ-1356 որոշումը. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2017 թվականի ապրիլի 28-ի ՍԴՈ-1364 որոշումը. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 26-ի ՍԴՈ-1396 որոշումը և այլն:

ների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածը, Վենետիկի հանձնաժողովի կողմից 2002 թվականին ընդունված Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրքը. Ղեկավար սկզբունքները և բացատրական զեկույցը, ինչպես նաև Հայաստանի կողմից վավերացված 1985 թվականի հոկտեմբերի 15-ին ընդունված Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիան (հոդվ. 3)¹, 1950 թվականին Եվրոպայի խորհրդի կողմից ընդունված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի թիվ 1 արձանագրությունը (հոդվ. 3)², Միջխորհրդարանական միության խորհրդի կողմից ընդունված ազատ և արդար ընտրությունների չափանիշների մասին հռչակագիրը, 2002 թվականի հոկտեմբերի 7-ի Անկախ Պետությունների Համագործակցության անդամ պետություններում ժողովրդավարական ընտրությունների, ընտրական իրավունքների և ազատությունների չափանիշների մասին կոնվենցիան³, 2009 թվականի նոյեմբերի 16-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների գործերին մասնակցության մասին» տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրությունը⁴ և այլն:

Բացի այլ պատճառներից, ՀՀ ընտրական օրենսդրության վերանայման ևս մեկ պատճառ հանդիսացավ միջազգային այս փաստաթղթերի վավերացումը: 1999 թվականի ընտրական օրենսգիրքը բազմիցս փոփոխվել է: Դրանցից ցանկանում ենք նշել միայն երկու օրենք, որոնք փոփոխություններ և լրացումներ են կատարել 1999 թվականի Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում

1. 2006 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի ընդունումը պայմանավորված էր նաև 2005 թվականի նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխություններով: Սահմանադրական և, համապա-

¹ Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 01.05.2002թ.:

² Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2.04.2002թ.:

³ Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 17.03.2005թ.:

⁴ Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 23.03.2013 թ.:

տասխանաբար, օրենսդրական փոփոխությունների շրջանակում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետը երկարացվել է մինչև 4 տարի: Բացի այդ, Ընտրական օրենսգրքում փոփոխությունների մասով նախատեսվում էր, որ ավագանու անդամների ընտրությունների ժամանակ ստեղծվում է մեկ բազմանդատ ընտրատարածք՝ անկախ ավագանու անդամների թվից:

2. 2008 թվականի դեկտեմբերի 26-ի «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որի ընդունումը պայմանավորված էր նաև Հայաստանի մայրաքաղաքի կարգավիճակի վերաբերյալ 2005 թվականի նոյեմբերի 27-ի սահմանադրական փոփոխություններով: Ինչպես հայտնի է, մինչև 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները Երևան քաղաքն օժտված էր մարզի կարգավիճակով, իսկ տեղական ինքնակառավարումը Երևանում իրականացվում էր միայն 12 թաղամասերի մակարդակով, որոնց բաժանված էր քաղաքը: 2005 թվականի Սահմանադրական փոփոխությունների շրջանակներում 108-րդ հոդվածը սահմանեց. «Երևանը համայնք է: Տեղական ինքնակառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման առանձնահատկությունները սահմանվում են օրենքով: Օրենքով կարող են սահմանվել Երևանի քաղաքապետի ուղղակի կամ անուղղակի ընտրություններ»: Այսպիսով, Ընտրական օրենսգրքը, համապատասխանաբար, փոփոխվել է՝ Երևանում տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման կարգը վերանայելու անհրաժեշտությամբ: Այս օրենսդրական ակտը Հայաստանում առաջին անգամ ներմուծեց համամասնական ընտրակարգ՝ համայնքային ընտրությունների շրջանակներում և անուղղակի ընտրությունների ընթացակարգ, ընդհանուր առմամբ: Հայաստանում անուղղակի ընտրությունների շրջանակներում 2009 թվականին առաջինն ընտրվել է Երևանի քաղաքապետը: Հայաստանի օրենսդրության նման մոտեցումը բազմաթիվ հակասություններ առաջացրեց սահմանադրական իրավունքի պրակտիկների և տեսաբանների շրջանում, որի բուն պատճառը 2005 թվականին փոփոխված ՀՀ Սահմանադրության որոշակի անհամապատասխանությունն էր (ներքին հակասությունը), որի 4-րդ հոդվածում աս-

վում էր. «Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ»: 2005 թվականին փոփոխված ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածը զետեղված էր Սահմանադրության առաջին գլխում՝ նվիրված սահմանադրական կարգի հիմունքներին, իսկ 2005 թվականին փոփոխված ՀՀ Սահմանադրության 108-րդ հոդվածը՝ Սահմանադրության յոթերորդ գլխում՝ նվիրված տեղական ինքնակառավարմանը: Որոշ հեղինակներ կարծում են, որ Սահմանադրությունը, որպես հատուկ իրավական ակտ, ունի (կամ պետք է ունենա) ինքնաբավության որակ, որը կապահովի դրա կայունությունը և ներքին հակասությունների բացակայությունը¹: Հեղինակների մեկ այլ մասը (այդ թվում՝ պրակտիկ մասնագետները²) կարծում են, որ Սահմանադրության մեջ ներքին հակասությունները հնարավոր են և առաջարկում են դրանք լուծման ուղիներ՝ բախումների առկայության դեպքում³:

Այսպիսով, միայն 2008 թվականից Հայաստանում հնարավոր դարձավ համայնքային ընտրությունների շրջանակներում կիրառել համամասնական ընտրակարգ և անցկացնել համայնքի ղեկավարի անուղղակի ընտրություններ, քանի որ մինչ 2008 թվականի դեկտեմբերի 26-ի «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ըն-

¹ Մանրամասն տես՝ **Авакьян С.А. Конституция России: природа, эволюция, современность.** - "Сашко", 2000. Источник: <https://constitution.garant.ru/science-work/modern/1776651/chapter/bab98b384321e6e745a56f88cbb0486>; **Հարությունյան Գ.Գ., Սարգսյան Հ.Լ., Քևորդյան Ռ.Ա.** Սահմանադրականություն. ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ. Երևան, խմբ. «Ձանգակ», 2017, էջ 139; **Մանասյան Ա.Ա.** Սահմանադրական կայունությունը որպես կայուն ժողովրդավարության կարևորագույն նախապայման / Ա.Ա. Մանասյան, Երևան, խմբ. «Այրապետ», 2019, էջ 344 և այլն:

² Օրինակ՝ 2014 թվականի ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում հեղինակները բազմիցս անդրադառնում են ներսահմանադրական հակասություններին և դրանց վերացման անհրաժեշտությանը: Աղբյուր՝ <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>

³ Մանրամասն տես՝ **Гамбарян А.С., Даллакян Л.Г.** Коллизионные нормы и их конкуренция: монография. – М.: Юрлит-Информ, 2019, с. 111-117.

դրնումը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները Հայաստանի Հանրապետությունում անցկացվել են բացառապես մեծամասնական ընտրակարգով և բացառապես ուղղակի ընտրությունների շրջանակներում՝ անկախ ընտրվող մարմինից:

2011 թվականին ընդունվեց երկրորդ Ընտրական օրենսգիրքը, որը պահպանեց օրենսդիրի նախկին մոտեցումները տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում կիրառվող ընտրական համակարգերի հարցում:

Սակայն 2016 թվականի երրորդ (գործող) Ընտրական օրենսգրքի շրջանակներում էական փոփոխություններ են տեղի ունեցել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման և անցկացման հարցում: 2016 թվականի Ընտրական օրենսգրքի ընդունմանը նախորդել է սահմանադրական բարեփոխումը, որի շրջանակներում ընդունվել են 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները: 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները հակիրճաբար անդրադարձան համայնքային ընտրություններին: Այսպիսով, Սահմանադրության 7-րդ հոդվածը նախանշում է ընտրական իրավունքի սկզբունքները (ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունք՝ գաղտնի քվեարկությամբ), որոնք վերագրվում են Ազգային ժողովի, ավագանու ընտրություններին և հանրաքվեներին: Իսկ ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածում առաջին անգամ սահմանվեց, որ Ընտրական օրենսգրքով կարող է սահմանվել համայնքի ղեկավարի ուղղակի կամ անուղղակի ընտրություն: Համայնքի ղեկավարի ուղղակի ընտրության դեպքում կիրառվում են Սահմանադրության 7-րդ հոդվածով սահմանված ընտրական իրավունքի սկզբունքները: Այսպիսով, վերանայվեց համայնքի ղեկավարի ուղղակի և անուղղակի ընտրությունների հարցում նախկինում 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված վիճահարույց մոտեցումը: Նշենք նաև, որ Երևանի ղեկավարի անուղղակի ընտրությունները կարգավորվել են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարելի է փաստել, որ ՀՀ-ում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների

գործող իրավական հիմքը ՀՀ Սահմանադրությունն է, միջազգային նորմերն ու սկզբունքները, Հայաստանի կողմից վավերացված միջազգային փաստաթղթերը և 2016 թվականին ընդունված առաջին սահմանադրական օրենքը Հայաստանում՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքը (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք), ինչպես նաև մի շարք այլ օրենքներ և բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր, որոնք ընդունվել են հիմնականում ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից: Ընտրական իրավունքի հիմնախնդիրների վրա այսպես թե այնպես ազդող օրենսդրական ակտերից են «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, «Տեղական ինքնակառավարման մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքները և այլն:

2016 թվականին ընդունված և 2016 թվականի հունիսի 1-ին ուժի մեջ մտած Ընտրական օրենսգիրքը պահպանել է նախկինում գոյություն ունեցող հիմնական մոտեցումները համայնքային ընտրություններում ընտրական համակարգի ընտրության շրջանակներում՝ պահպանելով հիմնականում հարաբերական մեծամասնության մեծամասնական ընտրակարգը և համայնքի ղեկավարի, և ավագանու անդամների ընտրության համար, ինչին նվիրված է Ընտրական օրենսգիրքի հինգերորդ բաժինը: Պահպանվել է նաև Երևանում տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման հարցում մոտեցումը, որտեղ համամասնական ընտրակարգով ուղղակի ընտրությունների միջոցով ձևավորվում է համայնքի ավագանին, որն իր կազմից անուղղակի ընտրություններով ընտրում է Երևանի քաղաքապետ: Ընտրական օրենսգրքում նորամուծություն էր Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների համար նախատեսված իրավակարգավորման ընդլայնումը Հայաստանի մյուս երկու խոշոր քաղաքների վրա՝ Գյումրու և Վանաձորի: Վերոնշյալի ուժով Ընտրական օրենսգրքի վեցերորդ բաժինը վերնագրված էր «Երևանի, Գյումրու և Վանաձորի ավագանու ընտրություններ»: Ընդ որում, այն քաղաքներում, որտեղ համայնքի ավագանին ընտրվում էր համամասնական ընտրակարգով, նախատեսված են եղել համայնքի ղեկավարի անուղղակի ընտրություն-

ներ, որոնց Ընտրական օրենսգիրքը ոչ մի կերպ չի անդրադարձել: Փաստն այն է, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը կարգավորում էր Երևանի քաղաքապետի անուղղակի ընտրությունները, և նույն տրամաբանությամբ, Ընտրական օրենսգրքի ընդունմանը զուգահեռ, 2016 թվականի մայիսի 25-ի «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 24.1-24.4 հոդվածներով կարգավորվել են Գյումրու և Վանաձորի ղեկավարների անուղղակի ընտրությունների հետ կապված հարցերը: Նման իրավակարգավորումը պահպանվել է նաև 2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի շրջանակներում, երբ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը ներկայացվել էր նոր խմբագրությամբ: Սակայն ուղղակի և անուղղակի ընտրությունները կարգավորելու այս մոտեցումը երկար չտևեց, և 2020 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների շրջանակում Երևանի, Գյումրու և Վանաձորի ղեկավարների անուղղակի ընտրությունների կանոնակարգումն ամրագրվեց Ընտրական օրենսգիրքում՝ օրենսդրի այս մոտեցումը պատճառաբանելով նրանով, որ ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի համաձայն՝ համայնքների ղեկավարների ուղղակի կամ անուղղակի ընտրությունները սահմանվում են Ընտրական օրենսգրքով, և որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության կարգը սահմանվում է Ընտրական օրենսգիրքով: Այսպիսով, կարելի է փաստել, որ թեև Ընտրական օրենսգիրքն ընդունվել է ոչ վաղ անցյալում (2016թ.), սակայն այն բազմիցս փոփոխվել է, և այս փոփոխությունները էապես վերաբերվել են նաև համայնքային ընտրություններին¹: Համայնքային ընտրությունների հետ կապված առավել նշանա-

¹ Մանրամասն տես՝ Հակոբյան Լ.Ա., Վարազյան Լ.Ա., Ասատրյան Ա.Մ. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխությունների քաղաքական և իրավական նշանակությունը / Լ.Ա. Հակոբյանը, Լ.Ա. Վարազյան, Ա.Մ. Ասատրյան.- Եր., Հրտ. «Հայրապետ», 2021, էջ. 26-46-256:

կալից փոփոխությունները Ընտրական օրենսգրքում կատարվել են 2020 թվականի հունիսի 18-ի ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքով, որոնք հետագայում փոքր-ինչ վերանայվել են 2021 թվականի մայիսի 7-ի ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքով: Այսպիսով, գործող օրենսդրության համաձայն, համայնքում ընտրվում է տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմին՝ ավագանի և գործադիր մարմին՝ համայնքի ղեկավար: Այսպիսով, տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորման գործընթացում դրսևորվում է տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման ժողովրդավարական բնույթի սկզբունքը: Տեղական համայնքներում պարբերական ազատ ընտրությունների անցկացումը տեղական ինքնակառավարման ոլորտում ուղղակի ժողովրդավարության հիմքն է: Համայնքային ընտրությունների նշանակությունը պայմանավորված է նրանով, որ դրանց միջոցով ձևավորվում են ներկայացուցչական մարմիններ և ընտրվում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրովի պաշտոնյաներ: Հենց ընտրություններն են հանդիսանում տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության նկատմամբ քաղաքացիների վերահսկողության, բնակչության նկատմամբ նրանց պատասխանատվության բարձրացման ամենաարդյունավետ ձևերից մեկը: Յուրաքանչյուր ընտրարշավ խթանում է քաղաքացիների հասարակական-քաղաքական ակտիվության զարգացումը, օգնում բացահայտելու նրանց հրատապ կարիքներն ու շահերը և ստեղծում նրանց բավարարման հնարավոր նախադրյալներ¹:

Գործող Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են մեծամասնական և համամասնական ընտրակարգով: Համայնքային ընտրություններում կիրառվող ընտրական

¹ Муниципальное право Российской Федерации. Под ред. Ю.А. Дмитриева. М., 2000, с. 300-301.

համակարգը որոշելու չափանիշը՝ ընտրողների թիվն է այն համայնքում, որտեղ անցկացվում են ընտրությունները: Որպես չափանիշ նշված է 4 000 ընտրող թիվը¹: Մինչև 4 000 ընտրող ունեցող համայնքներում համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրություններն անցկացվում են մեծամասնական ընտրակարգով, 4 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքներում ավագանու ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով, իսկ համայնքների ղեկավարներն այս դեպքում ընտրվում են անուղղակի ընտրություններով ավագանու կողմից՝ ավագանու անդամներից:

Մեծամասնական ընտրակարգի դեպքում համայնքի ղեկավարի ընտրության ժամանակ համայնքի տարածքում կազմավորվում է միամանդատ ընտրատարածք, ավագանու ընտրության ժամանակ համայնքի տարածքում կազմավորվում է մեկ բազմամանդատ ընտրատարածք, իսկ համամասնական ընտրակարգի դեպքում ավագանու ընտրության ժամանակ համայնքի տարածքում կազմավորվում է մեկ բազմամանդատ ընտրատարածք (Ընտրական օրենսգրքի 104.1-րդ հոդվ. 1-5-րդ մասեր):

Եվս երկու խնդիր, որոնց այս գիտական ուսումնասիրության շրջանակներում անդրադարձ է կատարվել միայն ընդհանուր առումներով, և որոնց ցանկալի է ավելի մանրամասն անդրադառնալ՝ վերաբերում է ավագանու թվաքանակի և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետի խնդիրներին, քանի որ այս երկու չափանիշներն էլ հանդիսանում են տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության

¹ Նշենք, որ 2020 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի շրջանակներում նախատեսվել է, որ բազմաբնակավայր համայնքներում ընտրությունները անցկացվելու են համամասնական ընտրակարգով՝ անկախ այդ համայնքում ընտրողների թվից: Սակայն, 2021 թվականի մայիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի շրջանակներում վերանայվել է այս մոտեցումը և համայնքային ընտրությունների ժամանակ ընտրական համակարգը որոշելու միակ չափանիշն է այս կամ այն համայնքի ընտրողների թվաքանակա-
նը:

արդյունավետության գրավականը:

Ավագանու գործունեությունը կարող է արդյունավետ լինել միայն ավագանու արդյունավետ աշխատանքի դեպքում: Դրա նախապայմաններից մեկն էլ ավագանու անդամների թվաքանակն է, որը պետք է լինի բավարար՝ համապատասխան անհրաժեշտ քննարկումներ անցկացնելու, պատասխանատու գործողություններ կատարելու, արագ որոշումներ կայացնելու համար: Արևմտյան Եվրոպայի երկրների փորձից ելնելով՝ դժվար է հստակեցնել տեղական իշխանության ավագանու «իդեալական թվաքանակը»: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այսպես կոչված «երիտասարդ ժողովրդավարության» երկրներում ավագանու թվակազմն ավելի բարձր է, քան արևմտաեվրոպական երկրներում, ինչը հետազոտողների կողմից բացատրվում է սոցիալիստական անցյալի ազդեցությամբ¹:

Համայնքի ավագանու թվաքանակը կախված է երկու գործոններից՝ վարչատարածքային միավորի մակարդակից և բնակչության թվից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարումն իրականացվում է միայն համայնքների մակարդակով, ներկայացուցչական մարմնի թվակազմը կախված է միայն մեկ գործոնից՝ համայնքի բնակչության թվից: Ի դեպ, ավելի վաղ Հայաստանի Սահմանադրությունը մատնանշում էր ավագանու անդամների թվի հնարավոր սահմանափակումները (5-ից 15), այժմ նման սահմանափակում չկա: Անդամների կոնկրետ թիվը սահմանվում է օրենքով: Անկախ Պետությունների Համագործակցության անդամ պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի կողմից (ԱՊՀ ՄԽՎ 2015թ. նոյեմբերի 27-ի թիվ 43 -11 որոշման հավելված) մշակված «Տեղական ինքնակառավարման կազմակերպման ընդհանուր սկզբունքների մասին» մոդելային օրենքի 15-րդ հոդվածում առաջարկվում է մոդելային օրենքի մակարդակով ինքնակառավարման ներկայացուցչական մարմինների թիվն օրենսդրորեն ամրագրելու երկու տարբերակ.

1) ներկայացուցչական մարմնի անդամների թիվը հստակ

¹ Холлинс Г., Плоккер К. На пути к демократической децентрализации. Перестройка региональных и местных органов власти в Новой Европе. Брюссель; 1995. с. 210-211.

ամրագրված է օրենքով և տատանվում է՝ կախված տվյալ համայնքի բնակչության թվից¹,

2) ներկայացուցչական մարմնի պատգամավորների թիվը սահմանվում է ազգային օրենսդրությամբ՝ համամասնորեն այն տարածքի բնակչությանը, որի սահմաններում իրականացվում է տեղական ինքնակառավարումը²:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, հիմք ընդունելով առաջին տարբերակը, 104.1 հոդվածով սահմանել է ավագանու անդամների թիվը՝ ավագանու անդամների ընդհանուր թիվը կախվածության մեջ դնելով տվյալ համայնքի ընտրողների թվից: Այսպիսով, Ընտրական օրենսգրքի 104.1-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ համայնքի ավագանին բաղկացած է³

1) 5 անդամից՝ մինչև 1 000 ընտրող ունեցող համայնքում.

2) 7 անդամից՝ 1 001-ից մինչև 2 000 ընտրող ունեցող համայնքում.

3) 9 անդամից՝ 2 001-ից մինչև 4 000 ընտրող ունեցող համայնքում.

4) 15 անդամից՝ 4 001-ից մինչև 10 000 ընտրող ունեցող համայնքում.

5) 21 անդամից՝ 10 001-ից մինչև 25 000 ընտրող ունեցող համայնքում.

6) 27 անդամից՝ 25 001-ից մինչև 70 000 ընտրող ունեցող համայնքում.

7) 33 անդամից՝ 70 001-ից մինչև 300 000 ընտրող ունեցող համայնքում

8) 65 անդամից՝ 300 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքում.

¹ Այս դեպքում ներկայացված է հետևյալ հարաբերակցություն. 7 մարդ՝ մինչև 1 000 բնակչության դեպքում, 10 մարդ՝ 1 000-ից 10 000 բնակչության դեպքում, 15 մարդ՝ 10 000-ից 30 000 բնակչության դեպքում, 20 մարդ՝ 30 000-ից 100 000 բնակչության դեպքում, 25 մարդ՝ 100 000-ից 500 000 բնակչության դեպքում, 35 մարդ՝ ավելի քան 500 000 բնակչության դեպքում:

² Աղբյուր՝ ԱՊՀ ՄԽՎ 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 43-11 որոշման հավելված https://iacis.ru/baza_dokumentov/modelnie_zakonodatelnie_akti_i_rekomendacii_mpa_sng/modelnie_kodeksi_i_zakoni/100

³ Հարկ է նշել, որ վերջին երեք տասնամյակների ընթացքում համայնքի ավագանիների քանակական կազմն ավելացել է:

մայնքում:

Հարկ է նշել, որ Հայաստանի օրենսդրությունը չի սահմանում այն չափանիշները, որոնք ընկած են տվյալ համայնքի ավագանու անդամների և ընտրողների թվի միջև վերը նշված հարաբերակցության ընտրության հիմքում: Օտարերկրյա պետությունների օրենսդրության մեջ տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի անդամների թվի և տվյալ համայնքի բնակչության թվի հարաբերակցության ընտրությունը նույնպես որևէ կոնկրետ չափորոշիչով որոշված չէ: Այնուամենայնիվ, օտարերկրյա երկրներում ի սկզբանե համայնքային միավորի կարգավիճակ ստանալու համար, որի մակարդակով իրականացվում է տեղական ինքնակառավարումը, որոշակի բնակավայր (քաղաք, գյուղ, ավան և այլն) պետք է բավարարի որոշակի պայմանների, մասնավորապես՝ բնակչության թվաքանակի պահանջը: Այսպիսով, ԱՄՆ Կալիֆորնիա նահանգում համայնքային կազմավորումը պետք է ունենա առնվազն 500 մարդ, իսկ Ալաբամա նահանգում բավարար է 75, Ֆրանսիայում՝ 2000 բնակիչ, Հնդկաստանում՝ 5000, Շվեդիայում՝ 8000¹ և այլն:

Համայնքի ավագանու ընտրությունների ժամանակ համայնքի տարածքը համարվում է մեկ բազմանդատ մեծամասնական կամ համամասնական ընտրատարածք: Նախկինում համայնքում ընտրատարածքների թիվը կապված էր բնակչության և մանդատների թվի հետ: Այսպես, մինչև 3 000 բնակիչ ունեցող համայնքներում ստեղծվում էր 1 բազմանդատ ընտրատարածք, 3 001-ից 20 000 բնակիչ ունեցող համայնքներում՝ 2 հնգամանդատ ընտրատարածք, իսկ 20 000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքներում՝ 3 հնգամանդատ ընտրատարածք: Մեր կարծիքով, Հայաստանում մեկ բազմանդատ ընտրատարածքի օգտագործումը միանգամայն արդարացված է (այս հարցը նախկինում քննարկվել

¹ Տես լավելին՝ **Чиркин В.Е.** Публичное управление на местах: некоторые вопросы российского и зарубежного опыта /Правовые аспекты развития и функционирования системы местного самоуправления в Ленинградской области: Сборник статей и справочных материалов / И.И. Макаров, А.А. Романцов; под общей ред. К.Н. Патраева, М.Е. Лебединского. – СПб.: Вести, 2014, с. 27-28.

է հայրենական իրավական գրականության մեջ¹), քանի որ, կարծում ենք, ավելի օբյեկտիվ է ապահովում համայնքի բնակչության ներկայացվածությունը տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնում *երկրի քաղաքական էլիտայի և իշխանությունների կողմից ընտրությունների նկատմամբ տոտալ վերահսկողության և ընտրական աշխարհագրության տեխնոլոգիայի կառուցակարգերի չարաշահման հնարավորության պայմաններում*: Սակայն իրավական գրականության մեջ այլ կարծիք կա: Այսպես, օրինակ, մի շարք ռուս հեղինակներ առաջարկում են անհավասար թվով մանդատներով մի քանի ընտրատարածքներում համայնքային ընտրություններ անցկացնել, եթե տվյալ համայնքը բաղկացած է մի քանի բնակավայրերից²: Թերևս, հաշվի առնելով Ռուսաստանում տեղական ինքնակառավարման տարածքային կազմակերպման ձևերի բազմազանությունը, առաջարկվածը կարելի է արդարացված համարել³, սակայն, մեր կարծիքով, այս մոտեցմամբ վտանգ կա, որ մեծ թվով մանդատներ ունեցող բնակավայրերը կկլանեն նույն համայնքի շրջանակներում ավելի քիչ ներկայացված բնակավայրերը: Եթե ռուսական տարբերակի հետ կապված երկու տարբերակներն էլ անվիճելի չեն, ապա, ինչպես մեզ թվում է, համայնքների քիչ թե շատ հավասարազոր տարածքային և ժողովրդագրական կազմ ունեցող Հայաստանի համար միանշանակ արդարացված է մեկ բազմանդատ ընտրատարածքի արկայությունը մի համայնքի շրջանակներում՝ հաշվի առնելով համայնքային ընտրությունների քաղաքականացվածության աստիճանը հայոց պետականության զարգացման ժամանակակից փուլում⁴:

Ինչպես նշվեց ավելի վաղ, այս կամ այն երկրում տեղական

¹ **Հակոբյան Ն.Գ.**, Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման ձևավորումն ու զարգացումը. Երևան, «Ոսկան Երևանցի», 2001, էջ 42-43:

² Избирательное право и избирательный процесс в Российской Федерации. Отв. ред. А.В. Иванченко. М., Изд-во НОРМА, 1999. с. 469.

³ **Михеева Т.Н.** Новеллы в правовом регулировании местного самоуправления /Правовые аспекты развития и функционирования системы местного самоуправления в Ленинградской области: Сборник статей и справочных материалов / И.И. Макаров, А.А. Романцов; под общей ред. К.Н. Патраева, М.Е. Лебединского. – СПб.: Вести, 2014, с. 38-45.

⁴ Նույն համայնքի ներսում տարբեր բնակավայրերի ներկայացվածությունը համայնքի ավագանու կազմում կքննարկվի հաջորդ ենթագլուխներում:

ինքնակառավարման օպտիմալ համակարգ ընտրելու համար անհրաժեշտ է որոշել տեղական մարմինների լիազորությունների ժամկետը: Համայնքային ընտրությունները, որպես կանոն, ավելի հաճախ են անցկացվում, քան համապետականները, ինչը բնակչությանը լրացուցիչ հնարավորություն է տալիս օգտվելու իրենց քաղաքական իրավունքներից և արտահայտելու իրենց վերաբերմունքը որոշակի խնդիրների նկատմամբ: Այստեղ, սակայն, հնարավոր է ընտրողի որոշակի «գերբեռնվածություն», որը «կարող է նրա մոտ անտարբերություն առաջացնել չափազանց հաճախակի ընտրությունների հանդեպ»¹: Տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնավարման ժամկետները տատանվում են երկուսից վեց տարի (2-5 տարի՝ Ռուսաստանում, 3 տարի՝ Պերուում, 4 տարի՝ Բելառուսում, Ղանիայում, Լեհաստանում, Ուկրաինայում, Ֆինլանդիայում, Ճապոնիայում, 4-6 տարի՝ Ավստրիայում, 5 տարի՝ Ուզբեկստանում, Գերմանիայում, 6 տարի՝ Բելգիայում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում 2000 թվականի տեղական ինքնակառավարման մասին օրենքը տրամադրում է հետևյալ տարբերակները. ավագանին ամբողջությամբ թարմացվում է 4 տարին մեկ, ավագանին 2 տարին մեկ թարմացվում է կիսով չափ, ավագանին ամեն տարի թարմացվում է մեկ երրորդով, Շոտլանդիայում խորհուրդն ընտրվում է 3 տարով և այլն²):

Հայաստանում տեղական ինքնակառավարման ինստիտուտի գործունեության առաջին տասը տարիներին տեղական մար-

¹ Российское народовластие: развитие, современные тенденции и противоречия / Под ред. А.В. Иванченко. М., Фонд «Либеральная миссия», 2003. с. 217.

² Մանրամասն տես՝ **Михалева Н.А.** Конституционное право зарубежных стран СНГ. М., ЮРИСТЪ, 1998. с.340-341; **Евдокимов В.Б., Старцев Я.Ю.** Местные органы зарубежных стран: правовые аспекты. М., СПАРК, 2001. с. 64, 131, 171, 182, 184, 190-191, 196-197, 208; **Барабашев Г.В.** Местное самоуправление. М., Изд-во МГУ, 1996. с.50; Конституционное (государственное) право зарубежных стран. Общая часть. Под ред. Б.А. Страшуна. М., Изд-во БЕК, 1996. с. 703; Конституционное (государственное) право зарубежных стран. Общая часть. Под ред. Б.А. Страшуна. М., Изд-во БЕК, 1997. с. 87.; Конституционное право зарубежных стран: учебник / Под общ. ред. М.В. Баглая, Ю.И. Лейбо и Л.М. Энтина. – 3-е изд., перераб. и доп. – М.: Норма: Инфра-М, 2010, с. 395-400; **Чиркин В.Е.** Конституционное право зарубежных стран: учебник / 9-ое изд., перераб. и доп., М.: Норма: Инфра-М, 2019, с. 304-305 և այլն:

միններն ընտրվել են 3 տարի ժամկետով, ինչը սահմանադրական պահանջ էր, որը զարգացվել էր օրենսդրության մեջ: 2005 թվականի հանրաքվեի արդյունքներով ՀՀ Սահմանադրության փոփոխություններից հետո տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետը սահմանվեց 4 տարի: Այս փոփոխությունը համարում ենք միանգամայն հիմնավորված հաշվի առնելով, որ Հայաստանում տեղական ինքնակառավարման գործունեության արդյունավետության հասնել հնարավոր է միայն այն դեպքում, եթե տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվեն իրենց լիազորություններն իրականացնելու համար անհրաժեշտ ռեսուրսներ՝ այդ թվում նաև ժամանակային, և ինչպես ցույց է տվել անցած առաջին 10 տարիների պրակտիկան, երեք տարին բավականին կարճ ժամանակահատված էր տեղական իշխանությունների կողմից իրենց լիազորությունների շրջանակներում նախաձեռնված բազմաթիվ ծրագրերի իրականացման համար: Սակայն տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնավարման ժամկետի վերանայումը դրանով չավարտվեց, և 2015 թվականի հանրաքվեի արդյունքներով ՀՀ Սահմանադրության փոփոխությունների շրջանակներում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետ սահմանվեց 5 տարին: Մեր կարծիքով, սա տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնավարման բավական երկար ժամկետ է, և նման ընտրությունը, մեր կարծիքով, լիովին արդարացված չէ: Արդարության համար հարկ է նշել, որ ԱՊՀ անդամ պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի 17-րդ լիազումար նիստում ընդունված «Տեղական ինքնակառավարման ընտրովի անձի կարգավիճակի մասին» մոդելային օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը (2001 թվականի ապրիլի 19-ի N 17-8 որոշում) և ԱՊՀ անդամ պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի կողմից ընդունված «Տեղական ինքնակառավարման կազմակերպման ընդհանուր սկզբունքների մասին» մոդելային օրենքի նոր տարբերակի 19-րդ հոդվածի 2-րդ մասը (ԱՊՀ ՄԽՎ 2015 թվականի նոյեմբերի 27-ի N 43-11 որոշման հավելված) սահմանում են տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնավարման օպտիմալ ժամկետը 2-5 տարի: Միջազգային պրակտիկայի տեսանկյունից ՀՀ-ում տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնավարման

ընտրված ժամկետը միանգամայն ընդունելի է: Սակայն, մեր կարծիքով, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետը չպետք է լինի շատ կարճ, որպեսզի ՏԻՄ-երը կարողանան իրականացնել հիմնավոր ծրագրեր և քայլեր, որոնք պահանջում են շատ ժամանակ, և ոչ շատ երկար, որպեսզի տեղական ինքնակառավարման մարմինները շահագրգռված լինեն ակտիվորեն գործել ընտրվելու պահից, այլ ոչ թե պաշտոնավարման ժամկետի ավարտից առաջ, ինչը կհանգեցնի բնակչության հեռացմանը տեղական ինքնակառավարման մարմիններից և ընդհանրապես տեղական ինքնակառավարման նկատմամբ համայնքի հետաքրքրության անկմանը: Այս տեսանկյունից Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների օպտիմալ ժամկետը մենք տեսնում ենք ոչ թե 5, այլ 4 տարի, հատկապես՝ հաշվի առնելով երկրի խորհրդարանի լիազորությունների հնգամյա ժամկետը:

ՀՀ-ում տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնավարման ժամկետի հետ կապված մեկ այլ խնդիր, որին նախկինում անդրադարձել էին հայրենի գիտնականները, վերաբերում էր այն հարցին, որ ՀՀ առաջին ավագանու ընտրություններից հետո մեծ թվով տեղական ինքնակառավարման մարմինների (հիմնականում համայնքների ղեկավարների) լիազորությունները դադարեցվել են ժամկետից շուտ, և քանի որ բավականին երկար ժամանակ (1996 թ. մինչև 2009 թ.) տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվել են բացառապես մեծամասնական ընտրակարգով ուղղակի ընտրություններով (այդպես են ընտրվել տեղական ինքնակառավարման թե՛ ներկայացուցչական և թե՛ գործադիր մարմինները), հաճախ տեղական ինքնակառավարման մարմինները դժվարությունների էին հանդիպում տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնավարման ողջ ժամկետի համար համայնքի զարգացման ծրագրի հաստատման հարցում, երբ և՛ համայնքի ավագանին, և՛ համայնքի ղեկավարն ընտրվում էին նույն ժամկետով, բայց տարբեր ժամանակներում: Այս ամենը մեծապես բարդացնում էր տեղական ինքնակառավարման ներկայացուցչական և գործադիր մարմինների ներդաշնակ փոխգործակցութե-

յունը¹:

Այս խնդիրը համայնքային ընտրական օրենսդրության մշակման ներկա փուլում կարելի է առավելապես լուծված համարել, քանի որ Հայաստանի համայնքների մեծ մասում այսուհետ համայնքի ավագանին ընտրվում է համամասնական ընտրակարգով հինգ տարի ժամկետով, իսկ համայնքի ղեկավարն ընտրվում է համայնքի ավագանու կողմից՝ համայնքի ավագանու լիազորությունների ժամկետով:

Փաստորեն, ՀՀ Ընտրական օրենսգիրքը 142.3-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանում է, որ «համայնքի ղեկավարը, անկախ ընտրվելու ժամկետից, մնում է իր պաշտոնում մինչև համայնքի ավագանու լիազորությունների ժամկետի ավարտը»՝ անուղղակի ընտրություններով ընտրված համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետը ամբողջությամբ կախվածության մեջ դնելով ավագանու լիազորությունների ժամկետից:

Հաջորդ ենթագլուխներում առանձին կքննարկվեն մեծամասնական և համամասնական ընտրակարգով ավագանու, ինչպես նաև ուղղակի և անուղղակի ընտրությունների արդյունքում համայնքների ղեկավարների ընտրությունների կազմակերպումն ու անցկացումը:

2. 3 ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հայտնի է, որ ընտրությունների կազմակերպման և անցկացման գործընթացը զանգվածային միջոցառում է և, հետևաբար, պահանջում է էական կազմակերպչական ջանքեր ու նյութական և ֆինանսական ռեսուրսների ներգրավում, ինչն էլ հիմք է տալիս պնդելու, որ ընտրությունների կազմակերպման և անցկացման գործընթացը պետք է լինեն խորը և լայնածավալ ուսումնասիրությունների առարկա: Քանի որ արդար ընտրությունների սկզբունքը՝ համընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ միայն XX դարի

¹ Տես մանրամասն՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ // ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. - Եր.: «Իրավունք», 2010, էջ 1029-1031:

սկզբներում վերջնականապես ամրագրվեց ժողովրդավարական պետությունների կողմից, ուստի մինչև XX դարի վերջերը ընտրական պետական քաղաքականության և ընտրական կառավարման հարցերը համակարգված գիտական հետազոտությունների առարկա չէին հանդիսանում, ինչը մեծապես պայմանավորված էր ընտրական համակարգերի փոփոխելիության ցածր մակարդակով: Սակայն արդեն XX դարի վերջում ձևավորվում է նոր գիտական ուղղություն՝ ընտրական գործընթացի բնագավառում պետական քաղաքականության և կառավարման՝ որպես պետական կարգավորման յուրահատուկ ուղղության ուսումնասիրությունը: Նման հետաքրքրությունը հիմնավորվում է այն հանգամանքներով, որ երիտասարդ ժողովրդավարության երկրներում ընտրությունների կազմակերպման և անցկացման տարբեր ուղիներ են ընտրվել, միաժամանակ «հին» ժողովրդավարություններում հաճախակի փոփոխվում են ընտրական համակարգերը:

Ինչպես նշում է պրոֆեսոր Ն. Վ. Գրիշինը՝ «պետական ընտրական քաղաքականությունն իրացվում է կառավարման հատուկ մարմինների՝ ընտրական հանձնաժողովների միջոցով, ապահովվում է նորմատիվ իրավական կարգավորմամբ՝ իրավունքի հատուկ ենթաձյուղի՝ ընտրական իրավունքի շրջանակներում, ենթադրում է յուրօրինակ քաղաքական ռազմավարություններ և կառավարչական տեխնոլոգիաներ»¹: Սակայն նշված հարցերի մանրամասն ուսումնասիրությունները նոր են սկիզբ առնում:

Ձևավորվող գիտական նոր ուղղությունը գտնում է քաղաքագիտության, պետական կառավարման և հանրային իրավունքի հատման գծում: Նշված ոլորտում մեծ ներդրում են կատարել Ս. Ա. Ավագյանը, Ն. Վ. Գրիշինը², Ռ. Լոպես-Պինտորը³, Շ. Մոզաֆա-

¹ Մանրամասն տես՝ **Гришин Н.В.** Государственная электоральная политика: предметная область нового научного направления // Каспийский регион: политика, экономика, культура. 2014, N 3 (40), с. 72, հղումն ըստ՝ [https://kaspy.asu.edu.ru/files/3\(40\)/71-83.pdf](https://kaspy.asu.edu.ru/files/3(40)/71-83.pdf)

² **Гришин Н.В.** Государственная электоральная политика: предметная область нового научного направления // Каспийский регион: политика, экономика, культура. 2014, N 3 (40), с. 71-82, հղումն ըստ՝ [https://kaspy.asu.edu.ru/files/3\(40\)/71-83.pdf](https://kaspy.asu.edu.ru/files/3(40)/71-83.pdf)

³ **Lopez-Pintor R.** Electoral Bodies as Institutions of Governance / R. Lopez-Pintor. – New York : United Nations Development Programme Publ., 2000.

րը և Ա. Շենդերը¹, Ջ. Հարթլինը, Ջ. Մքքոյը, Թ. Մուստիլլոն², Ռ. Պաստորը³, Ա. Դ. Քերիմովը, և այլոք: Հայրենական գիտական շրջանակներում պետական ընտրական քաղաքականության և ընտրական կառավարման հարցերին անդրադարձել են այնպիսի գիտնականներ, ինչպիսիքն են Ն. Այվազյանը, Վ. Այվազյանը, Գ. Դանիելյանը, Հ. Ենգոյանը, Ֆ. Թոխյանը, Հ. Հակոբյանը, Լ. Հակոբյանը, Ա. Հարությունյանը, Գ. Հարությունյանը և այլոք:

ՀՀ օրենսդրության ուսումնասիրությամբ կարող ենք պնդել, որ ընտրությունների կազմակերպման և անցկացման գլխավոր պատասխանատուն Կենտրոնական ընտրական հանձնաժողովն է, քանի որ Հայաստանի Հանրապետությունում գործում է ընտրական համձնաժողովների միասնական եռաստիճան համակարգ և Կենտրոնական ընտրական հանձնաժողովն է գլխավորում ընտրական հանձնաժողովների համակարգը: Սակայն փաստ է, որ ոչ միայն ընտրական հանձնաժողովներն են ներգրավված ընտրությունների կազմակերպման և անցկացման գործընթացում: Բազմաթիվ պետական, տեղական ինքնակառավարման մարմիններ, պաշտոնատար անձինք և կազմակերպություններ անմիջական մասնակցություն են ունենում ընտրական գործընթացի այս կամ այն միջոցառումն ապահովելու կամ իրականացնելու հարցում: Եթե մանրակրկիտ անդրադարձ կատարենք ընտրական գործընթացի, ընտրությունների կազմակերպման և անցկացման միջոցառումների ողջ ցանկին, ուսումնասիրենք ընտրական գործընթացի բոլոր փուլերը և դրանց ուղեկցող աշխատանքները, ապա կփաստենք, որ ընտրությունների կազմակերպմանն ու անցկացմանն ամնիջականորեն առնչվում են ընտրական հանձնաժողովները, համայնքի ղեկավարները, ոստիկանությունը (հատկապես ոստիկանության Անձնագրային և վիզա-

¹ **Mozaffar Sh. Schedler A.** The Comparative Study of Electoral Governance / Sh. Mozaffar, A. Schedler// International Political Science Review. – 2002. – Vol. 23, no. 1, p. 5–27.

² **Hartlyn J.** Electoral Governance Matters: Explaining the Quality of Elections in Contemporary Latin America / J. Hartlyn, J. McCoy, T. Mustillo // Comparative Political Studies. – January, 2008. –Vol. 41, p. 73–98.

³ **Robert A. Pastor,** The role of Electoral Administration in Democratic Transitions: Implications for Policy and Research, 6 Journal of Democratization 4 (1999)

ների վարչությունը), Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, մարզպետները, գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունները և այլ սուբյեկտներ: Հարց է առաջանում. արդյո՞ք թվարկված բոլոր սուբյեկտները կարող են համարվել ընտրական մարմիններ:

Հարցի պատասխանը ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել այն չափանիշները, որոնց հաշվառմամբ այս կամ այն սուբյեկտը կարող է համարվել ընտրական մարմին: Այսպես, մեր գնահատմամբ, «ընտրական», կամ այլ կերպ ասած «ընտրությունները կազմակերպող և անցկացնող», մարմինը կարող է ընկալվել լայն և նեղ իմաստով: Լայն իմաստով «ընտրական մարմին» կարող են համարվել ընտրական ինդուստրիայում ընդգրկված այն սուբյեկտները.

1) որոնց գործունեությունն ուղղված է ընտրական գործընթացի մեկնարկմանը, կազմակերպմանը, անցկացմանը, ապահովմանը կամ արդյունքների կիրառմանը,

2) որոնք, չնայած բուն ընտրական գործընթացին ուղղված գործունեություն չեն իրականացնում, սակայն, թեկուզ կարճաժամկետ, իրականացնում են այնպիսի գործունեություն, առանց որի ընտրական գործընթացն ամբողջությամբ կամ որևէ փուլի, միջոցառման մասով կարող է խաթարվել կամ վտանգվել,

3) որոնք վերահսկողություն են իրականացնում ընտրությունների կազմակերպման և անցկացման նկատմամբ,

4) որոնց գործունեությունը կարող է անմիջականորեն ազդել ընտրությունների արդյունքների վրա կամ արտացոլվել ընտրությունների անցկացման որակական հատկանիշների վրա,

5) որոնք իրավասու են գնահատելու ընտրությունների արդյունքները և դրանով պայմանավորված որոշումներ ընդունելու:

Այսպիսով, ելնելով վերոնշյալի զուտ կիրառական բնույթից, հիմնվելով ՀՀ ընտրական օրենսդրության վրա և հաշվի առնելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից յուրաքանչյուր ընտրության շրջանակներում կազմվող և հրապարակվող ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը՝ հարկ ենք համարում ներկայացնել ընտրական գործընթացի շրջանակներում իրականացվող գործունեությունը և այն իրականացնող սուբյեկտներին Աղյուսակ 1-ում.

	ԳՈՐԾԱՌՈՒՅԹ	ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1.	Ընտրությունների նշանակում	Մարզպետը կամ ՀՀ կառավարությունը (որոշ դեպքերում՝ ԿԸՀ)
2.	Ընտրողների ցուցակների կազմում	ՀՀ ոստիկանություն, ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան
3.	Ընտրական տեղամասերի կազմավորում	ՀՀ ոստիկանությունը՝ համայնքի ղեկավարի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի մասնակցությամբ
4.	Տեղամասային կենտրոնների սահմանումը	Համայնքի ղեկավարները, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի հաստատմամբ
5.	Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, թեկնածուների գրանցում	ԿԸՀ, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ
6.	Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, թեկնածուների կողմից նախընտրական քարոզչության իրականացման համար հավասար պայմանների ապահովում	ԿԸՀ, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով, Հանրային ռադիո, Հանրային հեռուստատեսություն, վերգետնյա եթերայի հեռարձակում իրականացնողներ, Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողներ, արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպություններ, համայնքի ղեկավարներ, մարզպետներ

7.	նախընտրական քարոզչության ֆինանսավորման վերահսկողությունն ու հսկողությունը	ՀՀ կենտրոնական բանկը, Երևանում և հանրապետության բոլոր մարզերում մասնաճյուղ ունեցող առևտրային բանկերը, Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը
8.	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորումը	ԱԺ-ում խմբակցություն ունեցող կուսակցությունները (դաշինքները) և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները
9.	Քվեարկության նախապատրաստում	ԿԸՀ, ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովներ, համայնքի ղեկավարներ,
10.	քվեարկության կազմակերպումը, անցկացումը, արդյունքների ամփոփումը	Տեղամասային ընտրական հանձնաժողովներ
11.	Ընտրությունների արդյունքների ամփոփում	ԿԸՀ, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ
12.	Դիմումների, բողոքների քննարկում, ընտրական վեճերի լուծում	ԿԸՀ, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ, ՀՀ վարչական դատարան
13.	Ընտրությունների արդյունքների վերանայում (անվավեր ճանաչել, չկայացած ճանաչել, երկրորդ փուլ անցկացնել, վերաքվեարկություն նշանակել և այլն)	ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներ, ՀՀ վարչական դատարան

Սույն աղյուսակում ներկայացված սուբյեկտները համապատասխանում են վերը նշված չափանիշներին և *լայն առումով* հանդիսանում են *ընտրական մարմիններ*: Հետաքրքրականն այն է, որ թվարկված սուբյեկտների ցանկում ներառված են նաև մասնավոր իրավունքի սուբյեկտներ, որոնք հանրային կառավարմանը սովորաբար չեն առնչվում:

Սակայն *նեղ առումով ընտրական մարմիններ* կարող են համարվել միայն այնպիսիք, որոնց գործունեությունն արտացոլվում է ընտրական գործընթացում և անմիջականորեն ներազդում ընտրությունների կազմակերպման և անցկացման վրա:

Վերը նշված ընտրական մարմինների ցանկում ներառված սուբյեկտները տարբեր ծավալով են ընդգրկված ընտրական գործընթացներում և վերը թվարկված չափանիշների շրջանակներում իրականացնում են այս կամ այն տեսակի գործունեություն: Կան սուբյեկտներ, որոնք իրականացնում են մեր կողմից թվարկված բոլոր չափանիշներին համապատասխանող գործունեություն (օրինակ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը), և կան այնպիսիք, որոնք իրականացնում են գործունեության միայն այս կամ այն տեսակը (օրինակ՝ մարզպետները):

Ելնելով ընտրական գործընթացում ընտրական մարմնի դերակատարման կամ ներգրավման և այդ գործընթացում պատասխանատվության աստիճանից, ընտրական մարմինները կարելի է բաժանել երեք խմբերի.

1. դասական ընտրական մարմիններ՝ այն մարմինները, որոնց գործունեության հիմնական նպատակն ընտրությունների կամ հանրաքվեների կազմակերպումը, անցկացումն է: Այս մարմինների գործառույթների շրջանակը հիմնականում ընդգրկում է կուսակցությունների և թեկնածուների գրանցումը, քվեարկության կազմակերպումը, քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփումը, գործընթացի օրինականության նկատմամբ վերահսկողությունը, վեճերի լուծումը և այլն: ՀՀ օրինակում դրանք ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգն է՝ ԿԸՀ գլխավորությամբ, վերահսկիչ-վերստոիզիչ ծառայությունն է և այլն,

2. օժանդակող ընտրական մարմիններ՝ այն մարմինները, որոնց հիմնական գործառույթները չեն առնչվում ընտրություններին, սակայն ընտրական փուլում նրանք ընտրական գործընթացի շրջանակներում իրականացնում են գործունեություն, որն ուղղված է ընտրական գործընթացում այս կամ այն միջոցառման նյութատեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական-կոմունիկացիոն, անվտանգային ապահովմանն ու սպասարկմանը, դասական ընտրական մարմիններին և ընտրական գործընթացին աջակցելուն, օրինակ՝ ընտրողների ցուցակների կազմումը,

ընտրական տեղամասերի և տեղամասային կենտրոնների սահմանումը, և այլն: ՀՀ օրինակում այս մարմինների թվին կարող ենք դասել տեղական ինքնակառավարման մարմինները, ոստիկանությունը, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, Պաշտպանության նախարարությունը, Ազգային անվտանգության ծառայությունը, մարզպետները և այլն,

3. ներգրավված ընտրական մարմիններ՝ այն մարմինները (սուբյեկտները), որոնց ամենօրյա գործունեությունը չի առնչվում ընտրություններին, սակայն ընտրական փուլում նրանք ներգրավվում են ընտրական գործընթացում՝ շարունակելով, ըստ էության, իրականացնել իրենց հիմնական գործունեությունը, որը բուն «ընտրական» գործունեություն չէ: Նման սուբյեկտների թվին կարող ենք դասել գովազդային վահանակները տնօրինող կազմակերպությունները, Հանրային հեռուստաընկերությունը, Հանրային ռադիոն, Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա ունեցող հեռարձակողները և այլն:

Նեղ առումով ընտրական մարմիններ են հանդիսանում բացառապես դասական ընտրական մարմինները: Միաժամանակ, սույն դասակարգման շրջանակներում դասական ընտրական մարմինները կարելի է բաժանել երկու խմբերի՝

- ընտրական մարմիններ, որոնց գործունեությունը միշտ «ընտրական» է՝ անկախ այն հանգամանքից, թե ինչ ժամանակահատվածի մասին է խոսքը (ընտրական հանձնառողվները, այժմ՝ նաև Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը),

- ընտրական մարմիններ, որոնց գործունեությունը «ընտրական» է՝ միայն ընտրությունների կազմակերպման և անցկացման ժամանակահատվածում (ՀՀ ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչություն, համայնքների ղեկավարներ, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով):

Հարկ է նկատել, որ տարբեր երկրներում ընտրական մարմինների ցանկը տարբեր է լինելու: Այսպես, եթե Մոնակոյի քաղաքապետարանը պատասխանատու է ընտրությունների կազմակերպման և անցկացման համար, այդ թվում՝ ընտրողների ցուցակների նախապատրաստման, թեկնածուների ցուցակների գրանցման, ընտրողներին ուղղված տեղեկատվության տարած-

ման, ծրարների պատրաստման, ինչպես նաև քվեարկության, հաշվարկի, ամփոփման և ընտրությունների արդյունքների հրապարակման համար, ապա ակնհայտ է, Մոնակոյի քաղաքապետարանը դասական ընտրական մարմին է: Կամ եթե Ֆինլանդիայում Արդարադատության նախարարությունը բարձրագույն ընտրական մարմինն է, ապա ակնհայտ է, որ Արդարադատության նախարարությունը Ֆինլանդիայում դասական ընտրական մարմին է: Այս առումով չենք կիսում այն հեղինակների մոտեցումը, որոնք գտնում են, որ «ընտրական հանձնաժողովներ և ընտրական մարմիններ հասկացությունները արդարացիորեն նույնացվում են»¹:

Դասական ընտրական մարմինների վերաբերյալ միջազգային իրավունքում մշակվել են մի շարք պահանջներ, որոնք հիմնականում առաջադրված են որպես սկզբունքներ: Դրանք սովորաաբար հանգում են ընտրական մարմինների անկախության, անկողմնակալության և կայունության, ընտրական կառավարման մարմինների կազմավորմանը ներկայացվող, ինչպես նաև ընտրական մարմինների համար նախատեսված բարեխիղճ գործելակերպի վերաբերյալ որոշակի պահանջների²: «Հ ընտրական օ-

¹ Մանրամասն տես՝ **Енгибарян Р.В.** Сравнительное конституционное право, учеб. Пособие М., 2005, с. 269, **Թադևոսյան Ղ.Ս.** Ընտրական հանձնաժողովների իրավական կարգավիճակը անցումային պետություններում (իրավահամեմատական վերլուծություն) // «Հանրային իրավունք ...» մասնագիտությանը ի.գ.թ. գիտ. աստիճանի հայցման ատեն. , Երևան, 2009, էջ 14:

² Տես, օրինակ՝ Միջազգային ընտրական չափանիշների կիրառումը // Եվրոպայի խորհրդի ձեռնարկ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար, Եվրոպայի խորհրդի հրատարակչություն, Ստրասբուրգ, 2016, էջ 47-54: European Commission For Democracy Through Law (Venice Commission) Report On Electoral Law And Electoral Administration In Europe, Strasbourg, 12 June 2006 // CDL-AD(2006)018, Synthesis study on recurrent challenges and problematic issues Adopted by the Council for Democratic Elections at its 17th meeting (Venice, 8-9 June 2006) and the Venice Commission at its 67th plenary session (Venice, 9-10 June 2006) on the basis of a contribution by Mr Michael KRENNERICH (Expert, Germany), 19-48-րդ կետեր, Основополагающие документы Венецианской комиссии в области избирательного права и политических партий. - Кишинев: Cudrag, 2016, с. 16-17, 36-39; **Lopez-Pintor R.** Electoral Bodies as Institutions of Governance / R. Lopez-Pintor. – NewYork : United Nations Development Programme Publ., 2000 և այլն:

րենսդրության և իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ նշված պահանջներն ամրագրված են և պահպանվում են: Դրա մասին է վկայում նաև դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային կազմակերպությունների զեկույցները¹:

Սույն հետազոտության շրջանակներում անդրադառնալով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները կազմակերպող նեղ առումով դասական ընտրական մարմիններին, պետք է, առաջին հերթին, առանձնացնել ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգը և վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը, քանի որ միայն նշված մարմինների գործունեությունն է միշտ «ընտրական»: Հարկ է նկատել, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 52-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն կազմակերպում և անցկացնում է իր կողմից սպասարկվող տարածքում ընդգրկված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները և ամփոփում դրանց արդյունքները: Նույն օրենսգրքի 74-րդ հոդվածն ամրագրում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներն ամփոփելու կարգը: Հետաքրքրական է, որ Ընտրական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կենտրոնական ընտրական

¹ Տես, օրինակ՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության «Հայաստանի Հանրապետություն Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ 20 հունիսի 2021թ.» վերջնական զեկույցի V բաժինը, որում, մասնավորապես, նշված է. «ԿԸՀ-ն իր աշխատանքը կատարել է թափանցիկ, կոլեգիալ և արդյունավետ կերպով՝ պահպանելով բոլոր իրավական վերջաժամկետները՝ չնայած նախապատրաստական աշխատանքների համար ունեցած կարճ ժամանակին: ԿԸՀ նիստերը հեռարձակվել են առցանց, և դրանց մասնակցել են կուսակցությունների և դաշինքների վստահված անձինք, դիտորդներ, լրատվամիջոցներ: Նիստերի օրակարգերը և ընդունված որոշումները սահմանված ժամկետներում հրապարակվել են ԿԸՀ կայում: ԿԸՀ-ն մշակել է ընտրությունների օրվա ընթացակարգեր և ուղեցույցներ ՏԸՀ անդամների, տեխնիկական սարքավորումների մասնագետների, ինչպես նաև դիտորդների, վստահված անձանց և ՋԼՄ ներկայացուցիչների համար»:

հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որը կազմակերպում է Ազգային ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության նկատմամբ:»։ Առաջին հայացքից, նշված երկու դրույթների միջև առկա է որոշակի հակասություն, քանի որ 51-րդ հոդվածի համաձայն՝ նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները կազմակերպողը Կենտրոնական ընտրական հանձնաժողովն է, սակայն, ինչպես կվայում է Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածից՝ ըտնրությունների արդյունքներն ամփոփողը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն է, բացառությամբ Երևանի:

Առանց հատուկ անդրադարձնալու Ընտրական օրենսգրքի նորմերի միջև հնարավոր կոլիզիաների¹, ընդգծենք, որ վերոգրյալը թույլ է տալիս արձանագրելու, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները կազմակերպող և անցկացնող ընտրական հանձնաժողովներն են՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ, համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները՝ մնացած բոլոր համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ: Միաժամանակ, հարկ է նկատել նաև, որ թեև համայնքներում (բացի Երևանից) տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ որպես պատասխանատու ընտրական հանձնաժողով հանդես է գալիս համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, հենց նա է իրականացնում թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) գրանցումը, մերժում վերջիններիս գրանցումը կամ նրանց գրանցումը ճանաչում անվավեր կամ ուժը կորցրած, սահմանում է քվեաթերթիկի նմուշը, ամփոփում է ընտրությունների արդյունքները և այլն, այնուամենայնիվ, Ընտրական օրենսգրքով սահմանված բազմաթիվ գործառույթներ և

¹ Կոլիզիոն նորմերի վերաբերյալ առավել մանրամասն տես **Гамбарян А.С., Даллакян Л.Г.** Коллизийные нормы и их конкуренция : монография / Москва : Издательство "Юрлитинформ", 2019.

դրանց իրականացմանն ուղղված լիազորություններ վերապահված են բացառապես Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Այսպես, բացառապես Կենտրոնական ընտրական հանձնաժողովն է հավատարմագրում դիտորդներին, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին, այցելուներին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն է իրականացնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի և քարտուղարի պաշտոնների բաշխումը (Ընտրական օրենսգրքի 44-րդ հոդվածի 5-րդ մաս), Երևանի ավագանու և մարզկենտրոնների ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգի և ժամանակացույցի սահմանումը (Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մաս), արտաքին գովազդային վահանակներում քարոզչական պաստառներ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու իրավունքն ընտրություններին մասնակցող կուսակցությունների միջև բաշխումը (Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մաս) և այլն:

Հարկ է նաև նշել, որ ամեն դեպքում՝ անկախ ընտրությունների տեսակից, տեղամասային ընտրական հանձնաժողովներն են կազմակերպում քվեարկությունը և ամփոփում քվեարկության արդյունքներն ընտրական տեղամասում:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնելու, որ ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգը գործում է իբրև մեկ միասնական համակարգ, որտեղ յուրաքանչյուրն ունի իր ուրույն տեղը և իրականացնում է լիազորությունների որոշակի շրջանակ: Այդ լիազորությունների գերակշռող մասը յուրաքանչյուր հանձնաժողովի բացառիկ իրավասության շրջանակներում է, սակայն կան լիազորություններ, որոնք օրենքով վերապվում են այս կամ այն հանձնաժողովին՝ կախված ընտրությունների տեսակից (օրինակ՝ ընտրությունների արդյունքների ամփոփումը):

Ինչ վերաբերում է Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը, ապա պետք է նշենք, որ այս կառույցը ի սկզբանե ներդրվել է որպես քաղաքական միավորումների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող հանրային իշխանության մարմին, որի շրջանակներում Ծառայությունը վե-

րահսկողություն էր իրականացնում ինչպես կուսակցությունների ամենօրյա ֆինանսական գործունեության նկատմամբ, այնպես էլ ընտրությունների ու հանրաքվեների ժամանակ քաղաքական դերակատարների կողմից իրենց մասնակցությունն ապահովելու համար ներգրավվող և ծախսվող ռեսուրսների նկատմամբ:

Գործող Ընտրական օրենսգրքում¹ ամրագրված կանոնակարգումների համաձայն՝ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն իրականացնում է նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողություն (Ընտրական օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մաս): Սակայն նման կանոնակարգումն ուժի մեջ է մտել 2022 թվականի հունվարի 1-ից², երբ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության գործունեությունը դարձավ բացառապես «ընտրական», իսկ մինչ այդ ժամկետը Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ստեղծման պահից սկսած՝ այն իրականացնում էր նաև կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն, որը «ընտրական» գործունեություն չէ և որը 2022 թվականի հունվարի 1-ից վերապահվեց Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: Միաժամանակ, հարկ է նկատել, որ նույն՝ 07.05.2021թ. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ Ընտրական օրենսգրքի հիշատակված 29-րդ հոդվածի 1-ին մասը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ.

«Նախընտրական հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգել-

¹ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՕ-202-Ն Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք՝ ընդունված 2016 թվականի մայիսի 25-ին, ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 1-ին: ՀՀՊՏ 2016.05.30/42(1222) Հոդ.456, www.arlis.am

² ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-54-Ն Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք՝ ընդունված 2021 թվականի մայիսի 7-ին, ուժի մեջ է մտել 2021 թվականի հունիսի 26-ին: Միասնական կայք 2021.05.17-2021.05.30 www.arlis.am

ման հանձնաժողովը սույն օրենսգրքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով»:

Վերոգրյալով, ըստ էության, նախատեսվում է ունենալ կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մեկ միասնական ինստիտուցիոնալ կառույց՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

Սակայն, մեր խորին համոզմամբ, անհրաժեշտ է տարանջատել կուսակցությունների ամենօրյա ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը նախընտրական հիմնադրամներ կատարվող նվիրատվությունների, ծախսերի և դրանց հաշվարկման նկատմամբ վերահսկողությունից և Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության (կամ ԿԸՀ-ի) իրավասությանը վերապահել միայն նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ վերահսկողությունը: Ուստի, կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության վերաբերյալ գործող Ընտրական օրենսգրքով սահմանված «միջանկյալ» կարգավորումը, մեր կածիքով, ԿԸՀ-ին վերապահված գործառույթների և ընտրական գործընթացի շրջանակներում օրինականության նկատմամբ վերահսկողության արդյունավետության տեսանկյունից՝ ամենաողջամիտ և սահմանադրականության տեսանկյունից՝ ընդունելին է: Վերոգրյալով պայմանավորված, գտնում ենք, որ կարիք կա վերանայելու ընտրական օրենսդրությունը և դեռ ուժի մեջ չմտած կանոնակարգումն առայն, որ կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն ամբողջությամբ 2023 թվականի հունվարի 1-ից վերապահվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին, վերացնելու՝ որպես լավագույն լուծում թողնելով այժմ գործող իրավակարգավորումները, որի համաձայն՝ ամենօրյա ֆինանսական գործունեության և նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ վերահսկողությունը տարանջատված է և միայն վերջինիս նկատմամբ վերահսկողությունը վերապահված է Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը:

2. 4 ՀՀ-ՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎՈՐՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինները, որոնք հաճախ կոչվում են ավագանի, ընտրվում են համապատասխան տարածքի բնակչության կողմից ուղղակի, ընդհանուր, հավասար, ազատ ընտրությունների միջոցով՝ գաղտնի քվեարկությամբ: Նմանատիպ պահանջ է պարունակում Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի 3-րդ հոդվածի 2-րդ մասը:

Ինչպես արդեն նշվել է, գործող Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են մեծամասնական և համամասնական ընտրակարգով: Համայնքային ընտրություններում կիրառվող ընտրական համակարգը որոշելու չափանիշը ընտրողների թիվն է այն համայնքում, որտեղ անցկացվում են ընտրությունները: Այս չափանիշով սահմանված թիվն է 4 000 ընտրող¹: Ըստ այդմ՝ մինչև 4 000 ընտրող ունեցող համայնքներում համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրություններն անցկացվում են մեծամասնական ընտրակարգով: Այս ենթազուխը նվիրված է մեծամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու անդամների ընտրություններին:

Ավագանու անդամների հերթական ընտրություններն անցկացվում են տարեկան մինչև 4 անգամ, իսկ քվեարկության օրերը սահմանվում են ԿԸՀ-ի որոշմամբ: Ավագանու անդամների ընտրությունների ժամանակ քվեարկության օրը հնարավորինս

¹ Հարկ է նշել, որ 2020 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի շրջանակներում նախատեսվել է, որ բազմաբնակավայր համայնքներում ընտրությունները անցկացվելու են համամասնական ընտրակարգով անկախ այդ համայնքում ընտրողների թվից: Սակայն, 2021 թվականի մայիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի շրջանակներում վերանայվել է այս մոտեցումը և համայնքային ընտրությունների ժամանակ ընտրական համակարգը որոշելու միակ չափանիշն է այս կամ այն համայնքի ընտրողների թվաքանականը:

մոտ պիտի լինի նախկին ավագանու լիազորությունների ժամկետը լրանալու օրվան: Համայնքի ավագանու անդամների հերթական ընտրությունները նշանակում է համապատասխան մարզպետը քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 70 օր առաջ՝ իր որոշման մեջ նշելով նաև ընտրական համակարգը (մեծամասնական կամ համամասնական)՝ լիազորված պետական մարմնի կողմից տվյալ համայնքի ընտրողների թվի վերաբերյալ տեղեկատվության հիման վրա:

Մեծամասնական ընտրակարգով ավագանու անդամների արտահերթ ընտրությունները նշանակվում են կառավարության որոշմամբ՝ ԿԸՀ-ի որոշմամբ յուրաքանչյուր տարվա համար սահմանված համայնքային ընտրությունների քվեարկության օրերին:

Արտակարգ և ռազմական դրության դեպքում համայնքային ընտրություններ չեն անցկացվում, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետը երկարաձգվում է այնքան ժամանակ, մինչև ավագանու նորընտիր անդամները ստանձնեն իրենց պարտականությունները՝ արտակարգ և ռազմական դրության ավարտից հետո տեղի ունեցած արտահերթ ընտրությունների արդյունքներով:

Համայնքի ավագանու ընտրության ժամանակ համայնքի տարածքում կազմավորվում է մեկ բազմամանդատ մեծամասնական ընտրատարածք (Ընտրական օրենսգրքի 104.1 հոդվ., 2-րդ մասի, 2-րդ կետ):

Հայաստանի Հանրապետությունում համայնքային ընտրություններում ընտրելու իրավունք ունեն 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները: Եվրոպական մի շարք երկրներում որոշակի ժամանակահատվածում երկրում բնակվող և հարկեր վճարող օտարերկրյա քաղաքացիներին տրվում է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում քվեարկելու իրավունք (Իսպանիա, Ֆինլանդիա և այլն): Բավականին ցուցանշական է Եվրախորհրդարանի 1988 թ-ի բանաձևը, որը ԵՄ անդամ երկրների քաղաքացիներին իրավունք է տվել քվեարկելու Եվրոպական խորհրդարանի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ԵՄ կազմ մտնող իրենց բնակության

երկրում¹:

Ընդունելով (թեև սահմանափակ չափով) նշված եվրոպական միտումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, ՀՀ քաղաքացիներից բացի, 1999 թվականի Ընտրական օրենսգրքի շրջանակներում համայնքային ընտրություններում ընտրելու իրավունքով է օժտել նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձանց, փախստականի ընտանիքի սահմանված կարգով տրված վկայականում նշված 18 լրացած անձանց (1999 թ. Ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվ.): Ընդ որում, այս դրույթը բացակայում էր 1999 թվականի Ընտրական օրենսգրքի սկզբնական տարբերակում, հետագայում այն փոփոխության ենթարկվեց և լրացվեց, ինչի արդյունքում Հայաստանում բնակվող փախստականներին տրվեց համայնքային ընտրություններին մասնակցելու իրավունք: Այս հարցը քննարկվել է ՀՀ սահմանադրական դատարանի կողմից Ազգային ժողովի կողմից 1996 թվականի հունիսի 30-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3 հոդվածի 2-րդ մասի, 1999 թվականի փետրվարի 5-ին ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1-ին կետի և 122 հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 1999 թվականի մարտի 3-ին ընդունված «Փախստականների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 8-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով: Սահմանվել է, որ Հայաստանում բնակվում է ավելի քան 300 հազար ներքին տեղահանված անձ, ովքեր 1988-1991 թվականներին ժամանել են Հայաստանի տարածք, ՀՀ քաղաքացիություն չեն ստացել «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածների հիման վրա, ունեն կամ ցանկանում են ստանալ փախստականի կարգավիճակ: Հայաստանի 10 մարզերի (բացառությամբ Երևանում գործող համայնքների) այն ժամանակվա 918 համայնքներից

¹ Российское народовластие: развитие, современные тенденции и противоречия. Под ред. А.В. Иванченко. М.: Фонд «Либеральная миссия», 2003. с. 244.

396-ը բնակեցված էին փախստականներով, իսկ 253 համայնքներում փախստականները ընտրելու տարիքի բնակչության մինչև 10%-ն էին կազմում, 51 համայնքներում՝ 10-30%-ը, 21 համայնքներում՝ 30-50%-ը, 35 համայնքներում՝ 50-75%-ը, 21 համայնքներում՝ 75-90%-ը, 15 համայնքներում՝ ավելի քան 90%-ը: Մինչ 1995 թվականի Հայաստանի Սահմանադրության ընդունումը փախստականները մասնակցել են համայնքի ավագանու ընտրություններին, ՀՀ Չերագույն խորհրդի ընտրություններին, անկախության հանրաքվեին, ՀՀ Նախագահի ընտրություններին, ՀՀ Սահմանադրության ընդունման հանրաքվեին, իսկ ՀՀ Սահմանադրության ընդունումից հետո մասնակցել են 1996 թվականին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների առաջին ընտրություններին: «Տեղական ինքնակառավարում» հասկացության բովանդակությունը վերլուծելուց հետո Սահմանադրական դատարանը փաստեց, որ եթե շուրջ 10 տարի Հայաստանի համայնքներում բնակվող, բայց ՀՀ քաղաքացիություն չունեցող փախստականները ժողովրդավարական սկզբունքներով չեն մասնակցում տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը, ապա նրանք, ըստ էության, զրկվում են սեփական հայեցողությամբ սեփականություն ունենալու, օգտագործելու և տնօրինելու իրավունքից (ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվ. 2-րդ մաս), ինչպես նաև համայնքին պատկանող գույքի «ճակատագիրը որոշելու օրինականորեն ապահովված հնարավորության» իրավունքից (ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվ.): Այս եզրակացությունները թույլ տվեցին ՀՀ սահմանադրական դատարանին ձևավորել իր իրավական դիրքորոշումը, ըստ որի «Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող փախստականները չեն կարող զրկվել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու իրավունքից»¹: Սահմանադրական դատարանն այս իրավական դիրքորոշումը հիմնավորել է նաև նրանով, որ «Փախստականներ

¹ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում. ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ հրապարակում. Նյութերը հրապարակման են պատրաստել Ֆ.Թոխյանը, Լ.Հակոբյանը, Ա.Ներսիսյանը: Երևան, ՆժԱՐ, 2006. էջ 286:

րին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու իրավունք տալը բխում է Հայաստանի ստանձնած պարտավորություններից՝ ՄԱԿ-ի «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի Կոնվենցիայով, որն ուժի մեջ է մտել 1954 թվականից (Հայաստանի Հանրապետությունը միացել է Կոնվենցիային 1993թ. ապրիլին), ըստ որի՝ ցանկացած պայմանավորվող պետություն պարտավոր է, նաև Կոնվենցիային միանալուց հետո, փախստականներին շնորհել այնպիսի իրավունքներ և արտոնություններ, ինչի իրավունքը նրանք ունեին սույն Կոնվենցիան այդ երկրում ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ»¹:

Այնուամենայնիվ, համայնքային ընտրություններին ոչ քաղաքացիների մասնակցության այս սահմանափակ օրենսդրական մոտեցումը շուտով վերանայվեց:

«Սահմանադրությունը սահմանում է, որ օրենքը կարող է սահմանել ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքը՝ մասնակցելու տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին (ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվ. 3-րդ մաս):

Գործող Ընտրական օրենսգրքի համաձայն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրելու իրավունք ունեն՝

1) քվեարկության օրը 18 տարին լրացած՝ ընտրությունն անցկացվող համայնքի բնակչության ռեգիստրում՝ մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Նշված կացության պահանջը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար չի գործում միայն այն դեպքում, երբ նրանք համայնքում հաշվառվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելու կամ ազատագրկման ձևով պատիժը կրելուց ազատվելու հանգամանքներով պայմանավորված:

¹ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Նյութերը հրատարակման են պատրաստել Ֆ.Թոխյանը, Լ.Հակոբյանը, Ա.Ներսիսյանը: Երևան, ՆժԱՐ, 2006. էջ 287:

2) մինչև քվեարկության օրն առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացիություն չունեցող ընտրող):

ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «Ընտրելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորյալմբ կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք»:

Վերարտադրելով ՀՀ Սահմանադրության պահանջները՝ Ընտրական օրենսգիրքը 2-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է նույն իրավական նորմը: Սակայն Ընտրական օրենսգրքի ընդհանուր նորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ համայնքային ընտրություններին մասնակցող անձանց կատեգորիաները, թեև դրանց կարող են մասնակցել նաև ոչ քաղաքացիներ, շատ ավելի նեղ են, քան համապետական ընտրություններում: Այսպես, օրինակ, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին չեն մասնակցում զինվորական ծառայություն անցնող քաղաքացիները¹, ինչպես նաև զորամասի տեղակայման վայրերում հաշվառված պայմանագրային զինծառայողները և այնտեղ գրանցված և ընտրելու իրավունք ունեցող նրանց ընտանիքների անդամները, ՀՀ-ում չգրանցված քաղաքացիները, քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձինք, անձինք, ովքեր ինչ-ինչ պատճառներով չեն կարողանում գալ ընտրատեղամաս (օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող անձինք, ստացիոնար բուժում անցնող անձինք, ծերբակալվածներ և այլն):

Ինչպես նշված է 2002 թվականի հոկտեմբերի 1-ին ընդունած՝ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ «Ազգային ժողովի կողմից 1999 թվականի փետրվարի 5-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի (Ազգային ժողովի

¹ Սամրամասն տես՝ Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ. հացեր և պատասխաններ: Հայաստանի համայնքների միություն: Երևան, 2005, էջ 10-12:

կողմից 2002 թվականի հուլիսի 3-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի խմբագրությամբ) 14-րդ հոդվածի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» որոշման մեջ, Ընտրական օրենսգրքի հոդվածների բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ քվեարկությանը մասնակցել, այսինքն՝ օգտվել ընտրելու իրենց սահմանադրական իրավունքից, կարող են միայն ընտրական ցուցակներում ընդգրկված քաղաքացիները¹։ Այսպիսով, ընտրական իրավունքի իրացման հնարավորությունն ապահովելու համար կազմվում են ընտրացուցակներ²։ Հայաստանի Հանրապետության ընտրողների ցուցակը կազմում և վարում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչությունը՝ հաշվառելով քաղաքացիներին ըստ բնակության վայրի³։ Միաժամանակ պետք է հաշվի առնել, որ ընտրողների ցու-

¹ 2002 թվականի հոկտեմբերի 1-ին ընդունված՝ ՀՀ սահմանադրական դատարանի N 389 որոշում՝ «Ազգային ժողովի կողմից 1999 թվականի փետրվարի 5-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի (Ազգային ժողովի կողմից 2002 թվականի հուլիսի 3-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի խմբագրությամբ) 14-րդ հոդվածի 3-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով»\| www.concourt.am

² Իրավաբանական գրականության մեջ կա կարծիք, որ ընտրողների գրանցումը և ցուցակագրումը կարող են լայնորեն օգտագործվել ընտրողների որոշակի խմբերի ընտրություններին մասնակցելու հնարավորությունից զրկելու համար։ // **Крылов Б.С.** США: федерализм, штаты и местное управление. Академия наук СССР. Институт государства и права. М., 1968. с. 82-83.

³ Մինչ Ընտրական օրենսգրքում համապատասխան փոփոխությունները, այս լիազորությունների իրականացումը վստահված էր համայնքի ղեկավարին, սակայն, անգամ երբ ցուցակների կազմման պատշաճ կազմակերպման համար պատասխանատվությունը կրում էր համայնքի ղեկավարը, այս լիազորությունը փաստացի կրկին իրականացրել է ոստիկանությունը՝ հաշվի առնելով այդ մարմինների համակարգում համապատասխան ռեսուրսների առկայությունը՝ նյութական, տեղեկատվական, տեխնիկական, մարդկային և այլն։

ցակը մշտապես վարվող փաստաթուղթ է, նույնն է ողջ երկրի համար՝ կազմվում և վարվում է ըստ մարզերի և համայնքների (ՀՀ ընտրողների ռեգիստր): Ցուցակները կազմելիս և վարելիս համայնքների ղեկավարները, ՀՀ ՊՆ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների և կալանավայրերի ղեկավարները անհրաժեշտ տեղեկատվություն են ներկայացնում լիազոր մարմինին: Ընտրողների ցուցակը վերանայվում է տարին երկու անգամ, և տարին երկու անգամ ՀՀ *Ընտրողների ռեգիստրը* էլեկտրոնային տարբերակով ներկայացվում է ՀՀ ԿԸՀ: Ընտրողների ցուցակում ընդգրկված են Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիները, ինչպես նաև այն անձինք, ովքեր, ՀՀ ընտրական օրենսգրքի համաձայն, քվեարկության օրն ակտիվ ընտրական իրավունք ունեն: Յուրաքանչյուր ընտրող ընդգրկված է միայն մեկ համայնքի ցուցակում¹: Քաղաքացուն ընտրողների ցուցակում ընդգրկելու հիմք է հանդիսանում տվյալ համայնքի բնակչության ռեգիստրում հաշվառված լինելու փաստն է: Բավական վիճահարույց է, մեր կարծիքով, 2021 թվականի մայիսի 7-ին ««ՀՀ ընտրական օրենսգրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքով ներդրված նորամուծությունը, ըստ որի ընտրացուցակներում չեն ընդգրկվում թեև տվյալ համայնքի բնակչության ռեգիստրում նստակեցության սահմանված պահանջի սահմաններում հաշվառված, բայց քվեարկության օրվան նախորդող վեց ամիսների ընթացքում անձը հաստատող վավեր փաստաթուղթ չունցող անձինք: Այս մոտեցումը վիճելի ենք համարում, նախ, այն պատճառով, որ նման քաղաքացիներն ունեն համայնքային ընտրություններում քվեարկելու իրավունք, և եթե դիմեն ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչություն

¹ Քննարկվող հարցը կարգավորելու այլ եղանակներ կան: Այսպես, Մեծ Բրիտանիայում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում անհատն իրավունք ունի քվեարկելու մի քանի բնակավայրերում, եթե նա ունի մի քանի բնակության վայր, սակայն համապետական ընտրություններում նա քվեարկում է միայն մեկ ընտրատարածքում՝ իր ընտրությանը: // **Гарнер Д.** Великобритания: центральное и местное управление. Под ред. Г.В. Барабашева. М., ПРОГРЕСС, 1984. с. 310.

կան դատարան, կարող են համապատասխանաբար ստանալ տեղեկանք կամ դատարանի որոշում, որոնք հիմք են հանդիսանում քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից կազմված ընտրողների լրացուցիչ ցուցակում անձին ընդգրկելու համար (Ընտրական օրենսգրքի 14-րդ հոդվ.): Ընդ որում, անձը հաստատող փաստաթղթի ժամկետը լրանալը անձին քվեարկությանը թույլ չտալու հիմք չի հանդիսանում (Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվ. 2-րդ մաս): Այս դեպքում միանգամայն ավելորդ է թվում ընտրողների ցուցակից ի սկզբանե բացառել այն անձանց, որոնց անձը հաստատող փաստաթղթի ժամկետը լրացել է քվեարկության օրվանից վեց ամիս առաջ: Սա կարող է զգալիորեն մեծացնել լրացուցիչ ցուցակներում ընդգրկված ընտրողների թիվը, ինչը կհանգեցնի ընտրական գործընթացների նկատմամբ վստահության մակարդակի նվազմանը:

Մինչև մեծամասնական ընտրակարգով ավագանու անդամների ընտրություններում ընտրվելու իրավունքին անդրադառնալը, հիշեցնենք, որ ավագանու անդամների թիվը կախված է տվյալ համայնքի ընտրողների թվից: Ելնելով Ընտրական օրենսգրքում նշված թվերի հարաբերակցությունից՝ կարելի է փաստել, որ ավագանու մեծամասնական ընտրակարգով ընտրված անդամների թիվը կազմում է.

- 1) հինգ անդամ՝ մինչև 1 000 ընտրող ունեցող համայնքներում,
- 2) յոթ անդամ՝ 1 001-ից 2 000 ընտրող ունեցող համայնքներում,
- 3) ինն անդամ՝ 2 001-ից 4 000 ընտրող ունեցող համայնքներում:

Համայնքի ավագանու անդամ կարող է ընտրվել այն անձը, ով Ընտրական օրենսգրքի համաձայն ունի՝ ակտիվ ընտրական իրավունք համայնքային ընտրություններում:

Ավագանու անդամի թեկնածու չեն կարող առաջադրվել դատավորները, դատախազները, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ծառայողները, ոստիկանությունում, ազգային անվտանգությունում, հակակոռուպցիոն կոմիտեում, փրկարարական, հարկային, մաքսային մարմիններում,

քրեակատարողական ծառայությունում, պրոբացիայի ծառայությունում, փրկարար ծառայությունում ծառայողները, զինծառայողները, ընտրական հանձնաժողովների անդամները, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք:

Ավագանու անդամի թեկնածուներ կարող են առաջադրել կուսակցություններն իրենց համապատասխան տարածքային (սկզբնական, տեղական) ստորաբաժանումների որոշմամբ, ինչպես նաև ընտրվելու իրավունք ունեցող անձինք՝ ինքնաառաջադրման կարգով՝ այդ մասին ներկայացնելով դիմում: Կուսակցությունը կարող է առաջադրել նաև իր կուսակցության անդամ չհանդիսացող անձին:

Դիմումին կամ կուսակցության որոշմանը կցվում են նաև.

1. ընտրական գրավի գումարի վճարման անդորրագիրը: Ընտրական օրենսգիրքը սահմանում է նաև ընտրագրավի չափը: Մինչև 500 ընտրող ունեցող համայնքի դեպքում ավագանու անդամն ընտրական գրավ չի վճարում: 501-ից մինչև 1 000 ընտրող ունեցող համայնքի դեպքում ավագանու անդամը վճարում է նվազագույն աշխատավարձի 10-ապատիկի, 1 000-ից մինչև 4 000 ընտրող ունեցող համայնքի դեպքում՝ 15-ապատիկի չափով ընտրական գրավ:

2. տեղեկանք՝ տվյալ համայնքի բնակչության ռեգիստրում Ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետով հաշվառված լինելու մասին:

3. անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

Թեկնածուների առաջադրման փաստաթղթերը հերթական ընտրությունների դեպքում ներկայացվում են համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 35 և ոչ ուշ, քան 30 օր առաջ՝ մինչև 18:00-ն, իսկ արտահերթ ընտրությունների դեպքում՝ քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 25 և ոչ ուշ, քան 21 օր առաջ՝ մինչև ժամը 18:00-ն:

Համայնքի ավագանու անդամների թեկնածուների գրանցումն իրականացվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ: Ընդ որում, գրանցումն իրականացվում է առանց քվեարկության, եթե ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամներից որևէ մեկը դրա վերաբերյալ ա-

ռարկություն չունի: Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը մերժում է ավագանու անդամի թեկնածուի գրանցումը, եթե՝

1) նա չունի ընտրվելու իրավունք.

2) նրա վերաբերյալ չեն ներկայացվել բոլոր փաստաթղթերը, կամ ներկայացված փաստաթղթերը թերի են կամ կեղծված:

Ավագանու անդամի թեկնածուի գրանցման վերաբերյալ հանձնաժողովի անդամի առարկության դեպքում առարկությունը դրվում է քվեարկության: Գրանցումը մերժվում է ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ:

Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն ավագանու անդամի թեկնածուի գրանցումը ճանաչում է անվավեր, եթե գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որոնց ուժով՝

1) նա չունի ընտրվելու իրավունք.

2) նրա վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը կեղծված են:

Թեկնածուի գրանցումը ճանաչվում է անվավեր ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ:

Ավագանու անդամի թեկնածուի գրանցումը մերժելու կամ անվավեր ճանաչելու մասին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումը կարող է բողոքարկվել վարչական դատարան, իսկ ավագանու անդամի թեկնածուի գրանցումը մերժելու կամ անվավեր ճանաչելու մասին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումն անվավեր ճանաչելու մասին դատական ակտով թեկնածուն համարվում է գրանցված կամ վերագրանցված:

Ավագանու անդամի թեկնածուի գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում՝

1) ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշմամբ, եթե նա ներկայացրել է դիմում ինքնաբացարկի մասին.

2) դատական ակտի հիման վրա՝ թեկնածուի կողմից Ընտրական օրենսգրքով սահմանված նախընտրական քարոզչության կանոնները և նախընտրական քարոզչության ֆինանսավորման կանոնները խախտելու դեպքում:

Ավագանու անդամի թեկնածուներն իրենց կարգավիճակը ձեռք են բերում գրանցման պահից մինչև ավագանու անդամներ ընտրվելու մասին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշման բողոքարկման համար սահմանված ժամկետի ավարտը, իսկ այդ որոշման բողոքարկման դեպքում՝ մինչև վարչական դատարանի կողմից որոշում ընդունելը:

Ցանկացած ընտրարշավի կարևոր, քաղաքականապես նշանակալից փուլերից մեկը նախընտրական քարոզարշավն է: Այն անցկացվում է տարբեր քաղաքական ուժերի ներկայացուցիչների կողմից ընտրողների լայն շրջանակում՝ ընտրություններին մասնակցելու և օրենքով սահմանված կարգով առաջադրված և ընտրական հանձնաժողովների կողմից գրանցված առանձին թեկնածուներին կողմ կամ դեմ քվեարկելու համար: Քարոզարշավը սկսվում է թեկնածուի գրանցման համար նախատեսված վերջին օրվան հաջորդող հինգերորդ օրը և ավարտվում քվեարկությանը նախորդող օրվա գրո ժամին:

Նախընտրական քարոզչության խնդիրը, թերևս, ամենաբարդն է դրա օրինականությունը գնահատելու տեսանկյունից: Հաշվի առնելով ընտրարշավի արդյունքների՝ ընտրողների վրա ազդեցության ոչ նյութական բնույթը՝ դժվար է գնահատել նաև ընտրարշավի կանոնները ձևավորող օրենսդրական պահանջների խախտման ազդեցության աստիճանը ընտրությունների արդյունքների վրա: Չնայած ընտրությունների և ընտրական գործընթացի փուլերից մեկի՝ նախընտրական քարոզչության ինստիտուտի գոյության և գործունեության բավականին երկար պատմությանը՝ քարոզարշավի այս կամ այն միջոցների, մեթոդների և ձևերի վերաբերյալ ընտրողների կարծիքի վրա ազդեցության աստիճանը և, համապատասխանաբար, ընտրարշավի ընթացքում թույլ տրված խախտումներով ընտրությունների արդյունքների վրա ազդելու հնարավորությունը գնահատելու չափանիշներ դեռևս չեն գտնվել: Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ նախընտրական քարոզչության ինստիտուտը կարգավորելիս օրենսդիրը ցանկացած իրավական կարգավորման մեջ, այդ թվում՝ վերը նշվածի, գլխավորում է մարդու իրավունքներն ու ազատությունները, այդ թվում՝ ընտրական: Քարոզչական գործունեության վերաբերյալ օրենսդրական սահմանափակումներ սահ-

մանելիս օրենսդիրը, ինչպես նաև իրավակիրառական գործու-
նեություն իրականացնող պետական մարմինները և տեղական
ինքնակառավարման մարմինները, ներառյալ դատարանները,
պետք է գնահատեն ցանկացած գործունեություն նաև մարդու ի-
րավունքների տեսանկյունից: Ասվածի վկայությունն է «Հայաս-
տանի Հանրապետության Նախագահի ընտրությունների արդ-
յունքները վիճարկելու մասին» 2003 թվականի մարտի 5-ի գոր-
ծով ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշու-
մը, ըստ որի ընտրական օրենսդրության և, մասնավորապես, նա-
խընտրական քարոզչության մասին օրենսդրության պահանջնե-
րի կատարումը չպետք է խախտի մարդու իրավունքներն ու ա-
զատությունները, այն է՝ խոսքի ազատությունը և տեղեկատվութ-
յուն ստանալու իրավունքը¹:

Նշենք, որ Ընտրական օրենսգիրքը շատ ավելի մանրամասն
է կարգավորում մեծ թվով ընտրող ունեցող համայնքներում ա-
վագանու ընտրությունների նախընտրական քարոզչության կա-
նոնները (շրջկենտրոնների ավագանու ընտրություններ, համա-
մասնական ընտրակարգով անցկացվող ավագանու ընտրութ-
յուններ, 70 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքներում ավա-
գանու ընտրություններ), հետևաբար, նախընտրական քարոզ-
չության հարցերն առավել մանրամասն կքննարկվեն համամաս-
նական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու
ընտրությունների վերաբերյալ ենթագլխում:

Ընտրական գործընթացների համար պակաս կարևոր չէ
դրանց ֆինանսավորման հարցը: Ընտրությունները ֆինանսա-
վորվում են ընտրական հիմնադրամից: Ընտրական հիմնադրա-
մը թեկնածուի հատուկ նախընտրական հաշվի վրա դրված գու-
մարն է, որը կուտակվում և ծախսվում է օրենքով սահմանված
կարգով: Ընտրական հիմնադրամների կարգավիճակը ներառում
է հետևյալ տարրերը.

- նախատեսվում է ընտրական հիմնադրամների ստեղծում
ցանկացած ընտրությունների, այդ թվում՝ տեղական ինքնակա-

¹ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները մարդու
իրավունքների պաշտպանության ոլորտում. ՀՀ սահմանադրական դատա-
րանի որոշմամբ հրապարակում. Նյութերը հրապարակման են պատրաս-
տել Ֆ.Թոխյանը, Լ.Հակոբյանը, Ա.Ներսիսյանը: Երևան, ՆԺԱՐ, 2006, էջ 379:

ռավարման ներկայացուցչական մարմնի անդամների ընտրությունների ժամանակ.

- ընտրական հիմնադրամները ժամանակավոր են և ունեն խիստ նպատակային նշանակություն.
- ընտրական հիմնադրամը ստեղծվում, գործում և լուծարվում է օրենքով սահմանված կարգով.
- հիմնադրամի միջոցների մուտքերի և ծախսերի պատասխանատվությունը կրում է թեկնածուն կամ նրա լիազոր ներկայացուցիչը¹:

Ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ավագանու անդամի թեկնածուներից պահանջվում է ստեղծել սեփական ընտրական հիմնադրամներ՝ իրենց նախընտրական քարոզարշավը ֆինանսավորելու, ինչպես նաև ընտրական գրավ վճարելու համար, միայն այն դեպքում, եթե թեկնածուն օգտագործելու է կամ արդեն օգտագործել է նվազագույն աշխատավարձի 500-ապատիկը գերազանցող գումար: Համայնքի ավագանու անդամի թեկնածուի նախընտրական հիմնադրամի միջոցները հավաքագրվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից որոշված առևտրային բանկում, որն ունի մասնաճյուղեր Երևանում և Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում: Նախընտրական հիմնադրամը ձևավորվում է թեկնածուի կամ նրա ներկայացուցչի դիմումի հիման վրա՝ թեկնածուի առաջադրման փաստը հաստատող տեղեկանք ստանալուց հետո, որը տրվում է թեկնածուին գրանցող ընտրական հանձնաժողովի կողմից:

Օրենքը սահմանում է թեկնածուների ընտրական միջոցների աղբյուրները, որոնք ձևավորվում են՝

- 1) իր անձնական միջոցներից.
- 2) իրեն առաջադրած կուսակցության տրամադրած միջոցներից.
- 3) ընտրելու իրավունք ունեցող անձանց կամավոր մուծումներից:

Ավելին, օրենսդրությունը սովորաբար սահմանափակում է ընտրական գործընթացի ընթացքում ծախսվող առավելագույն

¹ Избирательное право и избирательный процесс в Российской Федерации. Отв. ред. А.В. Иванченко. М., Изд-во НОРМА, 1999. с. 362.

գումարը: Նույն կերպ է վարվում նաև հայ օրենսդիրը (նախկինում ավագանու ընտրությունների շրջանակներում օրենսդիրը բացառություն էր անում):

Գործող Ընտրական օրենսգիրքը նախատեսում է գումարի առավելագույն չափը, որը կարող են ծախսել ավագանու անդամի թեկնածուները՝ նվազագույն աշխատավարձի մինչև 3 000-ապատիկի չափով գումար (Ընտրական օրենսգրքի 115-րդ հոդվ. 4-րդ մաս): Սահմանված է նաև, որ ֆիզիկական անձանց կողմից կամավոր նվիրատվությունների չափը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի 50-ապատիկը, թեկնածուի սեփական մուծումները՝ նվազագույն աշխատավարձի 150-ապատիկը, իսկ թեկնածու առաջադրած կուսակցության մուծումները՝ ոչ ավելի, քան 200-ապատիկը (Ընտրական օրենսգրքի 115-րդ հոդվ. 2-րդ և 3-րդ մասեր):

Մեծամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու անդամների ընտրությունների շրջանակում ընտրողներին տրվում է մեկ քվեաթերթիկ, որում թեկնածուների տվյալները այբբենական կարգով գետեղվում են ըստ ազգանունների, ազգանունների համընկնման դեպքում՝ ըստ անունների և հայրանունների: Քվեարկությունն իրականացվում է միանգամայն ավանդական եղանակով՝ նախընտրելի մեկ թեկնածուի դիմաց վանդակում տեղադրելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած V-աձև նշան: Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, վերը նշվածից բացի, բացառում է քվեարկության ցանկացած այլ եղանակ (ինտերնետ քվեարկություն, վաղաժամկետ քվեարկություն, փոստով քվեարկություն, վստահված անձի միջոցով քվեարկություն և այլն):

Քվեարկության արդյունքների և ընտրությունների արդյունքների ամփոփումը ցանկացած ընտրական գործընթացի կարևորագույն փուլն է: Ինչպես հայտնի է, ավագանու անդամների ընտրությունների արդյունքներն ամփոփում է համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: Քանի որ համայնքի ավագանու անդամների ընտրության համար կիրառվում է հարաբերական մեծամասնության մեծամասնական համակարգը, Հայաստանում համայնքային ընտրություններին ընտրողների մասնակցության նվազագույն սահմանափակում չկա, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ անգամ եթե ընտրություններին մասնակ-

ցում են միայն իրենք՝ թեկնածուները, ընտրությունները համարվում են կայացած: Ընտրական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը Ընտրական օրենսգրքի 74-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում ամփոփում է ընտրության արդյունքները և ընդունում հետևյալ որոշումներից մեկը.

- 1) համայնքի ավագանու անդամներ ընտրվելու մասին.
- 2) առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին.
- 3) համայնքի ավագանու ընտրությունն անվավեր ճանաչելու մասին.
- 4) համայնքի ավագանու ընտրությունը չկայացած ճանաչելու մասին:

Համայնքի ավագանու անդամների ընտրությունների արդյունքով ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումները կարող են բողոքարկվել վարչական դատարան:

Ավագանու անդամների ընտրության մասին որոշումն ընդունվում է, եթե վերը նշված այլ որոշումներ ընդունելու հիմքեր չկան: Համայնքում ընտրվում են առավելագույն թվով կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած ավագանու անդամի թեկնածուները: Կողմ քվեարկված քվեաթերթիկների հավասարության դեպքում ընտրված թեկնածուին որոշելու համար նրանց միջև անցկացվում է վիճակահանություն՝ ԿԸՀ որոշմամբ սահմանված կարգով¹:

Եթե ընտրությունների ժամանակ եղել են Ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը որոշում է կայացնում վերաքվեարկություն անցկացնել առանձին ընտրատեղամասերում, եթե այդ խախտումները հնարավոր է շտկել այդ կերպ: Վերաքվեարկությունն անցկացվում է նման որոշում ընդունելուց հետո՝ 9-րդ օրը:

¹ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 11-ի «Հավասար թվով առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած երկու և ավելի թեկնածուներից ընտրված թեկնածուին որոշելու վիճակահանությունների անցկացման կարգը սահմանելու մասին» N 8-Ն որոշումը: Աղբյուրը՝ <https://www.arlis.am/>

Այս դեպքում համայնքի ավագանու ընտրությունների արդյունքների ամփոփման համար Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետները հաշվարկվում են վերաքվեարկության օրվանից:

Եթե այդ խախտումներն այդ կերպ հնարավոր չէ շտկել, ապա ընտրություններն անվավեր են ճանաչվում և նշանակվում է վերաքվեարկություն: Եթե ընտրությունների վերաքվեարկության ընթացքում կամ առանձին տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելիս տեղի են ունեցել Ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում՝ ընտրությունները անվավեր ճանաչելու և վերաքվեարկություն նշանակելու մասին, որն անց է կացվում քվեարկության օրվանից 21 օր հետո թեկնածուների նույն կազմով: Թեկնածուների նույն կազմով վերաքվեարկություն կարող է անցկացվել միայն մեկ անգամ:

Համայնքի ավագանու անդամների ընտրությունը համարվում է չկայացած, եթե՝

1) թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետում և կարգով գրանցված թեկնածուների թիվը փոքր է կամ հավասար է ավագանու անդամների ընդհանուր թվին:

2) թեկնածուների թիվը գրանցվելուց հետո դառնում է ավագանու անդամների ընդհանուր թվի 2/3-ից պակաս:

3) համայնքի ավագանու ընտրություններն անվավեր են ճանաչվում վերաքվեարկության արդյունքներով:

Այս դեպքում ավագանու անդամների ընտրությունները չկայացած ճանաչելու մասին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումն ընդունելուց կամ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող քառասնօրյա ժամկետի վերջին կիրակի օրն անցկացվում է նոր ընտրություն: Նոր ընտրություններն անցկացվում են ավագանու անդամների արտահերթ ընտրությունների համար սահմանված կարգով՝ թեկնածուների նոր առաջադրմամբ: Նոր ընտրություն նշանակում է մարզպետը (Ընտրական օրենսգրքի 121-րդ հոդվ.):

Այսպիսով, ամփոփելով վերը նշվածը, կարող ենք փաստել, որ Հայաստանի փոքր համայնքների ավագանու անդամների ընտրություններում կիրառվում է հարաբերական մեծամասնութ-

յան մեծամասնական ընտրակարգը, այսինքն՝ ընտրված են համարվում առավել մեծ թվով «կողմ» ձայներ հավաքած թեկնածուները: Օտարերկրյա փորձը ցույց է տալիս հարաբերական մեծամասնության մեծամասնական ընտրակարգի առավել ժողովրդավարությունը, տնտեսողականությունը և արդյունավետությունը 50 000-ից ոչ ավել բնակչություն ունեցող քաղաքներում և բնակավայրերում (Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Կանադա, Հնդկաստան, Մեքսիկա և այլն): Որոշ պետություններում կիրառվում են մեծամասնական և համամասնական ընտրական համակարգերի այլ ձևեր, երբեմն՝ համակցված (Իտալիա, որոշ աֆրիկյան երկրներ)¹:

Եթե անդրադառնանք Հայաստանի համայնքների վիճակագրությանը, ապա կտեսնենք, որ համայնքների թիվը, որտեղ ավագանին ընտրվում է մեծամասնական ընտրակարգով, շատ փոքր է, և դրանք ներառում են հիմնականում այն համայնքները, որոնք բնակեցված են Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներով: Այսպիսով, 2022 թվականի հունիսի 1-ի դրությամբ Հայաստանի 79 համայնքներից միայն 12-ն ունի 4 000-ից պակաս ընտրող: Դրանք են՝ Արագածոտնի մարզում՝ Արևուտը, Մեծածորը, Շամիրամը և Ալազյազը, Արմավիրի մարզում՝ Ֆերիկը, Լոռու մարզում՝ Լեյնոնտովոն, Ֆիոլետովոն և Շնոխը, Կոտայքի մարզում՝ Արզնին, Արարատի մարզում՝ Վերին Դվինը, Գեղարքունիքի մարզում՝ Շողակաթը և Գորայքը՝ Սյունիքի մարզում:

¹ Муниципальное право. Под ред. А.М. Никитина. – М.: ЮНИТИ-ДАНА. Закон и право, 2000. с. 9; Емельянов Н.А. Муниципальные системы зарубежных стран. М.-Тула. ГРИФ, 1998. с. 38-41, 54.

2.5 ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես արդեն նշվել է, 2020 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի շրջանակներում փոփոխություններ են կատարվել, որոնք սահմանել են ավագանու ընտրությունների շրջանակներում կիրառվող ընտրական համակարգի որոշման չափանիշները: Նման իրավական կարգավորումն ընտրական օրենսդրություն է մտցվել Հայաստանում երկար տարիներ իրականացվող խոշորացման գործընթացին զուգահեռ: Ավելին, նշված օրենքով համամասնական ընտրակարգի կիրառման չափանիշ է սահմանվել 4 000 ընտրող, ինչպես նաև համայնքի կազմում բազմաթիվ բնակավայրեր ընդգրկված լինելու փաստը՝ անկախ տվյալ համայնքում ընտրողների թվից: Սակայն 2021 թվականի մայիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի շրջանակներում վերջին չափանիշը վերանայվել է, և համայնքային ընտրությունների ժամանակ ընտրական համակարգը որոշելու միակ չափանիշը մնացել է տվյալ համայնքում ընտրողների թիվը: 2020 թվականի հունիսի 18-ի սահմանադրական օրենքի նախագծի հիմնավորման մեջ ասվում էր, որ օրենսդրական մակարդակով համայնքի ներկայացուցչական մարմնի համար կընձեռվեն մրցակցային պայմաններ, կապահովվի լայն քաղաքական ներգրավվածություն և ուժերի հարաբերակցություն: Այն լրացուցիչ խթան կհանդիսանա Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում համայնքի ավագանու ինստիտուտի զարգացման մասով: Ասված էր նաև, որ համամասնական ընտրակարգի տարածումը 4 000 և ավելի ընտրող ունեցող համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների վրա պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված թվաքանակով ընտրող

ունեցող համայնքների միջին բնակչությունը ենթադրաբար կկազմի շուրջ 5 000 մարդ, որի արդյունքում միանգամայն իրատեսական կհամարվի տեղական ընտրություններում քաղաքական մրցակցության ձևավորումը, կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների հետաքրքրվածությունը տեղական ընտրություններին հայտ ներկայացնելու և կուսակցական ցուցակներով ավագանու թեկնածություններ առաջադրելու իմաստով¹:

2021 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին այս օրենսդրական փոփոխությունների հիման վրա տեղի ունեցած առաջին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով դժվար է պնդել, որ համամասնական ընտրակարգի անցումը խթանեց համայնքային ընտրություններում քաղաքական մրցակցության աճը կամ նվազեցրեց անհատների, թեկնածուների ազդեցությունը համայնքներում ընտրողների վրա կամ ընտրողներին դրդեց ապահովելու, որ վերջիններիս ընտրությունն առաջնորդվի ընտրություններին մասնակցող ուժերի քաղաքական ծրագրերով, այլ ոչ թե անհատներով:

Դրա մասին են վկայում վիճակագրական տվյալները: Այսպիսով, 2021 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ընտրություններ են կայացել 52 համայնքներում, որոնցից 45-ը՝ համամասնական ընտրակարգով: Եթե հետևենք համամասնական ընտրակարգով ընտրություններին քաղաքական ուժերի մասնակցությանը, ապա կարելի է նկատել, որ մեկ համայնքում (Արմավիր) ընտրություններին մասնակցելու համար գրանցվել է միայն մեկ (իշխող) կուսակցություն, 11 համայնքներում մասնակ-

¹ Հիմնավորում՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ: Աղբյուրը՝ <https://www.e-draft.am/projects/2288/justification>

ցել է 2 քաղաքական ուժ, 14 համայնքներում՝ 3 քաղաքական ուժ, 8 համայնքներում՝ 4 քաղաքական ուժ, 5 համայնքներում՝ 5 քաղաքական ուժ, 3 համայնքներում՝ 6 քաղաքական ուժ, մեկ համայնքում՝ 7 քաղաքական ուժ և Հայաստանի խոշորագույն համայնքներում (նայրաքաղաքից հետո)՝ 10 քաղաքական ուժ:

2021 թվականի համայնքային ընտրություններում մասնակցած կուսակցություններից 13-ն անվանվել են նախկինում տվյալ համայնքում ընտրությանը մեծամասնական ընտրակարգով մասնակցած թեկնածուների անուն-ազգանունով («Դավիթ Համբարձումյան», «Դավիթ Մինասյան», «Սարգիս Մուրադյան», «Մամիկոն Ասլանյան», «Բալասանյան դաշինք», « Առուշ Առուշանյան» և այլն), ովքեր այժմ գլխավորում էին այդ ցուցակները: Շատ կուսակցություններ անվանվել էին կոնկրետ տեղանքի, բնակավայրի անունով՝ առանց որևէ քաղաքական հարթակ նշելու («Ախուրյան», «Ալաշկերտ», «Ամասիա-Արփի» և այլն)¹:

Այս տվյալները ցույց են տալիս, որ համամասնական ընտրակարգի անցումը դեռևս չի արդարացրել այն ակնկալիքներն ու նպատակները, որոնք հիմք են հանդիսացել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների շրջանակներում օրենսդրական փոփոխությունների համար՝ կուսակցական-քաղաքական մրցակցության պայմաններում համայնքային ընտրություններին տեղական բնակչության անպատրաստ լինելու պատճառով:

Հարկ ենք համարում նշել նաև համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու ընտրությունների օրենսդրական կարգավորման բազմաթիվ թերությունների առկայությունը, ինչը նույնպես բարդացնում է այնպիսի մթնոլորտի և պայմանների ստեղծման գործընթացը, որոնց դեպքում իրական քաղաքական մրցակցության շրջանակներում հնարավոր կլինի ձևավորել համայնքային իշխանությամբ օժտված ավագանի, որի ներկայացուցչական բնույթը կասկած չի հարուցի:

Այսպիսով, դիտարկենք իշխանության ներկայացուցչական մարմինների ձևավորման առանձնահատկությունները Երևանում

¹ Աղբյուր՝ www.elections.am

և խոշորացված համայնքներում¹, որտեղ ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախորդ ենթազուխը նվիրված էր մեծամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու անդամների ընտրությանը, պետք է փաստել, որ համայնքային ընտրություններին առնչվող բազմաթիվ հարցեր (օրինակ՝ ընտրություններ նշանակող սուբյեկտների հարցը, ընտրելու և ընտրվելու իրավունքը, ընտրողների ցուցակների կազմումը և այլն) հիմնականում կարգավորվում են նույն կերպ՝ անկախ կիրառվող ընտրական համակարգին:

Ուստի, սույն ենթազուխի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում դիտարկել միայն համամասնական ընտրակարգով համայնքային ընտրությունների առանձնահատկություններն արտացոլող հարցերի հետևյալ շրջանակը՝

- 1) ընտրություններ նշանակելը.
- 2) թեկնածուների առաջադրումը և գրանցումը.
- 3) նախընտրական քարոզչությունն ու ընտրությունների ֆինանսավորումը.
- 4) ընտրությունների արդյունքների ամփոփումն ու մանդատների բաշխումը:

Ընտրություններ նշանակելը: Համաձայն Ընտրական օրենսգրքի 127-րդ հոդվածի՝ Երևանի ավագանու հերթական ընտրությունն անցկացվում է ավագանու լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 20 օր առաջ: Երևանի ավագանու հերթական ընտրությունը նշանակվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ այն հաշվարկով, որ ընտրություն նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 60 օր առաջ: Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների հերթա-

¹ Ավելի ստույգ՝ նշենք, որ 2022 թվականի հունիսի 1-ի դրությամբ Հայաստանի 72 խոշորացված համայնքներից 7-ն ունեն 4 000-ից պակաս ընտրող, ինչը նշանակում է, որ այս 7 համայնքներում և՛ քհամայնքի ղեկավարի, և՛ ավագանու անդամների ընտրություններն ուղղակի են և անցկացվում են մեծամասնական ընտրակարգով:

կան ընտրությունը նշանակվում է համապատասխան մարզպետի որոշմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված օրերից որևէ մեկն այն հաշվարկով, որ ընտրություն նշանակելու մասին մարզպետի որոշումն ուժի մեջ մտնի քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 60 օր առաջ:

Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների արտահերթ ընտրություններ նշանակում է Կառավարությունը՝ համապատասխան ավագանու արձակվելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում: Երևանի, Գյումրու, Վանաձորի ավագանիների արտահերթ ընտրություններն անցկացվում են ավագանիների արտահերթ ընտրություն նշանակելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 40 օր հետո՝ առավել ուշ կիրակի օրը:

Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանիների (բացառությամբ Երևան, Գյումրի, Վանաձոր համայնքների) արտահերթ ընտրություններն անցկացվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված օրերից այն օրը, որ պահպանվեն ընտրությունների կազմակերպման և անցկացման համար օրենքով սահմանված ժամկետները: Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու արտահերթ ընտրությունների անցկացման օրը նշանակում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ արտահերթ ընտրություններ նշանակելու մասին կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում:

Թեկնածուների առաջադրում և գրանցում: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու անդամների թեկնածուների առաջադրման և գրանցման հարցը:

Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու անդամի թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները: Կուսակցությունների դաշինքները կարող են կազմավորվել առնվազն երկու կուսակցությունների կողմից: Կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունը չի կարող ինքնուրույն մասնակցել ընտրություններին: Կուսակցությունների դաշինքում ընդգրկվելու որոշումն ընդունվում է կուսակցության մշտական

գործող ղեկավար մարմնի որոշմամբ: Կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակը կազմվում է դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ներկայացրած առանձին ցուցակից: Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակները հաստատվում և առաջադրվում են կուսակցության մշտական գործող ղեկավար մարմնի որոշմամբ (դաշինքի անդամ կուսակցությունների մշտական գործող ղեկավար մարմինների որոշումներով): Ընտրական ցուցակների բոլոր էջերը կնքվում և ստորագրվում են կուսակցության (դաշինքի անդամ կուսակցությունների) իրավասու անձի կողմից:

Թեկնածուն կարող է ընդգրկվել միայն մեկ ցուցակում: Ընտրական ցուցակներին օրենսդրությամբ ներկայացվում են մի շարք պահանջներ: Այսպիսով, Ընտրական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընտրական ցուցակը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

1) թեկնածուների թիվը չպետք է պակաս լինի համայնքի ավագանու անդամների մանդատների թվի 1/3-ից.

2) թեկնածուների թիվը չի կարող գերազանցել համայնքների ավագանիների անդամների մանդատների թվի եռապատիկը.

3) ընտրական ցուցակի 1-ին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով եռյակներում (1-3, 1-6, 1-9 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 տոկոսը.

4) կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում կարող են ընդգրկվել նաև այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի անդամ կուսակցություններից ոչ մեկի) անդամ չհանդիսացող անձինք, որոնց թիվը չի կարող գերազանցել այդ ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թվի 30 տոկոսը.

5) բազմաբնակավայր համայնքի ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում պետք է ընդգրկվեն տվյալ համայնքը կազմող բնակավայրերի առնվազն կեսը ներկայացնող (տվյալ բնակավայրում մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող, իսկ քաղաքացիություն չունեցող թեկնածուների դեպքում՝ առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող) թեկնածու-

ներ, բացառությամբ երեքից պակաս բնակավայրերից կազմված համայնքների:

Ինքնին այս պահանջները շատ տրամաբանական են և միտված են համայնքի ավագանիում համայնքի բնակչության հնարավորինս լայն ներկայացվածության ապահովմանը: Սակայն դրանց գործնական կիրառումը բախվում է բազմաթիվ դժվարին (եթե ոչ անլուծելի) խնդիրների: Այսպես, օրինակ, նույն Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ եթե ընտրություններում առաջադրվել է միայն մեկ կուսակցություն (կուսակցությունների դաշինք), ապա նրան հնարավորություն է տրվում մինչև ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտը համալրելու թեկնածուների ցանկը, եթե նրանց թիվը պակաս է տվյալ համայնքի ավագանու անդամների սահմանված թվից: Եթե ընտրություններում առաջադրված կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թիվը պակաս է համայնքի ավագանու անդամների թվից, ապա նրանց հնարավորություն է տրվում մինչև ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտը համալրելու թեկնածուների ցանկը:

Բաց են մնում մի շարք հարցեր, թե ինչ անել, եթե ընտրացուցակն առաջադրվի մեկ կուսակցության կողմից՝ պահանջվող նվազագույն թվով թեկնածուներով, կուսակցությանը հնարավորություն տրվի համալրել ընտրական ցուցակը, սակայն կուսակցությունը չօգտվի այդ հնարավորությունից: Կամ եթե ցուցակն առաջադրվել է մեկից ավելի կուսակցությունների կողմից, բայց թեկնածուների ընդհանուր թիվը ավագանու անդամների թվից պակաս է, և կուսակցությունները դարձյալ չեն օգտվում իրենց ցուցակը համալրելու հնարավորությունից: Ի վերջո, կուսակցության ընտրական ցուցակի գրանցումը մերժելու հիմքերի ցանկում նման հիմքեր չկա:

Այսպիսով, իրավիճակ կարող է առաջանալ, երբ անհրաժեշտ է գրանցել կուսակցությունների ընտրական ցուցակները՝ նախապես իմանալով, որ քվեարկություն չի կայանալու, քանի որ, համաձայն Ընտրական օրենսգրքի 135.1-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի՝ եթե կուսակցությունների ընտրական ցուցակներում թեկնածուների ընդհանուր թիվը պակաս է ավագանու

անդամների թվից, և կուսակցությունները սահմանված ժամկետում չեն համարվում իրենց ցուցակները, ապա ընտրական ցուցակները գրանցող ընտրական հանձնաժողովը (Երևանի դեպքում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, մնացած բոլոր դեպքերում՝ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը) պետք է որոշում կայացնի ընտրությունները չկայացած ճանաչելու մասին:

Մեկ այլ «անհանգստացնող» օրենսդրական կարգավորումն այն է, որ ընտրական ցուցակի թեկնածուների նվազագույն թվաքանակ է համարվում ավագանու անդամների թվի մեկ երրորդը, սակայն, միևնույն ժամանակ, օրենքը պահանջում է ընտրացուցակում պարտադիր ներառել համայնքի բնակավայրերի առնվազն կեսի ներկայացուցիչներին: Դիտարկենք կոնկրետ իրավիճակ: Ենթադրենք, համայնքի ավագանին պետք է բաղկացած լինի 15 անդամից: Այս թվի մեկ երրորդը 5-ն է, որն ընտրական ցուցակի թեկնածուների նվազագույն թիվն է: Սակայն եթե տվյալ համայնքում կա, ասենք, 20 բնակավայր, ապա այդ բնակավայրերից առնվազն 10-ից պետք է ընտրական ցուցակում ընդգրկեն թեկնածուներ, և ստացվում է, որ նվազագույն թիվը կլինի ոչ թե 5, այլ 10 թեկնածու:

Ավելին, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) գրանցումը մերժելու հիմք է, ի թիվս այլոց¹, ընտրական ցուցակի չհամապատասխանելն Ընտրական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին: Սակայն օրենքը նախատեսում է բացառություն այս կանոնից՝ չի կարելի մերժել կուսակցության ընտրական ցուցակի գրանցումը՝ ընտրական ցուցակի՝ Ընտրական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին չհամապատասխանելու պատճառով, եթե նման անհամապատասխանությունն առաջացել է արդեն ընտրական ցուցակն առաջադրելուց հետո:

Այսպես, եթե վերը նշված օրինակում 20 բնակավայրից ընտրացուցակում ներկայացված է 10-ը, և նրանցից երկուսն ինքնա-

¹ Կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակը գրանցելը մերժելու հիմքերը նշված են Ընտրական օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասում:

բացարկի դիմումով դուրս են գալիս այս ընտրական ցուցակից՝ ընտրական ցուցակի առաջադրման համար նախատեսված ժամկետի ավարտից հետո, ցուցակը չի կարող համարվել Ընտրական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին չհամապատասխանող և հանգեցնել կուսակցության ընտրական ցուցակի գրանցումը մերժելուն, չնայած այն հանգամանքին, որ 20 բնակավայրերից ցուցակում ներկայացված կլինեն միայն 8-ը: Իրավակիրառ պրակտիկայի տեսանկյունից այս նորմի կիրառումը որևէ դժվարություն չի առաջացնում, հարցեր են մնում միայն մեծ ընտրությունների արդյունքում ձևավորված ավագանու «ներկայացուցչության որակի» վերաբերյալ:

Սակայն կան այնպիսի իրավական նորմեր, որոնց կիրառումն ինքնին բավականին խնդրահարույց է: Այսպես, Ընտրական օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի կամ ցուցակում ընդգրկված թեկնածուի գրանցումն անվավեր ճանաչելու հետևյալ հանգամանքները, որոնց դեպքում կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի գրանցումից հետո հայտնի են դառնում փաստեր, որոնց ուժով՝

1) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների գրանցումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչելու հետևանքով ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների թիվը նվազել է Ընտրական օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված թվից.

2) ներկայացված փաստաթղթերը կեղծված են:

Վերջին կետի հետ կապված հարցեր չեն ծագում, սակայն առաջին կետը հասկանալը բարդություն է առաջացնում: Ինչպես արդեն նշվել է, Ընտրական օրենսգրքի 130-րդ հոդվածը սահմանում է ոչ թե մեկ, այլ բազմաթիվ թվեր, որոնց պետք է համապատասխանի ընտրական ցուցակը: Սրանք են և՛ թեկնածուների նվազագույն և առավելագույն քանակը, և՛ ըստ սեռի և տարածքային ներկայացվածության քվոտան, և՛ ցուցակում առավելագույն թվով անկուսակցականների պահանջը: Այսպիսով, ո՞ր թվի հետ անհամապատասխանությունը կարող է հանգեցնել կուսակցության (կուսակցությունների դաշինքի) գրանցումն անվավեր ճանաչելուն: Ավելին, Ընտրական օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին մասի 1 կետի իրավակարգավորման մեջ խախտվում է գրան-

ցումն անվավեր ճանաչելու ինստիտուտի բուն էությունը, որը պետք է պարունակի ի սկզբանե գոյություն ունեցող ինչ-որ խախտում կամ թերություն, որը կհանգեցնի կուսակցության գրանցման անվավերության՝ հակառակ դեպքում պետք է կիրառվի այլ իրավական ինստիտուտ՝ գրանցումն ուժը կորցրած ճանաչելը, եթե մինչ այդ հիմքի առաջացումը խախտում կամ թերություն չի եղել: Այս նորմն ընդգծում է, որ «արատավոր» վիճակը գոյություն ունի ոչ թե ի սկզբանե, այլ առաջանում է որոշակի իրավական մանիպուլյացիաների արդյունքում (ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների գրանցումն անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելը), ընդ որում, այդ իրավական մանիպուլյացիաները կարող են կապված չլինել խախտումների կամ արատավոր վիճակների հետ (օրինակ՝ ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների գրանցումն ուժը կորցրած է ճանաչվում թեկնածուի մահվան պատճառով):

Այսպիսով, գրանցումն անվավեր ճանաչելու ինստիտուտի գործող իրավակարգավորման շրջանակներում դրանք կիրառելը շատ դժվար է, ինչը հիմք է ստեղծում իրավակիրառողի կողմից հնարավոր կամայականությունների համար, ինչը, անկասկած, հանգեցնում է ընտրական գործընթացների նկատմամբ վստահության մակարդակի նվազմանը:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում ընտրությունները չկայացած ճանաչելու ինստիտուտը: Նման որոշում կայացնելու հիմքերից մեկի մասին վերը խոսվել է: Նշենք, որ ընտրությունները չկայացած ճանաչելու մասին որոշումը կարող է կայացվել ինչպես քվեարկությունից առաջ, այնպես էլ քվեարկության արդյունքներով: Օրենսդիրը նման որոշում կայացնելու հիմքերը բաժանել է երկու խմբի՝ մինչև քվեարկությունը կիրառելի և քվեարկությունից հետո կիրառելի:

Ընտրությունը չկայացած ճանաչելու մասին որոշում կայացնելու հիմքերի առաջին խումբն ամրագրված է Ընտրական օրենսգրքի 135.1 հոդվածում, որը սահմանում է, որ ընտրությունը համարվում են չկայացած, եթե՝

1) ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետում և կարգով որևէ կուսակ-

ցություն (կուսակցությունների դաշինք) չի առաջադրվել, կամ

2) որևէ կուսակցություն (կուսակցությունների դաշինք) սահմանված ժամկետում և կարգով չի գրանցվել (գրանցումը մերժվել է)։

3) առաջադրված բոլոր կուսակցությունները գրանցման համար սահմանված ժամկետից հետո ներկայացրել են ինքնաբացարկի մասին դիմում։

4) կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների ընդհանուր թիվը պակաս է համայնքի ավագանու անդամների թվից, և թեկնածուների ցանկը սահմանված կարգով և ժամկետում չի համալրվել։

5) օրենքով սահմանված կարգով մանդատների բաշխման արդյունքով չի ձևավորվել համայնքի ավագանու 2/3-ը։

Առաջին չորս դեպքում անցկացվում են նոր ընտրություններ։ Եվ պատահական չէ, որ օրենսդիրն այս հոդվածում չի անդրադառնում հինգերորդ դեպքին, քանի որ այստեղ նկարագրված է իրավիճակը, որը կարող է առաջանալ միայն քվեարկությունից հետո, ընդ որում, երբ ընտրությունների արդյունքներն արդեն ամփոփված են, իսկ մանդատները՝ բաշխված։ Ընտրական օրենսգրքի 142-րդ հոդվածի 7-րդ մասն առանձին անդրադառնում է այն հիմքերին, որոնց հիման վրա ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո կարող է որոշում կայացվել ընտրությունները չկայացած ճանաչելու մասին, նշելով հետևյալները՝

1) քվեարկված միակ կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ չեն քվեարկել անհրաժեշտ թվով ընտրողներ։

2) մինչև ընտրության արդյունքների ամփոփումը քվեարկված միակ կուսակցությունը լուծարվել է։

3) մինչև ընտրության արդյունքների ամփոփումը քվեարկված միակ կուսակցության գործունեությունը կասեցվել կամ արգելվել է։

Մեր կարծիքով, Ընտրական օրենսգրքի 135.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում նշված հիմքը կարող էր տեղ գտնել միայն 142-րդ հոդվածում՝ որպես հիմք, որը կարող է կիրառվել միայն քվեարկությունից հետո։ Սակայն այս դեպքում էլ բաց կմնար այն հարցը, թե ինչ իրավիճակում է հնարավոր մանդատ-

ներ բաշխել և չբաշխել այդ մանդատների 100 տոկոսը: Այլ բան, որ մանդատների բաշխումից և յուրաքանչյուր կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) տրված մանդատների քանակի որոշումից հետո հնարավոր է, որ այս կամ այն կուսակցությունը կամ դաշինքը նման թվով թեկնածուներ չունենա: Ընտրական օրենսգրքի իրավակարգավորումները հիմնականում կանխում են նման իրավիճակների հավանականությունը, բայց, այնուամենայնիվ, դրանք ամբողջությամբ բացառել չեն կարող: Սակայն նույնիսկ այս դեպքում խոսք պետք է լինի ոչ թե մանդատների բաշխման արդյունքներով ավագանու 2/3-ը ձևավորելու անհնարինության մասին, այլ այն մասին, որ ավագանու 2/3-ը չի ձևավորվել՝ կուսակցության ընտրական ցուցակում թեկնածուների բացակայության հետևանքով կուսակցության կողմից ստացած մանդատները զբաղեցնելու անհնարինության պատճառով:

Նախընտրական քարոզչություն և ընտրությունների ֆինանսավորում: Համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու ընտրությունների շրջանակներում նախընտրական քարոզչության կանոնների առանձնահատկություններն են՝

1) համամասնական ընտրակարգով ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) կարող են իրենց նախընտրական ծրագրերը հրապարակել ԿԸՀ կայքում:

2) համամասնական ընտրակարգով ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) անվճար տրամադրվում են դահլիճներ և այլ տարածքներ ընտրողների հետ հավասար պայմաններով հանդիպումների համար:

3) համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու ընտրությունների ժամանակ ԿԸՀ-ն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև բաշխում է մետրոպոլիտենի, հասարակական տրանսպորտի կանգառների և վերելակների տարածքում գտնվող, ինչպես նաև 5 մ² գերազանցող մակերես ունեցող գովազդային վահանակները:

4) Երևանում և մարզկենտրոններում ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) տրամադրվում է հավասար պայմաններով

անվճար և վճարովի եթերաժամանակ հանրային հեռուստատեսությանը և ռադիոյով նախընտրական քարոզչության համար:

Ինչ վերաբերում է նախընտրական քարոզչության ֆինանսավորմանը, ապա հարկ է նշել, որ, ի տարբերություն մեծամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու ընտրություններին մասնակցող թեկնածուների, համամասնական ընտրակարգով ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) պարտավոր են բացել նախընտրական հիմնադրամ: Ընտրական օրենսգիրքը սահմանափակում է ծախսերի առավելագույն չափը՝ կախված տվյալ համայնքում ընտրողների թվից: Տվյալներն արտացոլված են Աղյուսակ 2-ում.

Աղյուսակ 2

Ներդրումներ	Երևան (նվազագույն աշխատավարձ)	25 000 և ավելի ընտրող ունեցող համայնքներ (նվազագույն աշխատավարձ)	25 000-ից պակաս ընտրող ունեցող համայնքներ (նվազագույն աշխատավարձ)
կուսակցություններից (կուսակցությունների դաշինքներից)	մինչև 300 000	մինչև 60 000	մինչև 40 000
ընտրական ցուցակի թեկնածուից	մինչև 1 000	մինչև 500	մինչև 500
Ֆիզիկական անձից	մինչև 100	մինչև 100	մինչև 100
Ընդհանուր ծախսեր	մինչև 300 000	մինչև 60 000	մինչև 40 000

Ընտրությունների արդյունքների անփոփոմ և մանդատների բաշխում: Մինչև համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու ընտրությունների արդյունքների ամփոփման հարցին անդրադառնալը, նշենք, որ 70 000 և ավելի ընտրող ունեցող համայնքի ավագանու ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության համար տպագրվում են միևնույն չափերի առանձին քվեաթերթիկներ: Գրանցվելուց հետո վիճակահանության շրջանակներում ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին տրվում է հերթական համար, որը մինչև ընտրությունների ավարտը չի փոխվում: Քվեաթերթիկի վրա նշվում են ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) անվանումը, կու-

սակցությանը տրված համարը, ինչպես նաև ընտրական ցուցակի առաջին երեք թեկնածուների ազգանունները, անունները և հայրանունները: Մինչև 70 000 ընտրող ունեցող համայնքի ընտրողին տրվում է մեկ քվեաթերթիկ, որի ձախ կողմում նշվում են կուսակցությունների անվանումները՝ ըստ այբբենական հերթականության, և ընտրական ցուցակի առաջին երեք թեկնածուների ազգանունները, անունները և հայրանունները, իսկ աջ կողմում նախատեսվում են դատարկ քառանկյուններ՝ ընտրողի կողմից նշում կատարելու համար:

Վերոնշյալը նշանակում է, որ բազմակի քվեաթերթիկներով քվեարկության շրջանակներում ընտրողը դրանց վրա նշում չի կատարում, իսկ մեկ քվեաթերթիկով քվեարկության ժամանակ կատարում է:

Համամասնական ընտրակարգով անցկացվող տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում քվեարկության կազմակերպման տարբեր մոտեցումները, մեր կարծիքով, արդարացված չէ: Համապետական ընտրությունների շրջանակներում առանձին քվեաթերթիկների օգտագործումը ցույց է տվել իր արդյունավետությունն ընտրողի կամքի նկատմամբ վերահսկողության հնարավորությունը վերացնելու առումով: Դրական ենք համարում օրենսդիրի մոտեցումը, որով առանձին քվեաթերթիկների կիրառումը դարձել է նաև համայնքային ընտրությունների կազմակերպման մաս, իսկ որոշ համայնքներում դրանց չկիրառումը համարում ենք չարդարացված: Կարծում ենք, որ Ընտրական օրենսգիրքը տվյալ հարցում պետք է վերանայվի և համամասնական ընտրակարգով անցկացվող բոլոր ընտրություններում կիրառվեն առանձին քվեաթերթիկներ:

Երևանի ավագանու ընտրությունների արդյունքներն ամփոփում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, մնացած բոլոր համայնքներում՝ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը: Ընտրությունների արդյունքների ամփոփման արդյունքում կարող են ընդունվել հետևյալ որոշումները՝

- 1) համայնքի ավագանի ընտրվելու մասին.
- 2) առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին.

3) ավագանու ընտրություններն անվավեր ճանաչելու և ավագանու ընտրությունների վերաքվեարկություն նշանակելու մասին.

4) համայնքի ավագանու ընտրություններ անվավեր ճանաչելու և նոր ընտրություններ նշանակելու մասին.

5) ավագանու ընտրությունները չկայացած ճանաչելու և նոր ընտրություններ նշանակելու մասին:

Համայնքի ավագանիների անդամների մանդատները բաշխվում են այն կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են «կողմ» քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անձշտությունների թվի գումարի համապատասխանաբար առնվազն՝ կուսակցությունների դեպքում՝ 4 տոկոսը, իսկ կուսակցությունների դաշինքների դեպքում՝ 6 տոկոսը: Նախկինում Ընտրական օրենսգիրքը համայնքային ընտրությունների համար նախատեսում էր շատ ավելի բարձր շեմ (6% և 8% համապատասխանաբար):

Եթե մանդատների բաշխման հնարավորություն է ստացել երեքից պակաս կուսակցություն, ապա մանդատների բաշխմանը մասնակցում են առավելագույն թվով «կողմ» քվեաթերթիկներ ստացած 3 կուսակցություններ և կուսակցությունների դաշինքներ: Եթե ընտրություններին մասնակցում են երկու կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ), ապա երկու կուսակցությունն էլ մասնակցում են մանդատների բաշխմանը: Իսկ եթե ընտրություններին մասնակցել է միայն մեկ կուսակցություն (կուսակցությունների դաշինք), ապա նա ստանում է բոլոր մանդատները, եթե ընտրություններին մասնակցած ընտրողների կեսից ավելին նրան կողմ է քվեարկել:

Համայնքի ավագանիների անդամների մանդատները բաշխվում են կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև՝ դրանցից յուրաքանչյուրի օգտին քվեարկված քվեաթերթիկների թվին համամասնորեն: Կիրառվում է ընտրական քվոտայի մեթոդը՝ մանդատների երկրորդական բաշխման ժամանակ կիրառելով առավելագույն մնացորդի սկզբունքը: Եթե մնացորդները հավասար են, ապա վիճարկվող մանդատը հատկացվում է այն ընտրական ցուցակին, որի համար քվեաթերթիկների թիվն առավելագույնն է, իսկ հավասար լի-

նելու դեպքում մանդատը տրվում է վիճակահանությամբ:

Համայնքի ավագանու կազմը ձևավորելիս օրենսդրորեն սահմանվում է գենդերային քվոտա, որի շրջանակներում նույն սեռի ներկայացուցիչների ներկայությունը յուրաքանչյուր կուսակցության համար չպետք է գերազանցի 70%-ը: Հետաքրքիր է, որ ավագանու առաջին կազմի ձևավորման ժամանակ քվոտան սահմանվել է 30%, իսկ առաջին կազմի ձևավորումից հետո ավագանու կազմում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության դեպքում նույն քվոտան սահմանվել է 25%: Իրավակիրառ պրակտիկայում հաճախակի են լինում դեպքեր, երբ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների միջև մանդատների բաշխման ավարտից հետո իզական սեռի թեկնածուներն ինքնաբացարկի դիմումներ են ներկայացնում, իսկ նրանց տեղերը հետագայում զբաղեցնում են արական սեռի թեկնածուները:

Հայաստանում 2021 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացված վերջին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների շրջանակում համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու անդամների սեռերի հարաբերակցությունը կազմում էր 68,3% տղամարդ (688 ընտրված անդամ) և 31,7% կին (320 ընտրված անդամ): Այդուհանդերձ, չնայած այն հանգամանքին, որ հնարավոր չէ հասնել սեռերի օրենսդրական ներկայացվածության լիարժեք ապահովմանը, այնուամենայնիվ, համամասնական ընտրակարգի շրջանակներում կանանց ներգրավումն ընտրական գործընթացներում ավելի արդյունավետ է իրականացվում:

Այսպես, համեմատած մեծամասնական ընտրակարգով ձևավորված ավագանու հետ, որտեղ անհնար է սահմանել գենդերային քվոտաներ, քանի որ դա կսահմանափակի ընտրողի ընտրության իրավունքը, և որտեղ տղամարդկանց և կանանց հարաբերակցությունը կազմում է 518 տղամարդ և 9 կին՝ համայնքների ղեկավարների պարագայում, 3774 տղամարդ և 490 կին՝ ավագանու անդամների պարագայում¹, ինչը կազմում է

¹ Տվյալները ներկայացված են 2016 թվականի տեղական ընտրությունների արդյունքների հիման վրա:

88,5% տղամարդ՝ կանանց 11,5%-ի դիմաց, համամասնական ընտրակարգով ձևավորված համայնքային ավագանիներում կանայք ավելի քան 20%-ով ավելի են:

2.6 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀՀ-ՈՒՄ

Տեղական ինքնակառավարման գործադիր մարմիններն իրենց կազմով կարող են լինել կոլեգիալ և միանձնյա, կազմավորման սկզբունքով՝ ուղղակի կամ անուղղակի ընտրություններով ընտրվող և նշանակվող: Միևնույն ժամանակ, Ֆրանսիայի, Իսպանիայի կամ Հունաստանի տարբեր համայնքային համակարգերում, ԳԴՀ-ի տարբեր հողերում կոմունաների կառավարման կայունությունն ու հեղինակությունը մեծապես հիմնված են իշխանության անձնավորման, այսպես ասված՝ «մուսիցիպալ նախագահականության» վրա¹: Դա է հաստատում համայնքների գործադիր ղեկավարի՝ քաղաքապետերի ուղղակի ընտրությունների ներդրումը: Նման համակարգ օրենսդրորեն ներդրվել է 1993 թվականին Իտալիայում փոխարինելու համայնքների խորհրդի կողմից քաղաքապետերի ընտրությունը: Ուղղակի ընտրությունները որոշակի անկախություն են բերում համայնքի ավագանիում ներկայացված քաղաքական կուսակցություններից և բարձրացնում ընտրողների առջև հաշվետվողականությունը: Նույն ուղղությամբ իրականացվեց Լոնդոնի կողմից սկսված անգլիական կառավարման բարեփոխումը խոշոր քաղաքներում: «Ուղիղ ընտրությունները, պատասխանատվության կենտրոնացումը, տեղական քաղաքական կյանքի անձնավորումը ներկայումս գերիշխող միտում են Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայի երկրներում»²: Սկզբունքորեն համաձայնվելով նման գնահատականի հետ, այնուամենայնիվ, նշենք, որ խնդրին նման մոտեցումն արդարացված է միայն կայացած տեղական ինքնակառավարման համակարգի պայմաններում: Անցած տարիների պրակ-

¹ **Ванделли Л.** Основная ячейка любой демократии //Российский журнал. Социальные и гуманитарные науки. Отечественная и зарубежная литература. Серия 4. 2001. №1. с. 86.

² Նույն տեղում:

տիկան ցույց է տվել, որ տեղական ինքնակառավարման մարմինների կառուցվածքը և դրանց ձևավորման կարգը որոշակի բարեփոխումների կարիք ունեն: Հայրենական գրականության մեջ առաջարկվել է նաև տեղական ինքնակառավարման մարմինների կազմում ստեղծել համայնքի կառավարչի պաշտոն՝ պահպանելով համայնքի ղեկավարի պաշտոնը, ընդ որում, առաջինը կնշանակվեր համայնքի ավագանու կողմից, իսկ երկրորդը կընտրվեր ուղղակիորեն բնակչության կողմից¹: Մեր կարծիքով, նման կառույցի բոլոր առավելություններով հանդերձ (դրա մասին է վկայում նաև արտասահմանյան փորձը) Հայաստանի համար նման դասավորությունը որոշ չափով կծանրացներ համայնքային կառուցվածքը:

Գործադիր մարմինների լիազորությունների ժամկետները ևս տարբեր են, ինչպես համայնքի ավագանու լիազորությունների ժամկետները: Այսպես, Գերմանիայում՝ Ներքին Սաքսոնիա և Հյուսիսային Ռեյն-Վեստֆալիա հողերում, մունիցիպալ խորհուրդները նշանակում են պրոֆեսիոնալ կառավարիչներ 8-ից 17 տարի ժամկետով², Ռուսաստանում տեղական ինքնակառավարման ղեկավարների մեծ մասի պաշտոնավարման ժամկետը, որոնք հիմնականում ուղղակիորեն ընտրվում են բնակչության կողմից, 2-ից 5 տարի է, ԱՄՆ խոշոր քաղաքներում բնակչության կողմից ընտրված քաղաքապետերի պաշտոնավարման ժամկետն ավելի հաճախ 4-5 տարի է³ (500 000-ից ավելի բնակչություն ունեցող ԱՄՆ 26 քաղաքներից տեղական գործադիր իշխանության ձևավորման նմանատիպ մեթոդ կիրառվում է 20-ում⁴), Ղանիայում քաղաքագլխին (բուրգոմիստր) ընտրում է համայնքի ավագանին չորս տարին մեկ և այլն: Հայաստանում, ինչպես ավելի վաղ նշվել էր, մինչև Երևանի քաղաքապետի անուղղակի ընտրությամբ

¹ **Հակոբյան Ն. Հ.**, Տեղական ինքնակառավարման ձևավորումն ու զարգացումը Հայաստանի Հանրապետությունում: Երևան, «Ոսկան Երևանցի», 2001, էջ 34-44:

² **Иванцова Г.А.** Теоретико-правовые проблемы местного самоуправления // Дисс. на соискание ученой степени кандидата юрид. наук.: 12.00.01 Уфа, 2000. с. 45-46.

³ **Барабашев Г.В.** Местное самоуправление. М., 1996. с. 67.

⁴ **Евдокимов В.Б., Старцев Я.Ю.** Местные органы власти зарубежных стран: правовые аспекты. М., 2001. с. 98.

յունների անցկացումը, գործում էին տեղական ինքնակառավարման միայն ընտրովի, այդ թվում՝ գործադիր, մարմինները: Հայաստանի համայնքներում տեղական ինքնակառավարման գործադիր մարմինը համայնքի ղեկավարն է, որը մինչև 4 000 ընտրող ունեցող համայնքներում ընտրվում է համայնքի բնակչության կողմից անմիջականորեն՝ 5 տարի ժամկետով: Եթե դիտարկենք համայնքային ընտրությունների կանոնակարգման շրջանակներում ընտրական իրավունքի զարգացման պատմությունը, ապա կարող ենք փաստել, որ համայնքի ղեկավարի թեկնածուների որակավորումները բավականաչափ մեղմվել են, և այսօր համայնքի ղեկավարի թեկնածուներին ներկայացվում են նույն պահանջները, ինչ ավագանու անդամների թեկնածուների համար, և, ըստ էության, հանգում են անձի՝ համայնքային ընտրություններում ընտրելու իրավունքով օժտված լինելուն¹:

Համայնքի ղեկավարի ընտրությունների կազմակերպման և անցկացման կարգը չի տարբերվում ավագանու համար նախատեսված կարգից: Համայնքի ղեկավարի ընտրության ժամանակ ևս կիրառվում է հարաբերական մեծամասնության մեծամասնական ընտրակարգը: Այսպես, համայնքի ղեկավարի պաշտոնում ընտրված է համարվում այն թեկնածուն, ով ստացել է առավելագույն թվով «կողմ» ձայներ: Սակայն եթե առաջադրվում է մեկ թեկնածու, ապա օրենսդիրը նախատեսել է ընտրությունների արդյունքների ամփոփում բացարձակ մեծամասնության մեծամասնական ընտրակարգի հիման վրա, այսինքն՝ թեկնածուն ընտրված է համարվում, եթե ստացել է ընտրողների ձայների կեսից ավելին: Համայնքի ղեկավարի թեկնածուների ձայների հավասարության դեպքում հարցը որոշվում է վիճակահանությամբ՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով:

Համայնքի ղեկավարի ընտրություններն անվավեր են ճա-

¹ Նախկինում համայնքի ղեկավար կարող էր ընտրվել 25 տարին լրացած ընտրական իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացին, ինչպես նաև 25 տարին լրացած, փախստականի կարգավիճակ ունեցող կամ փախստականի վկայականում գրանցված անձինք, որոնք տվյալ համայնքում գրանցված են եղել առնվազն վերջին երկու տարում: Բացի այդ, համայնքի ղեկավարը պետք է ունենար միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն:

նաչվում նույն հիմքերով և նույն իրավական հետևանքներով, ինչ մեծամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու անդամների ընտրությունների ժամանակ: Նշենք միայն Ընտրական օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված համայնքի ղեկավարի ընտրությունները չկայացած ճանաչելու հիմքերը, որպիսիք հանդիսանում են՝

1) եթե քվեարկված միակ թեկնածուին կողմ չեն քվեարկել անհրաժեշտ թվով ընտրողներ.

2) եթե թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետում և կարգով թեկնածու չի գրանցվել.

3) մինչև քվեարկության ավարտը միակ թեկնածուի մահվան դեպքում.

4) առավելագույն թվով կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած թեկնածուի՝ մինչև ընտրության արդյունքներն ամփոփելը մահվան դեպքում.

5) ընտրությունից հետո՝ մինչև լիազորությունների ստանձնումը, ընտրված համայնքի ղեկավարի մահվան կամ լիազորություններն ստանձնելուց հրաժարվելու դեպքերում.

6) եթե վերաքվեարկության արդյունքների հիման վրա ընտրություններն անվավեր են ճանաչվել:

Սակայն այժմ կա ընդամենը 12 այդպիսի համայնք, և համայնքների մեծ մասում ղեկավարներն ընտրվում են անուղղակի ընտրություններով համայնքի ավագանու կողմից մինչև ավագանու լիազորությունների ավարտը՝ անկախ նրա ընտրության ժամկետից (Ընտրական օրենսգրքի 142.3 հոդվածի 4-րդ մաս):

Մեր կարծիքով, Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգն ավելի արդյունավետ կգործեր, եթե համայնքի ղեկավարն ընտրվեր ավագանիների կողմից, ընդ որում՝ համայնքի կառավարման ոլորտում հատուկ գիտելիքներով և հմտություններով օժտված անձանցից: Այս իրավիճակում տրամաբանական է համայնքի ղեկավարի պաշտոնանկության հարցը փոխանցել ավագանու իրավասությանը, ինչը արվել է նոր օրենսդրության շրջանակներում, այդ թվում նաև համաձայն 2015 թվականին փոփոխված ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի, ըստ որի համայնքի ղեկավարը պատասխանատու է համայնքի ավագանու առջև: Մեր խորին համոզմամբ,

նման օրենսդրական կարգավորումը կարող է բարձրացնել համայնքի ներկայացուցչական մարմնի դերն ու նշանակությունը, ստեղծել տեղական ինքնակառավարման համակարգում վերահսկողության և պատասխանատվության իրական կառուցակարգեր, նվազեցնել «քաղաքական բաղադրիչի» առկայության աստիճանը համայնքի ղեկավարի ինստիտուտում և բարձրացնել դրա «մասնագիտական բաղադրիչի» աստիճանը: Այս դեպքում ավելի հավասարակշռված կլինի իշխանությունների տարանջատումը և հակակշիռների համակարգը տեղական ինքնակառավարման մակարդակով, այս կերպ հնարավոր կլինի խուսափել ներկայիս «թեքումից» դեպի տեղական ինքնակառավարման գործադիր իշխանություն:

Հայրենական օրենսդրության մեջ այս հարցի կարգավորումը փոփոխվել է, սակայն համայնքի ղեկավարը սկսել է ընտրվել համայնքի ավագանու կողմից ոչ թե պրոֆեսիոնալ կառավարիչներից, այլ ավագանու անդամներից: Ավելին, ավագանու ընտրություններում հաղթած կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը), ըստ էության, արդեն իսկ ունի համայնքի սեփական ընտրված ղեկավար՝ ի դեմս ընտրական ցուցակը գլխավորող թեկնածուի, ինչը, կարծում ենք, չի լուծում համայնքի ղեկավարի ինստիտուտում «քաղաքական բաղադրիչը» նվազեցնելու և դրա «մասնագիտական բաղադրիչի» աստիճանը բարձրացնելու խնդիրը: Համայնքի ղեկավարի անուղղակի ընտրությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ լայնորեն ամրագրվել են ավելի վաղ հիշատակված 2020 թվականի հունիսի 18-ի սահմանադրական օրենքով: Նշված սահմանադրական օրենքի նախագծի հիմնավորման մեջ ասվում էր.

«Ներկայացված օրենսդրական նախագծային փաթեթում ընդգրկված օրենքների նախագծերի ընդունման արդյունքում 4 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների ղեկավարների մասով կգործի համայնքի ղեկավարի պաշտոնանկության, այն է՝ համայնքի ավագանու կողմից վերջինիս անվստահություն հայտնելու ինստիտուտը: Այն ոչ միայն կհանդիսանա որպես փոխզսպման մեխանիզմ ավագանու և համայնքի ղեկավարի փոխհարաբերություններում, այլև հնարավորություն կընձեռի լիարժեքորեն ապահովելու սահմանադրական նորմի իրացումը, այն է՝ «Հա-

մայնքի ղեկավարը պատասխանատու է համայնքի ավագանու առջև» («Սահմանադրության 182-րդ հոդվածի 4-րդ մաս): ... Հնարավորություն կստեղծվի ներդնելու համայնքի ղեկավարի ընտրության անուղղակի ընտրակարգը, որով համայնքի ավագանին իր կազմից կընտրի և կնշանակի համայնքի ղեկավարին, հետևաբար՝ համայնքի ղեկավարն էլ իր հերթին պատասխանատվություն կկրի համայնքի ավագանու առջև»:

2020 թվականի հունիսի 18-ի սահմանադրական օրենքում ամրագրված իրավական կարգավորումների շրջանակներում ներդրվել էր համայնքի ղեկավարի անուղղակի ընտրությունները և ավագանու ընտրությունների լրիվ դասական համամասնական ընտրակարգը, չեղարկվել էր օրենքով սահմանված մեծամասնություն ստացած կուսակցություններին և դաշինքներին տրվող բոնուսային համակարգը, որն ամրագրված էր Ընտրական օրենսգրքի սկզբնական տարբերակում: Նման իրավական կարգավորում կիրառվել է 2016 թվականին Գյումրու և Վանաձորի ավագանիների ընտրություններում, ինչպես նաև Երևանի ավագանու բոլոր ընտրություններում: Ընտրական օրենսգրքի 142.2.-րդ հոդվածում նշվում է.

«1. Համայնքի ղեկավարի ընտրությունն անցկացվում է նորընտիր ավագանու առաջին նիստի ընթացքում: Առաջին նիստն անընդհատ է, բացառությամբ ընդմիջման ու հանգստի համար նախատեսված ժամանակի, մինչև համայնքի ղեկավարի ընտրությունը:

2. Եթե համայնքի ավագանու ընտրության արդյունքով ընտրությանը մասնակցող կուսակցություններից (կուսակցությունների դաշինքից) մեկն ստանում է ավագանու անդամների տեղերի 50 տոկոսից ավելին, ապա այդ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձն օրենքի ուժով համարվում է ընտրված համայնքի ղեկավար:

3. Եթե սույն հոդվածի 2-րդ մասում նշված կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձը հրաժարվում է կամ ավագանու ընտրությունների արդյունքով որևէ կուսակցություն (կուսակցությունների դաշինք) չի ստանում ավագանու անդամների տեղերի

50 տոկոսից ավելին, ապա համայնքի ղեկավարն ընտրվում է բաց քվեարկության միջոցով:

4. Ավագանու խմբակցությունները կարող են իրենց կուսակցության (կուսակցությունների դաշինքի) թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում տեղ զբաղեցրած անձին առաջադրել որպես համայնքի ղեկավարի թեկնածու, իսկ եթե նա հրաժարվում է, ապա խմբակցությունը կարող է առաջադրել տվյալ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) թեկնածուների ցուցակի համապատասխանաբար հաջորդ այն անձին, որը համաձայն է առաջադրվել որպես թեկնածու:

5. Քվեարկությունն անցկացվում է քվեաթերթիկների միջոցով, որոնցում ընդգրկվում են առաջադրված բոլոր թեկնածուները:

6. Ավագանու յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

7. Եթե առաջադրվել է մեկից ավելի թեկնածու, ապա համայնքի ղեկավար է ընտրվում այն թեկնածուն, որն ստանում է ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը: Եթե առաջադրված թեկնածուներից որևէ մեկը չի ստանում ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը, ապա առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուների միջև անցկացվում է քվեարկության երկրորդ փուլ: Եթե հավասար ձայների պատճառով հնարավոր չէ պարզել առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուներին, ապա երկրորդ փուլին մասնակցում են նաև հավասար ձայներ ստացած մյուս թեկնածուները: Երկրորդ փուլում համայնքի ղեկավար է ընտրվում առավելագույն ձայներ ստացած թեկնածուն: Ձայների հավասարության դեպքում անցկացվում է լրացուցիչ քվեարկություն՝ քվեաթերթիկում ընդգրկելով միայն հավասար ձայներ ստացած անձանց: Լրացուցիչ քվեարկության արդյունքով ձայների հավասարության դեպքում առավելությունը տրվում է տարիքով ավագին:

Քվեարկության երկրորդ փուլն ու լրացուցիչ քվեարկությունն անցկացվում են անմիջապես հիմնական քվեարկության արդյունքները հրապարակելուց հետո:

8. Եթե առաջադրվել է մեկ թեկնածու, ապա նա ընտրվում է

համայնքի ղեկավար, եթե նրա օգտին կողմ քվեարկած ծայներն ավելի են դեմ քվեարկած ծայների թվից և ավելի են ավագանու անդամների ընդհանուր թվի 40 տոկոսից»:

Սկզբունքորեն հավանություն տալով բոնուսներից հրաժարվելու գաղափարին (եղբ, օրինակ, ծայների 40 տոկոսից ավելին հավաքած քաղաքական ուժը որպես «նվեր» ստանում էր լրացուցիչ մանդատներ՝ ավագանու մանդատների մեծամասնությունն ունենալու համար, քանի որ ներկայացվածության բարձր մակարդակի ապահովման տեսանկյունից «բոնուսների» համակարգը «խեղաթյուրում» է), այնուամենայնիվ, ՀՀ-ում տեղական ինքնակառավարման գործառնության այս փուլում բոնուսային համակարգից հրաժարվելը փոքր-ինչ վաղաժամ ենք համարում, նույնիսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ զուգահեռաբար իրականացվել է նաև Հայաստանի համայնքների խոշորացման բարեփոխումը:

Դրա մասին են վկայում վերջին համայնքային ընտրությունների արդյունքները: Որոշ համայնքներում 2022 թվականի մայիսին համայնքների ղեկավարները դեռ չեն ընտրվել, թեև համայնքի ավագանու ընտրությունները տեղի են ունեցել ամիսներ առաջ (2021թ. սեպտեմբեր-դեկտեմբեր): Որոշ համայնքներում տեղի են ունեցել կամ կանցկացվեն նոր արտահերթ ընտրություններ, քանի որ համայնքի ավագանին չի կարողացել ընտրել համայնքի ղեկավարին: Համայնքների բնակչության և հենց քաղաքական խաղացողների անպատրաստ լինելը հնարավորություն չի տալիս լուծել վերոնշյալ օրենսդրական բարեփոխումների շրջանակներում դրված խնդիրները: Այս տեսանկյունից արդարացված կլիներ ժամանակավորապես վերադարձնել «բոնուսային համակարգը»՝ ավագանու կազմում կայուն մեծամասնություն ապահովելու համար:

Գործող իրավակարգավորումը գերծ չէ նաև այլ թերություններից, այդ թվում՝ տեխնիկական բնույթի: Այսպես, օրինակ, Ընտրական օրենսգիրքի 142.2 հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ համայնքի ղեկավարի ընտրություններն անցկացվում են բաց քվեարկությամբ, իսկ նույն հոդվածի 5-րդ մասում ասվում է, որ քվեարկությունն իրականացվում է քվեաթերթիկների միջոցով: Դժվար է պատկերացնել բաց քվեարկություն կազմակերպելը

քվեաթերթիկների միջոցով:

Բաց է մնում նաև այն հարցը, թե հնարավոր է արդյոք համայնքի ղեկավարի թափուր պաշտոնում նշանակել ժամանակավոր կատարող, թե՞ նրա լիազորությունները պետք է կատարի տեղակալը մինչև արտահերթ ընտրությունների անցկացումը և համայնքի նոր ղեկավարի ընտրությունը, որն անցկացվում է ավագանու կողմից սահմանված ժամկետում պաշտոնը թափուր մնալուց հետո, բայց ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում: Այս դեպքում թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն ավագանու խմբակցությունները:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է փաստել, որ տեղական ինքնակառավարման գործադիր մարմնի ձևավորման վերաբերյալ ընտրական օրենսդրության փոփոխություններն ուղղված են համայնքային իշխանության առավել ներկայացուցչական բնույթի ապահովմանը, համայնքի ավագանու առջև համայնքի ղեկավարի պատասխանատվության մասին սահմանադրական նորմի պահանջների իրականացմանը, ներկայացուցչական մարմնի դերի բարձրացմանը և տեղական ինքնակառավարման մարմինների միջև հարաբերությունների հավասարակշռմանը, սակայն հապճեպ որոշումները, ոչ ամբողջությամբ մտածված իրավական կարգավորումները խոչընդոտում են այդ նպատակների իրականացմանը և նվազեցնում համայնքների բնակչության հետաքրքրությունը ուղղակի ժողովրդավարության ինստիտուտների և, առաջին հերթին, համայնքային ընտրությունների նկատմամբ:

2. 7 ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՐԱՔՎԵՆ՝ ՈՐՊԵՍ ՈՒՂԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Ժողովրդավարական պետություններում հռչակվում է իշխանության՝ ժողովրդին պատկանելու գաղափարը: Ժողովրդի իշխանության իրականացման համար ամենակարևոր իրավական գործիքն ուղղակի ժողովրդավարության ինստիտուտներն են: Վերջիններիս մեջ հանրաքվեն առանձնահատուկ նշանակություն ունի՝ որպես ժողովրդավարության հատուկ հաշվառմամբ կառուցակարգ, քաղաքացիական հասարակության ձևավորման և իրա-

վական պետության ստեղծման համար, որն ապահովում է ժողովրդի կողմից որոշումների անհապաղ կայացումը: Հանրաքվեն ժամանակակից ժողովրդավարական երկրներում անմիջական ժողովրդավարության ամենատարածված ձևերից է: Հանրաքվեի միջազգային փորձը ցույց է տալիս պետությունների սահմանադրական և իրավական պրակտիկայում դրա դերի աճի միտումը: Հայաստանի Հանրապետությունում հանրաքվեի ինստիտուտը դեռ լայնորեն չի կիրառվում: Հայաստանի Հանրապետությունը չունի համապետական և տեղական հանրաքվեների անցկացման հարուստ փորձ: Հայաստանում համապետական հանրաքվեներ անցկացվել են բացառապես Սահմանադրության ընդունման կամ փոփոխության հարցով՝ այն էլ այն պայմաններում, երբ մինչև 2015 թվականը դա էր Սահմանադրության ընդունման կամ փոփոխության միակ եղանակը: Հայաստանի երրորդ Հանրապետությունում տեղական հանրաքվե տեղի է ունեցել միայն մեկ անգամ՝ մի քանի համայնքների մեկ համայնքում միավորվելու հարցով:

«Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ առաջին օրենքն¹ ընդունվել է 2002 թվականին, երբ ՀՀ Սահմանադրությունը նորմեր չէր պարունակում տեղական հանրաքվեի ինստիտուտի մասին: Այս հանգամանքի վրա էական ազդեցություն ունեցավ Հայաստանի կողմից Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի վավերացումը:

Ավելի ուշ՝ 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքում փոփոխություններ կատարվեցին ՀՀ Սահմանադրության մեջ: Հանրաքվեին առնչվող հարցերում էական փոփոխությունը տեղական հանրաքվեի ինստիտուտի ներդրումն էր Սահմանադրության մեջ (ՀՀ Սահմանադրության 30-րդ, 107-րդ, 110-րդ հոդվածներ՝ 2005թ. փոփոխություններով):

Հետագայում, 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների շրջանակում, տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունքը հստակորեն ամրագրվեց Սահմանադրության 48-րդ հոդվածում, իսկ ՀՀ Սահմանադրության 183-րդ հոդվածը վերնագրվեց «Համայնքի գործերի կառավարման անմիջական

¹ Աղբյուր՝ www.arlis.am:

մասնակցությունը» և սահմանվեց, որ համայնքի բնակիչները կարող են անմիջականորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հանրային հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով, ինչպես նաև որ համայնքի բնակիչների կողմից համայնքի գործերի կառավարման անմիջականորեն մասնակցելու այլ եղանակները սահմանվում են օրենքով:

2015 թվականի սահմանադրական բարեփոխումներից հետո, հաշվի առնելով սահմանադրական նոր կարգավորումները, 2018 թվականի հունիսի 13-ին ընդունվեց «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ գործող օրենքը (այսուհետ՝ նաև Օրենք):

Ցանկացած հանրաքվեի նշանակությունը որոշելու համար, թերևս, կարևոր է դրա իրավական հետևանքների հարցը: Քննարկվող հարցի համատեքստում հետաքրքրություն են ներկայացնում հանրաքվեների երեք դասակարգում, որոնք դիտարկվելու են տեղական հանրաքվեների կապակցությամբ.

1) ըստ հասարակական հարաբերությունների վրա ներագդելու եղանակի՝ իրավունքի նորմեր ձևավորող և չձևավորող.

2) ըստ գործառույթների, այլ կերպ ասած՝ հանրաքվեով ընդունված որոշման պարտադիրության՝ հրամայական և խորհրդատվական.

3) ըստ անցկացման պարտադիրության՝ պարտադիր և կամընտրական:

ՀՀ օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ Հայաստանում կարող են անցկացվել և՛ տեղական հանրաքվեներ՝ ուղղված ներկայացուցչական մարմնի ակտի ընդունմանը, այսինքն՝ օրինաստեղծ, և՛ իրավունքի նորմեր չձևավորող (օրինակ՝ համայնքների միավորման կամ բաժանման հարցերով) հանրաքվեներ:

Միևնույն ժամանակ, հարկ վերապահում կատարել, որ այս դասակարգման շրջանակներում խոսվում է հասարակական հարաբերությունների վրա առաջնային ազդեցության եղանակի մասին է, քանի որ չի բացառվում, որ տեղական հանրաքվեի անցկացումը, որը չի ձևավորում իրավունքի նորմեր, ի վերջո, կարող է հանգեցնել իրավունքի նորմերի ձևավորմանը (օրինակ՝ համայնքների միավորման մասին օրենքի ընդունմանը):

Անդրադառնալով մյուս երկու դասակարգումներին՝ անհրաժեշտ է դրանք դիտարկել կապակցված, ինչը միանգամայն տրամաբանական է, քանի որ հանրաքվեի պարտադրման դեպքում իրավական հետևանքները նույնպես պարտավորեցնող պետք է լինեն: Այլ դասակարգումը ոչ միայն անտրամաբանական է, այլ նաև հակասում է ուղղակի ժողովրդավարության բուն էությանը և ուղղակի ժողովրդավարության այնպիսի ձևի նշանակությանը, ինչպիսին հանրաքվեն է: Սահմանադրությունը և հանրաքվեի մասին օրենսդրությունը նախատեսում են որոշակի հարցերի վերաբերյալ պարտադիր հանրաքվե:

Տրամաբանական շղթան պետք է հետևյալ տեսքն ունենա.

1. պարտադիր (կամ, այսպես կոչված, հարկադիր) հանրաքվե՝ ընդունված որոշման «իրամայականություն»,
2. կամընտրական հանրաքվե՝ ընդունված որոշման «խորհրդակցականություն»¹:

Սովորաբար այսպիսի սխեմա է գործում: Սակայն Հայաստանի սահմանադրական կարգավորման շրջանակներում կարճեկ այլ սխեմա: Այսպես, 2005 թվականին փոփոխված ՀՀ Սահմանադրության 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «համայնքները, ելնելով հասարակության շահերից, օրենքով կարող են միավորվել միմյանց հետ կամ բաժանվել միմյանցից: Համապատասխան օրենքն ընդունում է Ազգային ժողովը՝ Կառավա-

¹ Շատ հեղինակներ անդրադարձել են հանրաքվեների դասակարգմանը: Հանրաքվեի դասակարգման չափանիշների և տեսակների մասին լրացուցիչ տեղեկությունների համար Տե՛ս, օրինակ՝ **Մարանդյան Ռ.Ռ.** Հանրաքվեն որպես ժողովրդաիշխանության ձև Հայաստանի Հանրապետությունում: ԺԲ.00.12 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2017, էջեր 37-62, **Курячая М.М.** Право на референдум в системе публично-политических прав граждан Российской Федерации. Монография/ - М.: Изд-во МГУ, 2006, с.24-51; **Руденко В.Н.** Прямая демократия: модели правления, конституционно-правовые институты. Екатеринбург, УрО РАН, 2003, с.111-113, 141-152; **Синцов Г.В.** Конституционно-правовой институт референдума Российской Федерации и субъектов Российской Федерации //Диссертация на соискание ученой степени канд.юр.наук, Пенза, 2003, с.65-81; **Мамичев В.П.** Референдум в законодательстве зарубежных стран и России (историко-правовое исследование): Дис.... канд.юр.наук. - Ставрополь, 2000, с. 59-89 և այլն:

րության առաջարկով: Մինչ Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության ներկայացումը, համապատասխան համայնքներում տեղական հանրաքվեներ են նշանակվում: Օրենսդրական նախաձեռնությանը կցված են տեղական հանրաքվեների արդյունքները: Համայնքները կարող են միավորվել կամ բաժանվել՝ անկախ տեղական հանրաքվեների արդյունքներից»: Ակնհայտ է, որ տեղական հանրաքվեի նման իրավական հետևանքների պայմաններում տեղական հանրաքվեի «պարտադիր» անցկացվելու պահանջը միանգամայն անտեղի է: Մյուս կողմից, պարտադիր հանրաքվեի օրինական արդյունքների վերաբերյալ պետական իշխանության հայեցողությունը միանգամայն անընդունելի է¹:

Գործող Սահմանադրության մեջ այս նորմը բացակայում է, իսկ տեղական հանրաքվեի անցկացման հարցերը թողնված են օրենքի կարգավորմանը: Միևնույն ժամանակ, Սահմանադրությունն այս հարցին վերաբերում է բավականին վերացական՝ նշելով, որ ելնելով հանրային շահերից՝ համայնքները կարող են օրենքով միավորվել կամ բաժանվել և որ Ազգային ժողովը, ընդունելով համապատասխան օրենքը, պարտավոր է լսել այդ համայնքների կարծիքը:

Այս հարցին անդրադառնում է «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը: Օրենքը սահմանում է տեղական հանրաքվեի նորպես համայնքի գործերի կառավարմանն անմիջականորեն մասնակցելու եղանակ, որն իրականացվում է տվյալ համայնքի բնակիչների համայնքային նշանակության հանրային հարցերով քվեարկության միջոցով:

Ինչպես գիտենք, հանրաքվեի մասին օրենսդրությունը երկու մոտեցում է կիրառում՝ որոշելու այն հարցերի շրջանակը, որոնք կարող են առաջադրվել հանրաքվեի՝

¹ Արդարության համար պետք է նշել, որ համայնքների միավորման վերաբերյալ տեղական հանրաքվեի անցկացվել է միայն մեկ անգամ՝ 2015 թվականի մայիսին, մինչդեռ ամենուր, որտեղ անցկացվել են այդ հանրաքվեները, համայնքների բնակչությունը հանրաքվեի արդյունքներով քվեարկել է միավորման օգտին (աղբյուր. www.elections.am): Այլ պրակտիկա այս հարցում չկա, հետևաբար, դժվար է ասել՝ այլ սցենարի դեպքում բնակչության կարծիքը լսելու քաղաքական կամք կլինե՞ր, թե՛ ոչ:

1) որոշվում է հարցերի կոնկրետ շրջանակ, որոնք կարող են առաջադրվել հանրաքվեի՝ բացառելով բոլոր մյուսները.

2) որոշվում է հարցերի կոնկրետ շրջանակ, որը չի կարող առաջադրվել հանրաքվեի՝ թույլ տալով մնացած բոլորը:

Գործող օրենքը վերը նշված մոտեցումներից ընտրել է երկրորդը՝ 4-րդ հոդվածի 1-ին մասում սահմանելով, որ տեղական հանրաքվեի կարող են դրվել տվյալ համայնքի բնակիչների համայնքային նշանակության հանրային հարցերը, բացառությամբ՝

1) մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների ու պարտականությունների, դրանց իրականացումն ապահովող սահմանադրական երաշխիքների վերացմանը կամ սահմանափակմանը վերաբերող հարցերի.

2) պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորություններին առնչվող հարցերի.

3) համայնքի ղեկավարի աշխատակազմի ձևավորմանը վերաբերող հարցերի.

4) համայնքի բյուջեի ընդունման կամ փոփոխման, ինչպես նաև համայնքի ֆինանսական պարտավորությունների կատարման կամ փոփոխման մասին հարցերի.

5) համայնքի սեփականության օտարման մասին հարցերի.

6) բնակչության պաշտպանության, առողջությունն ու անվտանգությունն ապահովող արտակարգ և շտապ միջոցառումներ ձեռնարկելու մասին հարցերի.

7) պատմության, մշակույթի, բնության հուշարձաններին և արգելանոցներին վնաս հասցնող հարցերի.

8) տեղական հարկերին, տուրքերին, վճարներին վերաբերող հարցերի.

9) միջհամայնքային միավորումներ ստեղծելու վերաբերյալ հարցերի.

10) այն հարցերը, որոնք արդեն իսկ դրվել են տեղական հանրաքվեի նախորդ մեկ տարվա ընթացքում և նույնաբովանդակ են:

Այս հարցերի ամբողջությունն ինքնին կասկածելի է: Անհասկանալի է, թե ինչու, օրինակ, տեղական հանրաքվեի շրջանակ-

ներում չի կարելի դիտարկել համայնքային սեփականության հարցը կամ միջհամայնքային միավորում ստեղծելը և այլն:

Սակայն համայնքների միավորման և բաժանման հարցը հատուկ կարգավորվում է օրենքով, և այս կանոնակարգումները տարբերվում են այն կանոնակարգումներից, որոնք կիրառվում են տեղական հանրաքվեներին բոլոր մյուս հարցերի շուրջ:

Որպես տեղական հանրաքվեի նախաձեռնողներ՝ Օրենքը նշում է տվյալ համայնքում տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանք, տվյալ համայնքի ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ը և համայնքի ղեկավարին: Եվ միայն Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունք ունեն տվյալ համայնքում տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող մինչև նախաձեռնության գրանցման օրը տասնութ տարին լրացած անձինք:

Տեղական հանրաքվե նշանակելու որոշումը կայացնում է համայնքի ավագանին: Օրենքը կարգավորում է տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունք ունեցող վերոնշյալ սուբյեկտների կողմից այս կամ այն հարցը տեղական հանրաքվեի ներկայացնելու կարգը: Սակայն Հայաստանում իսպառ բացակայում է որևէ հարցով տեղական հանրաքվե նախաձեռնելու պրակտիկան, և միակ բացառությունը՝ համայնքների միավորման ու բաժանման հարցն է: Օրենքը հատուկ կարգավորում է նախատեսել այս հարցում: Ըստ էության, տեղական ինքնակառավարման մակարդակում ներդրված է քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտը, որի շրջանակներում համայնքի բնակչության կողմից կարող է նախաձեռնվել տեղական հանրաքվե համայնքների միավորման և բաժանման հարցով: Ընդ որում, տեղական հանրաքվեի մասին օրենքը սահմանում է, որ համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ տեղական հանրաքվեի արդյունքները կրում են խորհրդատվական բնույթ:

Ստացվում է, որ Սահմանադրությունը պարտադրում է Ազգային ժողովին լսել համայնքների կարծիքը համայնքների միավորման և բաժանման ժամանակ, իսկ օրենքը սահմանում է համայնքների միավորման և բաժանման հարցով տեղական հան-

րաքվեի խորհրդատվական բնույթ: Սակայն խնդիրներ կան ոչ միայն տեղական հանրաքվեի արդյունքների կապակցությամբ, այլ նաև նաև տեղական հանրաքվեի բուն նախաձեռնման և անցկացման բազմաթիվ հարցերով:

Քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտը բավականին բարդ է ինչպես իրականացման, այնպես էլ ուղղակի ժողովրդավարության այս եղանակի իրավական հետևանքների սահմանման և ընկալման առումով, հաշվի առնելով, որ այն տարբեր դեպքերում դրսևորվում է տարբեր ձևերով: Մասնավորապես, տեղական ինքնակառավարման մակարդակով, որպես քաղաքացիական նախաձեռնություն նորմատիվ իրավական ակտի նախագիծը կարող է ներկայացվել ներկայացուցչական մարմնի քննարկմանը, որն ի վերջո կարող է ընդունել կամ մերժել այն, ինչպես նաև նախագիծը կարող է ներկայացվել հանրաքվեի որպես քաղաքացիական նախաձեռնություն, որի արդյունքները կրելու են հրամայական բնույթ:

Այսօր ուղղակի ժողովրդավարության այս ձևը լայնորեն տարածված է արտասահմանյան երկրներում, որոնց թվում են Ավստրիան, Ալբանիան, Բրազիլիան, Հունգարիան, Իսպանիան, Իտալիան, Լատվիան, Լիտվան, Լեհաստանը, Շվեյցարիան և այլն: Մերձավոր արտերկրներից, որոնց օրենսդրությունը նախատեսում է այս ինստիտուտը, կարելի է նշել Բելառուսը, Վրաստանը, Ուկրաինան և Ռուսաստանը:

Ուղղակի ժողովրդավարության այս ձևի նշանակությունը կայանում է նրանում, որ այն թույլ է տալիս երկրի քաղաքացիներին (իսկ տեղական ինքնակառավարման մակարդակով այս ինստիտուտը նախատեսում է ոչ թե «քաղաքացիների», այլ «բնակիչների») կատեգորիայի մասնակցության հնարավորություն) ինքնակազմակերպվել՝ ապահովելու ամենաարդիական հարցերի իրավական կարգավորումը, այն հարցերի, որոնց քննարկումներն առաջացնում են բարձր հանրային հնչելություն: «Պետական իշխանության օրինականացման տեսակետից քննարկման փուլը էական նշանակություն չունի (օրինականացման համար կարևոր է, որ սահմանադրությունն ընդունվի օրենքով լիազորված մարմնի կողմից), սակայն լեգիտիմության տեսանկյունից՝ նախագծի համապետական քննարկումը կարող է մեծ նշանա-

կություն ունենալ: Այս գործընթացը բնակչության գիտակցության մեջ մտցնում է հիմնական օրենքի նախապատրաստմանը մասնակից լինելը և այն համոզմունքը, որ սահմանադրությամբ սահմանված կարգն արտացոլում է նրա կամքը»¹:

Շատ հեղինակներ անդրադարձել են ժողովրդական նախաձեռնության հասկացությանը, առանձնահատկություններին, բնութագրերին և դասակարգմանը, ինչպես նաև դրա իրականացման եղանակներին²:

Միաժամանակ, տեղական ինքնակառավարման մակարդակով քաղաքացիական նախաձեռնության ինստիտուտի ի հայտ գալով, մի շարք հարցեր են ծագում: Համայնքների միավորման և բաժանման հարցերով տեղական հանրաքվե նախաձեռնելու

¹ **Чиркин В.Е.** Легализация и легитимация государственной власти // Государство и право. 1995. № 8. с. 15.

² **Рукавишникова И.В.** Гражданская инициатива как инструмент гражданского общества// Наука и образование: хозяйство и экономика; предпринимательство; право и управление. 2014. № 3 (46), с. 66-70; **Затонский В.А.** О некоторых институтах непосредственной демократии в контексте повышения эффективности муниципальной правовой политики и укрепления российской государственности // Вектор науки ТГУ. Серия: Юридические науки. 2017. № 2 (29) с. 24-28; **Загурская Л.А.** Гражданская законодательная инициатива осуществления населением государственной власти // SCIENTETIME 2014. № 8. С. 103-106; **Руденко В.Н.** Институт народной правотворческой инициативы: зарубежный опыт и его значение для Российской Федерации и ее субъектов // Научный ежегодник Института философии и права Уральского отделения Российской Академии наук. - Екатеринбург: УрО РАН, 2001, Вып. 2. - С. 303-342; **Tomas E. Cronin.** Direct Democracy. The Politics of Initiative, Referendum, and Recall. Twentieth Century Fund Book. Harvard University Press. Republished edition, 1999, **Հակոբյան Հ.** Ազգային ժողովը որպես ներկայացուցչական ժողովրդավարական ինստիտուտ// Մասնակցության ժողովրդավարություն, քաղաքացիական նախաձեռնություններ և պատասխանատվություն, միջազգային խորհրդածողով. Երևան, 2004, **Հակոբյան Հ.Հ.** Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում.–Եր., Տիգրան Մեծ, 2007, էջեր 399-419, **Սաֆարյան Գ.** Իրավաստեղծ գործունեության և օրենսդրության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (պատմատեսական վերլուծություն): Եր., ԱՌՏ, 2004, **Բաղայան Ս.Ս.** Օրենսդրական նախաձեռնության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2014:

մասին օրենսդրական կարգավորման խնդիրները բացահայտվել են տարբեր համայնքների բնակիչների՝ վերջին մի քանի տարիների ընթացքում իրականացված համայնքների միավորման գործընթացին դիմակայելու բազմաթիվ փորձերի շնորհիվ:

Այսպիսով, Օրենքի 7.1-ին հոդվածը սահմանում է, որ համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում Կառավարության լիազոր պետական մարմինը պաշտոնապես ծանուցում է համապատասխան համայնքների ղեկավարներին: Լիազոր պետական մարմնի ծանուցելուց հետո համայնքների ղեկավարները եռօրյա ժամկետում իրազեկում են համապատասխան համայնքների բնակիչներին համայնքի ավագանու նստավայրում, ինչպես նաև այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար (առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր 500 բնակչի համար), ծանուցումը փակցնելու և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու միջոցով: Նշված ծանուցումը հրապարակելուց հետո՝ 5 օրվա ընթացքում համապատասխան համայնքի բնակիչները կարող են ձևավորել նախաձեռնող խումբ և դիմել համապատասխան ընտրական հանձնաժողով (ԿԸՀ՝ Երևանի համար, համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը՝ բոլոր այլ համայնքների համար)՝ նախաձեռնող խումբ գրանցելու համար: Տեղական հանրաքվե նախաձեռնելու նպատակով նախաձեռնող խումբը կարող է ձևավորվել առնվազն 5, իսկ Երևանում, Գյումրիում և Վանաձորում՝ առնվազն 25 անձանց կողմից, ովքեր ունեն տվյալ համայնքում տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք, ներկայացնելով դիմում՝ նախաձեռնող խումբ ձևավորելու և լիազոր ներկայացուցիչ նշանակելու մասին, որում առկա նախաձեռնող խմբի անդամների ստորագրությունները պետք է վավերացված լինեն նոտարական կարգով: Համապատասխան ընտրական հանձնաժողովը երեք աշխատանքային օրերի ընթացքում ընդունում է նախաձեռնող խումբը գրացելու կամ նախաձեռնող խմբի գրացումը մերժելու մասին որոշում, որն ուժի մեջ է մտնում նիստում որոշումը հրապարակելու պահից և մինչև հաջորդ օրվա ավարտը տեղադրվում է ԿԸՀ կայքում: Գրանցվելուց հետո նախաձեռնող

խումբը ստանում է իր նախաձեռնության օգտին համայնքի բնակիչների ստորագրությունների հավաքման կազմակերպման իրավունք: Սկզբից նախաձեռնող խումբը դիմում է համայնքի ղեկավարին՝ համայնքի բյուջեում տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության կամ օրենքով չարգելված այլ ֆինանսական միջոցներ ներգրավելու հնարավորության վերաբերյալ հարցմամբ: Հարցումն ստանալուց հետո համայնքի ղեկավարը երեք աշխատանքային օրվա ընթացքում դիմում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով և ոստիկանություն՝ համայնքում տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափի վերաբերյալ հարցմամբ: Նշված մարմինները պարտավոր են երեք աշխատանքային օրվա ընթացքում համայնքի ղեկավարին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը: Տեղեկատվությունն ստանալուց հետո համայնքի ղեկավարը հինգ աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչին տրամադրում է տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության կամ դրանց բացակայության վերաբերյալ տեղեկանք: Անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության վերաբերյալ տեղեկանք ստանալու դեպքում նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչը նախաձեռնում է համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ նախաձեռնությանը միանալու ստորագրահավաք: Նշված նախաձեռնությանը տվյալ համայնքում տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց առնվազն 20 տոկոսի միանալու դեպքում նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչը դիմում է համապատասխան ընտրական հանձնաժողով՝ ստորագրությունների վավերականությունը հաստատելու համար: Ստորագրությունների վավերականության հաստատումը ստանալուց հետո նախաձեռնող խումբը տեղական հանրաքվեի դրվող հարցը ներկայացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, և համայնքի ղեկավարը եռօրյա ժամկետում նշանակում է տեղական հանրաքվե կամ մերժում է տեղական հանրաքվեի նշանակումը, եթե տեղական հանրաքվեի դրվող հարցը հակասում է օրենքին,

կամ չեն տրամադրվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:

Այսպիսինն է համայնքների միավորման և բաժանման հարցով տեղական հանրաքվե նախաձեռնելու ընդհանուր ընթացակարգը, որն ամրագրված է հայրենականօրենսդրությամբ: Ակնհայտ է, որ միջոցների սղության պատճառով տեղական հանրաքվե հրավիրելուց խուսափելու ճանապարհը միշտ էլ հնարավոր կլինի գտնել, քանի որ հանրաքվեն բավականին լայնածավալ և ծախսատար միջոցառում է, և ստացվում է, որ համայնքների կարծիքը լսելու սահմանադրական հրամայական պահանջը չի իրականացվի համայնքային բյուջեում միջոցների սղության պատճառով, ինչն ինքնին խախտում է համայնքի բնակչության իրավունքներն ու շահերը: Ֆինանսների բացակայության պատճառով տեղական հանրաքվե նշանակելուց հրաժարվելու պրակտիկան առկա է ՀՀ-ում և նույնիսկ դարձել է սահմանադրական վերահսկողության օբյեկտ:

ՀՀ սահմանադրական դատարանի 2021 թվականի մայիսի 14-ի «Կոտայքի մարզի «Աբովյան» համայնքի ղեկավար Վահագն Գեվորգյանի, Կոտայքի մարզի «Ծաղկաձոր» համայնքի ղեկավար Արթուր Հարությունյանի եվ Կոտայքի մարզի «Նոր հաճն» համայնքի ղեկավար Գագիկ Մաթեվոսյանի դիմումի հիման վրա՝ «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասի, 6-րդ հոդվածի 2-րդ մասի եվ 8-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» կայացված ՍԴՈ-1593¹ որոշմամբ սահմանադրական դատարանն անդրադաձել է հետևյալ հարցադրումներին.

1) արդյոք Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում համապատասխան համայնքի տեղական ինքնակառավարման որևէ մարմնի կողմից տեղական հանրաքվե նախաձեռնելու հնարավորություն չնախատեսելը չի հանգեցնում Սահմանադրության 190-րդ հոդվածով ամրագրված համայնքների միավորման կամ բաժանման գործընթացում Ազգային ժողովի կողմից համապատասխան համայնքի կարծիքը լսելու պահանջի

¹ Աղբյուր՝ <https://concourt.am/decisions/cc-decision/?year=2021>

խախտման.

2) արդյոք Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի կողմից տեղական հանրաքվեի դրվող հարցն ստանալուց հետո տեղական հանրաքվեի նշանակումը ֆինանսական միջոցների բացակայության հիմքով համայնքի ղեկավարի կողմից մերժման ենթակա լինելու վերաբերյալ կարգավորումը չի հանգեցնում Սահմանադրության 190-րդ հոդվածով ամրագրված՝ համայնքների միավորման կամ բաժանման գործընթացում Ազգային ժողովի կողմից համապատասխան համայնքի կարծիքը լսելու պահանջի խախտման.

3) արդյոք համայնքի բյուջեում համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության կամ այդ միջոցների անբավարարության դեպքում համապատասխան ծախսերի՝ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարում չնախատեսելը չի հանգեցնում Սահմանադրության 190-րդ հոդվածով ամրագրված՝ համայնքների միավորման կամ բաժանման գործընթացում Ազգային ժողովի կողմից համապատասխան համայնքի կարծիքը լսելու պահանջի խախտման:

Որոշման 4.2 կետում Ղատարանը նշել է. «Սահմանադրությունը հնարավոր է համարում համայնքների միավորումը կամ բաժանումը, որն իրականացվում է բացառապես Կառավարության նախաձեռնությամբ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքով, որի հիմքում . . . կարող են դրվել բացառապես հանրային շահերը: Այսինքն՝ համայնքների միավորման կամ բաժանման բոլոր դեպքերում անհրաժեշտ է պատշաճ ընթացակարգերի միջոցով վեր հանել այն հանրային շահերը, որոնք կպայմանավորեն նման փոփոխությունների կատարումը՝ բացառելով համայնքների միավորման կամ բաժանման հիմքում ցանկացած այլ շահ դնելը»: Սահմանադրական դատարանն ընդգծել է նաև, որ Սահմանադրության 190-րդ հոդվածի երկրորդ նախադասությամբ ամրագրված կարգավորումն ուղղված է համայնքների միավորման կամ բաժանման հարցը լուծելու իրավասություն ունեցող

մարմնի և այդ գործընթացում անմիջական շահագրգռվածություն ունեցող համայնքների միջև երկխոսության ապահովմանը, ինչը հնարավորություն է տալիս համայնքների համար հիմնարար նշանակություն ունեցող այդ հարցի վերաբերյալ որոշում կայացնելիս ունենալ նաև նրանց կարծիքը:

Սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև այն հարցին, թե ի՞նչ եղանակներով պետք է ապահովվի համայնքների՝ լսված լինելու իրավունքի իրացումը: Նշված հարցի կապակցությամբ Ղատարանը նշում է, որ «օրենսդրական կարգավորումները պետք է կառուցվեն այն տրամաբանությամբ, որ գործնականում ապահովեն Սահմանադրության 190-րդ հոդվածով ամրագրված պահանջի կատարումը՝ շահագրգիռ համայնքներին հնարավորություն տալով առավել օբյեկտիվ ներկայացնել իրենց կարծիքը: Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով սահմանադրական վերը նշված կարգավորումները և տեղական հանրաքվեի՝ որպես համայնքների կարծիքը վեր հանելու եղանակի բացառիկ արդյունավետությունը, գտնում է, որ հաշվի առնելով առանձին իրավիճակների առանձնահատկությունները՝ կոնկրետ դեպքում համայնքների օբյեկտիվ կարծիքը վեր հանելու արդյունավետ այլ եղանակների բացակայության պայմաններում համայնքի կարծիքը պարզելու նպատակով պետք է ապահովվի տեղական հանրաքվեի անցկացումը: Ընդ որում, այդ գործընթացին վերաբերող կարգավորումները պետք է ունենան այնպիսի բովանդակություն, որ Կառավարության կողմից համայնքների միավորման կամ բաժանման վերաբերյալ օրենսդրական նախաձեռնության դեպքում համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական խորհրդատվական հանրաքվեն գործնականում հնարավոր լինի անցկացնել: Այս կապակցությամբ պետության պարտականությունն է համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ համայնքի կարծիքը տեղական հանրաքվեի միջոցով արտահայտելու իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կազմակերպչական կառուցակարգերի և ընթացակարգերի ամրագրումը:»:

Վերը նշված և այլ իրավական դիրքորոշումների հիման վրա Սահմանադրական դատարանը որոշել է.

1. «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասը, 6-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով չեն ապահովում համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ համայնքի կարծիքը տեղական հանրաքվեի միջոցով արտահայտելու իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, ճանաչել Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ նույն օրենքի 7.1-ին հոդվածով սահմանված կարգով նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի կողմից տեղական հանրաքվեի դրվող հարցն ստանալուց հետո տեղական հանրաքվեի նշանակումն անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության հիմքով համայնքի ղեկավարի կողմից մերժման ենթակա լինելու մասով, ճանաչել Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին հակասող և անվավեր:

3. «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակարգային առումով փոխկապակցված նույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը՝ համայնքի բյուջեում համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության կամ այդ միջոցների անբավարարության դեպքում համապատասխան ծախսերը պետական բյուջեի միջոցների հաշվին կատարելը չնախատեսելու մասով, ճանաչել Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին հակասող և անվավեր:

Մեկ այլ լուրջ խնդիր է հենց քաղաքացիական նախաձեռնության իրականացման կառուցակարգը: Քաղաքացիական նախաձեռնության շրջանակում, որպես քաղաքացիական նախաձեռնությանը քաղաքացիների մասնակցության հաստատում, Օրենքը դիտարկում է ստորագրահավաքի ցանկացած եղանակ՝ հնարավորություն ընձեռելով ստեղծելու ստորագրահավաքի հստակ կառուցակարգ (ավանդական (թղթային) կամ էլեկտրո-

նային կամ որևէ այլ): Համաձայն «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի, որը սահմանում է ստորագրահավաքի մանրամասն ընթացակարգ, ստորագրահավաքն իրականացվում է տեղում (օրենքը սահմանում է կոնկրետ վայրեր, որտեղ կարող է իրականացվել ստորագրահավաք) ստորագրելու միջոցով՝ լրացնելով համապատասխան ձևաթղթեր, կամ էլեկտրոնային եղանակով (Օրենքի 13-րդ հոդված): Տեղում ստորագրելու դեպքում ձևաթղթերում լրացվում են ստորագրողի անձնագրային տվյալները, ձևաթուղթը ստորագրվում է տվյալ քաղաքացու կողմից և վերադարձվում ստորագրահավաք իրականացնող անձին (ստորագրահավաքը տեղում իրականացվում է նախաձեռնող խմբի ներկայացուցչի կողմից՝ համապատասխան հանրային ծառայողի պարտադիր մասնակցությամբ, ինչպես նաև նոտարների կողմից՝ նոտարական գրասենյակներում), իսկ էլեկտրոնային ձևաչափով ստորագրություններ հավաքելու դեպքում էլեկտրոնային բլանկը ստորագրվում է էլեկտրոնային նույնականացման միջոցով:

Վերոհիշյալի կապակցությամբ, ցավոք, խնդիրներ կան ստորագրահավաքի թե՛ առաջին, թե՛ երկրորդ եղանակների հետ:

Նախ՝ Օրենքն անհարկի սահմանափակումներ է սահմանում ստորագրահավաքի կազմակերպման վայրերի վերաբերյալ (համայնքապետարանում, բազմաբնակավայր համայնքներում՝ վարչական ղեկավարների նստավայրերում, Երևանում՝ վարչական շրջանների ղեկավարների նստավայրերում), ինչպես նաև ստորագրահավաքի գործընթացի իսկության համար պատասխանատու հանրային ծառայողի պարտադիր ներկայությունը: Ակնհայտ է, որ նման սահմանափակումները կարող են մեծապես խոչընդոտել քաղաքացիական նախաձեռնության իրավունքի իրականացմանը և այս ինստիտուտի հետագա կայացմանը Հայաստանում: Բացի այդ, քաղաքացիների ստորագրահավաքի, իսկության ստուգման և ստորագրությունների հաստատման ավանդական մեթոդները շատ աշխատատար և ծախսատար գործընթացներ են քաղաքացիական նախաձեռնության իրականացման համար: Ավելին, դրանց անարդյունավետությունը ունակ է կասկածի տակ դնել քաղաքացիական նախաձեռնության իրավունքի իրացմանն ուղղված ողջ գործընթացը: Այս տեսանկյունից, արդեն ստորագրահավաքի փուլում օրենսդիրի՝ ներկայացված ստոր-

րագրությունների իսկությունն ու վավերականությունն ապահովելու որոշակի երաշխիքներ տալու ցանկությունը հասկանալի է՝ սահմանելով այնպիսի «սահմանափակումներ», ինչպիսիք են ստորագրահավաքի հատուկ վայրերը, պատասխանատու անձի առկայությունը, որն, ըստ էության, հաստատում է իր ներկայությամբ ստորագրող քաղաքացու ստորագրության իսկությունը: Միևնույն ժամանակ, նման սահմանափակումների համաչափությունը վիճելի է: Մեր կարծիքով, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման ժամանակակից պայմաններում այս ինստիտուտի կիրառումը կարելի է կազմակերպել շատ ավելի հեշտ և արդյունավետ՝ քննարկելով քաղաքացիական նախաձեռնության զարգացման հեռանկարները էլեկտրոնային ժողովրդավարության զարգացման համատեքստում, հատկապես տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակով, որտեղ դա շատ ավելի հեշտ է անել: Համաշխարհային հարթակում էլեկտրոնային ժողովրդավարության հիմնական նպատակը չի հանգում նրան, որ ստիպել քաղաքացիներին օգտվել տեղեկատվական տեխնոլոգիաներից: Նրա նպատակն է օգտագործել տեխնոլոգիաները՝ բարելավելու մասնակցությունը և ժողովրդավարական կառավարումը, ինչպես նաև ընդլայնել մասնակցության հնարավորությունը, այդ թվում՝ ինքնակառավարման մեջ:

Էլեկտրոնային ժողովրդավարության հիմնախնդրի վերաբերյալ արմատական մոտեցումը ենթադրում է քաղաքացիների կողմից կառավարության որոշումների ընդունումը (օրենքի ընդունում, էլեկտրոնային հանրաքվեներ) տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ: Համաձայն այս տեսության՝ տեղեկատվական տեխնոլոգիաները կօգնեն աստիճանաբար անցում կատարել ներկայացուցչական ժողովրդավարությունից դեպի ուղղակի ժողովրդավարություն, որտեղ քաղաքացիները չեն ընտրի քաղաքական գործիչներին, այլ անմիջականորեն կմասնակցեն պետական քաղաքականության իրականացմանը՝ կոնկրետ հարցեր որոշելու միջոցով (օրինակ՝ հաստատել կամ մերժել պետական բյուջեն, նշանակել կամ չնշանակել պաշտոնատար անձին և այլն): Եվ այս ամենը կարելի է անել ուղղակիորեն համացանցի միջոցով, այլ ոչ թե ընտրելով որոշակի անձանց, որոնց

որոշումների կայացումը հնարավոր չէ վերահսկել կամ կանխատեսել ապագայում: Ասվածի լույսի ներքո Ժ.Ռուսոն պնդում էր, որ ժողովրդավարությունն անհամատեղելի է ներկայացուցչական ինստիտուտների հետ, քանի որ ժողովրդի գերագույն իշխանությունն անօտարելի է և անփոխարինելի¹:

Ժամանակակից աշխարհում էլեկտրոնային ժողովրդավարության կիրառումը տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման շրջանակներում թույլ է տալիս խնայել ինչպես ժամանակը, այնպես էլ նյութական ռեսուրսները քաղաքացիների և պետության, բնակիչների և համայնքի հարաբերություններում և գալիորեն մեծացնում է քաղաքացիների մասնակցության մակարդակը ժողովրդավարական ինստիտուտների գործունեությանը, որոնց դրսևորումներից մեկը քաղաքացիական նախաձեռնությանը մասնակցելու նպատակով էլեկտրոնային եղանակով ստորագրահավաքն է: Սակայն այստեղ ևս խնդիրները շատ են: Այսպես, օրենքի ներկայիս տարբերակը ճանաչում է էլեկտրոնային ստորագրության միջոցով նույնականացումը որպես էլեկտրոնային ձևով քաղաքացիական նախաձեռնությանը միանալու միջոց: Ներկայումս Հայաստանի ողջ բնակչությունը չէ, որ ունի նույնականացման քարտ, և նույնականացման քարտ ունեցողների միայն մի մասն ունի էլեկտրոնային ստորագրություն, ինչը թույլ է տալիս պնդել, որ հայկական իրողություններից ելնելով նախաձեռնությանը միանալու էլեկտրոնային եղանակը գործնականում հնարավորություն է տալիս միայն քիչ թվով քաղաքացիների: Սակայն, հետագայում վերը քննարկված խնդիրների լուծման այս մեթոդը մեր կողմից դիտվում է իբրև ամենաօպտիմալը:

¹ Руссо Ж.Ж. Об общественном договоре, или Принципы политического Права. Книга 2. Глава 1, URL: <http://lib.ru/FILOSOF/RUSSO/prawo.txt>

Գլուխ 3.
ՀԱՄԱՅՆՔԸ ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԻՐԱՎԱՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏ

3. 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՔԱՔԱՑԻԱԿԱՆ
ԻՐԱՎԱՍՈՒԲՅԵԿՏՈՒԹՅՈՒՆԸ

Տեղական ինքնակառավարումը ՀՀ սահմանադրական կարգի կարևորագույն շերտերից մեկն է, որը միաժամանակ ՀՀ սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների **իրավունքն ու կարողությունն է՝** համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը: Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացումը և կայուն գործունեությունն անհնար է պատկերացնել առանց դրա համար անհրաժեշտ նյութական-ֆինանսական հիմքի առկայության, ինչն էլ ենթադրում է տեղական ինքնակառավարման մարմինների ակտիվ մասնակցությունը քաղաքացիական իրավունքի նորմերով կարգավորվող գույքային և անձնական ոչ գույքային իրավահարաբերություններին: Տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ղեկավարի և ավագանու փոխգործակցության արդյունքում որոշվում են համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի տնօրինման, տիրապետման և օգտագործման հետ կապված հարցերը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16-րդ և 18-րդ կետեր):

Տեղական ինքնակառավարումը իրականացվում է համայնքներում, իսկ վերջիններս հանրային իրավունքի իրավաբանական անձինք են («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետ և 4-րդ հոդվածի 3-րդ կետ): Համայնքի՝ հանրային իրավունքի իրավաբանական անձ հանդիսնալու գաղափարը ՀՀ օրենսդրության մեջ ներմուծվել է 2015 թվականին ՀՀ Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունների արդյունքում, որի 180-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսվեց,

որ «Համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է»։ Այս եզրույթը նախկինում երբևէ չի կիրառվել հայրենական իրավական համակարգում, իրավական մշակույթում և, ցավոք, նաև իրավագիտական հետազոտություններում¹։ Չնայած որոշ հայ տեսաբանների կողմից այս տերմինի ներդրումը քննադատության է արժանացել՝ այն համարելով պայմանական հասկացություն, որը որպես այդպիսին չի կարող որոշել առանձին կազմակերպությունների իրավական կարգավիճակը², սակայն հարկ է նախ քննարկել, թե ինչ է նշանակում հանրային իրավունքի իրավաբանական անձ եզրույթը համայնքի իրավական կարգավիճակի և իրավասուբյեկտության տեսանկյունից։ Մասնագիտական գրականության մեջ համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ դիտարկելու վերաբերյալ գաղափարներ ներկայացվել են շատ տեսաբանների կողմից, սակայն հանրային իրավունքի իրավաբանական անձանց նման լայն կազմ առաջին անգամ առաջարկվել է Վ. Ե. Չիրիկինի կողմից³։ Եվ եթե մասնագիտական գրականության մեջ տեսաբանները տարբեր տեսակետներ են ներկայացնում հանրային իրավունքի իրավաբանական անձանց առանձնացման անհրաժեշտության վերաբերյալ, ապա որոշ երկրներ արդեն վաղուց ընտրել են հարցի լուծման այդ տարբերակը։ Այսպես Վրաստանում դեռևս 1999 թվականին ըն-

¹ Իրավաբանական անձնաց մասնավորի և հանրային դասակարգելու և վերջիններիս վերաբերյալ համապատասխան օրենսդրական կարգավորումներ նախատեսելու անհրաժեշտության վերաբերյալ համապատասխան առաջարկներ օրենսդրական փոփոխությունների ձևով պրոֆեսոր Վ. Դ. Ավետիսյանի կողմից ներկայացվել են դեռևս 2014 թվականին, այդ մասին առավել մասնարամասն Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների հայեցակարգ (գլուխ 5՝ Իրավաբանական անձինք), էջ 7 https://www.moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1656566421131_Irava_banakan_andinq.pdf (կայքը հասանելի է 05.03.2022 թվականի դրությամբ)։

² Տե՛ս **Թավադյան Ա.Ա.**, Հանրային իրավունքի իրավաբանական անձ. խնդրի լուծում, թե՞ նոր խնդիրներ, Պետություն և իրավունք N 1(89) 2021, էջ 4, http://www.yso.am/files/Arsen_Tavadyan_4-10.pdf (կայքը հասանելի է 05.03.2022 թվականի դրությամբ)։

³ Տե՛ս Лесков Ю. Г., К вопросу о реформировании института юридического лица: публично-правовой аспект, "Административное и муниципальное право" в рубрике "Проблемы административных и муниципальных правоотношений." № 2, 2012, էջ 20։

դրվել է «Հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասին» ամանձին օրենք¹, որի շրջանակներում տրվել է հանրային իրավունքի իրավաբանական անձանց հետևյալ հասկացությունը՝ համապատասխան օրենքի, Վրաստանի կառավարության որոշման կամ պետական կառավարման այլ մարմնի վարչական ակտի հիման վրա ստեղծված մարմին, որը պետության վերահսկողության ներքո իրականացնում է քաղաքական, պետական, սոցիալական, կրթական, մշակութային կամ այլ հանրային գործունեություն: Բացի այդ, «Տեղական ինքնակառավարման մասին» Վրաստանի օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները համարվում են հանրային իրավունքի իրավաբանական անձ²: Եվ եթե «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքում և ՀՀ Սահմանադրության մեջ հիշատակում կա միայն համայնքի՝ հանրային իրավունքի իրավաբանական անձ հանդիսանալու վերաբերյալ, իսկ դրանից բխող այլ իրավակարգավորումներ նախատեսված չեն, ապա Վրաստանի օրենսդրության մեջ այդ իրավակարգավորումները մանրամասն շարադրված են: Հանրային իրավունքի իրավաբանական անձանց ինստիտուտը տարածված է հատկապես եվրոպական երկրներում, և դրանցից շատերի օրենսդրությամբ համայնքները համարվում են հանրային իրավունքի իրավաբանական անձինք (օրինակ՝ Ֆրանսիա, Գերմանիա և այլն)³: Իսկ ինչ վերաբերում է Ռուսաստանի Դաշնությանը, ապա «Ռուսաստանի Դաշնությունում տեղական ինքնակառավարման կազմակերպման ընդհանուր սկզբունքների մասին» ՌԴ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք նշված օրենքի և մունիցիպալ կազմավորման կանոնադրության համաձայն օժտվում են իրավաբանական անձի իրավունքներով, կառավարչական գործառնություններ իրականացնելու համար ձևավորված քաղաքային պետական հիմնարկներ

¹ <https://matsne.gov.ge/ru/document/view/19204?publication=31> (կայքը հասանելի է 05.03.2022 թվականի դրությամբ):

² <https://matsne.gov.ge/ru/document/view/2244429?publication=60> (կայքը հասանելի է 05.03.2022 թվականի դրությամբ):

³ Տե՛ս **Чиркин Е. О.**, О понятии и классификации юридических лиц публичного права, Журнал российского права, 2010, №6, էջ 97:

են և ենթական են պետական գրանցման՝ որպես իրավաբանական անձինք: Այդ մարմինների՝ որպես իրավաբանական անձանց պետական գրանցման հիմք են հանդիսանում պետական հիմնարկի ձևով համապատասխան մարմին ստեղծելու և դրականոնադրությունը հաստատելու վերաբերյալ տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի որոշումները¹:

Պետք է նշել, որ հանրային իրավունքի իրավաբանական անձանց որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտ տարանջատելու կոնցեպտուալ գաղափարները սկիզբ են առել եվրոպական մայրցամաքից, և դա առաջին հերթին պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ երկրներում իրավունքի համակարգը բաժանվում է երկու մասի՝ հանրային և մասնավոր: Այսպես, Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ իրավաբանական անձինք բաժանվում են երկու խմբի՝ մասնավոր իրավունքի իրավաբանական անձինք և հանրային իրավունքի իրավաբանական անձինք: Վերջիններիս շարքին դասվում են ինքնին պետությունը, հանրային կազմակերպությունները և այլն: Հանրային իրավունքի իրավաբանական անձանց գոյությունը և դրանց կարգավիճակը օրենքով ամրագրելու անհրաժեշտությունը ժխտելու քաղաքականությունը տարվում է հիմնականում հետխորհրդային երկրներում, և դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով², սակայն ակնհայտ է, որ հանրային և մասնավոր իրավա-հարաբերությունների միախառնումը ժամանակակից իրավա-կարգավորման բնորոշ առանձնահատկություններից է³, բացի այդ բոլոր զարգացած երկրներում կողմերի անհավասարությամբ բնութագրող հանրային իրավահարաբերություններում առավել

¹ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_44571/ffe09de2cf9d04bbfa38f68ebad1ce3891eceda2/ (կայքը հասանելի է 17.04.2021 թվականի դրությամբ):

² Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Грицай Н.В.**, Юридические лица публичного права: Проблемы определения правового статуса, Вестник Самарской гуманитарной академии, Серия «Право», 2016, №1-2 (18), 99-100 էջեր:

³ Տե՛ս **Хабриева Т.Я.**, Конституционные основы, тенденции и проблемы развития российского законодательства: 20-летний опыт современного состояние // Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения. 2013. №4:

հաճախակի են ներթափանցում մասնավոր իրավունքին բնորոշ տարրեր, ինչը պայմանավորված է տնտեսական հարաբերությունների զարգացման և ազատականացման օբյեկտիվ ընթացակարգերով: Ուստի կարծում ենք, որ ՀՀ օրենսդրությամբ հանրային իրավունքի իրավաբանական անձանց ինստիտուտը ներդնելու անհրաժեշտությունը տարակարծությունների տեղիք չպետք է տա, և այդ շարքը չպետք է սահմանափակվի միայն համայնքներով:

Այն երկրներում, որտեղ հանրային իրավունքի իրավաբանական անձինք առանձնացված են որպես իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ, դրսևորվել են տարբեր մոտեցումներ դրանց հետ իրավակարգավորումների վերաբերյալ: Այսպես, երկրների մի մասում քաղաքացիական կամ առևտրային օրենսգրքերում սահմանափակվել են միայն հանրային իրավունքի իրավաբանական անձանց մասին հիշատակելով, երբեմն էլ հղում կատարելով իրավաբանական անձանց իրավական կարգավիճակը կարգավորող հոդվածներին (օրինակ՝ Գերմանիա), այլ երկրներում քաղաքացիական օրենսդրությամբ հանրային իրավունքի իրավաբանական անձանց առաձնացնում են որպես իրավունքի սուբյեկտ՝ զերծ մնալով դրանց վերաբերյալ այլ իրավակարգավորումներ նախատեսելուց (օրինակ՝ Հոլանդիա): Կարծում ենք, որ այս մոտեցումն առավել նպատակահարմար է, սակայն ի լրումն այդ իրավակարգավորման՝ կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) պետք է նախատեսել նաև, որ քաղաքացիական իրավունքը չի կարգավորում հանրային իրավունքի իրավաբանական անձանց հետ կապված խնդիրները, եթե դրանք կապված չեն քաղաքացիական իրավահարաբերություններին դրանց մասնակցելու հանգամանքով: *Ուստի, մեր կարծիքով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածում առանձին կետով պետք է նախատեսել, որ համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է, իսկ դրանից բխող իրավակարգավորումները պետք է նախատեսվեն համապատասխան օրենսդրությամբ:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածում՝ որպես քաղաքացիական իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ նշվում են Հայաստանի Հանրապետությունը և համայնքները: Սույն ու-

սումնասիրության շրջանակներում, պայմանավորված հետազատության առարկայով և նպատակներով, քննության առակա են դարձվել միայն քաղաքացիական իրավահարաբերություններին համայնքի մասնակցության, դրա իրավասուբյեկտության առանձնահատկությունները: Համայնքները քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցում են որպես հատուկ սուբյեկտներ և կարող են ունենալ միայն այնպիսի իրավունքներ և կրել այնպիսի պարտականություններ, որոնք նախատեսված են օրենքով¹: Ընդհանրապես քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտները քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցելու համար պետք է օժտված լինեն իրավասուբյեկտությամբ: Մասնագիտական գրականության մեջ իրավասուբյեկտությունը բնորոշվում է որպես օբյեկտիվ կատերգորիա, որը տրվում է իրավունքի սուբյեկտին մեկընդմիջ՝ անկախ քաղաքացիությունից, սոցիալական ծագումից, անձի ֆիզիկական տվյալներից, տարիքից, սեռից և նյութական աշխարհի այլ հանգամանքներից²: Քաղաքացիական իրավասուբյեկտությունն իր հերթին բաղկացած է իրավունակությունից ու գործունակությունից³: Քաղաքացիական իրավունակությունը օրենքով նախատեսված իրավունքներ կրելու և պարտականություններ ստանձնելու վերացական հնարավորություն է, քանի որ ընդհանուր է և պատկանում է բոլորին ու յուրաքանչյուրին⁴: Իսկ ինչ վերաբերում է գործունակությանը, ապա այն իրավունակության իրականացման իրավաբանորեն թույլատրված գործընթացն է⁵: Մասնագիտական գրա-

¹ Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս, 4-րդ հրատ., ԵՊՀ, Երևան., 2014, էջ 173:

² Տե՛ս **Тарасова А.Е.**, Правосубъектность граждан, Особенности правосубъектности совершеннолетних, их проявления в гражданских правоотношениях, Wolters Kluwer, М., 2008, с. 8:

³ Որոշ իրավագետներ իրավասուբյեկտություն և իրավունակություն տերմինները նույնացնում են և բնութագրում որպես իրավունքներ և պարտականություններ ունենալու ունակություն: Տե՛ս օրինակ **Венедиктов А.О.**, О субъектах социалистических правоотношений // Советское государство и право. 1995, № 6:

⁴ Տե՛ս **Братусь С.Н.**, Субъекты гражданского права, М., 1950, 5-6 էջեր:

⁵ Տե՛ս **Глинка В.И.**, Проблемы определения гражданской правосубъектности муниципальных образований. <https://pravoforyou.ru/statiy/88-pravosubektivnity.html> (կայքը հասանելի է 22.04.2022 թվականի դրությամբ):

կանության մեջ առաջարկվում է տարանջատել իրավասուբյեկտության մի քանի տեսակ՝ ընդհանուր, ճյուղային և հատուկ: Ընդհանուր իրավասուբյեկտությունը տվյալ քաղաքական և իրավական համակարգի շրջանակներում ընդհանրապես իրավունքի սուբյեկտ լինելու անձի հնարավորությունն է, իսկ ճյուղայինը՝ այս կամ այն իրավունքի ճյուղի սուբյեկտ լինելու անձի հնարավորությունն է: Իսկ ահա հատուկ իրավասուբյեկտությունը տվյալ իրավունքի ճյուղով կարգավորվող կոնկրետ իրավահարաբերությունների սուբյեկտ լինելու անձի հնարավորությունն է¹: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ կարող ենք պնդել, որ համայնքը բացի ճյուղային (քաղաքացիական) իրավասուբյեկտությունից, առաջին հերթին ձեռք է բերում ընդհանուր իրավասուբյեկտություն: Համայնքի քաղաքացիական իրավասուբյեկտության մասին խոսելիս կարող ենք համեմատություն անցկացնել իրավաբանական անձանց հետ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության և համայնքների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում կիրառվում են իրավաբանական անձանց մասնակցությունը սահմանող նորմերը, եթե այլ բան չի բխում օրենքից կամ տվյալ սուբյեկտների առանձնահատկություններից: Սակայն սա չի նշանակում, որ համայնքը վերածվում է մասնավոր իրավունքի իրավաբանական անձի: Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ օրենսդրությամբ համայնքները ճանաչվել են հանրային իրավունքի իրավաբանական անձ, որոնց նկատմամբ կիրառելի չեն մասնավոր իրավունքի իրավաբանական անձանց առանձնահատկություններով պայմանավորված օրենսդրական կարգավորումները: Ի տարբերություն իրավաբանական անձանց՝ համայնքը ձևավորվելուց հետո առաջին հերթին դառնում է հանրային իրավունքի սուբյեկտ և հետո միայն՝ որոշակի հանգամանքներով պայմանավորված՝ քաղաքացիական իրավունքի: Այսինքն, համայնքը քաղաքացիական իրավահարաբերություններին կարողանում է մասնակցել միայն իր հանրային կարգավիճակով պայմանավորված:

¹ Ст'ю Алексеев С.С., Общая теория права: учеб. - 2 изд., перераб. и доп. – М.: Проспект, 2009, 383-384 էջեր:

Այժմ անդրադառնանք համայնքի քաղաքացիական իրավասուբյեկտության տարրերին առանձին-առանձին: Այսպես, քաղաքացիական իրավունքի դոկտրինան առանձնացնում է իրավունակության ընդհանուր և հատուկ տեսակները¹: Քաղաքացիներն օժտված են բոլորի համար միատեսակ իրավունակությամբ, այսինքն՝ ընդհանուր իրավունակությամբ: Իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքում ունեն հատուկ իրավունակություն, ինչի հետևանքով այն կարող է ունենալ կանոնադրության մեջ նշված նպատակներից բխող քաղաքացիական իրավունքներ և քաղաքացիական պարտականություններ²: Նշվածը հիմք է տալիս պնդելու, որ ընդհանուր իրավունակությունն անձին հնարավորություն է տալիս մասնակցելու ցանկացած քաղաքացիական իրավահարաբերությունների, իսկ հատուկ իրավասունակության դեպքում անձը կարող է ունենալ միայն այն քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները, որոնք բխում են դրա գործունեության նպատակներից, որոնց հասնելու համար այն ստեղծվել է: Այսինքն՝ հատուկ իրավասուբյեկտությամբ օժտված սուբյեկտների մասնակցությամբ քաղաքացիական իրավահարաբերությունների շրջանակը սահմանափակ է: Գործունեության նպատակները դառնում են այդ անձի քաղաքացիական իրավունակության սահմանների չափորոշիչը: Սակայն մասնագիտական գրականության մեջ բացի ընդհանուր և հատուկ իրավունակությունից առանձնացվում է նաև բացառիկ իրավունակությունը, ինչը ենթադրում է, որ իրավաբանական անձն իրավասու է իրականացնելու միայն գործունեության կոնկրետ տեսակներ՝ գործարարական գործունեության այլ տեսակներ իրականացնելու արգելքով³:

¹ Տե՛ս **Суханов Е.А.**, Российское гражданское право: Учебник. В 2 томах, Т. I. - 2-е изд., стереотип., Статут, М., 2011, 189-191 էջեր http://www.consultant.ru/edu/student/download_books/book/sukhanov_ea_rssijskoe_grazhdanskoe_pravo_tom1/ (կայքը հասանելի է 01.05.2022 թվականի դրությամբ):

² Տե՛ս Гражданское право: Часть первая: Учебник для вузов / Под ред. В.П. Камышанского, Н.М. Коршунова, В.И. Иванова, Изд. Юнити Дана, М., 2012, 72-73 էջեր:

³ Տե՛ս **Тосунян Г., Викулин А.**, Исключительная правоспособность банка, Хозяйство и право, М., Изд. Дрофа, 2009, էջ 269:

Համայնքների իրավունակության վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ տարբեր մոտեցումներ են ձևավորվել: Այսպես, Ե.Ա. Սուխանովը գտնում է , որ պետության և համայնքների քաղաքացիական իրավունակությունը հատուկ է, ինչի արդյունքում հեղինակը քաղաքացիական իրավունքի այդ երկու սուբյեկտներին անվանում են հանրային-իրավական կազմավորումներ, որոնց պատկանում են միայն այն իրավունքներն ու պարտականությունները, որոնք համապատասխանում են դրանց գործունեության նպատակներին և հանրային հետաքրքրություններին¹

Ե.Լ. Սլեպնովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքը քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցում է միայն իր իրավասությունների շրջանակներում, համայնքի իրավունակությունը անվանում է *գործառույթային*, այսինքն՝ այն բխում է բնակչության պահանջմունքների բավարարման համար համայնքի՝ տեղական և պետական շահերի ապահովման և ինտեգրման առանձնահատուկ գործառույթներից²: Նշված հեղինակի կողմից ձևակերպված գործառույթային իրավունակությունը որոշակի նմանություններ ունի հատուկ իրավունակության հետ և կարելի է ընդունել որպես վերջինիս տարատեսակ: Հաշվի առնելով համայնքի առանձնահատկությունները՝ իրավաբանական անձանց հատուկ իրավունակությունը վերափոխվում է գործառույթայինի, որն ունի որոշակի առանձնահատկություններ՝ պայմանավորված համայնքի՝ որպես քաղաքացիական իրավունքի առանձին սուբյեկտի յուրահատկություններով: Ինչպես արդեն նշել ենք, համայնքի մասնակցությամբ քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորման ժամանակ կիրառվում է իրավաբանական անձանց նվիրված ՀՀ քաղաքացիական օրենսդրության նորմերը, սակայն հաշվի առնելով այդ իրավահարաբերությունների սուբյեկտային կազմի առանձնահատկությունները: Այսինքն, այդ ժամանակ հաշվի են առնվում համայնքի գործունեության առարկայով կամ բնույթով պայմանա-

¹ Տե՛ս **Суханов Е.А.**, նշված աշխատությունը, էջ 287:

² Տե՛ս **Слепнев Е.Л.**, Право собственности муниципальных образований: Автореф. дисс. ... канд. юрид. наук. Екатеринбург, 2000, էջ 15:

վորված յուրահատկությունները:

Այժմ անդրադառնանք համայնքի իրավասուբյեկտության մյուս տարրի՝ քաղաքացիական գործունակության հետ կապված խնդիրների քննարկմանը: Այսպես, Օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասին համաձայն՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են զույքային և անձնական ոչ զույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում: Նույն հոդվածի 3-րդ մասին համաձայն՝ ... համայնքների իրավական ակտերով նախատեսված դեպքերում ու կարգով, նրանց հատուկ հանձնարարությամբ ու նրանց անունից կարող են հանդես գալ իրավաբանական անձինք և քաղաքացիները: Այսինքն, համայնքների քաղաքացիական գործունակությունը իրագործվում է տեղական ինքնակառավարման մարմինների, տարբեր իրավաբանական աձանց և քաղաքացիների միջոցով: Որպես կանոն, իրավունքի սուբյեկտները քաղաքացիական իրավունքներ են ձեռք բերում և քաղաքացիական պարտականություններ են ստանձնում, ինչպես նաև դրանք իրականացնում են սեփական գործողություններով, ինչը հիմք է տալիս պնդելու, որ իրավունքի այդ սուբյեկտներն օժտված են քաղաքացիական գործունակությամբ: Սակայն, ինչպես նշվում է քաղաքացիական իրավունքի գիտության մեջ քաղաքացիական իրավունքին բնորոշ է նաև քաղաքացիական իրավունքի սուբյեկտներին վերապահված իրավագործությունների իրագործման մեկ այլ հնարավորություն ևս. նրանք կարող են իրենց քաղաքացիական գործունակությունը կենսագործել դրա համար հատուկ լիազորված այլ անձանց միջոցով: Ըստ այդ էլ քաղաքացիական գործունակությունից բացի առանձնացվում է նաև սուբսիդիար գործունակություն կամ ինչպես նշել է Օ.Ա. Կրասավչիկովը, տրանսգործունակություն եզրույթը¹:

Սուբսիդիար գործունակությունը նշանակում է իրավասու անձի հնարավորությունը իրագործել այլ անձին վերապահված

¹ Ст'у Советское гражданское право: Учебник. В 2-х томах. Т. 1, Под ред. **О.А. Красавчикова**, 3-е изд., М., Высшая школа, 1985, էջ 72:

իրավունքները՝ վերջինիս շահերից ելնելով: Այս եզրույթի առավել ընդգրկուն մեկնաբանությունը տրվել է Օ.Ա. Կրասավչիկովի կողմից, ով տրանսգործունակությունը դիտարկել է ոչ միայն որպես այլ անձի կողմից իր գործողություններով այլ անձանց համար իրավունքներ և պարտականություններ առաջանցնելու հնարավորություն, այլև¹ այլ անձանց գործողությունների արդյունքում առաջացած իրավունքներն ու պարտականությունները ստանձնելու անձի հնարավորություն: Նշվածը հիմք է տալիս ենթադրելու, որ սուբսիդիար գործունակությունը կամ տրանսգործունակությունը համայնքի քաղաքացիական գործունակության բաղադրիչ է, իսկ տեղական ինքնակառավարման մարմինները համայնքի նկատմամբ օժտված են սուբսիդիար գործունակությամբ: Սակայն օրենսդիրը նախատեսել է այդ գործունակության իրագործման որոշակի պայմաններ, այն է՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները պետք է իրականացվեն իրենց իրավասության շրջանակներում: Քանի որ ՀՀ օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմինները չեն հանդիսանում իրավաբանական անձինք, ինչպես որ ՌԴ օրենսդրությամբ է նախատեսված, համայնքի համար իրավունքներ և պարտականություններ առաջացնելուն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները անմիջականորեն համարվում են համայնքի գործողություններ, որը դրա միջոցով իրագործում է իր քաղաքացիական գործունակությունը: Բոլոր դեպքերում, ինչպես նշված է Օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասում, շատ կարևոր է, որ տեղական ինքնակառավարման մարմինները գործեն իրենց իրավասության շրջանակներում: !!Վերջինիս՝ որպես իրավաբանական կատեգորիայի էությունը կայանում է նրանում, որ այն մի իրավական միջոց է, որը հնարավորություն է տալիս պարզել կոնկրետ մարմնի տեղն ու դերը կառավարչական գործընթացում՝ նրան վերագրելով կոնկրետ ծավալի հանրային գործառույթներ²: Համայնքի անունից քաղաքա-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 75:

² Տե՛ս **Балякина Т.М.**, Компетенция местного самоуправления: проблемы теории и правового регулирования: Дисс. ... д-ра юрид. наук, Саратов, 2007, էջ 107:

ցիական շրջանառությանը մասնակցելու տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը արտացոլում է այն գործառնության հնարավորությունների ծավալը, որը քաղաքացիական օրենսդրությամբ վերապահված է համայնքին: Այն, լինելով տեղական ինքնակառավարման մարմնի հանրային-իրավական կարգավիճակի տարր, օգտագործվում է համայնքի քաղաքացիական իրավունակության բովանդակությունը կազմող քաղաքացիական իրավունքների և պարտականությունների իրականացման նպատակով կոնկրետ իրավասությունները տեղական ինքնակառավարման մարմինների միջև բաշխելու համար: Հետևաբար, տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը պարունակում է լիազորությունների համակարգ, որոնք անհրաժեշտ են տեղական ինքնակառավարման առջև դրված խնդիրների իրականացման համար: Քաղաքացիական իրավահարաբերություններում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները հիմնականում նախատեսված են ՀՀ սահմանադրությամբ, Օրենսգրքով և «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքով:

Այժմ, փորձենք պարզել, թե համայնքը, մասնակցելով քաղաքացիական իրավահարաբերություններին, որ դեպքում տեղական ինքնակառավարման որ մարմնի միջոցով կարող է իրագործել իր քաղաքացիական գործունակությունը: Այսպես, համայնքի ավագանին համայնքի մասնակցությամբ քաղաքացիական իրավահարաբերություններում ունի հետևյալ իրավազորությունները՝

1. օրենքով սահմանված կարգով որոշում է կայացնում համայնքային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրման, վերակազմակերպման կամ լուծարման մասին («Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 15-րդ ենթակետ),

2. օրենքով սահմանված կարգով և դեպքերում հաստատում է համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ կառավարման մարմինների և վերստուգիչ մարմինների կազմերը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 17-րդ ենթակետ),

3. համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի սեփականություն հանդիսացող տարածքներում հաստատում է այն վայրերի ցանկը, որտեղ թույլատրվում է վաճառքի և վարձույթի նպատակով կայանել ավտոտրանսպորտային միջոցները («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 18.1 ենթակետ),

4. համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին (ներառյալ՝ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ՊՄԳ ծրագրով նախատեսված դեպքերում, բացառությամբ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերի), որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը: Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու դեպքում համայնքի ավագանու որոշման մեջ պետք է նշվեն նաև հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ ենթակետ),

5. որոշում է կայացնում վարկերի և օրենքով սահմանված կարգով այլ միջոցների ներգրավման վերաբերյալ («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 25-րդ ենթակետ):

Համայնքի մասնակցությամբ քաղաքացիական իրավահարաբերություններում համայնքի ղեկավարն օժտված է հետևյալ իրավագործություններով՝

1. համայնքային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման կամ լուծարման մասին որոշման նախագիծը ներկայացնում է ավագանու հաստատմանը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օ-

րենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետ)

2. համայնքային մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կոլեգիալ մարմինների և վերստուգիչ մարմինների կազմերի վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացնում է ավագանու հաստատմանը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 9-րդ ենթակետ),

3. համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16-րդ ենթակետ),

4. առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու կամ օգտագործման տրամադրելու մասին («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ ենթակետ),

5. ներկայացնում է համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետ),

6. օրենքով նախատեսված դեպքերում որպես համայնքի ներկայացուցիչ հանդես է գալիս դատարանում, ինչպես նաև իր իրավասության սահմաններում տալիս է դատարանում հանդես գալու լիազորագրեր («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 25.1 ենթակետ):

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք տարանջատել համայնքի գործունակության իրականացման երկու հիմնական ձև՝

1) տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով, որոնք քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցում են իրենց իրավասության շրջանակներում,

2) իրավաբանական անձանց և քաղաքացիների միջոցով, որոնք գործում են համայնքի անունից վերջինիս հատուկ հանձնարարության հիման վրա:

3.2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համայնքային սեփականությունը սեփականության ինքնուրույն տեսակ է: Այն տարբերվում է ինչպես պետական, այնպես էլ իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականությունից: Այն ոչ թե մասնավոր, այն հանրային սեփականություն է, քանի որ նրա սուբյեկտները՝ համայնքային կազմավորումները, հանդիսանում են հանրային-իրավական կազմավորումներ, քաղաքացիական իրավունքի սուբյեկտի հատուկ տարատեսակ, որոնք իրենց հիմնական գործունեությունը իրականացնում են հանրային իրավունքի շրջանակներում, իսկ քաղաքացիական շրջանառությամբ, որպես կանոն մասնակցում են հանրային գործունեության իրականացումն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով¹:

Համայնքային սեփականությունն ունի բավականին բարդ իրավական բնույթ, քանի որ սեփականության այդ տեսակի շուրջ քաղաքացիական իրավահարաբերությունները ծագում են բացառապես տեղական ինքնակառավարման բնագավառում, ինչի կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ ձևավորվել են տարբեր, երբեմն էլ իրար հակասող տեսակետներ: Այսպես, որոշ տեսաբաններ ընդգծում են համայնքային սեփականության տնտեսական բաղադրիչի կարևորությունը²: Այլ տեսաբաններ էլ հիմնավորում են համայնքային սեփականության իրավական բովանդակության առաջնահերթությունը³: Հեղինակների երրորդ խումբ էլ ապացուցում է, որ համայնքային սեփականության հիմքում ընկած են կյանքի որակի բարելավման ընդհանուր գաղափարի շուրջ համախմբված անհատների միավորման գործընթացում ձևավորված սոցիալական հարաբերությունները⁴:

¹ Տե՛ս **Բարսեղյան Ս.Կ.**, նշված աշխատությունը, էջ 365:

² Տե՛ս **Канаев Ю.Н.**, Муниципальные образования как субъекты гражданского права: монография. - М.: Юстицинформ, 2020, էջ 192:

³ Տե՛ս **Фоменко Т.О.**, Понятие и виды земельных участков муниципальной собственности: теоретический аспект, NovaUm.Ru. 2020. № 26, 48-50 էջեր:

⁴ Տե՛ս **Шаломенцева Е.Г.**, Некоторые аспекты правового регулирования процесса управления муниципальной собственностью, Конституционное и муниципальное право. 2019. № 10, 38-40 էջեր:

Համայնքային սեփականություն իրավական բնորոշումն առաջին հերթին ամրագրված է ՀՀ սահմանադրության մեջ, որի 184-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համայնքն ունի հողի, ինչպես նաև այլ գույքի նկատմամբ սեփականության իրավունք: ՀՀ սահմանադրության նշված հոդվածի հիման վրա էլ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանվել է, որ համայնքն ունի հողի, գույքի, ինչպես նաև գույքային այլ իրավունքների նկատմամբ սեփականության իրավունք:

Համայնքային սեփականության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նաև Օրենսգրքով, որի 169-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է: Այսինքն, համայնքը ճանաչվում է համայնքային սեփականության սուբյեկտ: Մինևույն ժամանակ, համայնքային սեփականության վերաբերյալ որոշակի դրույթներ արտացոլվել են նաև միջազգային իրավունքում: Այսպես, ՀՀ-ի կողմից 2002 թվականի մայիսի 5-ին վավերացված Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի¹ 9-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինները իրավունք ունեն ազգային տնտեսական քաղաքականության շրջանակներում տնօրինելու համապատասխան սեփական ֆինանսավորման միջոցներ, որոնք նրանք ազատորեն կարող են օգտագործել իրենց լիազորությունների շրջանակում: Չնայած նշված իրավական նորմում ուղղակիորեն անդրադարձ չի կատարվում համայնքային սեփականությանը, սակայն ենթադրվում է, որ ֆինանսական միջոցներ հասկացությունը պետք է մեկնաբանել ավելի լայն՝ որպես ֆինանսական (դրամական) միջոցների, այլ նյութական ակտիվների և գույքային իրավունքների համախումբ:

Համայնքային սեփականության իրավունքի կապացույթամբ ծագող իրավահարաբերությունների կարգավորման ոլորտում առանցքային նշանակություն ունի նաև ՀՀ հողային օրենսգիրքը², որով սահմանվում է հողամասի հասկացությունը, սահմանա-

¹ ՀՀԱԳՆՊՏ 2012.12.28/14(22):

² ՀՀՊՏ 2001.06.15/17(149) Հոդ. 457:

զատվում է հողի նկատմամբ պետության և համայնքի սեփականության իրավունքը: Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով չփոխանցվող հողերի մոտավոր ցանկը, քանի որ այլ իրավական ակտերով կարող են նախատեսվել նման այլ հողատեսակներ ևս: Դա նշանակում է, որ պետությանը կամ համայնքին սեփականության իրավունքով պատկանող նման հողերի նկատմամբ չեն կարող կնքվել օտարման գործարքներ, ինչը փաստվում է նաև դատական պրակտիկայում: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանն իր դատական ակտերից մեկում անդրադառնալով Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին, նշել է, որ նշված հոդվածում թվարկված հողերը քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցելու սահմանափակումը նույն օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված այն արգելքներից է, որը տեղական ինքնակառավարման մարմիններին կաշկանդում է այլ անձանց սեփականության իրավունքով տրամադրել դրանք: Եթե քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերն ուսումնասիրելիս տեղական ինքնակառավարման մարմինը պարզում է, որ քաղաքացին կամ իրավաբանական անձը ցանկանում է սեփականության իրավունք ձեռք բերել բնակավայրում ընդհանուր օգտագործման հող սահմանված հողերի, օրինակ հրապարակի կամ պուրակի նկատմամբ, ապա վերջինս ՀՀ հողային օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արգելքի ուժով պարտավոր է մերժել այդ դիմումը նույն օրենսգրքի 60-րդ հոդվածի 6-րդ կետով այդպիսի հողերի նկատմամբ սահմանափակում նախատեսված լինելու պատճառաբանությամբ¹:

Համայնքային սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող տնօրինման, օգտագործման և տիրապետման հետ կապված իրավահարաբերությունները համապարփակ կարգավորման են ենթարկվում նաև «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը

¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0325/05/19 քաղաքացիական գործով 22.10.2021 թվականին կայացված որոշումը:

հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ¹, որով սահմանվում է պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը օտարելու, կառուցապատման և օգտագործման տրամադրելու կարգը, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

Համայնքային սեփականության իրավունքի հետ կապված կարևոր ենք համարում անդրադառնալ նաև դրա հատկանիշներին, սուբյեկտիվ և օբյեկտիվ առումով սեփականության իրավունքի հասկացությանը, բովանդակությունը կազմող իրավագործություններին, ինչպես նաև ծագման հիմքերին:

Պետք է նշել, որ համայնքային սեփականության առկայությունը համայնքի բարեհաջող գոյության և գործունեության կարևորագույն նախադրյալներից մեկն է, և այն բնութագրվում է հետևյալ հատկանիշներով՝

- համայնքում բնակվող բնակչության շահերի հետ անիմջական կապի առկայություն,
- իշխանության և անհատի միջև տնտեսական կապերի մարմնավորում,
- պատկանելիությունը հանրային սեփականության տեսակներին,
- համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության և աջակցության հիմնական գործիք հանդիսանալու հանգամանքը: Գ.Ն. Չերբատովի կարծիքով համայնքային սեփականության իրավունքը օբյեկտիվ առումով մունիցիպալ իրավունքի ճյուղ է, որն ընդգրկում է համայնքային սեփականության կապակցությամբ ծագող իրավահարաբերությունները կարգավորող իրավական նորմերը²: Համայնքի սեփականության իրավունքը սուբյեկտիվ առումով համայնքի՝ պետության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից երաշխավորված հնարավորությունն է օրենքով սահմանված շրջանակներում տիրապետել, օգտագործել և տնօրինել իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքի բնակչության կենսական պահանջ-

¹ ՀՀՊՏ 2001.04.28/12(144) Հոդ.304:

² Տե՛ս **Чиботарев Г.Н.**, Муниципальное право РФ: Учебно-методический комплекс. Тюмень, Изд-во ТГУ, 2001, էջ 91:

ների բավարարման, տեղական նշանակության հարցերի և օրենքով տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված այլ խնդիրների լուծման նպատակով¹: Այսպիսով, *սուբյեկտիվ առումով համայնքային սեփականության բովանդակությունն են կազմում համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման լիազորությունները* (Օրենսգրքի 163-րդ հոդվածի 1-ին մաս): Սակայն, որոշ տեսաբաններ գտնում են, որ համայնքի սուբյեկտիվ սեփականության իրավունքի բովանդակությունը տարբերվում է քաղաքացիական իրավունքի մյուս սուբյեկտներին պատկանող սեփականության սուբյեկտիվ իրավունքի բովանդակությունից՝ նշելով, որ այդ իրավազորությունները հիմնականում արտահայտվում են կառավարման ձևով²: Իսկ օրինակ՝ Վ.Կ. Անդրեևը որպես համայնքային սեփականության իրավունքի բովանդակության լրացուցիչ տարր առանձնացնում է նաև հսկողությունը³: Սակայն մեր կարծիքով, ինչպես սեփականության իրավունքի բովանդակությունն ընդհանրապես, այնպես էլ համայնքային սեփականության իրավունքի բովանդակությունը պետք է սահմանափակվի տիրապետման, տնօրինման և օգտագործման իրավազորություններով, իսկ նշված հեղինակների կողմից մատնանշված իրավազորությունները արդեն իսկ բխում են Օրենսգրքով նախատեսված երեք իրավազորությունների տրամաբանությունից: Սակայն պետք է նշել, որ համայնքային սեփականության բովանդակությունը կազմող այս երեք իրավազորությունները չունեն նույն նշանակությունը, ինչ մասնավոր սեփականության իրավունքի պարագայում: Բնականաբար դրանց միջև առկա են մի շարք տարբերություններ, որոնք կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խումբ տարբերությունները կապված են համայնքներին հավելյալ քաղաքացիաիրավական հնարավորությու-

¹ Տե՛ս **Камышанский А.В.**, Гражданско-правовое регулирование возникновения и осуществления права муниципальной собственности, Дис. ... канд. юрид. наук. К., 2009. էջ 8:

² Տե՛ս **Зинченко С., Корх С.**, Вопросы собственности: законодательство и практика, Хозяйство и право. - М., 2000, № 6. էջ 52:

³ Տե՛ս **Андреев В.К.**, О праве частной собственности в России (критический очерк). - М, Волтерс Клувер, 2007, էջ 22:

յուններ ընծեռելու, իսկ մյուսը՝ համայնքի հնարավորությունները մասնավոր սեփականության իրավունքի սուբյեկտների համեմատությամբ սահմանափակելու հետ: Համայնքին իր սեփականության տնօրինման բնագավառում առավել լայն հնարավորություններ ընծեռելու հանգամանքը պայմանավորված է համայնքի կողմից համայնքային կառավարչական հիմնարկներ ստեղծելու հանգամանքի հետ: Այսպես, «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի¹ համաձայն՝ հիմնարկն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որն ստեղծվում է տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման և քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցության ապահովման նպատակով: Այն իր իրավասության սահմաններում, համայնքի անունից, կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող: Հիմնարկի լիազորությունների իրականացման համար նրան ամրակցվում է որոշակի գույք: Այսպես, նշված օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հիմնարկի գույքը ձևավորվում է հիմնադրի կողմից նրա տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից: Հիմնարկին գույքը հանձնվում է իրավական ակտին համապատասխան, որը հաշվառվում է նրա հաշվեկշռում: Ընդ որում, հիմնարկի հիմնադիր հանդիսացող համայնքը իրավունք ունի ցանկացած ժամանակ հետ վերցնել իր կողմից հիմնարկին հանձնված գույքը: Սա նշանակում է, որ համայնքի գույքը կարող է հանձնվել համայնքային հիմնարկներին լրիվ տնտեսավարման կամ օպերատիվ կառավարման իրավունքով, որի վերաբերյալ իրավանդորմեր, սակայն, Օրենսգրքով նախատեսված չեն:

Երկրորդ խումբ տարբերությունները կապված են այն հանգամանքի հետ, որ համայնքը չի կարող ազատորեն տնօրինել իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը, իսկ օտարման դեպքում պետք է պահպանվեն օրենքով նախատես-

¹ ՀՀՊՏ 2001.12.03/37(169)Հոդ. .907:

ված մի շարք ընթացակարգեր: Օրինակ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համայնքի սեփականություն հանդիսացող հողերը կարող են օտարվել համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերով ու համայնքի հողերի օգտագործման սխեմայով սահմանված նպատակներին, հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերին համապատասխան և համայնքի տարածքում տնտեսական գործունեության խթանման համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով նախատեսված դեպքերում: Բացի այդ օրենքով նախատեսված են համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի օտարման կամ այլ քաղաքացիաիրավական գործարքների կնքման մի շարք ընթացակարգեր: Որոշակի առանձնահատկություններ են նախատեսված նաև համայնքային սեփականության գոյացման աղբյուրների կապակցությամբ: Այսպես, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 79-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի սեփականությունը գոյանում է պետական սեփականություն հանդիսացող գույքը համայնքի սեփականությանը հանձնելուց, համայնքային ենթակայության հիմնարկների և կազմակերպությունների գործունեությունից, համայնքի բյուջեի եկամուտներից և օրենքով չարգելված այլ ֆինանսական մուտքերից, համայնքի բյուջեի հաշվին ձեռք բերված գույքից, բարեգործական հատկացումներից, քաղաքացիների, հիմնարկների և կազմակերպությունների նվիրատվություններից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից: Ընդ որում, նվիրատվության կամ նվիրաբերության կարգով սեփականության իրավունքով գույք ձեռք բերելու համար նշված հոդվածով նախատեսված են մի շարք մանրամասն կարգավորումներ կապված այդ տեղեկատվությունը հրապարակելու հետ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով մանրամասն կարգավորվում է նաև համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի տնօրինման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը: Այսպես, օրենքի 59-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը ավագանուն է ներկայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման տարեկան ծրագիրը, դրան համապատասխան տնօրինում է հա-

մայնքի սեփականություն հանդիսացող գույքը, բացի այդ նույն օրենքի 38-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարը տնօրինում է համայնքի բյուջեի միջոցները, իսկ ինչ վերաբերում է հայանքի ավագանու լիազորություններին, ապա օրինակ՝ նշված օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ համայնքի ավագանին համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացնում համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օգտագործման տրամադրելու կամ օտարելու մասին, որում պետք է նշվեն օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը: Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն օտարելու դեպքում համայնքի ավագանու որոշման մեջ պետք է նշվեն նաև հողամասի գտնվելու վայրը, ծածկագիրը, մակերեսը, նպատակային նշանակությունը, հողատեսքը, գործառնական նշանակությունը: Տնօրինման իրավազորությունը գույքը օտարելու իրավասությամբ չի սպառվում, և ընդգրկում է գույքի փաստացի և իրավաբանական ձակատագիրը որոշելուն ուղղված մի շարք այլ գործարքներ կնքելու հնարավորությունը: Այսպես, օրինակ՝ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը կարող է տրամադրվել կառուցապատման իրավունքով, անհատույց (մշտական օգտագործման) իրավունքով կամ հանձնվել վարձակալության: Նշված հարաբերությունների համապարփակ կարգավորվում են «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ: Համաձայն այդ որոշման 38-րդ կետի՝ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրվում են համայնքային հիմնարկներին ու կազմակերպություններին, բարեգործական, հասարակական միավորումներին ու հիմնադրամներին՝ իրենց գործունեության ընթացքում ձեռնարկատիրության հետ չկապված գործունեություն իրականացնելու համար և օրենքով ու այլ նորմատիվ իրավական ակտերով նախա-

տեսված դեպքերում: Ընդ որում պետք է նշել, որ հողամասն անհատույց օգտագործման իրավունքով է տրամադրվում առանց մրցույթի: Իսկ ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ համայնքների վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողերը նշտական օգտագործման է տրամադրում *համայնքի ղեկավարը*՝ լիազորված պետական մարմնի գրավոր հայտի հիման վրա՝ հայտն ստանալու պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Իսկ ինչ վերաբերում է համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը վարձակալության տրամադրելուն, ապա ՀՀ կառավարության վերը նշված որոշման 43-րդ կետի համաձայն՝ հաղամասը վարձակալության է տրամադրվում ժամանակավոր օգտագործման համար, իսկ այդ ժամկետը չի կարող լինել 99 տարվանից ավելի, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի, որոնց վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25 տարի, ընդ որում, վարձակալը վարձակալության պայմանագիրը նախկին կամ այլ հավասար պայմաններով կրկին կնքելիս կամ տվյալ հողամասն օտարելու դեպքում ձեռք բերելիս նախապատվության իրավունք ունի: Համայնքային հողամասերը վարձակալության են տրամադրվում մրցույթով, բառացությամբ նշված որոշմամբ սահմանված դեպքերի: Համայնքային հողամասը վարձակալության իրավունքով տրամադրվում է ՀՀ քաղաքացիներին, ՀՀ և օտարերկրյա իրավաբանական անձանց, օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, ՀՀ-ում կացության հատուկ կարգավիճակ ունեցող անձանց:

Համայնքի սեփականության իրավունքի բովանդակության կազմում ընդգրկված լիազորություններից հաջորդը տիրապետման իրավունքն է, որը ինչպես քաղաքացիական իրավունքի մյուս սուբյեկտների պարագայում, համարվում է գույքի գտնվելը սեփականատիրոջ փաստացի իշխանության ներքո: Տիրապետման իրավազորության հետ կապված հատուկ առանձնահատկություններ նախատեսված չեն, այդ պատճառով այդ իրավազորությունն առանձին քննարկման առարկա չի դարձվել: Իսկ ինչ վերաբերում է համայնքային սեփականության օգտագործմանը, ապա հիմնական առանձնահատկությունն այն է, որ համայնքին

սեփականության իրավունքով պատկանող գույքը պետք է օգտագործվի բացառապես համայնքի առջև դրված խնդիրները, տեղական նշանակության հարցերը լուծելու նպատակով:

Օրենքով որոշակի առանձնահատկություններ են սահմանվել նաև համայնքի սեփականության կազմի առնչությամբ, քանի որ կան գույքի տարբեր տեսակներ, որոնք չեն կարող պատկանել համայնքին սեփականության իրավունքով, քանի որ դա չի բխում տեղական ինքնակառավարման իրականացման խնդիրներից: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի սեփականություն կարող են դառնալ համայնքի տարածքում գտնվող մասնապարտեզները, կոմունալ տնտեսության և այլ հաղորդակցության ուղիները, ջրնուղի, կոյուղու, ոռոգման, ջեռուցման, աղբահանության համակարգերը: Համայնքի սեփականություն կարող են դառնալ նաև համայնքի տարածքում գտնվող մասնագիտացված դպրոցները, ակումբները, մշակույթի տները, թատրոնները, կինոթատրոնները, թանգարանները, գրադարանները, ցուցահանդեսները, շուկաները, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունները և տրանսպորտային կազմակերպությունները, փողոցները, հրապարակները, կամուրջները, բազմաբնակարան շենքերի բնակարանները և ոչ բնակելի տարածքները, ընդհանուր օգտագործման տարածքները, գերեզմանատները, ինչպես նաև վարչական շենքերը, կրթական, մշակութային, մարզական և այլ շենքերն ու շինությունները, հիմնարկներն ու կազմակերպությունները, տրանսպորտային միջոցները, գազամատակարարման, էլեկտրամատակարարման ներհամայնքային ցանցերը, խմելու և ոռոգման ջրատարները, ինչպես նաև անշարժ ու շարժական այլ գույք:

Դրամական միջոցների նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի ծագման հետ կապված ևս ՀՀ օրենսդրությամբ նախատեսված են մի շարք կարգավորումներ: Համայնքը սեփականության իրավունքով դրամական միջոցներ կարող է ձեռք բերել օրինակ տեղական հարկեր և տուրքեր հավաքագրելու, համայնքային սեփականությունը հանդիսացող գույքը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու, ինչպես նաև բնույթտային միջոցներ ստանալու ճանապարհ

հով: Այսպես, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի¹ համաձայն՝ համայնքային բյուջեն բաղկացած է վարչական և ֆոնդային մասերից: Համայնքային բյուջեի վաչական մասը մուտքերի գծով ներառում է հարկային եկամուտները, տուրքերը, պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտներ: Իրենց հերթին հարկային եկամուտներն են տեղական հարկերը, այդ թվում՝ հողի հարկ, գույքահարկ, հյուրանոցային հարկ, տրանսպորտային միջոցների կայանատեղի հարկ, օրենքով պետական բյուջեին ամրագրվող այլ հարկատեսակներից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումները (յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանվող չափերով), ինչպես նաև հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժերը և տուգանքները: Տուրքերը ներառում են քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար գանձվող պետական տուրքը; նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար գանձվող պետական տուրքը և տեղական տուրքերը: Պաշտոնական դրամաշնորհները կազմված են պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներից, պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներից, պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներից՝ սուբվենցիաներից և այլ աղբյուրներից (հանրապետության այլ համայնքներ, միջազգային կազմակերպություններ, օտարերկրյա պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններ) ընթացիկ ծախսերի ֆինանսավոր-

¹ ՀՀՊՏ 1997.08.11/18:

ման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհները: Իսկ ինչ վերաբերում է այլ եկամուտներին, ապա դրանք են, օրինակ, համայնքի սեփականություն համարվող հողերի, ինչպես նաև համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարները, համայնքային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի վարձակալությունից եկամուտները, վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վարչական պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները և այլն:

Համայնքային սեփականության իրավունքը որոշակի առանձնահատկություններ ունի դրա ձեռքբերման եղանակների առումով, քանի որ Օրենսգրքով նախատեսված սեփականության իրավունքի ձեռքբերման մի շարք եղանակներ չեն կարող լինել համայնքային սեփականության իրավունքի ձեռքբերման հիմք, և հակառակը, որոշակի հիմքեր կիրառելի են միայն պետության և համայնքի սեփականության իրավունքի ծագման համար: Այսպես, Օրենսգրքի 218-րդ հոդվածը նախատեսում է հանրային գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման հնարավորություն: Նշված հոդվածի համաձայն՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ: Նշված իրավահարաբերությունների կարգավորման նպատակով 2006 թվականի նոյեմբերի 27-ին ընդունվել է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքը¹: Այդ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հասարակության և պետության կարիքների համար սեփականությունը կարող է օտարվել հոգուտ պետության, **համայնքի** կամ կազմակերպության: Ընդ որում, պետք է նշել, որ համայնքի համար սեփականության իրավունքի ձեռքբերման այս եղանակը միաժամանակ հանդիսանում է այլ անձանց սեփականության իրավունքի դադարման հիմք: Նշված օրենքով մանրա-

¹ ՀՀՊՏ 2006.12.20/64(519) Հոդ. 1306:

մասն կարգավորվում են հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման բացառիկ՝ գերակա հանրային շահի որոշման սկզբունքները, որոնցից ուսումնասիրության առարկայի համատեքստում կարելի է առանձնացնել, օրինակ, շրջակա միջավայրի պահպանության ապահովումը, կրթության, առողջության, սպորտի, ինչպես նաև գիտության կամ մշակույթի զարգացման ապահովումը, էներգետիկայի, հեռահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, ջերմամատակարարման, քաղաքաշինական, ընդերքի հետախուզման, ընդերքօգտագործման, տրանսպորտի, հաղորդակցության ուղիների կամ բնակավայրերի ենթակառուցվածքների զարգացման բնագավառում համապետական կամ համայնքային կամ միջհամայնքային կարևոր նշանակություն ունեցող ծրագրերի իրականացման ապահովումը:

Որպես համայնքի սեփականության իրավունքի ձեռքբերման մեկ այլ յուրահատուկ հիմք կարելի առանաձնացնել համայնքների խոշորացման արդյունքում բազմաբնակավայր համայնքին իրավահաջորդության կարգով միացող համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի փոխանցումը: Պետք է նշել որ դեռևս 2008 թվականից համայնքերի խոշորացման հարցն ընդգրկված է եղել ՀՀ կառավարության ծրագրերում և Կայուն զարգացման ծրագրերում¹ և արդյունքում ՀՀ-ում հետագայում սկսել է համայնքերի խոշորացման գործընթաց: «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի² համաձայն՝ համայնքը կարող է ընդգրկել մեկ կամ ավելի թվով բնակավայրեր: Մեկից ավելի բնակավայրերից բաղկացած համայնքը կոչվում է *բազմաբնակավայր համայնք*: Նույն օրենքի 5.1 հոդվածի համաձայն նոր համայնքներ կարող են ձևավորվել համայնքների միավորման կամ բաժանման միջոցով: Համայնքների միավորումը մեկից ավելի համայնքների միավորման միջոցով մեկ նոր համայնքի ձևավորումն է: Համայնքների բաժանումը մեկ համայնքի բաժան-

¹ Այս մասին առավել մանրամասն Տե՛ս Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ, ՀՀ կառավարության 2011 թ. նոյեմբերի 10-ի նիստի N 44 արձանագրային որոշման հավելված, էջ 17:

² ՀՀԱԺՏ 1995/9:

ման միջոցով մեկից ավելի նոր համայնքների ձևավորումն է: Միավորվել կարող են միևնույն մարզի ընդհանուր վարչական սահմաններ ունեցող համայնքները, ինչպես նաև սահմանակից մարզի ընդհանուր վարչական սահմաններ ունեցող համայնքները: Ստացվում է, որ համայնքների միավորման արդյունքում ստեղծված նոր բազմաբնակավայր համայնքը իրավահաջորդության կարգով դառնում է միացող համայնքների գույքի սեփականատերը, և հակառակը համայնքների բաժանման դեպքում նոր ստեղծվող համայնքը դառնում է բաժանվող համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի մի մասի սեփականատերը:

Համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքի տեսակներից հողի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման հիմքերը ևս տարբերվում են: Այսպես, ՀՀ հողային օրենսգրքի¹ 56-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համայնքների սեփականությանն են պատկանում տվյալ համայնքի սահմանագծի ներսում գտնվող հողերը, բացառությամբ պետությանը, քաղաքացիներին, իրավաբանական անձանց և սեփականության այլ սուբյեկտներին պատկանող հողերի: ՀՀ հողային օրենսգրքին ընդունվել է 2001 թվականի մայիսի 2-ին և դրա 56-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությամբ սահմանվել է, որ օրենսգրքին ուժի մեջ մտնելուց հետո չորս տարվա ընթացքում համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականության հողերը կառավարության որոշմամբ պետք է առանձնացվեին և հողամասի հատակագծի հիման վրա անհատույց սեփականության իրավունքով փոխանցվեին համայնքներին: Այսինքն, այդպես ի սկզբանե ձևավորվել է համայնքների սեփականության իրավունքը իր վարչական սահմանների ներքո գտնվող հողի նկատմամբ: Հողի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի ծագման մյուս հատուկ հիմքը ևս նախատեսված է Հողային օրենսգրքի նշված հոդվածով: Դրա 2-րդ կետի համաձայն՝ համայնքների զարգացման համար պետությունը կարող է իր սեփականության ներքո գտնվող հողերից համայնքներին անհատույց սեփականության իրավունքով հողամա-

¹ ՀՀՊՏ 2002.06.15/17 (149) Հոդ.457

սեր տրամադրել: Բացի այդ, Հողային օրենսգրքի նշված հոդվածի 3-րդ կետով նախատեսված է, որ համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացիներին, իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերից դրանց սեփականատերերի հրաժարվելու կամ նույն օրենսգրքի 102-րդ հոդվածով սահմանված հիմքերով հողամասի նկատմամբ իրավունքը դադարելու դեպքում այդ հողամասերն օրենսդրությամբ սահմանված կարգով անցնում են համայնքների սեփականությանը: Հողի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի ձեռքբերման վերը նշված բոլոր եղանակները ներհատուկ են միայն համայնքներին և քաղաքացիական իրավունքի մյուս սուբյեկտների մասնակցությամբ իրավահարաբերությունների դեպքում կիրառելի չեն:

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված են համայնքի կողմից գույքի այլ տեսակների նկատմամբ ածանցյալ եղանակով սեփականության իրավունքի ձեռքբերման որոշակի առանձնահատկություններ: Նշված իրավահարաբերությունները կարգավորվում են «Պետական գնումների մասի» ՀՀ օրենքով¹: Նշված օրենքով կարգավորվում են պատվիրատուների, այդ թվում համայնքի կողմից ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ ձեռք բերելու գործընթացի հետ կապված հարաբերությունները, սահմանվում այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքները և պարտականությունները: Օրենքով նախատեսված գնումներ կատարելու ընթացակարգերն են էլեկտրոնային աճուրդը, մրցույթը, գնանշման հարցումը և մեկ անձից գնումը: Ընդ որում, գնումների կատարման նախընտրելի ձևը մրցույթն է, եթե գնման առարկան ներառված չէ նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով (էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ), իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ նույն մասի 15-րդ կետով նախատեսված ցուցակում (փակ պարբերական մրցույթով ձեռք բերվող ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ):

Այսպիսով, անհուփելիվ վերոգրյալը կարող ենք փաստել, որ

¹ ՀՀՊՏ 2017.01.25/5(1280) Հոդ.57:

համայնքային սեփականությունը բազմաբովանդակ իրավական ինստիտուտ է, կարգավորվում է միաժամանակ իրավունքի մի քանի ճյուղերով: Քաղաքացիական իրավունքով համայնքային սեփականության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են այնքանով, որ համայնքը ճանաչվում է սեփականության իրավունքի սուբյեկտ, որոշվում է համայնքի սեփականության իրավունքի բովանդակությունը կազմող իրավագորությունների ծավալը, ինչպես նաև ամրագրվում են համայնքի սեփականության իրավունքի ձեռքբերման և դադարման որոշ հիմքեր:

3.3 ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քաղաքացիական իրավունքի հիմնական սկզբունքներից մեկը քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակիցների իրավահավասարության սկզբունքն է: Ըստ այդմ, քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտներն անկախ իրենց իրավական կարգավիճակի առանձնահատկություններից հավասար են օրենքի առջև: Սա էլ իր հերթին նշանակում է, որ քաղաքացիաիրավական պատասխանատվության սկզբունքները նույնպես քաղաքացիական իրավունքի բոլոր սուբյեկտների նկատմամբ պետք է կիրառվեն հավասարապես: Մասնագիտական գրականության մեջ քաղաքացիաիրավական պատասխանատվության վերաբերյալ արտահայտվել են տարբեր տեսակետներ: Դրանցից մեկի համաձայն՝ քաղաքացիաիրավական պատասխանատվությունը հարկադրական ներգործության ձև է, քաղաքացիաիրավական հատուկ սանկցիաների կիրառություն, որն իրավախախտի համար անշահավետ գույքային հետևանքներ առաջացնելուց բացի նրան հարկադրում է կատարել մինչև իրավախախտումը գոյություն չունեցող լրացուցիչ պարտավորություն¹: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ քաղաքացիաիրավական պատասխանատվությունն իրավախախտման հետևանք է, որն արտահայտվում է իրավախախտի գույքը բռնագանձելով և այն տուժողին հանձնե-

¹ Տե՛ս **Բարսեղյան Տ.Կ.**, նշված աշխատությունը, էջ 514:

լով, որն իրավախախտը չէր կորցնի իրավախախտում չկատարելու պարագայում¹: Այս հատկանիշի շնորհիվ էլ քաղաքացիաիրավական պատասխանատվությունն ունի փոխհատուցողական և գույքային-ներգործության բնույթ և հանդիսանում է քաղաքացիական իրավահարաբերության մեկ մասնակցի պատասխանատվությունը մյուսի նկատմամբ:

Քաղաքացիական իրավունքի գիտության մեջ ընդունված է տարբերել քաղաքացիաիրավական պատասխանատվության չորս ընդհանուր պայմաններ՝ *հակաօրինական վարքագիծ (գործողություն և անգործություն), վնասներ, պատճառական կապը վնասների և հակաօրինական վարքագծի միջև, պարտապանի մեղքը*: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ վերը նշված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է միայն այն դեպքում, երբ պարտավորությունը չկատարած կամ ոչ պատշաճ կատարած կողմից պետք է գանձվեն տուժողի կրած վնասները: Իսկ այն դեպքում, երբ պարտավորությունը չկատարած կողմից գանձվելու է օրենքով կամ պայմանագրով նախատեսված տուժանքը, պատասխանատվության հիմնական պայման է հանդիսանում խախտող կողմի մեղքը:

Լինելով քաղաքացիական իրավունքի սուբյեկտ՝ համայնքը կրում է ինքնուրույն քաղաքացիաիրավական պատասխանատվություն ինչպես պայմանագրային այնպես էլ արտապայմանագրային պարտավորությունների համար: Համայնքի քաղաքացիաիրավական պատասխանատվության ընդհանուր սկզբունքները նախատեսված են Օրենսգրքի 130-րդ հոդվածով, որի համաձայն՝ համայնքն իր պարտավորություններով պատասխանատու է իրեն պատկանող գույքով, իսկ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողի և այլ բնական պաշարների վրա բռնագանձում տարածել թույլատրվում է միայն օրենքով նախատեսված դեպքերում: Կարելի է ենթադրել, որ համայնքի պարտավորությունների համար բռնագանձում տարածելու առաջնային օբյեկտ հանդիսանում են համայնքային բյուջեի միջոց-

¹ Стів Гражданское право: учебник, в 3 т., Т. 1.-7-е изд., перераб. и доп., под ред. Ю.К. Толстого, М., Проспект, 2013, էջ 647:

ները¹:

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում է համայնքի քաղաքացիաիրավական պատասխանատվության երկու տեսակ՝ **պայմանագրային և արտապայմանագրային**: Քաղաքացիաիրավական պատասխանատվության առաջին տեսակը կարող է կիրառվել համայնքի կողմից կնքված որևէ գործարքով (մունիացիապալ գործարք) նախատեսված պարտավորությունների խախտման պարագայում, ընդ որում գործարքի կողմ է հանդիսանում ոչ թե որևէ տեղական ինքնակառավարման մարմինը, այլ հենց համայնքը: Համայնքի կարիքների բավարարման համար տարբեր գնումների իրականացման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով² և այլ իրավական ակտերով: Պետք է նշել, որ ի տարբերություն պետական կարիքների բավարարման համար իրականացվող գնումների գործընթացի, որի արդյունքում կնքված պետական պայմանագրի իրավական կարգավորմանն են նվիրված նաև Օրենսգրքի 540-550 հոդվածները, որոնց շրջանակներում կարգավորվում են նաև այդ պայմանագրերի խախտման արդյունքում կողմերի պատասխանատվության հետ կապված հարցերը, համայնքների կողմից իրականացված գնումների արդյունքում կնքված պայմանագրերի դեպքում նման առանձնահատուկ իրավակարգավորումներ նախատեսված չեն հատկապես պատասխանատվության առնչությամբ, իսկ եղած կարգավորումները սահմանափակվում են միայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի և «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի № 168-Ն որոշումն ուժը կորցրած ձանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ³: Մասնավորապես այդ որոշման մեջ որոշակի կարգավորումներ են նախատեսված պայմանագիր կնքած անձի (կատարողի) ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատար-

¹ St' u **Савинова С.Ю.**, Особенности гражданско-правовой ответственности муниципальных образований, Современные инновации №5(33) 2019, էջ 18:

² ՀՀՊՏ 2017.01.25/5(1280) Հոդ. 57:

³ ՀՀՊՏ 2017.05.22/31(1306) Հոդ. 487:

ման համար պայմանագրով տույժեր և տուգանքներ սահմանելու կարգի մասին: Այսպես, պայմանագրով նախատեսված տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0,5 տոկոսից, իսկ տույժերի չափը՝ 0,05 տոկոսից: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը պայմանագրով սահմանված ժամկետներում կատարելու, սակայն պատասխանատու ստորաբաժանման կողմից պայմանագրի արդյունքը չընդունվելու դեպքում: Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ: Իսկ գնումների դիմաց վճարումներ իրականացնելիս պայմանագրի կողմի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկման և վճարվելիք գումարների հետ հաշվանցման պարտականությունը դրված է պատվիրատուի վրա: Ինչպես նկատում ենք, նշված կառավարության որոշման շրջանակներում կարգավորված են միայն մատակարարի (կատարողի) կողմից պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կիրառվող քաղաքացիաիրավական պատասխանատվության հետ կապված խնդիրները, իսկ պատվիրատուի պատասխանատվության վերաբերյալ իրավակարգավորումներ նախատեսված չեն և չնայած որ տարբեր գնումների պայմանագրերի ուսումնասիրելիս կարելի է հայտնաբերել պայմանագրով նախատեսված պատվիրատուի պատասխանատվության մասին տարբեր կարգավորումներ, սակայն կարծում ենք, որ ինչպես կատարողի կամ մատակարարի պատասխանատվության դեպքում, այնպես էլ պատվիրատուի, տվյալ դեպքում համայնքի կամ պետության պատասխանատվության դեպքում պետք է լինեն հստակ կարգավորումներ: Նման մոտեցում է դրսևորվել ՌԴ համապատասխան օրենսդրության շրջանակներում: Այսպես, ռուսական իրավունքում համայնքի կողմից համայնքի կարիքների համար ապրանքների մատակարարման համար կնքված պայմանագիրը կոչվում է **մունիցիպալ պայմանագիր**: ՌԴ քաղաքացիական օրենսգրքի¹ 525-

¹ Гражданский кодекс РФ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_9027/ (կայքը հասանելի է 21.05.2022 թվականի դրությամբ):

534-րդ հոդվածներով մանարման կարգավորվում են պետական կամ համայնքային կարիքների համար ապրանքների մատակարարման առանձնահատկությունները, այդ թվում նման պայմանագրի խախտման արդյունքում կողմերի համար վրա հասնող բացասական հետևանքները: ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 526-րդ հոդվածի համաձայն՝ պետական կամ համայնքային կարիքների համար ապրանքների մատակարարման պետական կամ մունիցիպալ գործարքով (պետական կամ մունիցիպալ գործարք) մատակարարը (կատարող) պարտավորվում է ապրանքները մատակարարել պետական կամ համայնքային պատիրատուին կամ նրանց պահանջով երրորդ անձի, իսկ պետական կամ համայնքային պատվիրատուն պարտավորվում է ապահովել մատակարարված ապրանքների դիմաց վճարը: Այդ հարաբերությունների մասնավորապես նաև նման պայմանագրերի իրավական կարգավորման վերաբերյալ առավել մանրակրկիտ կարգավորումներ են նախատեսված «Պետական կամ համայնքային կարիքների բավարարման համար ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնումների բնագավառում պայմանագրային համակարգի մասին» ՌԴ օրենքով¹, որի 34-րդ հոդվածը վերաբերում է հենց նման գնումների արդյունքում կնքված պայմանագրի առանձնահատկություններին: Այս հոդվածի 4-9.1 կետերը վերաբերում են կողմերի պատասխանատվության հետ կապված հարցերի կարգավորմանը: Մասնավորապես, նախատեսվում է, որ պայմանագրում պետք է պարտադիր նախատեսվեն պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատվիրատուի և մատակակարի (կապալառու, կատարող) պատասխանատվության վերաբերյալ պայմաններ: Այնուհետև նախատեսվում են առանձին իրակակարգավորումներ և՛ մատակարարի, և՛ պատվիրատուի կողմից պայմանագրի պայմանների խախտման համար: Այսպես, պայմանագրով նախատեսված պարտականությունները պատվիրատուի

¹ Закон РФ «О контрактной системе в сфере закупок товаров, работ, услуг для обеспечения государственных и муниципальных нужд» http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_144624/c5cbc4acc59ffed792a3921dbc18900d2d0f7eb1/ (կայքը հասանելի է 21.05.2022 թվականի դրությամբ):

կողմից կետանցելու, ինչպես նաև պատվիրատուի կողմից պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու այլ դեպքերում մատակարարը (կապալառու, կատարող) իրավունք ունի պահանջել վճարել տույժեր: Տույժը հաշվարկվում է պայմանագրով նախատեսված պարտավորության կատարման ուշացման յուրաքանչյուր օրվա համար՝ սկսած պայմանագրով սահմանված պարտավորության կատարման վերջնաժամկետը լրանալու օրվան հաջորդող օրվանից: Նման տույժը պայմանագրով սահմանվում է ժամանակին չվճարված գումարից տույժերի վճարման օրը գործող Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական բանկի հիմնական դրույքաչափի մեկ երեքհարյուրերորդի չափով: Պատվիրատուի կողմից պայմանագրով նախատեսված պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար գանձվում են տուգանքներ, բացառությամբ պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման ուշացման: Տուգանքի չափը սահմանվում է պայմանագրով Ռուսաստանի Դաշնության Կառավարության կողմից սահմանված կարգով: Իսկ ինչ վերաբերում է մատակարարի կողմից պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու պարագայում վրա հասնող քաղաքացիաիրավական պատասխանատվությանը, ապա օրենքով նախատեսվում է, որ մատակարարի (կապալառուի, կատարողի) կողմից պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը (ներառյալ երաշխիքային պարտավորությունը) կետանցելու, ինչպես նաև մատակարարի (կապալառուի, կատարողի) կողմից պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու այլ դեպքերում պատվիրատուն մատակարարին (կապալառուին, կատարողին) ուղարկում է տույժերի (տուգանքներ, տույժեր) վճարման պահանջ: Տույժը հաշվարկվում է մատակարարի (կապալառուի, կատարողի) կողմից պայմանագրով նախատեսված պարտավորության ուշացման յուրաքանչյուր օրվա համար՝ սկսած պայմանագրով սահմանված պարտավորության կատարման վերջնաժամկետի ավարտին հաջորդող օրվանից, բացի այդ նշված կետով մանրամասն կարգավորվում է նաև տույժի հաշվարկման կազմը: Ինչպես նկատում ենք, ՌԴ օրենսդիրը, հաշվի առնելով այս հարա-

բերությունների կարևորությունը, պետական և համայնքային շահի, ինչպես նաև պայմանագրով կատարող կամ մատակարար հանդիսացող կողմի իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը, օրենքի մակարդակով կարգավորել է նման պայմանագրերից բխող պարտավորությունները պայմանագրի կողմերից ցանկացածի կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար վրա հասնող քաղաքացիաիրավական պատասխանատվության կիրառման հետ կապված խնդիրները: Անշուշտ, պետական և համայնքային կարիքների բավարարման նպատակով կատարվող գնումների ոլորտի մանրամասն համակարգումն ու կարգավորումը բխում է ինչպես պետության և համայնքի, այնպես էլ գործարարական գործունեությամբ զբաղվող և նման ծառայություններ մատուցող սուբյեկտների շահերից: Մասնագիտական գրականության մեջ այդ պայմանագրերի իրավական բնույթի վերաբերյալ միասնական մոտեցումները բացակայում են: Հայրենական իրավագիտության մեջ, օրինակ, կարծիք է հայտնվել, որ պետական կարիքների համար կնքվող պայմանագիրը կարելի է բնորոշել որպես պետական կարիքների բավարարման գործընթացում պետական պատվիրատուի կողմից պետության անունից նշված գործընթացում հաղթող մասնակցի հետ կնքվող պայմանագիր, որը կնքվում է սահմանված ընթացակրգի պահպանմամբ¹: Նշված հեղինակի կողմից կատարված վերլուծությունների արդյունքում հիմնավորվել է նաև, որ պետական կարիքների համար կնքվող պայմանագիրը պետք է դասել քաղաքացիաիրավական պայմանագրերի շարքին: Օրենսգրքի 541-րդ հոդվածում նշված պետական պայմանագիրը կարող է կնքվել միայն պետական կարիքների համար ապրանքների մատակարարման գործընթացը կազմակերպելու համար, իսկ համայնքային կարիքների համար նմանատիպ պայմանագրերի հետ կապված հարցերը Օրենսգրքի կարգավորման ոլորտից դուրս են մնացել և կարգավորվում են միայն «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության վերը նշված որոշ-

¹ Տե՛ս **Սահակյան Ն.**, Պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի իրավական բնութագիրը, Դատական իշխանություն, N11-12/233-234, 2018, էջ 53:

մամբ: Սակայն կարծում ենք, որ նման տարբերակված մոտեցում դրսևորելն արդարացված չէ, քանի որ ինչպես պետությունը, այնպես էլ համայնքները համարվում են քաղաքացիական իրավունքի հատուկ սուբյեկտներ: Բացի այդ կարծում ենք, որ ինչպես պետական գնումների, այնպես էլ համայնքային գնումների դեպքում պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում պետք է նախատեսվեն հստակ օրինական տուժանքներ (տույժեր, տուգանքներ), այլ ոչ թե դրանց նվազագույն չափեր, իսկ հաշվի առնելով նաև պայմանագրերի մյուս կողմի իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը նաև պատվիրատուի համար օրենքով նախատեսել պատասխանատվության հստակ միջոցներ: Ասվածը հիմնավորվում է նրանով, որ Օրենսգրքում 2017 թվականին (<< կառավարության նշված որոշումն ընդունելուց հետո) կատարված փոփոխությունների արդյունքում 372-րդ հոդվածով նախատեսվել է, որ պայմանագրով որոշված տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել << կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով¹: Իսկ նույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված է, որ այդ պայմանը խախտող համաձայնությունն առ ոչինչ է: <ետևաբար, որպեսզի տարբեր իրավական ակտերով նախատեսված իրավակարգավորումները հակասության մեջ չգտնվեն, և կողմերի իրավունքների պաշտպանությունն իրատեսական ու կանխատեսելի լինի, կարծում ենք, որ պատասխանատվության հետ կապված հարցերը պետք է կարգավորվեն կա՛մ Օրենսգրքով կա՛մ «Գնումների մասին» << օրենքով, ընդ որում այդ կարգավորումները պետք է վերաբերեն պայմանագրի երկու կողմերին էլ:

Իսկ ինչ վերաբերում է համայնքի արտապայմանագրային քաղաքացիաիրավական պատասխանատվությանը, ապա դրա կարգավորմանն է նվիրված Օրենսգրքի 1063-րդ հոդվածը, որի

¹ Գնումների գործընթացում, ինչպես տեսանք, կողմերի պատասխանատվության հետ կապված հարցերը կարգավորվում էին կառավարության որոշմամբ, իսկ Օրենսգրքում նշած նորմը չնայած որ դիսպոզիտիվ է, սակայն տուժանքի հաշվարկման այլ կարգ կարող է նախատեսվել միայն օրենքով:

համաձայն՝ քաղաքացուն կամ իրավաբանական անձին տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ)՝ ներառյալ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտ հրապարակելու հետևանքով, պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը: Ըստ վերը նշված նորմի՝ համայնքի պատասխանատվությունը վրա է հասնում ինչպես տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունների, այնպես էլ անգործության համար: Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով միջազգային պրակտիկան, մասնագիտական գրականության մեջ տեսակետ է արտահայտվել, որ պետական մարմնի անգործության տակ պետք է հասկանալ նաև այնպիսի գործողությունների չկատարումը, որոնք, գտնվելով տեղական ինքնակառավարման մարմնի գործառնությունների շրջանակում, պարտադիր են եղել նրանց կողմից կատարման, իսկ չկատարման կամ վատ հսկողության արդյունքում վնաս է պատճառվել քաղաքացիական իրավունքի մյուս սուբյեկտներին: Օրինակ, քաղաքապետարանի համապատասխան բաժնի վատ հսկողության կամ անփութ գործունեության արդյունքում առաջացած ճանապարհային փոսը պատճառ է հանդիսացել մեքենայի վթարման: Ներկայացնելով միջազգային փորձը՝ հեղինակը նշել է, որ օրինակ՝ Գերմանիայում դատարանները քնն

արկվող դեպքերում վնասի հատուցման իրավունք են տալիս տուժողներին: Դա արդարացված է նրանով, որ պետությունը և համայնքը քաղաքացիներից և իրավաբանական անձանցից գանձելով տարատեսակ հարկեր և տուրքեր, պարտավոր են հավաքված գումարները ծախսել ըստ նպատակի: Այս ինստիտուտի արդիականությունը և կարևորությունը այն է, որ դրանով ոչ միայն քաղաքացիաիրավական պաշտպանություն են ստանում հարկատուների շահերը, ավելի արդյունավետ և վերահսկելի է դառնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը, այլև օրենքի տնտեսական վերլուծության տեսնակյունից կատարվում է ծախսերի հավասար բաշ-

խում¹:

Մասնագիտական գրականության մեջ տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից պատճառված վնասն անվանում է իշխանության ակտերով պատճառված վնաս: Այդ վնասի համար պատասխանատվության կիրառման առանձնահատկությունը նրանում է, որ դրա հիմքերը ունեն որոշակի յուրահատկություններ: Այսպես, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) հակաօրինականությունը որոշվում է հանրային իրավունքի (օրինակ՝ վարչական, սահմանադրական), այլ ոչ թե քաղաքացիական իրավունքի նորմերով: Նման դեպքերում քաղաքացիաիրավական պատասխանատվության կիրառման համար քաղաքացիական իրավունքի նորմերի կիրառումը պայմանավորված է վնաս պատճառելու հանգամանքով: Այսինքն, քաղաքացիաիրավական պատասխանատվության կիրառման համար պետք է առկա լինեն հետևյալ երկու հանգամանքները՝ հակաօրինակ արարք կատարելը, ընդ որում այդ հակաօրինականությունը որոշվում է հանրային իրավունքի նորմերով, և վնաս պատճառելը²:

Քաղաքացիներին և իրավաբանական անձանց իշխանության ակտով պատճառված վնասի հատուցման կապակցությամբ ծագող իրավահարաբերությունների համալիր բնույթով պայմանավորված անհրաժեշտ է անդրադառնալ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման առանձնահատկությունների վերաբերյալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի³ 15-րդ գլխով նախատեսված կանոններին: Այսպես, նշված օրենքի 95-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման օրենքով սահմանված կարգով:

¹ Տե՛ս **Քեթմեզյան Գ.Հ.**, Արտապայմանագրային պարտավորություններ, Եր., ԵՊՀ իրատ., 2009, 78-79 էջեր:

² Տե՛ս **Кун А.П.**, Противоправность и вина в обязательствах по возмещению вреда, причиненного гражданину актами власти, Правоведение, 1984, №3, էջ 92:

³ ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.413

Նույն հոդվածով նախատեսված է նաև ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի համար պատասխանատվություն կրող սուբյեկտների շրջանակը՝ *Հայաստանի Հանրապետություն և համայնք*: Ընդ որում, քանի որ մեր ուսումնասիրության շրջանակներում քննարկում ենք համայնքի պատասխանատվության հետ կապված խնդիրները, պետք է նշել, որ համայնքը պատասխանատվություն է կրում հետևյալ մարմինների կողմից իրականացված ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի համար՝ տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար: Բացի այդ նշված օրենքի նշված հոդվածի 3-րդ կետով նախատեսված է, որ այդ դեպքերում վնասի հատուցումը կատարվում է համապատասխան համայնքային բյուջեի միջոցների հաշվին: Պետք է նշել, որ մարդուն պատճառված վնասի հատուցման հնարավորությունը հիմնարար իրավունք է: Վնասի (այդ թվում՝ ոչ նյութական) հատուցման իրավունքն իր ամրագրումն է ստացել թե՛ միջազգային, և թե՛ ներպետական օրենսդրությամբ: Մասնավորապես, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով (կից արձանագրություններով) սահմանվում են ոչ միայն հիմնական իրավունքներ ու ազատություններ, այլև՝ դրանց խախտման դեպքում արդարացի փոխհատուցման իրավունք: Սահմանադրության 3 և 62-րդ հոդվածների բովանդակությունից հետևում է, որ վնասի, այդ թվում՝ հանրային իշխանության մարմինների կողմից իրականացված իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հնարավորությունը ոչ միայն իրավունք է, այլև՝ մարդու իրավունքների պաշտպանության կարևոր սահմանադրական սկզբունք, որի իրացման անմիջական պատասխանատուն, Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ հանրային իշխանության մարմիններն են¹: Չնայած նշվածին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 96-րդ հոդվածով նախատեսված է վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու նախապայման: Այսպես, վնասի հատու-

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 17 դեկտեմբերի 2019 թվականի թիվ ՍԴՈ-1497 որոշումը:

ցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավա-
կան ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին
վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչ-
վել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

«Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով վարչարարութ-
յամբ պատճառված վնասի հատուցման իրավունքի էությանը, իր
նախադեպային որոշումներից մեկում նշել է, որ իրավական պե-
տությունը պահանջում է արդյունավետ իրավական պաշտպա-
նության ապահովում, ինչը նշանակում է, որ մասնավոր անձինք
պետք է պետության ոչ իրավաչափ գործողություններից կամ
անգործությունից պաշտպանվելու հնարավորություն ունենան:
Ընդ որում, իրավական պաշտպանությունը ոչ միայն ենթադրում
է, որ հետագայում հնարավոր կլինի վերստուգել պետության
գործողությունների կամ անգործության իրավաչափությունը, այլ
նաև այդպիսի գործողության կամ անգործության հետևանքով ա-
ռաջացած վնասը կհատուցվի:

Արդյունավետ իրավական պաշտպանության ապահովման
նպատակով օրենսդիրն ամրագրել է ոչ իրավաչափ, իսկ օրեն-
քով նախատեսված դեպքերում նաև իրավաչափ վարչարարութ-
յան հետևանքով անձանց պատճառված վնասի հատուցման ի-
րավական հնարավորություն՝ սահմանելով վարչական մարմին-
ների պատասխանատվությանը վերաբերող այնպիսի իրավա-
կարգավորում, որի միջոցով ապահովվում է անձանց կրած
վնասների հատուցումը: Վարչական մարմինների պարտակա-
նությունների խախտման հետևանքով անձանց կրած վնասների
հատուցման վերաբերյալ դրույթներ ամրագրելով՝ օրենսդիրը ոչ
միայն երաշխավորել է պետության ոչ իրավաչափ գործողութ-
յուններից պաշտպանվելու իրական հնարավորություն, այլ նաև՝
այդ գործողությունների հետևանքով պատճառված վնասի հա-
տուցման պահանջ ներկայացնելու և օրենքով սահմանված պայ-
մանների առկայության դեպքում հատուցում ստանալու իրական
հնարավորություն¹:

¹ Տե՛ս Աշոտ Մարտիրոսյանի ընդդեմ «Վառավարությանն առընթեր ան-
շարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎՂ/1761/05/14 վարչա-
կան գործով «Վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վարչական մարմինների կողմից ընդունված ոչ իրավաչափ վարչական ակտերի, նրանց կատարած ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության հետևանքով, այսինքն՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերություններն օրենսդիրը կարգավորել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 7-րդ բաժնով:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադարձնալով հիշյալ օրենքի համապատասխան իրավադրույթներով սահմանված՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման իրավունքի իրականացման կառուցակարգին, իր նախկին որոշումներում ձևավորել է այն կայուն նախադեպային դիրքորոշումը, որի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով անհրաժեշտ է, որպեսզի առաջին հերթին ոչ իրավաչափ ճանաչված լինի անձին վնաս հասցրած վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը: Դրանից հետո միայն անձը պարտավոր է ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնասի հատուցման պահանջով նախ դիմել վնասը պատճառած վարչական մարմին, որի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է վարչական ակտը, գործողությունը կամ անգործությունը բողոքարկել վերադասության կամ դատական կարգով¹: Իր մեկ այլ որոշմամբ վճռաբեկ դատարանը եկել է այն եզրահանգմանը, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքը ՀՀ իրավական համակարգում իրացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Մասնավորապես՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքը կենսագործվում է հետևյալ ընթացակարգով.

1) նախևառաջ վնաս պատճառած պետական և տեղական

¹ Տե՛ս ժողա Սարգսյանն ընդդեմ Երևանի Քանաքեռ-Զեյթուն թաղապետարանի թիվ ՎԴ/0277/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշումը:

ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործողությունը, անգործությունը կամ վարչական ակտը պետք է շահագրգիռ անձի դիմումով (վարչական կամ դատական կարգով) ճանաչվի ոչ իրավաչափ,

2) այնուհետև շահագրգիռ անձը պետք է դիմի ոչ իրավաչափ գործողություն կատարած կամ ոչ իրավաչափ անգործություն դրսևորած կամ ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունած վարչական մարմնին՝ վնասի հատուցման պահանջով,

3) վնասի հատուցման դիմումի լրիվ կամ մասնակիորեն մերժման դեպքերում շահագրգիռ անձը կարող է վարչական կարգով բողոքարկել այդ դիմումը մերժելու մասին վարչական ակտը կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի միջոցով դիմել վարչական դատարան՝ ոչ իրավաչափ գործողություն կատարած կամ ոչ իրավաչափ անգործություն դրսևորած կամ ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունած վարչական մարմնին վնասի հատուցման վերաբերյալ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջով,

4) վնասի հատուցման դիմումը չքննարկվելու դեպքում գործում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածով նախատեսված իրավաբանական ֆիկցիայի ինստիտուտը (դրա համար անհրաժեշտ բոլոր պայմանների առկայության պարագայում), որի շրջանակներում շահագրգիռ անձը կարող է հասնել վնասի հատուցման իր իրավունքի գործնական իրացմանը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործողության կատարման հայցատեսակով վարչական դատարան դիմելու միջոցով¹:

Մեկ այլ որոշմամբ էլ ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման պայմաններին՝ նշելով, որ պետության կամ համայնքի

¹ Տե՛ս Արդա Հարությունյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30 նոյեմբերի 2018 թվականի թիվ ՎԴ/0832/05/16 որոշումը:

պատասխանատվությունը ծագում է հետևյալ պայմանների միա-
ժամանակյա առկայության դեպքում՝

1) իրականացվել է ոչ իրավաչափ (իսկ օրենքով նախատես-
ված դեպքերում՝ նաև իրավաչափ) վարչարարություն,

2) պատճառվել է վնաս,

3) իրականացված վարչարարության և պատճառված վնա-
սի միջև առկա է պատճառահետևանքային կապ:

Այսինքն, ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պե-
տության կամ համայնքի պատասխանատվության պայմաններն
են **վնասի առկայությունը և դրա վրա հասնելը (պատճառվելը) ոչ
իրավաչափ վարչարարության հետևանքով:**

Հիշյալ նորմի մեկնաբանությանն է անդրադարձել նաև ՀՀ
սահմանադրական դատարանը, որն արձանագրել է, որ պահան-
ջի իրավունքն անձը ձեռք է բերում վարչական մարմնի իրավա-
կան ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին
վնաս է հասցվել, սահմանված կարգով **ոչ իրավաչափ ճանաչվե-
լու** դեպքում: Սահմանադրական դատարանը գտել է, որ նման
նորմատիվ պայմանը հետապնդում է իրավական հիմնավոր
նպատակ և միտված է պատճառված վնասի հատուցման (վար-
չական կամ դատական կարգով) Սահմանադրությամբ երաշխա-
վորված իրավունքի իրացման համար իրավական բարենպաստ
պայմաններ (նախադրյալներ) ստեղծելուն¹:

ՀՀ սահմանադրական դատարանի կողմից տրված *«պա-
հանջի իրավունքը անձը ձեռք է բերում վարչարարությունը ոչ ի-
րավաչափ ճանաչվելու դեպքում»*, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դա-
տարանի կողմից կիրառված *«պետության պատասխանատվու-
թյունը ծագում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկա-
յության դեպքում»* և *«պետության պատասխանատվության պայ-
մաններն են վնասի առկայությունը և դրա վրա հասնելը (պատ-
ճառվելը) ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով»* ձևա-
կերպումները թույլ են տալիս եզրակացնել, որ վնասի առաջաց-
մանը հանգեցրած վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչվե-
լուց հետո իրավունքի ուժով անձը ձեռք է բերում պահանջի իրա-

¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 7 նոյեմբերի 2017 թվականի թիվ
ՍԴՈ-1383 որոշումը:

վունք, ինչին հակադրվում է պետության կամ համայնքի պարտականությունը հատուցել պատճառված վնասը, այսինքն՝ նշված սուբյեկտների միջև ծագում է պատճառված վնասի հատուցմանն ուղղված իրավահարաբերությունը¹:

Այն հանգամանքը, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքն ամրագրված է թե՛ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, թե՛ «Վարչարարության հիմքունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով, որոշակի տարրընթերցում է առաջացնում վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտի իրավական բնույթի վերաբերյալ:

Իրավաբանական գրականության մեջ այս հարցի շուրջ գոյություն ունեցող տեսակետները միմյանցից խիստ տարբեր են: Առաջին խումբ հեղինակները վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը դիտում են որպես քաղաքացիական պատասխանատվության միջոց², իսկ հեղինակների մյուս խումբն էլ գտնում է, որ այն օբյեկտիվ-քաղաքական օրինաչափություններից, սոցիալ-բարոյական պատկերացումներից և ընդհանրապես պետության խնդիրներից բխող՝ վնասը հատուցելու վերջինիս պարտականությունն է և բացառապես կարգավորվում է հանրային իրավունքի նորմերով:

Մեր կարծիքով, սակայն, վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը միջնուղային իրավական ինստիտուտ է, այն միաժամանակ կարգավորվում է և՛ քաղաքացիական, և՛ վարչական իրավունքի նորմերով: Օրենսգրքի 1063-րդ հոդվածը, որը վերաբերում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց պատճառած վնասի հատուցման իրավահարաբերություններին, զետեղված է Օրենսգրքի 60-րդ գլխում, որում ներառված են ընդհանրապես վնասի պատճառելուց ծագող պարտավորական իրավահարա-

¹ Տե՛ս **Գրիգորյան Ա.**, Հանրային իշխանության ակտով պատճառված վնասի հատուցման իրավահարաբերության բնույթի առանձնահատկությունները, <https://paara.am/wp-content/uploads/2012/04/ARMAN-GRIGORYAN.pdf> (հղումը հասանելի է 30.05.2022 թվականի դրությամբ):

² Տե՛ս **Գրիգորյան Ա.**, նշված հոդվածը:

բերությունները, ընդ որում վնաս պատճառելուց ծագող պարտավորական իրավահարաբերությունների պարագայում միշտ ծագում է քաղաքացիական պատասխանատվության հարցը: Նշված գլխի շրջանակներում կարգավորվում են նաև հետաքննության, նախաքննության մարմինների, դատախազության և դատարանի ապօրինի գործողություններով պատճառած վնասից ծագող պարտավորական իրավահարաբերությունները, որի արդյունքում ևս ծագում է քաղաքացիական պատասխանատվության հարցը: Մեր կարծիքով, վարչական մարմնի պատճառած վնասի հատուցման համար այդ նույն մարմնի կողմից իր ընդունած վարչական ակտն ոչ իրավաչափ ճանաչելու նախապայման նախատեսելը այս ինստիտուտը չի վերածում զուտ հանրային-իրավական ինստիտուտի, պարզապես նման մարմինների պատճառած գույքային և ոչ գույքային վնասի հատուցման կարգն է կարգավորվում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով: Նմանատիպ նորմեր Օրենսգրքով էլի կան նախատեսված: Մասնավորապես, Օրենսգրքի 162.1 հոդվածի (ոչ նյութական վնասի հասկացությունը և դրա հատուցումը) 5-րդ կետով նախատեսված է, որ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Այսինքն, այս դեպքում ևս ոչ նյութական վնասի հատուցման կարգն է կարգավորվում վարչական իրավունքի նորմերով՝ այս ինստիտուտը ևս վերածելով միջձյուղայինի, սակայն ասվածը չի նշանակում, որ արդյունքում վերանում է քաղաքացիական պատասխանատվության խնդիրը:

Ինչպես արդեն նշել ենք, համայնքը իր պարտավորություններով կրում է ինքնուրույն գույքային պատասխանատվություն: Բացի իր պարտավորությունների համար պատասխանատվություն կրելուց, օրենքը նախատեսում է նաև այլ սուբյեկտների պարտավորություններով պատասխանատվություն կրելու համայնքի պարտականությունը: Այսպես, «Պետական ոչ առևտրային

կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի¹ 9-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ համայնքն իրավունք ունի նշված օրենքով սահմանված կարգով ստեղծել համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (համայնքային կազմակերպություն): Համայնքի անունից համայնքային կազմակերպությունն ստեղծում է համայնքի ղեկավարը: Համայնքային կազմակերպության ստեղծման մասին որոշումը և կազմակերպության կանոնադրությունը հաստատում է համայնքի ավագանին: Համայնքային կազմակերպությունների վրա տարածվում են նշված օրենքի պահանջները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Իսկ նշված օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ պետական կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով: Պետական կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում հիմնադրի պարտավորությունների համար: Քանի որ նշված կանոնները կիրառվում են նաև համայնքային կազմակերպությունների մասնակցությամբ իրավա-հարաբերությունների նկատմամբ, ուրեմն համայնքը պատասխանատվություն չի կրում իր կողմից հիմնադրած կազմակերպությունների պարտավորությունների համար: Ինչը չի կարելի ասել համայնքի հիմնադրած հիմնարկների վերաբերյալ: Այսպես, «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվությունը կրում է համայնքը: Համայնքի փաստացի պատասխանատվությունը իր հիմնադրած հիմնարկների պարտավորությունների համար պայմանավորված է նրանով, որ հիմնարկներին ներկայումս տրված չէ իրավաբանական անձի կարգավիճակ, և նրանց գույքային հիմքը ոչ թե սեփականության իրավունքն է, այլ սահմանափակ իրային իրավունքները (օպերատիվ կառավարման իրավունք և լրիվ տնտեսավարման իրավունք): Քանի որ վերը նշված օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հիմնարկի գույքը ձևավորվում է հիմնադրի կողմից նրա տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքից, և հիմնադիրն իրավունք ունի ցանկացած

¹ ՀՀՊՏ 2001.12.03/37 (169) Հոդ. 908:

Ժամանակ հետ վերցնել իր կողմից հիմնարկին հանձնված գույքը: Այս հարցի հետ կապված մասնագիտական գրականության մեջ կարծիք է հայտնվել, որ ինչպես համայնքը, այնպես էլ համայնքի հիմնադրած հիմնարկը պետք է դիտարկել հանրային իրավունքի իրավաբանական անձ, որը պետք է ունենա սեփականության իրավունք իր գույքի նկատմամբ և կրի ինքնուրույն գույքային պատասխանատվություն, իսկ հիմնադիրը՝ տվյալ դեպքում՝ համայնքը պետք է կրի սուբսիդիար պատասխանատվություն հիմնարկի պարտավորությունների համար, ինչը հիմնավորվել է նաև ՄԻԵԴ-ի դատական պրակտիկայի ընթացքում¹: Սակայն կարծում ենք, որ հանրային իրավունքի իրավաբանական անձ համարվող համայնքի հիմնադրած հիմնարկը իր հերթին չի կարելի դիտարկել որպես հանրային իրավունքի իրավաբանական անձ և այդպես էլ այդքան ընդլայնել հանրային իրավունքի իրավաբանական անձանց շրջանակը, բացի այդ համայնքային հիմնարկների հիմնադրման նպատակներից ու դրանց առջև դրված խնդիրների վերլուծությունից էլ բխում է, որ դրանք չեն կարող լինել քաղաքացիական իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ և կրել ինքնուրույն գույքային պատասխանատվություն:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ լինելով քաղաքացիական իրավունքի ինքնուրույն սուբյեկտ, համայնքն օժտված է քաղաքացիական իրավասուբյեկտությամբ, որն իրագործում է տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, քաղաքացիների, իրավաբանական անձանց, տարբեր համայնքային կազմակերպությունների և հիմնարկների միջոցով: Համայնքի, որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտի գոյության և գործունեության անհրաժեշտ նյութական հիմքը ապահովվում է համայնքային սեփականության միջոցով, որն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցով այն տարբերվում է սեփականության մյուս ձևերից: Մասնակցելով տարբեր պարտավորական իրավահարաբերությունների՝

¹ Տե՛ս Ամիրխանյան Ս., Հանրային իրավունքի իրավաբանական անձանց քաղաքացիաիրավական պատասխանատվությունը, http://www.yso.am/files/04S_Amirkhanyan.pdf (կայքը հասանելի է 24.05.2022 թվականի դրությամբ):

համայնքը կարող է մի դեպքում հանդես գալ պարտապանի, մեկ այլ դեպքում՝ պարտատիրոջ դերում: Պարտավորական իրավահարաբերությունների հետ սերտորեն առնվում է քաղաքացիաիրավական պատասխանատվության խնդիրը: Հաշվի առնելով համայնքի՝ որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտի առանձնահատկությունները՝ գտնում ենք, որ հատկապես համայնքի քաղաքացիաիրավական պատասխանատվության հարցն ունի գիտագործնական կարևորություն, և մասնագիտական հարթության մեջ արված, հետևությունները, ինչպես նաև պրակտիկայի ընթացքում վեր հանված խնդիրները պետք է արժանանան համապատասխան մարմինների ուշադրությանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. ՀՀ Սահմանադրություն՝ ընդունված 1995 թվականի հուլիսի 05-ին հանրաքվեով

2. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով)՝ ընդունված 2005 թվականի նոյեմբերի 27-ին հանրաքվեով, ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ թողարկում Հոդ. 1426

3. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով)՝ ընդունված 2015 թվականի դեկտեմբերի 6-ին հանրաքվեով, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118

4. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա՝ ընդունված 1985 թվականի հոկտեմբերի 15-ին, ՀՀ համար ուժի եջ է մտել 2002 թվականի մայիսի 1-ից, ՀՀԱԳՆՊՏ 2012.12.28/14(22)

5. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի՝ Տեղական ինքնակառավարման մարմիններում մասնակցության իրավունքի վերաբերյալ լրացուցիչ արձանագրություն՝ ընդունված 2009 թվականի նոյեմբերի 16-ին, ՀՀ համար ուժի եջ է մտել 2013 թվականի սեպտեմբերի 1-ից, ՀՀԱԳՆՊՏ 2013.07.17/16(24)

6. «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք՝ ընդունված 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, ՀՀՊՏ 2016.12.30/95(1275).1 Հոդ.1228.7

7. «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք՝ ընդունված 2016 թվականի մայիսի 25-ին, ՀՀՊՏ 2016.05.30/42(1222) Հոդ.456

8. ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք՝ ընդունված 2020 թվականի հունիսի 18-ին, Միասնական կայք 2020.07.01-2020.07.12 Պաշտոնական հրապարակման օրը 01.07.20

9. ««Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» «Հայաստանի Հանրապետության

ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք՝ ընդունված 2021 թվականի մայիսի 7-ին, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30

10. «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 1997 թվականի հունիսի 24-ին, ՀՀՊՏ օր 1997.08.11/18

11. «Վարչարարության հիմունքների և վարչոկան վարույթի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2004 թվականի փետրվարի 18-ին, ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.413

12. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2002 թվականի մայիսի 7-ին, ՀՀՊՏ 2002.06.21/21(196) Հոդ.473

13. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2008 թվականի դեկտեմբերի 26-ին, ՀՀՊՏ 2009.01.16/3(669) Հոդ.42

14. «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2018 թվականի հունիսի 13-ին, ՀՊՏ 2018.07.04/52(1410) Հոդ.781

15. «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2002 թվականի փետրվարի 6-ին, ՀՀՊՏ 2002.04.01/11(186) Հոդ.174

16. «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2018 թվականի մարտի 7-ին, ՀՀՊՏ 2018.03.21/20(1378) Հոդ.312

17. «Թափոնների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2004 թվականի նոյեմբերի 24-ին, ՀՀՊՏ 2004.12.28/72(371) Հոդ.1480

18. «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված թվականի 2000 թվականի ապրիլի 5-ին, ՀՀՊՏ 2000.04.28/8(106)

19. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 1998 թվականի մայիսի 5-ին, ՀՀՊՏ 1998.05.30/11(44)

20. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2018 թվականի մարտի 21-ին, ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) Հոդ.373

21. «Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 1996 թվականի մայիսի 14-ին, ՀՀԱԺՏ 1996/11

22. ՀՀ ընտրական օրենսգիրք՝ ընդունված 1999 թվականի փետրվարի 5-ին, ՀՀՊՏ 1999.02.18/2(68)

23. ՀՀ ընտրական օրենսգիրք՝ ընդունված 2011 թվականի մայիսի 26-ին, ՀՀՊՏ 2011.06.16/36(839) Հոդ.852

24. «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 22-ին, ՀՀՊՏ 2007.01.17/4(528) Հոդ.29

25. «ՀՀ ընտրական օրենսգրքում փոսփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2008 թվականի դեկտեմբերի 26-ին, ՀՀՊՏ 2009.01.16/3(669) Հոդ.43

26. «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2020 թվականի հուլիսի 16-ին, Միասնական կայք 2020.07.27-2020.08.09 Պաշտոնական հրապարակման օրը 06.08.2020

27. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 1996 թվականի հունիսի 30-ին, ՀՀԱԺՏ 1996/13-14

28. «Փախստականների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 1999 թվականի մարտի 3-ին, ՀՀՊՏ 1999.04.01/8(74)

29. «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 1995 թվականի նոյեմբերի 6-ին, ՀՀԱԺՏ 1995/8

30. «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2001 թվականի հոկտեմբերի 23-ին, ՀՀՊՏ 2001.12.03/37(169) ԵՒ. 907.

31. «Գնումների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, ՀՀՊՏ 2017.01.25/5(1280) ԵՒ. 57.

32. «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք՝ ընդունված 2001 թվականի հոկտեմբերի 23-ին, ՀՀՊՏ 2001.12.03/37 (169) ԵՒ. 908

33. ՌԴ քաղաքացիական օրենսգիրք՝ ընդունված 1994 թվականի նոյեմբերի 30-ին N 51-ՂՕ

34. «Պետական կամ համայնքային կարիքների բավարարման համար ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնումների բնագավառում պայմանագրային համակարգի մասին» ՌԴ դաշնային օրենք՝ ընդունված 2013 թվականի ապրիլի 05-ին N 44-ՂՕ

35. «Ռուսաստանի Ղաշնությունում տեղական ինքնակառավարման կազմակերպման ընդհանուր սկզբունքների մասին» ՌԴ դաշնային օրենք՝ ընդունված 2003 թվականի հոկտեմբերի 06-ին N 131-ՂՕ

36. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության N 526-Ն որոշում՝ ընդունված 2017 թվականի մայիսի 4-ին, ՀՀՊՏ օՐ

2017.05.22/31(1306) Ծ. 487.

37. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 11-ի «Հավասար թվով առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած երկու և ավելի թեկնածուներից ընտրված թեկնածուին որոշելու վիճակահանությունների անցկացման կարգը սահմանելու մասին» N 8-Ն ՀՀԳՏ 2017.02.01/4(573) Հոդ.37

ՊԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐ

- | | | |
|---|------|---------|
| 38. ՀՀ սահմանադրական դատարանի դեկտեմբերի 17-ի ՍԴՈ-1497 որոշում | 2019 | թվականի |
| 39. ՀՀ սահմանադրական դատարանի դեկտեմբերի 26-ի ՍԴՈ-1396 որոշումը | 2017 | թվականի |
| 40. ՀՀ սահմանադրական դատարանի նոյեմբերի 7-ի ՍԴՈ-1283 որոշում | 2017 | թվականի |
| 41. ՀՀ սահմանադրական դատարանի ապրիլի 28-ի ՍԴՈ-1364 որոշում | 2017 | թվականի |
| 42. ՀՀ սահմանադրական դատարանի մարտի 7-ի ՍԴՈ-1356 որոշումը | 2017 | թվականի |
| 43. ՀՀ սահմանադրական դատարանի հունվարի 25-ի ՍԴՈ-1072 որոշում | 2013 | թվականի |
| 44. ՀՀ սահմանադրական դատարանի մարտի 14-ի ՍԴՈ-1077 որոշում | 2013 | թվականի |
| 45. ՀՀ սահմանադրական դատարանի մարտի 5-ի ՍԴՈ-1076 որոշում | 2013 | թվականի |
| 46. ՀՀ սահմանադրական դատարանի մայիսի 31-ի ՍԴՈ-1028 որոշում | 2012 | թվականի |
| 47. ՀՀ սահմանադրական դատարանի մայիսի 5-ի ՍԴՈ-1027 որոշում | 2012 | թվականի |
| 48. ՀՀ սահմանադրական դատարանի մայիսի 8-ի ՍԴՈ-803 որոշում | 2009 | թվականի |
| 49. ՀՀ սահմանադրական դատարանի փետրվարի 11-ի ՍԴՈ-734 որոշում | 2008 | թվականի |
| 50. ՀՀ սահմանադրական դատարանի դեկտեմբերի 21-ի ՍԴՈ-722 որոշում | 2007 | թվականի |
| 51. ՀՀ սահմանադրական դատարանի դեկտեմբերի 18-ի ՍԴՈ-721 որոշում | 2007 | թվականի |
| 52. ՀՀ սահմանադրական դատարանի | 2006 | թվականի |

նոյեմբերի 7-ի ՍԴՈ-664 որոշում

53. ՀՀ սահմանադրական դատարանի 2004 թվականի սեպտեմբերի 24-ի ՍԴՈ-512 որոշում

54. ՀՀ սահմանադրական դատարանի 2003 թվականի մարտի 24-ի ՍԴՈ-408 որոշում

55. ՀՀ սահմանադրական դատարանի 2003 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-438 որոշում

56. ՀՀ սահմանադրական դատարանի 2003 թվականի հունիսի 7-ի ՍԴՈ-436 որոշում

57. ՀՀ սահմանադրական դատարանի 2002 թվականի հոկտեմբերի 1-ի ՍԴՈ-389 որոշում

58. ՀՀ սահմանադրական դատարանի 1999 թվականի հոկտեմբերի 16-ի ՍԴՈ-179 որոշում

59. Աիդա Հարությունյանն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30 նոյեմբերի 2018 թվականի թիվ ՎԴ/0832/05/16 որոշում

60. ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՎԴ/0325/05/19 քաղաքացիական գործով 22.10.2021 թվականին կայացված որոշումը:

61. Աշոտ Մարտիրոսյանն ընդդեմ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի թիվ ՎԴ/1761/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշում

62. Ժորա Սարգսյանն ընդդեմ Երևանի Քանաքեռ-Զեյթուն թաղապետարանի թիվ ՎԴ/0277/05/09 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2010 թվականի որոշում

63. Cumhuriyet Halk Partisi v. Turkey, no. 19920/13, ECHR 2016

64. Sitaropoulos and Giakoumopoulos v. Greece [GC], no. 42202/07, ECHR 2012

65. Paksas v. Lithuania [GC], no. 34932/04, ECHR 2011 (extracts)

66. Grosaru v. Romania, no. 78039/01, ECHR 2010

67. Yumak and Sadak v. Turkey [GC], no. 10226/03, ECHR 2008

68. Kovach v. Ukraine, no. 39424/02, ECHR 2008

69. Georgian Labour Party v. Georgia, no. 9103/04, ECHR

2008

70. Ždanoka v. Latvia [GC], no. 58278/00, ECHR 2006-IV
71. Campagnano v. Italy, no. 77955/01, ECHR 2006-IV
72. Sukhovetsky v. Ukraine, no. 13716/02, ECHR 2006-VI
73. Aziz v. Cyprus, no. 69949/01, ECHR 2004-V
74. Boškoski v. the former Yugoslav Republic of Macedonia (dec.), no. 11676/04, ECHR 2004-VI
75. Vito Sante Santoro v. Italy, no. 36681/97, ECHR 2004-VI
76. Vito Sante Santoro v. Italy (dec.), no. 36681/97, ECHR 2003-I (extracts)
77. Melnychenko v. Ukraine, no. 17707/02, ECHR 2004-X
78. Labita v. Italy [GC], no. 26772/95, ECHR 2000-IV
79. Cherepkov v. Russia (dec.), no. 51501/99, ECHR 2000-I
80. Salleras Llinares v. Spain (dec.), no. 52226/99, ECHR 2000-XI
81. Anchugov and Gladkov v. Russia, nos. 11157/04 and 15162/05, 4 July 2013
82. Tănase v. Moldova [GC], no. 7/08, ECHR 2010

ԱՅԼ ՓԱՍՏԱԹՐԹԵՐ

83. ԵԱՀԿ ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության «Հայաստանի Հանրապետություն Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ 20 հունիսի 2021թ.» վերջնական զեկույց
84. 2014 թվականի ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ՝ մշակված ՀՀ Նախագահին կից ստեղծված Սահմանադրական բարեփոխումների մասնագիտացված հանձնաժողովի կողմից
85. Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման հայեցակարգ, ՀՀ կառավարության 2011 թ. նոյեմբերի 10-ի նիստի N 44 արձանագրային որոշման հավելված
86. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հայեցակարգ
87. Անկախ Պետությունների Համագործակցության անդամ պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի կողմից մշակված «Տեղական ինքնակառավարման կազմակերպման ընդհանուր սկզբունքների մասին» մոդելային օրենք (ԱՊՀ ՄԽՎ 2015թ. նոյեմբերի 27-ի թիվ 43 -11 որոշման հավելված)
88. Անկախ Պետությունների Համագործակցության անդամ

պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի 17-րդ - լիագումար նիստում ընդունված «Տեղական ինքնակառավարման ընտրովի անձի կարգավիճակի մասին» մոդելային օրենք (2001 թվականի ապրիլի 19-ի N 17-8 որոշում)

89. Հիմնավորում «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

90. Անկախ Պետությունների Համագործակցության անդամ պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 43-11 որոշման հավելված

91. European Commission For Democracy Through Law (Venice Commission) Report On Electoral Law And Electoral Administration In Europe, Strasbourg, 12 June 2006 // CDL-AD(2006)018

92. Synthesis study on recurrent challenges and problematic issues Adopted by the Council for Democratic Elections at its 17th meeting (Venice, 8-9 June 2006) and the Venice Commission at its 67th plenary session (Venice, 9-10 June 2006) on the basis of a contribution by Mr. Michael KRENNERICH (Expert, Germany)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Բարսեղյան Տ.Կ.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս, 4-րդ հրատ., ԵՊՀ, Երևան., 2014

2. **Ամիրխանյան Ս.** Հանրային իրավունքի իրավաբանական անձանց քաղաքացիաիրավական պատասխանատվությունը http://www.y-su.am/files/04S_Amirkhanyan.pdf

3. **Այվազյան Ն.Ա., Օհանյան Մ.Ս.** Ազատ ընտրություններ և հանրաքվե կազմակերպելու հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում /Ն.Ա. Այվազյան, Մ.Ս. Օհանյան - Եր.:

ԵՊՀ հրատ., 2010

4. **Բադայան Ս.Ս.** Օրենսդրական նախաձեռնության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2014

5. **Բեքմեզյան Գ.Հ.** Արտապայմանագրային պարտավորություններ, Եր., ԵՊՀ հրատ., 2009

6. **Գրիգորյան Ա.** Հանրային իշխանության ակտով պատճառված վնասի հատուցման իրավահարաբերության բնույթի առանձնահատկությունները, <https://paara.am/wp-content/uploads/2012/04/ARMAN-GRIGORYAN.pdf>

7. **Եղյան Ռ.Հ.** Հայաստանի Հանրապետության ընտրական համակարգը: Ուսումնական ձեռնարկ / Ռ.Հ. Եղյան; ԵՊՀ. - Երևան. Եր. համալս. հրատ., 2000

8. **Եսայան Ա.Ս.** Ընտրական վեճերի իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2015

9. **Թադևոսյան Դ.Ս.** Ընտրական հանձնաժողովների իրավական կարգավիճակը անցումային պետություններում (իրավահամեմատական վերլուծություն) // Իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2009

10. **Թավադյան Ա.Ա.** Հանրային իրավունքի իրավաբանական անձ. խնդրի լուծու՞մ, թե՞՞ նոր խնդիրներ, Պետություն և իրավունք N 1(89) 2021

11. **Թոխյան Ֆ.Պ.** Ընտրական օրենսդրության սահմանադրականության հարցը որոշելու վերաբերյալ գործերով ՀՀ ՍԴ-ի իրավական դիրքորոշումները և դրանց իրավաբանական հետևանքները // Սահմանադրական դատարանի տեղեկագիր, 4(33)2004

12. **Թոխյան Ֆ.** Նախագահական ընտրությունների սահմանադրական կարգը ժամանակակից աշխարհում՝ համեմատական իրավական ուսումնասիրություն - Եր. Մխիթար Գոշ, 1998

13. **Թոխյան Ֆ.** Սահմանադրական վերահսկողությունը ազգային ընտրությունների նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում (Տեսության և պրակտիկայի հիմնախնդիրներ) // Almanac XI Երևանի միջազգային գիտաժողով «Սահմանադրա-

կան դատարանների դերը ժողովրդավարական ընտրությունների ապահովման գործում», 2006

14. **Թոխյան Ֆ., Թոխյան Պ.** Ընտրական իրավունքի դատական պաշտպանության հիմնախնդիրները ՀՀ-ում // Սահմանադրական դատարանի տեղեկագիր, 1(38)2006

15. **Թոխյան Ֆ.Պ.** Ընտրությունների արդյունքները վիճարկելու վերաբերյալ գործերով ՀՀ ՍԴ-ի իրավական դիրքորոշումները և դրանց իրավաբանական հետևանքները // Սահմանադրական դատարանի տեղեկագիր 1(26)2003

16. **Թոխյան Ֆ.Պ.** Խորհրդարանական ընտրությունների սահմանադրաիրավական կարգավորման հիմնախնդիրները երիտասարդ ժողովրդավարության երկրներում (ՀՀ օրենսդրության հիման վրա) / Ֆ. Թոխյան; Ռուս-հայկական (սլավոնական) պետ. համալս.; Խմբ. Ա.Շ. Հարությունյան. - Երևան: ՌՀՀ, 2004

17. **Թովմասյան Հ.Վ.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման հիմնահարցերը // Իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2000

18. **Թորոսյան Ս.Լ.** Ընտրական համակարգի ձևավորման և - զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2012

19. **Հակոբյան Լ.Ա., Վարազյան Լ.Ա., Ասատրյան Ա.Մ.** «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխությունների քաղաքական և իրավական նշանակությունը / Լ.Ա. Հակոբյանը, Լ.Ա. Վարազյան, Ա.Մ. Ասատրյան.- Եր., Հրտ. «Հայրապետ», 2021

20. **Հակոբյան Հ.** Ազգային ժողովը որպես ներկայացուցչական ժողովրդավարական ինստիտուտ// Մասնակցության ժողովրդավարություն, քաղաքացիական նախաձեռնություններ և - պատասխանատվություն, միջազգային խորհրդածողով. Երևան, 2004

21. **Հակոբյան Հ. Հ.** Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում /գիտ. խմբ. Գ. Հարությունյան.- Եր., Տիգրան Մեծ, 2007

22. **Հակոբյան Ն.Գ.,** Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման ձևավորումն ու զարգացումը. Եր-

ևան, «Ոսկան Երևանցի», 2001

23. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ // ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի. - Եր.: «Իրավունք», 2010

24. **Հարությունյան Գ.** ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի ներածական խոսքը Երևանյան XI միջազգային գիտաժողովում // Միջազգային Ալմանախ. Սահմանադրական արդարադատությունը նոր հազարամյակում. Երեւան, «Նժար», 2006

25. **Հարությունյան Գ.Գ., Սարգսյան Հ.Լ., Գևորգյան Ռ.Ա.** Սահմանադրականություն. ախտորոշման, մշտադիտարկման և կառավարման խնդիրներ. Երևան, խմբ. «Ջանգակ», 2017

26. ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում. ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ հրապարակում. Նյութերը հրապարակման են պատրաստել Ֆ.Թոխյանը, Լ.Հակոբյանը, Ա.Ներսիսյանը: Երևան, ՆԺԱՐ, 2006

27. **Մանասյան Ա.Ա.** Սահմանադրական կայունությունը որպես կայուն ժողովրդավարության կարևորագույն նախապայման / Ա.Ա. Մանասյան, Երևան, խմբ. «Այրապետ», 2019

28. **Սարանդյան Ռ.Ռ.** Հանրաքվեն որպես ժողովրդաիշխանության ձև Հայաստանի Հանրապետությունում: ԺԲ.00.12 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2017

29. Միջազգային ընտրական չափանիշների կիրառումը // Եվրոպայի խորհրդի ձեռնարկ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար, Եվրոպայի խորհրդի հրատարակչություն, Ստրասբուրգ, 2016

30. **Սահակյան Ն.** Պետական կարիքների բավարարման նպատակով կնքվող պայմանագրի իրավական բնութագիրը, Ղատական իշխանություն, N11-12/233-234, 2018

31. **Սաֆարյան Գ.** Իրավաստեղծ գործուներության և օրենսդրության զարգացման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում (պատմատեսական վերլուծություն): Եր., ԱՌՏ, 2004

32. **Վաղարշյան Ա.** Ընտրական իրավունքի սահմանադրական զարգացումը Հայաստանում (դասախոսություն) / Ա. Վաղարշյան. ԵՊՀ, Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոն. - Երևան: Եր. համալս. հրատ., 2000

33. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրութ

յուններ. հարցեր և պատասխաններ: Հայաստանի համայնքների միություն: Երևան, 2005

34. **Авакьян С.А.** Конституция России: природа, эволюция, современность. - "Сашко", 2000

35. **Авакьян С.А.** Конституционное право России. Учебный курс : учеб. пособие: в 2 т./ С. А. Авакьян. - 5-е изд., перераб. и доп. — М., Норма, ИНФРА-М, 2014

36. **Авакян Р.О.** Памятники армянского права. - Ер.: "ЕФ МНЮИ-XXI ВЕК", 2000

37. **Акопян Л.А.** Система органов местного самоуправления в Республике Армения // Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02, Ереван, 2006

38. Актуальные проблемы избирательного законодательства Республики Армения и перспективы развития / Шатирян Э., Манасян А., Оганесян А.: Под ред. В.Д. Аветисяна - Ереван: МПА государств-участников СНГ, Изд. Зангак, 2013

39. **Алексеев С.С.** Общая теория права: учеб. - 2 изд., перераб. и доп. – М.: Проспект, 2009

40. **Андреев В.К.** О праве частной собственности в России (критический очерк). – М, Волтерс Клувер, 2007

41. **Балякина Т.М.** Компетенция местного самоуправления: проблемы теории и правового регулирования: Дисс. д-ра юрид. наук, Саратов, 2007

42. **Барабашев Г.В.** Местное самоуправление. М., Изд-во МГУ, 1996

43. **Барабашев Г.В., Шеремет К.Ф.** Непосредственная демократия в СССР – М., 1984

44. Институт референдума в освободившихся странах Южной Азии: (на прим.: Бангладеша, Пакистана и Шри-Ланки) //Избирательное право и выборы: Сборник статей. М.: Инс-т гос-ва и права АН СССР, 1990

45. **Братусь С.Н.** Субъекты гражданского права, М., 1950

46. **Ванделли Л.**, Основная ячейка любой демократии //Российский журнал. Социальные и гуманитарные науки. Отечественная и зарубежная литература. Серия 4. 2001. N 1

47. **Венедиктов А.О.** О субъектах социалистических правоотношений // Советское государство и право. 1995, N 6

48. **Гамбарян А.С., Даллакян Л.Г.** Коллизионные нормы и их конкуренция: монография. – М.: Юрлит-Информ, 2019
49. **Гарнер Д.** Великобритания: центральное и местное управление. Под ред. Г.В. Барабашева. М., ПРОГРЕСС, 1984
50. **Глинка В.И.** Проблемы определения гражданской правосубъектности муниципальных образований. <https://pravoforyou.ru/statiy/88-pravosubektnisty.html>
51. **Горлачев Р.Ю.** Конституционно-правовые гарантии непосредственной демократии в Российской Федерации. Дис. канд. юрид. наук, М., 2003
52. **Гражданское право: Часть первая: Учебник для вузов /** Под ред. В.П. Камышанского, Н.М. Коршунова, В.И. Иванова, Изд. Юнити Дана, М., 2012
53. **Гражданское право: учебник, в 3 т., Т. 1.-7-е изд., перераб. и доп., под ред. Ю.К. Толстого, М., Проспект, 2013**
54. **Грицай Н.В.** Юридические лица публичного права: Проблемы определения правового статуса, Вестник Самарской гуманитарной академии, Серия «Право», 2016, N 1-2 (18)
55. **Гришин Н.В.** Государственная электоральная политика: предметная область нового научного направления // Каспийский регион: политика, экономика, культура. 2014, N 3 (40)
56. **Демишель А., Демишель Ф., Пикемаль М.** Институты и власть во Франции. Институционные формы государственно-монополистического капитализма / Перевод с французского В.Н. Даниленко; под ред., с послесл. Крутогорова М.А. 9 М.: Прогресс, 1977
57. **Евдокимов В.Б., Старцев Я.Ю.** Местные органы зарубежных стран: правовые аспекты. М., СПАРК, 2001
58. **Енгибарян Р.В.** Сравнительное конституционное право, учеб. пособие М., 2005
59. **Загурская Л.А.** Гражданская законодательная инициатива осуществления населением государственной власти // SCIENTETIME 2014. N 8
60. **Затонский В.А.** О некоторых институтах непосредственной демократии в контексте повышения эффективности муниципальной правовой политики и укрепления российской государственности // Вектор науки ТГУ.

Серия: Юридические науки. 2017. N 2 (29)

61. **Зинченко С., Корх С.** Вопросы собственности: законодательство и практика, Хозяйство и право. - М., 2000, N 6

62. **Иванцова Г.А.** Теоретико-правовые проблемы местного самоуправления // Диссертация на соискание ученой степени кандидата юрид. наук.: 12.00.01 Уфа, 2000

63. Избирательное право и избирательный процесс в Российской Федерации. Отв. ред. А.В. Иванченко. М., Изд-во НОРМА, 1999

64. **Камышанский А.В.** Гражданско-правовое регулирование возникновения и осуществления права муниципальной собственности // Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Краснодар, 2009

65. **Канаев Ю.Н.** Муниципальные образования как субъекты гражданского права: монография. - М.: Юстицинформ, 2020

66. **Кареев Н. И.** Общий ход всемирной истории. Очерки главнейших исторических эпох. - Греко-римский мир

67. **Комарова В.В.** Формы непосредственной демократии в России. М.: Ось-89, 1998

68. **Комарова В.В.** Формы непосредственной демократии. Директ-Медиа, 2014

69. Конституционное (государственное) право зарубежных стран. Общая часть. Под ред. Б.А. Страшуна. М., Изд-во БЕК, 1996

70. Конституционное право зарубежных стран: учебник / Под общ. ред. М.В. Баглая, Ю.И. Лейбо и Л.М. Энтина. – 3-е изд., перераб. и доп. – М.: Норма: Инфра-М, 2010

71. **Коток В.Ф.** О развитии форм сочетания народного представительства с непосредственной демократией в СССР // Советское государство и право, 1960, N 12

72. **Крылов Б.С.** США: федерализм, штаты и местное управление. Академия наук СССР. Институт государства и права. М., 1968

73. **Кун А.П.** Противоправность и вина в обязательствах по возмещению вреда, причиненного гражданину актами власти, Правоведение, 1984, N 3

74. **Курячая М.М.** Право на референдум в системе публично-политических прав граждан Российской Федерации.

Монография/ - М.: Изд-во МГУ, 2006

75. **Лесков Ю.Г.** К вопросу о реформировании института юридического лица: публично-правовой аспект, "Административное и муниципальное право" в рубрике "Проблемы административных и муниципальных правоотношений." N 2, 2012

76. **Мамичев В.П.** Референдум в законодательстве зарубежных стран и России (историко-правовое исследование): Дис.... канд.юр.наук. - Ставрополь, 2000

77. **Марченко М.Н.** Референдум как форма непосредственной демократии// Вестник Московского государственного университета. Серия 11, Право. 1991, N 6

78. **Михалева Н.А.** Конституционное право зарубежных стран СНГ. М., ЮРИСТЪ, 1998

79. **Михеева Т.Н.** Новеллы в правовом регулировании местного самоуправления /Правовые аспекты развития и функционирования системы местного самоуправления в Ленинградской области: Сборник статей и справочных материалов / И.И. Макаров, А.А. Романцов; под общей ред. К.Н. Патраева, М.Е. Лебединского. – СПб.: Вести, 2014

80. Муниципальное право Российской Федерации. Под ред. Ю.А. Дмитриева. М., 2000

81. Муниципальное право. Под ред. А.М. Никитина. – М.: ЮНИТИ-ДАНА. Закон и право, 2000. с. 9; Емельянов Н.А. Муниципальные системы зарубежных стран. М.-Тула. ГРИФ, 1998

82. **Мурашин А.Г.** Непосредственное народовластие в системе социалистического самоуправления народа. Киев: Наука, 1989

83. **Мурашин А.Г.** Непосредственная демократия в социалистическом обществе: функции и механизм действия. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. - Киев, 1985

84. **Нудненко Л.А.** Непосредственная демократия в системе местного самоуправления России: теоретические основы. М.: Прогресс, 2004

85. **Овчинников И.И.** Местное самоуправление в системе народовластия, М., 1999

86. основополагающие документы Венецианской комиссии

в области избирательного права и политических партий. - Кишинев: Sudrag, 2016

87. **Побережная И.А.** Правовой статус главы муниципального образования (Комментарии отдельных положений Федерального закона «Об общих принципах организации местного самоуправления в Российской Федерации»), Юстиция: Практический журнал, М., 2006, N 2

88. Проблемы теории государства и права // Под ред. М.Н. Марченко. - М.: «ПРОСПЕКТ», 1999

89. Российское народовластие: развитие, современные тенденции и противоречия / Под ред. А.В. Иванченко. М., Фонд «Либеральная миссия», 2003

90. **Руденко В.Н.** Институт народной правотворческой инициативы: зарубежный опыт и его значение для Российской Федерации и ее субъектов // Научный ежегодник Института философии и права Уральского отделения Российской Академии наук. - Екатеринбург: УрО РАН, 2001, Вып. 2.

91. **Руденко В.Н.** Конституционно-правовые проблемы прямой демократии в современном обществе // Автореферат диссертации на соискание ученой степени доктора юридических наук : 12.00.02 / Ур. гос. юрид. акад. - Екатеринбург, 2003

92. **Руденко В.Н.** Прямая демократия. Модели правления, конституционно-правовые институты. - Екатеринбург, УрО РАН, 2003

93. **Рукавишникова И.В.** Гражданская инициатива как инструмент гражданского общества// Наука и образование: хозяйство и экономика; предпринимательство; право и управление. 2014. N 3 (46)

94. **Руссо Ж.Ж.** Об общественном договоре, или Принципы политического Права. Книга 2. Глава 1

95. **Савинова С.Ю.** Особенности гражданско-правовой ответственности муниципальных образований, Современные инновации N5(33) 2019

96. **Сафаров Р.А.** Развитие непосредственной демократии в СССР // Вопросы политической организации Советского общества в период развернутого строительства коммунизма - М, 1962

97. **Семенова М.С.** Правовая реформа территориальной

организации и форм непосредственной демократии в системе местного самоуправления на современном этапе. // Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук, М., 2004

98. **Синцов Г.В.** Конституционно-правовой институт референдума Российской Федерации и субъектов Российской Федерации // Диссертация на соискание ученой степени канд. юр. наук, Пенза, 2003

99. **Слепнев Е.Л.** Право собственности муниципальных образований: Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Екатеринбург, 2000

100. Советское гражданское право: Учебник. В 2-х томах. Т. 1, Под ред. О.А. Красавчикова, 3-е изд., М., Высшая школа, 1985

101. **Старостина И.А.** Всенародные обсуждения правовые 50; Возможности и практика//Вестник Московского государственного университета. Серия 11, Право. 1998 N 1

102. **Степанов И.М.** Формы непосредственной демократии// Политическая организация Советского общества. Изд. «Наука», М., 1967

103. **Суворов В.Н.** Формы непосредственной демократии в развитом социалистическом обществе // Конституция СССР и вопросы теории советского государственного права (Сборник научных статей) – М., 1981

104. **Суханов Е.А.** Российское гражданское право: Учебник. В 2 томах, Т. I. - 2-е изд., стереотип., Статут, М., 2011

105. **Тарасова А.Е.** Правосубъектность граждан, Особенности правосубъектности несовершеннолетних, их проявления в гражданских правоотношениях, Wolters Kluwer, М., 2008

106. **Тихомиров Ю.А.** Теория компетенции, М., 2001

107. **Тосунян Г., Викулин А.** Исключительная правоспособность банка, Хозяйство и право, М., Изд. Дрофа, 2009

108. **Трайнин И.П.** О непосредственном народном законодательстве в капиталистических странах (референдум и законодательная инициатива)// Советское государство 1937, N 1-2

109. **Фоменко Т.О.** Понятие и виды земельных участков

муниципальной собственности: теоретический аспект, NovaUm.Ru. 2020. N 26

110. **Хабриева Т.Я.** Конституционные основы, тенденции и проблемы развития российского законодательства: 20-летний опыт современное состояние // Журнал зарубежного законодательства и сравнительного правоведения. 2013. N 4

111. **Хевсаков В.В.** Субъекты непосредственной демократии В Российской Федерации // Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, М., 2007

112. **Хессе К.** Основы конституционного права ФРГ / Перевод с немецкого; под ред. Сидорова Н.А.; пер. Сидорова Е.А. — М.: Юрид. лит., 1981

113. **Холлинс Г., Плоккер К.** На пути к демократической децентрализации. Перестройка региональных и местных органов власти в Новой Европе. Брюссель; 1995

114. **Чеботарев Г.Н.** Муниципальное право РФ: Учебно-методический комплекс. Тюмень, Изд-во ТГУ, 2001

115. **Чиркин Е. О.** О понятии и классификации юридических лиц публичного права, Журнал российского права, 2010, N 6

116. **Чиркин В.Е.** Конституционное право зарубежных стран: учебник / 9-ое изд., перераб. и доп., М.: Норма: Инфра- М, 2019

117. **Чиркин В.Е.** Публичное управление на местах: некоторые вопросы российского и зарубежного опыта / Правовые аспекты развития и функционирования системы местного самоуправления в Ленинградской области: Сборник статей и справочных материалов / И.И. Макаров, А.А. Романцов; под общей ред. К.Н. Патраева, М.Е. Лебединского. – СПб.: Вести, 2014

118. **Чиркин В.Е.** Легализация и легитимация государственной власти // Государство и право. 1995. N 8. с. 15.

119. **Шаломенцева Е.Г.** Некоторые аспекты правового регулирования процесса управления муниципальной собственностью, Конституционное и муниципальное право. 2019. N 10

120. **Шахназаров Г.Х.** Социалистическая демократия. Некоторые вопросы теории / 2-е изд., доп. - М.: Политиздат, 1974

121. **Шомникова Д.В.** Непосредственная демократия в

Российской Федерации и роль органов внутренних дел в ее реализации // Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, М., 2001

122. **Hartlyn J.** Electoral Governance Matters: Explaining the Quality of Elections in Contemporary Latin America / J. Hartlyn, J. McCoy, T. Mustillo // Comparative Political Studies. – January, 2008. –Vol. 41, p. 73–98.

123. **Lopez-Pintor R.** Electoral Bodies as Institutions of Governance / R. Lopez-Pintor. – NewYork: United Nations Development Programme Publ., 2000

124. **Mozaffar Sh. Schedler A.** The Comparative Study of Electoral Governance / Sh. Mozaffar, A. Schedler// International Political Science Review. – 2002. – Vol. 23, no. 1, p. 5–27.

125. **Robert A. Pastor** The role of Electoral Administration in Democratic Transitions: Implications for Policy and Research, 6 Journal of Democratization 4 (1999).

126. **Tomas E. Cronin** Direct Democracy. The Politics of Initiative, Referendum, and Recall. Twentieth Century Fund Book. Harvard University Press. Republished edition, 1999

Հանձնվել է տպագրության 27.09.2022:

Չափսը՝ 60x84¹/₁₆:

Ծավալը՝ 17 տպ. մամուլ:

Քանակը՝ 100 օրինակ:

ISBN 978-9939-887-27-2



9 789939 887272